


ՀՀ ԳԱՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԻԼԻԹ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

ՍԿՂՈՂԱԿԱՆ ՊՈԿՈՅԻՆՏԿ ԻԳՅԻՏ



ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ

ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1914-1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
ԵՎ ՍԵՃ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1914-1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

**Նվիրում եմ սիրելի հորս՝
ՀՐԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍԹԱՆԻ
լուսավոր հիշատակին**

Չեղինակն իր խորին շնորհակալությունն է հայտնում
ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ տնօրինությանը
մենագրության հրատարակումն իրականացնելու համար:

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՁԸ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1914-1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

II
87230

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՁԻ ԱՐԽԻՎ
ԿՈՒՐՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՄ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՁԻ ԱՐԽԻՎ
29. 08. 02.



ԵՐԵՎԱՆ 2002



947.925 << 1878 >>

**Աշխատությունը պատգարվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի 2002 թ. մարտի 29-ի թիվ 1 որոշմամբ**

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3 (23)

Հ 854

**Պատասխանատու խմբագիր՝ ԴԳ ԳԱԱ ակադեմիկոս,
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Դ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

**Մենագրությունը հրատարակության են երաշխավորել զրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստ. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. ԶԱՎԱՌՅԱՆ**

Հովհաննիսյան, Լիլիթ

Հ 854

**ԶԱՅՎԱԿԱՆ ԶԱՐԳԸ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1914-1917 ԹՎԱԿԱՆՆԵ-
ՐԻՆ: - Եր.: «Զանգակ-97» հրատ., 2002.- 184 էջ:**

Աշխատությունը նվիրված է Հայկական հարցում մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի և ԱՄՆ-ի ստեղծումների ու քաղաքականության աստիճանական զարգացման ընթացքի ուսումնասիրությանը: Առանձնացվել է 1914-1917 թվականներն ընդգրկող ժամանակահատվածը՝ առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Հայաստանի Հանրապետության տարբեր արխիվներից հայտնաբերված վավերագրերի, հայերեն և այլալեզու տպագիր սկզբնաղբյուրների, ժամանակի պարբերական մամուլի, հուշագրությունների և մեծաթիվ պատմագիտական աշխատությունների հիման վրա լուսաբանված են Հայաստանի հայաթափման, հայերի տեղահանման ու բնաջնջման թուրք-գերմանական և օսմանյան «ժառանգության» մասնատման անգլո-ֆրանս-ռուս-իտալական ծրագրերը, վերլուծված է մեծ տերությունների դիրքորոշումն արևմտահայերի 1915-1916 թվականների ցեղասպանության հարցում, ներկայացված են Արևմտյան Հայաստանի քաղաքական զարգացման հետազոտությունների վերաբերյալ մշակված հայկական ամենատարբեր ծրագրերը և մեծ տերությունների վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Ետախառնված է պատմաբանների, ուսանողների և ընթերցող լայն շրջանների համար:

Հ 0503020913 2002
0003(01)-2002

ԳՄԴ 63.3 (23)

ISBN 99930-2-376-0

© Հովհաննիսյան Լ., 2002 թ.
© «ԶԱՆԳԱԿ-97», 2002 թ.

Հայկական հարցը, որպես Թուրքիայի տիրապետության տակ ընկած Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացման հարց, մեծ տերությունների կողմից լուծում ակնկալող և մեր ժողովրդին հուզող կենսական խնդիրն էր XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Հանդես գալով որպես հետևանք Արևմտյան Հայաստանում օսմանյան թուրքերի տիրապետության՝ այն սկզբում մարմնավորում էր հայ ժողովրդի ազատագրական ձգտումներն ու պայքարը հանուն արևմտահայերի ֆիզիկական գոյության պահպանման, Արևմտյան Հայաստանի ինքնավարության, իսկ 1918 թվականից ի վեր՝ արդեն հանուն անկախության: 1878 թ. Սան Ստեֆանոյի ռուս-թուրքական հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածով արևմտահայության ֆիզիկական գոյության պահպանման, անվտանգության ապահովման խնդիրներն առաջին անգամ ձևակերպվեցին միջպետական պայմանագրում՝ վերածվելով միջազգային հարաբերությունների և դիվանագիտության հարցի, դառնալով Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը: Իսկ եվրոպական վեց տերությունների և Թուրքիայի միջև նույն թվականին ստորագրված Բեռլինի պայմանագրում Հայկական հարցի վերաբերյալ 61-րդ հոդվածի ընդունումով Արևմտյան Հայաստանը, որպես օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող տարածք, ներքաշվեց Օսմանյան կայսրության տիրույթների բաժանման համար մեծ տերությունների միջև XVIII դարի երկրորդ կեսից ծավալված պայքարի ու միջպետական հակասությունների ոլորտը: Հակասություններ, որոնք ի վերջո հանգեցրին միջպետական հարցերը զենքի ուժով լուծելուն՝ 1914-1918 թթ. առաջին համաշխարհային պատերազմում:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող աշխատության նյութը Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների մոտեցումների ու քաղաքականության աստիճանական զարգացման ընթացքի ուսումնասիրությունն է: Վերջինիս համար առանձնացվել է 1914-1917 թվականներն ընդ-

գրկող ժամանակահատվածը՝ առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունը, որն առանձին փուլ է կազմում Հայկական հարցի դիվանագիտական պատմության մեջ: Ժամանակահատվածն առանձնահատուկ է նրանով, որ առաջին համաշխարհային պատերազմը ոչ միայն խափանեց 1914 թ. հունվարի 26 (նոր տոմարով՝ փետրվարի 8)–ի ռուս–թուրքական համաձայնագրով նախատեսված բարենորոգումների ծրագրի իրագործումն Արևմտյան Հայաստանում, այլ նաև եկավ շտկումներ մտցնելու հայ ժողովրդի ճակատագրի ու Արևմտյան Հայաստանի ապագայի նկատմամբ մեծ տերությունների քաղաքական մոտեցումների ու վարքագծի մեջ: Թուրքիայի ու Գերմանիայի միջև ռազմաքաղաքական դաշինքի կնքումը 1914 թ. օգոստոսին, Թուրքիայի՝ Անտանտի երկրների դեմ պատերազմի մեջ մտնելն ամրապնդեցին թուրք–գերմանական գործակցությունը Հայկական հարցում, նպաստեցին հայերի բնաջնջման ծրագրի մշակմանն ու իրագործմանը: Ինչ վերաբերում է Անտանտի երկրներին, ապա նրանք մի կողմ դրեցին Օսմանյան կայսրության ամբողջականության ու անձեռնմխելիության պահպանման սկզբունքը, որն այլևս չէր համապատասխանում իրենց քաղաքական շահերին: Դրանց պահանջներին համապատասխան՝ Հայկական հարցի դիվանագիտական քննարկումները թևակոխեցին նոր փուլ:

Պատմական այս ժամանակահատվածի ուսումնասիրումը կարևորվում է մեծ տերությունների արտաքին քաղաքական ծրագրերում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայկական հարցի իրական տեղը որոշելու, հայության ազգային նպատակների և տերությունների արտաքին շահերի համապատասխանությունը ճիշտ գնահատելու, ազգային խնդիրների լուծման գործում արտաքին քաղաքական ուժերի ազդեցության ու աջակցության վրա հենվելու կարողության մշակման տեսանկյունից:

1914–1917 թթ. Հայկական հարցում մեծ տերությունների վարած քաղաքականությունը ներառում է նաև 1915–1916 թթ. հայոց ցեղասպանության հիմնախնդիրը: XX դարի առաջին ոճրագործության նկատմամբ մեծ տերությունների վերաբերմունքն ու դիրքորոշումն անկողմնակալորեն գնահատելու միջոցով հնարավոր է մշակել ցեղասպանությունն արդի աշխարհում կանխելու գործում քաղաքական մեխանիզմներ, նպաստել հայոց 1915–1916 թթ. ցեղասպանության պաշտոնական ճանաչման ու դատաւարտման ուղղությամբ 1965 թվականից առ այսօր տարբեր միջազգային

կազմակերպությունների և աշխարհի առանձին պետությունների կատարած աշխատանքի շարունակմանը:

Հայ ժողովրդի և հայկական տարածքների ճակատագրի նկատմամբ տերությունների մոտեցումների ու քաղաքականության աստիճանական զարգացումն ուսումնասիրելու միջոցով կարելի է բացահայտել արտաքին հարաբերություններում, միջազգային դիվանագիտական հիմնախնդիրների լուծման ժամանակ պետությունների քաղաքականության և վարքագծի հիմքում ընկած կարևոր պատճառներն ու գործոնները:

Առանձնահատուկ կարևորություն ունի համաթրքությունը (պանթուրքիզմ) որպես երիտթուրքական կուսակցության ու կառավարության պաշտոնական գաղափարախոսություն ընդունելու խնդրի և Հայկական հարցի լուծման վերաբերյալ նրանում առաջարկված ծրագրի ուսումնասիրությունը: Վերջինս արդիական ու հրատապ է այն առումով, որ համաթրքության գաղափարները կենսունակ են Թուրքիայում նաև այսօր: Դրանք դրսևորվում են Անդրկովկասի և Միջին Ասիայի մահմեդական հանրապետությունների նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականության մեջ, որով էլ ազդում են կովկասյան տարածաշրջանում Հայաստանի ու նրա անմիջական հարևանների փոխհարաբերությունների վրա:

Ներկայացվող ժամանակահատվածի առանձնահատկություններից բխող արդիական ու հրատապ հարցադրումներից մեկն էլ Կովկասյան ընդհանուր տան գաղափարի իրագործման հեռանկարները Հայաստանի և հայ ժողովրդի ապագայի տեսանկյունից քննելու խնդիրն է: Նրա կարևորությունը պայմանավորված է 1991 թ. Խորհրդային Միության փլուզումից հետո անկախացած կովկասյան հանրապետությունների միջև տարածաշրջանային համագործակցության ուղիների թվում Կովկասյան ընդհանուր տան գաղափարին հատկացվող ուշադրությամբ: Խնդրի նկատմամբ ճիշտ վերաբերմունք կարելի է մշակել՝ ուսումնասիրելով ոչ միայն Կովկասյան ընդհանուր տան կամ ֆեդերացիայի գաղափարի ձևավորման ու զարգացման պատմական ընթացքը, այլ նաև վերհանելով նրա անմիջական կապը 1915–1916 թթ. իրագործված Հայաստանի հայաթափման, հայ ժողովրդի տեղահանման ու բնաջնջման թուրքական ծրագրի հետ:

Հայկական հարցը, որպես օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո հայ ժողովրդի դրության, նրա ազատագրական ձգտումների ու պայքարի, Հայաստանի ապագայի և հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ մեծ տերությունների կեցվածքի ու քաղաքականության խնդիրների ամբող-

ջություն, հանդիսանում է հայկական պատմագիտության ամենաընդգրկուն հիմնախնդիրներից մեկը: Թե՛ Հայաստանում, թե՛ սփյուռքում խնդրի վերաբերյալ գրված են մեծաթիվ աշխատություններ, սակայն քչերն են վերաբերվում Հայկական հարցի պատմության՝ 1914–1917 թվականներն ընդգրկող ժամանակահատվածին: Եղածներն էլ ներկայացնում են, գլխավորապես, որևէ պետության քաղաքականությունը Հայկական հարցում կամ խնդրին անդրադառնում են այնքանով, որքանով այդ անհրաժեշտ է Օսմանյան կայսրությունում հայերի դրության կամ թուրքական տիրապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի տեսանկյունից Հայկական հարցը ներկայացնելու համար¹: Ընդ որում, Հայկական հարցում մեծ տերությունների, մասնավորապես Ռուսաստանի ցարական և Ժամանակավոր կառավարությունների դիրքորոշումը խորհրդահայ պատմաբանների աշխատություններում գլխավորապես քննադատվում է որպես նվաճողական, հակահայկական քաղաքականություն:

Հիմնահարցի ուսումնասիրվածության ամբողջական պատկերը ներկայացնելու համար նպատակահարմար ենք գտնում թեմայի և նրան առնչվող պատմագիտական խնդիրների վերաբերյալ հայ և արտասահմանյան պատմաբանների ուսումնասիրությունները դասակարգել ըստ նրանցում վերլուծված խնդիրների:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մասնավորապես 1914–1916 թվականներին, Արևմտյան Հայաստանի և արևմտահայության նկատմամբ եվրոպական տերությունների հետաքրքրություններն ու քաղաքականությունը ներկայացված են Ջ. Կիրակոսյանի արժեքավոր գրքում²: Մենագրության մեջ կարևոր տեղ է գրավում ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ անգլո–ֆրանս–ռուսական գաղտնի բանակցությունների և դրանց արդյունքում ստորագրված համաձայնագրերի վերլուծությունը: Հեղինակը քննադատաբար է մոտենում Արևմտյան Հայաստանի գրաված տարածքներում Ռուսաստանի ցարական և Ժամանակավոր կառավարությունների քաղաքականությանը:

Հայկական հարցի, ինչպես նաև կայգերական Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և ԱՄՆ–ի մերձավորարևելյան ծրագրերում ու քաղաքականության մեջ XIX դարի վերջին և XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանի ու հայության տեղի, օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ անգլո–ֆրանս–ռուսական բանակցությունների և պատերազմի իրավունքով գրավված հայկական տարածքնե-

րում ցարական կառավարության քաղաքականության վերաբերյալ լուրջ ուսումնասիրությունն է Մ. Մ. Հակոբյանի մենագրությունը³: Այս հարցերի վերլուծությունը մեծ տեղ է գրավում նաև Մ. Վ. Արզումանյանի աշխատության մեջ⁴: Նշված ուսումնասիրությունները ծանրակշիռ ներդրում են Հայկական հարցի՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներն ընդգրկող ժամանակահատվածի պատմությունն առավել ամբողջական ներկայացնելու խնդրում: 1917 թ. մարտ–հոկտեմբեր ժամանակահատվածում հայ ժողովրդի առջև ծառայած հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիների շուրջ Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության դիրքորոշումը և հայ ազգային կուսակցությունների ու կազմակերպությունների ծրագրերը, հայկական պետականության վերստեղծման ճանապարհին կատարված կարևոր քայլերը, ժամանակահատվածի պատմական դասերը նոր նյութերի հիմն վրա վերլուծված են Վ. Հ. Մելիքյանի մենագրությունում⁵:

Արժեքավոր են նաև Հայկական հարցի նկատմամբ կոնկրետ որևէ պետության ծրագրերի, դիրքորոշումների և վարած քաղաքականության վերաբերյալ աշխատությունները: Այս առումով փաստական նյութի հագեցվածությամբ ու հիմնավորվածությամբ աչքի են ընկնում Ա. Հարությունյանի, Ա. Նասիբյանի, Ստ. Ստեփանյանի, Տ. Տիգրանյանի աշխատությունները⁶: Հայոց ցեղասպանության երիտթուրքերի քաղաքականության դատապարտման տեսանկյունից կարևորվում են պատմագիտական այն ուսումնասիրությունները, որոնց հեղինակները՝ Մ. Արզումանյանը, Գ. Գալոյանը, Վ. Դադրյանը, Լ. Խուրշուդյանը, Ջ. Կիրակոսյանը, Ա. Համբարյանը, Գ. Ղարիբջանյանը, Մ. Ներսիսյանը, Ռ. Սահակյանը, Ե. Սարգսյանը, Հր. Սիմոնյանը, Ստ. Ստեփանյանը⁷, վերհանում են երիտթուրքերի քաղաքականության հակահայկական ուղղվածությունը, հայերի բնաջնջման նրանց ծրագրի էությունը, հայոց ցեղասպանության պատճառները, այն ներկայացնում են որպես հայերի բնաջնջման արդուլիամիդյան քաղաքականության տրամաբանական շարունակություն, ուսումնասիրում են երիտթուրքերի հանցագործ ծրագրի իրագործման մեխանիզմը, բարձրացնում են երիտթուրքական կուսակցության, կառավարության, ոստիկանության և իշխանության տեղական մարմինների պատասխանատվության, կայզերական Գերմանիայի և նրա դաշնակիցների մեղսակցության, հայոց ցեղասպանության նկատմամբ Անտանտի երկրների դիրքորոշման հարցերը:

Ժամանակի քաղաքական գործիչներից Լիման ֆոն Ջանդերսի, Դ. Լյոդ Ջորջի, Պ. Հ. Ռոիրբախի, Ջենալ փաշայի, ԱՄՆ–ի նախագահ Վ. Վիլ-

սոնի նախկին խորհրդական գնդապետ Հաուզի, դիվանագետներ Ա. Մանդելշտամի, Հ. Մորզենթաուի, Մ. Պալեոլոգի, Ս. Սազոնովի աշխատություններում ու հուշագրություններում⁸, ինչպես նաև հայ և այլազգի մի շարք պատմաբանների՝ Ա. Ավետյանի, Բ. Բորյանի, Վ. Գոտլիբի, Ե. Լուդշովեյտի, Ջ. Մարրիոտի, Ֆ. Նոտովիչի և այլոց ուսումնասիրություններում⁹ քննության են առնվում առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին և ընթացքում տիրող միջազգային քաղաքական իրադրությունը, մեծ տերությունների ռազմաքաղաքական ծրագրերն ու հակասությունները, նրանց հետաքրքրությունները Մերձավոր Արևելքում, որոնք ուղղակի թե անուղղակի ազդեցություն ունեցան Հայկական հարցում տերությունների վերաբերմունքի և դիրքորոշման վրա: Վերոնշյալ քաղաքական գործիչների և դիվանագետների աշխատություններն ու հուշագրությունները, կարևորվում են երկու առումով: Մի կողմից՝ դրանք ժամանակի պատմությունը վերլուծող աշխատություններ են, մյուս կողմից էլ՝ որպես դեպքերի ժամանակակիցների մտքերի ամմիջական արդյունք ունեն նաև աղբյուրագիտական նշանակություն: Սակայն չպետք է անտեսել այն հանգամանքը, որ արտահայտված կարծիքներն ու գնահատականներն ամբողջությամբ անկողմնակալ լինել չեն կարող, որովհետև դիմաց հեղինակներն իրենց պետության շահերն արտահայտող գործիչներ էին:

Այս ուսումնասիրությունը հանդիսանում է Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ավստրո-Հունգարիայի և ԱՄՆ-ի դիրքորոշումների ու քաղաքականության աստիճանական զարգացումը 1914 թվականին առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև Ռուսաստանում 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունն ընկած ժամանակահատվածում դիտարկելու առաջին փորձերից մեկը: Նրանում շրջանառության մեջ են դրվում արխիվային ուշագրավ նյութեր, փաստաթղթերի ժողովածուներ և պատմագիտական աշխատություններ, ըստ այդմ էլ Հայկական հարցի նկատմամբ տերությունների քաղաքականության և հայության ազգային քաղաքական նպատակների վերաբերյալ ներկայացվում են նոր մոտեցումներ: Այսպես. հիմնվելով ինչպես հայերեն, այնպես էլ այլալեզու սկզբնաղբյուրների և նոր ուսումնասիրությունների վրա՝ Հայկական հարցի պատմության՝ 1914–1917 թթ. ընդգրկող ժամանակահատվածը ներկայացվում է որպես նրա առանձին փուլը: Արևմտյան Հայաստանի ապագայի ու եղեռնից հրաշքով փրկված արևմտահայության բեկորների ճակատագրի նկատ-

մամբ Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության և այդ պետության ռազմաքաղաքական դաշնակիցների մոտեցումները, եվրոպական տերություններից հայ հասարակական-քաղաքական շրջանակների սպասելիքները դիտարկվում են որպես այդ նույն հարցերում 1914–1916 թթ. եղած դիրքորոշումների տրամաբանական շարունակություն: Հիմնավորվում է այն դրույթը, որ 1915–1916 թվականներին եվրոպական տերությունների քաղաքական և դիվանագիտական ոլորտներում ձևավորվել ու գործնական հիմքի վրա էին դրվել Հայկական հարցի լուծման երկու ծրագրեր: Դրանցից մեկն օսմանյան «Ժառանգության» բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուս-իտալական ծրագիրն էր, որի համաձայն 1916 թվականին Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան մասնատվեցին հայկական տարածքների նկատմամբ առավել մեծ հետաքրքրություններ ու քաղաքական շահեր ունեցող Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև: Մյուսը Հայաստանի հայաթափման, հայերի տեղահանման և բնաջնջման թուրք-գերմանական ծրագիրն էր, որի իրագործման հետևանքով բնաջնջվեց հայության ընդհանուր թվաքանակի 1/3-ը, կործանվեցին հայ ազգային մտավոր ու նյութական մեծաթիվ արժեքներ, առաջացավ սփյուռքը: Տույց է տրվում, որ այս տարբերակով Հայկական հարցի լուծման ուղղակի շարունակությունն էլ հանդիսանալու էր հայ ժողովրդի արևելյան հատվածը և Արևելյան Հայաստանը Կովկասում ստեղծվելիք ֆեդերացիայի կազմում տարրալուծելու թուրք-գերմանական ծրագիրը:

Ուսումնասիրության մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում Անտանտի երկրների միջև 1915–1916 թթ. ստորագրված Լոնդոնի, Սայքս-Պիկո-Սազոնովի և 1917 թ. կնքված Սեն-ժան-դե Մորիենի անգլո-ֆրանս-իտալական գաղտնի համաձայնագրերի վերլուծությունը: Այդ համաձայնագրերը քիչ են ուսումնասիրված հայ պատմագիտության մեջ: Նորահայտ փաստաթղթերը վկայում են, որ Հայկական հարցի, հայոց ցեղասպանության, հայկական կամավորական շարժման և արևմտահայ գաղթականությանը նյութական օժանդակություն ցույց տալու հարցերում բոլոր մեծ տերությունների վերաբերմունքի ու քաղաքականության հիմքում ընկած էին մախ և առաջ նրանց նեղ պետական շահերը, աշխարհակալական ձգտումները: Ընդ որում, Ռուսաստանի վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ առանձնահատուկ էր նրանով, որ այդ պետության արտաքին քաղաքական շահերը համընկնում էին հայերի ազգային նպատակներին թե՛ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրագործելու, թե՛ այն թուրքա-

կան տիրապետությունից ազատագրելու հարցերում: Յույց է տրվում նաև, որ, թեև Արևմտյան Հայաստանը գրավելուց և դաշնակիցների հետ ստորագրած գաղտնի համաձայնագրերով այնտեղ իր իրավունքներն օրինակաճանցելուց հետո Ռուսաստանը շահագրգռված չէր Հայաստանի ինքնավարությամբ, սակայն Հայկական հարցում ռուսական կառավարող շրջանակների քաղաքականությունը նպատակ ուներ ասիական Թուրքիայում պահպանել հայկական տարրը, իսկ Արևմտյան Հայաստանն ամուր պատնեշ դարձնել Կովկասի և Թուրքիայի մահմեդականության ծովում՝ համաթրքության վտանգը դիմագրավելու համար:

Ռուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը կազմում են Հայաստանի արխիվների նյութերը, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուները, ժամանակի պարբերական մամուլը, հասարակական, քաղաքական ու պետական գործիչների, դիվանագետների աշխատություններն ու հուշագրությունները, որոնք ռուսումնասիրվել են մի քանի տարիների ընթացքում և, մշակված նյութերն օգտագործվել են հեղինակի գիտական հոդվածներում, գեկուցումներում ու թեկնածուական ատենախոսության մեջ:

1912–1913 թթ. Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ծրագրերի դիվանագիտական քննարկումների, եվրոպական երկրների ներկայացուցիչների հետ հայ գործիչների հանդիպումների, հայոց ցեղասպանության նկատմամբ մեծ տերությունների դիրքորոշման, Հայաստանում գրաված տարածքներում Ռուսաստանի ցարական ու Ժամանակավոր կառավարությունների վարած քաղաքականության և դրանց հետ առնչվող հարցերի լուսաբանման համար կարևոր նշանակություն ունեն ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվի ֆոնդերում պահպանվող փաստաթղթերը¹⁰: Ինչպես այս հարցերի, այնպես էլ Օսմանյան կայսրության հայ բնակչության աղետալի դրության լուսաբանման համար ուշագրավ են ՀՀ հասարակական–քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվի նյութերը¹¹:

Հայկական հարցի դիվանագիտական պատմության ռուսումնասիրությունն անհնար է պատկերացնել առանց տարբեր պետությունների դիվանագիտական փաստաթղթերի քննության և վերլուծության: Ցարական Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական փաստաթղթերն ամփոփող ժողովածուներից մի քանիսը լուսաբանում են հայկական բարենորոգումների դիվանագիտական քննարկումները 1913–1914 թվականներին՝ բացահայտելով եվրոպական տերությունների հակասու-

թյունները Հայկական հարցում¹²: Կարևորվում է նաև Ռուսաստանի արտգործնախարարության՝ ասիական Թուրքիայի մասնատման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցությունները, դրանց արդյունքում ստորագրված եռակողմ համաձայնագրերը լուսաբանող փաստաթղթերի ժողովածուն¹³: Ռուսաստանի ցարական և Ժամանակավոր կառավարությունների արխիվների դիվանագիտական փաստաթղթերի հիման վրա Հայկական հարցը ներկայացվում է նաև ժամանակագրական շատ ավելի լայն սահմաններում և միջազգային հարաբերությունների լույսի ներքո¹⁴:

Հայկական հարցը միջազգային դիվանագիտության տեսանկյունից է ներկայացնում Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ լույս տեսած դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուն¹⁵:

Հայկական հարցի և հատկապես հայոց ցեղասպանության պատմությունը լուսաբանելու համար մեծ արժեք են ներկայացնում կայզերական Գերմանիայի արտգործնախարարության Քաղարխիվի պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերը, որոնք հրատարակել է պրոֆեսոր Վ. Միքայելյանը¹⁶: Դրանք, ինչպես նաև առաջին համաշխարհային պատերազմի տարիների հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական արխիվներում և գրադարաններում հայտնաբերված փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն, որը խմբագրել է պրոֆեսոր Ստ. Ստեփանյանը¹⁷, լրացնում և ամբողջացնում են հայոց ցեղասպանության խնդրում կայզերական Գերմանիայի մեղսակցությունը բացահայտելու ուղղությամբ Յո. Լեփսիուսի կատարած աշխատանքը¹⁸: Կարևորվում են նաև 1912–1918 թթ. Հայկական հարցին վերաբերող արխիվային փաստաթղթերը, որոնք մեկ ժողովածուում զետեղել է Ա. Օհանջանյանը¹⁹: Հայկական հարցի պատմությունը լուսաբանելու համար արժեքավոր են նաև Յրանսիայի արխիվների նյութերը²⁰:

Համիդյան և երիտթուրքական կառավարությունների հայաջինջ քաղաքականության տարբեր կողմերի, նրանց տնտեսական, քաղաքական և գաղափարական ակունքների բնութագրման տեսանկյունից առաջնակարգ նշանակություն ունի Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության մասին հայկական, ռուսական, թուրքական, գերմանական, անգլիական, ֆրանսիական, ամերիկյան և այլ աղբյուրներից քաղված 264 փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն՝ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ և նախաբանով²¹: Ժողովածուում ամփոփված փաստաթղթերն ու նյութերը հարուստ և հավաստի տե-

ղեկություններ են հաղորդում սուլթան Աբդուլ Համիդի օրոք և երիտթուրքական կառավարության ժամանակաշրջանում հայերի ցեղասպանության քաղաքականության մասին:

Հայոց ցեղասպանության պատմությունը ուսումնասիրելու համար կարևոր են մաս Մեծ Բրիտանիայի պետքարտուղարության²² և եվրոպական ու թուրքական արխիվներից քաղված պաշտոնական փաստաթղթերը, որոնք հրատարակել է Վ. Դադրյանը²³:

Բարձր գնահատելով Հայկական հարցի վերաբերյալ պատմագիտության մեջ կատարված ողջ աշխատանքը, ինչպես մաս ընթերցողի համար աշխատության մեջ ընդգրկված փաստերի վերաբերյալ տարբեր սկզբնաղբյուրներում ու աշխատություններում առկա նյութերը համադրելու հնարավորություն ստեղծելու նպատակով տողատակերում տրված է ներկայացվող խնդիրների վերաբերյալ գիտական ներդրման ամենաընդգրկուն և արժեքավոր մասը:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Степанян С. Т., Армения в политике империалистической Германии (конец XIX—начало XX вв.), Ереван, 1975. Աղայան Ծ. Պ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976: Նասիպեան Ա., Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915–1923, Պէյրոս, 1994: Տիգրանեան Տ., Անգլիան եւ հայերը, Երևան, 1994:
- 2 Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914–1916 թթ., Երևան, 1967:
- 3 Акопян С. М., Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Ереван, 1967.
- 4 Արզումանյան Մ. Վ., Հայաստան: 1914–1917, Երևան, 1969:
- 5 Մելիքյան Վ. Հ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), Երևան, 1997:
- 6 Арутюнян А. О., Кавказский фронт 1914–1917 гг., Ереван, 1971. Նասիպեան Ա., նշվ. աշխ.: Степанян Ст., նշվ. աշխ.: Տիգրանեան Տ., նշվ. աշխ.:
- 7 Արզումանյան Մ. Վ., նշվ. աշխ.: Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Երևան, 1982: Dadrian V. N., The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence, Oxford, 1995. Նույն հեղինակի German Responsibility in the Armenian Genocide, a Review of the Historical Evidence of German Complicity, Watertown, 1996. Խուրշուդյան Լենդրուշ, Հայկական հարցը. Բովանդակությունը, ծագումը, պատմական հիմնական փուլերը, Երևան, 1995: Кыракосян Дж. С., Младотурки перед судом истории, Ереван, 1989. Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908–1914), Երևան, 1979: Гарибджанян Г. Б., Геноцид армян и мировая общественность, Ереван, 1989. Ներսիսյան Մ., Պատմության կեղծադրանքները (հողվածների ժողովածու), Երևան, 1998: Սահակյան Ռ. Գ., Ցեղասպանության պատ-

- ճութունից, Երևան, 1990: Սահակյան Ռ., Խուղալեղոյան Կ., Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո, Երևան, 1995: Саркисян Е. К., Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Ереван, 1962. Միննյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986: Степанян Ст., նշվ. աշխ.:
- 8 Sanders Liman von, *Five Years in Turkey*, Annapolis, 1927. Ллойд Джордж Д., *Правда о мирных договорах*, т. 2, Москва, 1957. Рорбах П., *Война и Германская политика*, Москва: Изд. Г. А. Лемана и С. И. Сахарова, 1915. Джемаль-паша, *Записки Джемаль-паши, 1913–1919*, Тифлис, 1923. Архив полковника Хауза, т. 2, Москва, 1937, т. 4, Москва, 1944. Mandelstam A., *Le sort de l'Empire Ottoman, Paris, 1917*. Սորգեբրաու Հ., Ամերիկյան դեսպան Հենրի Սորգեբրաուի հուշերը և հայկական եղեռնի զաղտնիքները, քարգծ. Ե. Արմեն, Երևան, 1990: Палеолог М., *Царская Россия во время мировой войны*, Москва, 1991. Сазонов С. Д., *Воспоминания*, Берлин, 1927.
- 9 Аветян А. С., *Германский империализм на Ближнем Востоке. Колониальная политика германского империализма и миссия Лимана фон Сандерса*, Москва, 1966. Борьян Б., *Армения. Международная дипломатия и СССР. Часть I*, Москва–Ленинград, 1928. Готлиб В. В., *Тайная дипломатия во время первой мировой войны*, Москва, 1960. Лудшувейт Е. Ф., *Турция в годы первой мировой войны 1914–1918 гг.*, Москва, 1966. Marriott Sir John A. R., *The Eastern Question. An Historical Study in European Diplomacy*, Oxford, 1940. Нотович Ф. И., *Дипломатическая борьба в годы первой мировой войны: том 1. Потеря союзниками Балканского полуострова*, Москва–Ленинград, 1947.
- 10 ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 32, ց. 1, գ. 12; ֆ. 43, ց. 1, գ. 50, 76, 83, 89; ֆ. 57, ց. 1, գ. 51; ց. 5, գ. 15, 19, 26–28, 35, 49, 51, 52, 53, 55, 58, 59, 60, 62, 65, 75, 87, 96, 102, 151, 154; ֆ. 121, ց. 1, գ. 3; ց. 2, գ. 127; ֆ. 222, ց. 1, գ. 17, 111; ֆ. 314, ց. 2, գ. 23; ֆ. 374, ց. 1, գ. 1; ֆ. 430, ց. 1, գ. 1386; ֆ. 450, ց. 2, գ. 79:
- 11 ՀՀ հասարակական–քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՔԲԿՓ ԿՊԱ). ֆ. 1022, ց. 2, գ. 393, 439, 1162; ֆ. 4033, ց. 5, գ. 290, 324, ց. 7, գ. 11:
- 12 *Дипломатическая переписка России, предшествовавшая войне с Турцией*, Пб., 1914. *Будущее устройство Армении. По официальным дипломатическим документам Оранжевой книги, трактующей реформы в Армении. (Дипломатический архив. Т. VIII)*, Петроград, 1915. *Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912–10 мая 1914 года (МИД России)*, Петроград, 1915. *Сборник договоров России с другими государствами (1856–1917)*, под ред. Адамова Е. А. Козьменко И. В., Москва, 1952.
- 13 *Раздел Азиатской Турции по секретным документам бывшего Министерства Иностранных Дел. Под редакцией Е. А. Адамова*, Москва, 1924.
- 14 Ключников Ю. Сабанин А., *Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях*, ч. II, Москва, 1926. *Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительств, 1878–1917, серия 3 (1914–1917)*, тт. I–XII, Москва–Ленинград, 1931–1938.
- 15 *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923)*, Երևան, 1972:
- 16 *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919)*. *Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии*, Ереван, 1995.
- 17 *Германские источники о геноциде армян. Период первой мировой войны. Сборник документов и материалов в 2-х томах, том 1*, Ереван, 1991.
- 18 *Deutschland und Armenien 1914–1918. Sammlung diplomatischer Aktenstücke*. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919.
- 19 Ohandjanian A., *Osterreich–Ungarn und Armenien 1914–1918*, Wien, 1988.
- 20 *Documents diplomatiques français, 1871–1914. 3-e serie, t. VII*, Paris, 1934. *Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Arméniens dans les archives françaises 1914–1918, documents*

réunis et présentés par Artur Beylerian, Paris, 1983.


- 21 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1991 (ռուս. հրատ. Ե. 1966, 1983):
- 22 Bryce V., The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915–1916. Documents presented to Viscount Grey of Fellodon, Secretary of State for Foreign Affairs. With a Preface by Viscount Bryce, Laid Before the Parliament as an Official Paper and Now Published by Permission, London, 1916.
- 23 Dadrian V. N., Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources (Reprinted from "The Widening Circle of Genocide: A Critical Biographic Review". Edited by Israel Chamy. 1994, Vol. 3, pp. XXVII, 77–125, New Brunswick: Transcation Publishers).

II
A 87230

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԱՌԱՅԻՆ
ՀԱՍՍՈՇԱԼԱՐԿԱՅԻՆ ԴԱՏԵՐԱԶՄԻ
ՆԱԽՕՐԵԻՆ ԵՎ ՍԿԶԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ**

**§ 1. Հայաստանի ինքնավարության
և բարենորոգումների ծրագրերը**

Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների կյանքի և ունեցվածքի անձեռնմխելիության երաշխիքների բացակայությունը, տնտեսական կեղեքումներով զուգորդվող հալածանքները, ազգային-կրոնական խտրականությունը թուրքական իշխանությունների ազգային քաղաքականության հիմնական գծերն էին: Հատկապես ծանր էր արևմտահայության դրությունը: Նրա նկատմամբ հետևողականորեն իրականացվող տնտեսական և վարչական ճնշման քաղաքականությունը սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի օրոք վերաճել էր «բացահայտ կազմակերպված ավազակության, սպանությունների, ջարդերի և խրախուսվող անօրինականությունների» քաղաքականության¹: Թուրքական տիրապետության ներքո հայ բնակչության ազգային իրավունքները պաշտպանելու հարցն առաջին անգամ, ինչպես հայտնի է, պաշտոնապես բարձրացվեց 1878 թ. Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրված Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ և նրա վերանայման արդյունքում Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և Թուրքիայի միջև ստորագրված Բեռլինի համաձայնագրի 61-րդ հոդվածներով²: Այդ փաստաթղթերը նախատեսում էին թուրքական կայսրության հայերի անվտանգության ապահովում և կոստուրածների կանխում բարենորոգումների միջոցով այն տարբերությամբ, որ 61-րդ հոդվածով հայկական վիլայեթներում բարենորոգումների կենսագործման նկատմամբ վերահսկողությունը դրվում էր ոչ միայն Ռուսաստանի, այլ բոլոր վեց տերությունների վրա, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր շահերն ու հետաքրքրությունները³: Ավե-



լին, Անգլիան, Ավստրո-Հունգարիան, Գերմանիան դեմ էին Հայկական հարցի լուծմանը: Նման պայմաններում վերահսկողությունը դառնում էր ձևական և ոչ իրատեսական: Հարկ է նշել, որ հայկական բարենորոգումների հարցում արևմտահայերի և նրանց հովանավորող Ռուսաստանի համար աննպաստ այդ վիճակը պայմանավորված էր Օսմանյան կայսրության նկատմամբ մեծ տերություններից նախ և առաջ Անգլիայի վարած Արևելյան քաղաքականությամբ: XIX դարի վերջին և XX դարի սկզբին Անգլիայում բրիտանական արևելյան գաղութների անվտանգությունը տեսնում էին դեպի նրանց տանող ճանապարհի՝ Օսմանյան կայսրության նկատմամբ ստատուս քվոյի քաղաքականության իրագործման մեջ, որը ենթադրում էր նրա տարածքային անձեռնմխելիության ապահովում, նրանում տերությունների ազդեցության ու շահերի հավասարակշռության պահպանում: Ահս թե ինչու 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի ռազմական և Ման Ստեֆանոյում էլ դիվանագիտական հաղթանակին հակադրելով նրա դեմ պատերազմելու պատրաստականությունը՝ անգլիական կառավարությունը ռուսական կողմին հարկադրել էր զիջումների գնալ⁴: 1878 թ. մայիսի 30-ին Անգլիայի և Ռուսաստանի միջև ստորագրվել էր գաղտնի համաձայնագիր, որով Ռուսաստանը հրաժարվել էր միացյալ Բուլղարիայի ստեղծումից, ինչպես նաև Օսմանյան կայսրությանն էր վերադարձրել ռուս-թուրքական պատերազմի ընթացքում գրաված Բայազետ քաղաքը և Ալաշկերտի հովիտը⁵: Բացի այդ, Անգլիայի արտգործնախարար Ռոբերտ Սոլսբերին հայտարարել էր ռուսական դեսպան Պյոտր Շուվալովին. որ «Ման Ստեֆանոյի նախնական պայմանագրով Հայաստանին վերապահված խոստումները պետք է տրամադրվեն ոչ միայն բացառապես Ռուսաստանին, այլև՝ Անգլիային»⁶: Մի քանի օր անց՝ հունիսի 4-ին, Կոստանդնուպոլսում թուրքական և անգլիական կառավարությունների միջև կնքվել էր պաշտպանական դաշինք ընդդեմ Ռուսաստանի, որով Անգլիան պարտավորվել էր զենքի ուժով պաշտպանել Թուրքիային այն դեպքում, երբ Ռուսաստանը փորձեր չհանձնել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում գրաված Բաթումը, Արդահանը, Կարսը կամ այդ տարածքներից որևէ մեկը, և կամ «երբևէ փորձեր գրավել Թուրքիայի ասիական տիրույթները»: Դրա դիմաց սուլթանը պարտավորվել էր Անգլիայի համաձայնությամբ բարենորոգումներ անցկացնել նշված տարածքում: Ավելին, «իր պարտավորությունները կատարելու համար Անգլիային անհրաժեշտ

միջոցներ ունենալու հնարավորություն տալու նպատակով» սուլթան Աբդուլ Համիդ 2-րդն Անգլիային էր զիջել Կիպրոս կղզին⁷:

Բեռլինի վեհաժողովը բացահայտեց թուրքահպատակ ժողովուրդների ճակատագրի հարցում մեծ տերությունների հակասություններն ու անմիաբանությունը, իսկ թուրքական սուլթանի հետ զաղտնի համաձայնագիր ստորագրելու Անգլիայի քայլն ազատ արձակեց Աբդուլ Համիդի ձեռքերը: Ահա թե ինչու Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրագործելու տերությունների դիրքորոշմանն անմիջապես հակադրվեց հայության բնաջնջման թուրքական ծրագիրը: Դրա հստակ նպատակն էր՝ վերացնել Հայաստանում քրիստոնեության կղզյակը, որի գոյությունը խախտում է Փոքր Ասիայում Մարմարա և Էգեյան ծովերից մինչև Կասպից ծովի կովկասյան ափերը տարածվող մահմեդական աշխարհի միատարրությունը: Այդ հակահայկական ծրագրի արտահայտությունն էր Բեռլինի վեհաժողովից հետո Մեհմեդ Զյամիլ փաշայի (հետագայում՝ մեծ վեզիր) հրապարակած հրահանգը⁸: Դրա բովանդակությունը ոչ միայն փաստում էր, որ Օսմանյան կայսրությունը ռազմականացված պետություն էր, այլև ուրվագծում էր հայերի նկատմամբ թուրքական վարչակարգի հետագա քաղաքականությունը:

Հայաստանի հայաթափման քաղաքականությունը գործնական հիմքի վրա դրվեց 1890-ական թթ. սկզբին ոչ կանոնավոր քրդական «համիդիե» հեծելազորի ստեղծմամբ⁹: Ճիշտ է, 1894 թ. Սասունի կոտորածից հետո Կոստանդնուպոլսում քրիստանական, ռուսական ու ֆրանսիական դեսպանները Բեռլինի համաձայնագրի 61-րդ հոդվածի հիման վրա մշակեցին և 1895 թ. մայիսի 11-ին սուլթանին ներկայացրեցին բարենորոգումների նախագիծը¹⁰, բայց այն չիրագործվեց եվրոպական կառավարությունների անհետևողականության պատճառով: Ավելին՝ օգտվելով Արևելյան, մասնավորապես Հայկական հարցում տերությունների հակասություններից՝ 1895-1896 թթ. Բարձր Դուռն Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ վայրերում կազմակերպեց մինչ այդ Թուրքիայի պատմության մեջ նախադեպը չունեցած զանգվածային կոտորածներ: Դրանց զոհ գնաց շուրջ 300 հազար խաղաղ բնակչություն: Սուլթանական կառավարության հալածանքների արդյունքում համարյա այդքան հայ էլ տարագրվեց, իսկ բնակչության որոշ մասն էլ հարկադրված դավանափոխվեց¹¹: Հայերի կոտորածները մահմեդականների կրոնական մոլեռանդության բռնկում չէին, այլ՝ «կառավարման

համակարգի ծրագրած և կազմակերպած միասնական պլանի իրագործման արդյունք»¹², հայերի բնաջնջման քաղաքականության առաջին դրսևորումը:

Դրություները չփոխվեց նաև ժողովրդավարական վերափոխումների իրագործման կարգախոսների ներքո հաղթանակած երիտթուրքական հեղաշրջումից հետո: Ազգային հարցում երիտթուրքերի ռազմավարության էությունը «Օսմանյան կայսրության ամբողջականության և անձեռնմխելիության» ապահովումն էր՝ նրանում ընդգրկված էթնիկ հանրությունները «օսմանյան ազգի» մեջ տարրալուծելու և «օսմանյան հայրենիքում» «համընդհանուր բարենորոգումներ» իրագործելու միջոցով¹³: Ընդ որում, շեշտվում էր «օսմանյան հայրենիքում» և «օսմանյան ազգի» մեջ թուրքերի գերիշխող դերի ապահովման անհրաժեշտությունը¹⁴: Իրականում, «օսմանյան ազգի» ձևավորումը ենթադրում էր հպատակ ժողովուրդների ծուլում, բնաջնջում և բռնի արտաքսում կայսրության սահմաններից: Իսկ «համընդհանուր բարենորոգումները» միջոց էին ճնշելու նրանց ազատագրական պայքարը և նպաստելու «օսմանյան ազգի» ձևավորմանը: Երիտթուրքերը չէին թաքցնում իրենց թշնամանքը հայ ազգային ազատագրական շարժման, հայկական բարենորոգումների խնդրին եվրոպական տերությունների միջամտության նկատմամբ: «Հայկական հարցը Թուրքիայում բարենորոգումների ընդհանուր հարցից դուրս գոյության իրավունք չունի»¹⁵,— շեշտում էր «ճշմարիտ թուրք հայրենասեր» Մուրադ-բեյ Միզանզին: Իսկ երիտթուրքերի կուսակցության հայտնի տեսաբան դոկտ. Նազըն Օսմանյան կայսրության ապագան, նրանում ընդգրկված ժողովուրդների «իրավահավասարությունը» պատկերացնում և մեկնաբանում էր այսպես. «Պետությունը պետք է դառնա բացառապես թուրքական, քանի որ նրանում այլ ժողովուրդների գոյությունը մշտապես առիթ է տալիս Եվրոպայի միջամտության համար: Անհրաժեշտ է բռնի թուրքացնել այդ տարրերը»¹⁶: Այդ ծրագիրը որդեգրեցին թուրքական կառավարող շրջանները: 1909 թ. հունվարից կառավարությունը հանգամանորեն նախապատրաստվեց և ապրիլին իրագործեց Ադանայի վիլայեթի 30 հազար խաղաղ բնակիչների կոտորածը: Վիլայեթում հայ ազգաբնակչությանը հասցրած վնասը կազմում էր շուրջ 20 մլն թուրքական լիրա¹⁷: Ըստ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության Ազգային վարչության հանձնաժողովի պաշտոնական տեղեկագրի՝ եղեռնի գլխավոր հանցավորներն էին Ադանայի կուսակալ Ջևադ բեյը, գորահրամանատար Մուստաֆա Բենզի փաշան և նրանց հրահանգները տեղերում կատարող պաշ-

տոնյաները¹⁸: Անշուշտ, կոտորածների չափերն ավելի մեծ կլինեին, եթե Սիս, Տարսոն, Մարաշ, Հաճն քաղաքներում, Քեսաբ ավանում, Շեյխ-Մուրադ և Չոք-Մարզվան (Դորթ-Յոլ) գյուղերում ու Կիլիկիայի մյուս բնակավայրերում հայերը հերոսաբար չդիմագրավեին մահմեդական զինված հրոսակներին¹⁹: Իսկ մեծ տերությունները, շարունակելով թուրքական կառավարության նկատմամբ բարյացակամ վերաբերմունքը, բավարարվեցին Մերսինում և Ալեքսանդրետում դեսանտ իջեցնելով, որն ավելի կատաղեցրեց կոտորածը կազմակերպած և իրագործած թուրքական իշխանություններին²⁰: Հայերի ջարդը արտահայտությունն էր ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ նոր վարչակարգի «ուժային» քաղաքականության²¹, որով երիտթուրքերը փորձում էին ոչ միայն լուծել ազգային խնդիրները, այլև հաղթահարել երկրում «բուրժուական առաջադիմության կրողը» հանդիսացող ոչ թուրք ժողովուրդների²², այդ թվում և հայերի «մշակութային և տնտեսական առավելությունը»²³: Թուրքական կառավարության քաղաքականությունը ենթադրում էր նաև «Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի իրավունքների սահմանափակում»²⁴, այն է՝ «պատրիարքին ճանաչել միայն իբրև հայոց եկեղեցու առաջնորդ և զրկել նրան Թուրքիայի հայ բնակչության ներկայացուցչի իրավունքներից»²⁵:

Բալկանյան առաջին պատերազմի ընթացքում հայության նկատմամբ կամայականությունը սաստկացավ: Բալկանյան դաշինքի երկրներից Թուրքիային հասցվող հարվածների ազդեցությամբ թուրքական իշխանությունների և մահմեդական բնակչության մի մասի մոտ նոր թափով բորբոքվեցին ատելության տրամադրություններ քրիստոնյա հպատակների դեմ²⁶: Պարտված թուրքական զորամասերը բալկանյան ռազմաճակատից վերադառնում էին Ռումելիայի փախստական մուհաջիրների 1,5 միլիոնանոց բանակով, որը կառավարությունն ուղղում էր դեպի Արևմտյան Հայաստան²⁷: Փախստականների ապահովումը տներով, հողով, սննդով կատարվում էր ի հաշիվ հայերի տասնապատկված բռնությունների, կեղեքումների և «թուրքական իշխանությունների կողմից խրախուսվող հողազրկումների»²⁸: Այնուհայտ էր, որ բալկանյան տիրույթները կորցնելու վտանգի առջև կանգնած թուրքական կառավարությունն ուշադրությունը բևեռել էր դեպի Արևելք և, զինվելով մարտնչող համաթրքության գաղափարներով, գրոհում էր հայերի վրա, որպեսզի հայ բնակչության պարբերական ջարդերի, կոտորածների ու զանգվածային արտագաղթի հաշվին ամրապնդեր իր դիրքերը

Ռուսաստանի հետ սահմանին, արևելյան վիլայեթներում ստվարացներ մահմեդական տարրը:

Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի պարտությունը, պատերազմի արդյունքների նկատմամբ դիվանագիտական աշխարհի ցուցաբերած հետաքրքրությունը նախադրյալներ ստեղծեցին Հայկական հարցի բարձրացման համար: Հայ հասարակական շրջաններում քննարկվում էին «հայ ժողովրդի գոյությամբ ամենաշահագրգռված» տերության՝ Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի գրավման²⁹, նրա հովանավորությամբ Օսմանյան կայսրության սահմաններում ինքնավար Հայաստանի ստեղծման, այդ պետության նախածեռնությամբ և վեց տերությունների վերահսկողությամբ բարենորոգումների անցկացման տարբերակները³⁰: Դրանց հեռանկարների հարցում վերաբերմունքը տարբեր էր: Բարենորոգումների իրագործումը դիտվում էր որպես «կիսամիջոց», որով թուրքական վարչակարգի պայմաններում անհնար էր էապես փոխել արևմտահայերի դրությունը³¹: Հայերի համար առավել ցանկալի էր Ռուսաստանի հովանավորությամբ Օսմանյան կայսրության կազմում ինքնավար Հայաստանի ստեղծման տարբերակը, բայց այն անիրականանալի էր, քանի որ մյուս եվրոպական տերությունները և Թուրքիան դեմ էին Օսմանյան կայսրությունում Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը³²: Բացի այդ, հարցի մեծ լուծումը չէր կարող լինել վերջնական, որովհետև վաղ թե ուշ հանգեցնելու էր թուրքական տիրապետության վերականգնմանն Արևմտյան Հայաստանում: Հայ հասարակական շրջաններում իշխող էր դառնում այն մտայնությունը, որ Հայկական հարցն «արմատապես և վերջնականորեն կարող էր լուծել Արևմտյան Հայաստանի ռուսական անեքսիան»³³: Դրա շնորհիվ արևմտահայերը վերջնականորեն կազատագրվեին թուրքական տիրապետությունից և հզոր Ռուսաստանի հովանավորությամբ կստանային տնտեսական ու մշակութային զարգացման հնարավորություններ: Բայց որքանով էր այդ տարբերակն իրականանալի: Ինչպես՞ կվերաբերվեին դրան տերությունները, և արդյո՞ք հայության ազգային շահերն այս անգամ էլ չէին ստորադասվի մեծ տերությունների «առավել լուրջ ու հյուստապ» խնդիրներին: Ակնհայտ էր, որ ոչ մի տերություն առանց մյուսների չէր կարող լուծել Հայկական հարցը, իսկ առանց Ռուսաստանի անմիջական մասնակցությամբ այն ընդհանրապես չէր լուծվի:

1912 թ. սեպտեմբերի 19-ին Թիֆլիսում կայացավ հայ հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների ժողով, որը, հենվելով հայերի

աղետալի դրության վերաբերյալ Արևմտյան Հայաստանից ստացվող փաստերի վրա, դիմեց հայոց կաթողիկոսին՝ խնդրելով «միջնորդ հանդիսանալ ռուսական կառավարության առջև առաջն առնելու... մասնակի կոտորածի, թալանների և առևանգումների»³⁴: Հոկտեմբերի 2-ին հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդ Տփղիսեցին (Սուրենյանց, Ամենայն հայոց կաթողիկոս 1912–1930) Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով–Դաշկովի միջոցով պաշտոնապես դիմեց Նիկոլայ 2-րդին՝ խնդրելով «իր հովանավորության տակ առնել Թուրքահայաստանի բազմաչարչար հայ ժողովրդին»³⁵: Կաթողիկոսը միաժամանակ իր ներկայացուցչին՝ Մեսրոպ եպիսկոպոս Տեր–Մովսիսյանին ուղարկեց Պետերբուրգ, իսկ նոյեմբերի 10-ի հատուկ կոնդակով Եգիպտոսի հայ մեծահարուստ, հայտնի հասարակական–քաղաքական գործիչ Պողոս–Նուբար փաշային (1851–1930) լիազորեց Բեռլինի համաձայնագիրը ստորագրած պետությունների առջև բարձրացնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացման հարցը: Այդ նպատակով կազմվեց Ազգային պատվիրակություն³⁶: Նշենք, որ եվրոպական տերություններին դիմելու նպատակով պատվիրակություն ունենալու հարցը համաձայնեցվել էր Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ Մեսրոպ եպիսկոպոսի և Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովի ու Նախարարների խորհրդի նախագահ Վ. Կոկովցևի հետ հանդիպումների ընթացքում: Ռուսական պետական երկու գործիչներն էլ խորհուրդ էին տվել «դիմել մաս մյուս տերություններին»³⁷:

Հայկական հարցը բարձրացնելու խնդրում կաթողիկոսին գործուն անջակցություն էին ցույց տալիս հայ ազգային կուսակցությունները, Կոստանդնուպոլսում ստեղծված Ազգային վարչությունը և Թիֆլիսի ժամանակավոր բյուրոն³⁸: Նրանց համատեղ ջանքերով որոշակիացվեցին այն նախագծերը, որոնցով առաջնորդվելու էին Ամենայն հայոց կաթողիկոսը, Ազգային պատվիրակությունը և Պատրիարքարանը ռուսական, եվրոպական ու թուրքական կառավարությունների հետ բանակցություններում: Կաթողիկոսի նախագիծը, որը կազմվել էր ռուսական կառավարող շրջաններում իշխող տրամադրությունների անմիջական ազդեցությամբ, նախատեսում էր Օսմանյան կայսրության կազմում ինքնավար Հայաստանի ստեղծում Ռուսաստանի հովանավորությամբ³⁹: Ճիշտ է, Պողոս Նուբար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակությունն առաջնորդվում էր կաթողիկոսի հրահանգներով, բայց ազգային պահանջների հիմքում դնում էր 1895 թ. բարենորոգումների Մայիսյան ծրագիրը: Պողոս Նուբար փաշան համոզված էր,

որ քաղաքական ինքնավարության տարբերակը ոչ մի եվրոպական տերություն չէր ընդունի, իսկ թուրքական կառավարությունը չէր համաձայնի տերությունների կողմից եվրոպացի տեսուչի նշանակմանը: Հետևաբար՝ Ազգային պատվիրակության առաջնահերթ խնդիրը նա համարում էր պայքարը մեծ տերությունների ներկայացուցիչներից կազմված միջազգային մարմնի վերահսկողության ներքո Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման համար⁴⁰:

Պատրիարքարանը, որի միջոցով իրականացվում էին հարաբերությունները թուրքական կառավարության հետ, իր նախագիծը կազմել էր իրավական ուժ ունեցող միջազգային և թուրքական վարչական կանոնադրերի ու օրենքների, 1895 թ. Մայիսյան ծրագրի հիման վրա: Նա, «առանց ինքնավարության կամ անջատման կերպարանք տալու ազգային պահանջներին», ձգտում էր «ապահովել հայ ժողովրդի ապագա գոյությունը և ազատ զարգացման հիմքերը»՝ հայկական վիլայեթների ընդհանուր տեսուչի նշանակման ձևն ու նրան տրվելիք իրավունքների խնդիրը ոչ միայն Թուրքիայից, այլև մեծ տերություններից կախման մեջ դնելու միջոցով⁴¹:

Չնայած առաջարկվող նախագծերի՝ քաղաքական անհրաժեշտությամբ թելադրված տարբերություններին, ակնհայտ էր, որ հայ հասարակական-քաղաքական շրջաններն ակնկալում էին տերությունների վերահսկողությամբ այնպիսի բարենորոգումների իրագործում Արևմտյան Հայաստանում, որոնք ապահովեին հայության ազգային իրավունքների պաշտպանության կալում երաշխիքներ և իրական հիմք դառնային նախ՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարության, այնուհետև՝ հայ ժողովրդի երկու հատվածների միավորման համար:

Հայ հասարակական շրջաններում տիրող ոգևորությունն ու այդ մթնոլորտում ռուսական կողմնորոշման ամրապնդումը ձեռնտու էին Ռուսաստանին, որը ձգտում էր, Թուրքիայի թուլացումից օգտվելով, Արևմտյան Հայաստանի տարածքը հենց սկսած դարձնել Մերձավոր Արևելքում իր հետագա առաջխաղացման հստակ: Այդ տեսանկյունից «հայ ժողովրդի հոգևոր առաջնորդի կողմից պաշտոնապես հարուցված հարցը Ռուսաստանի համար առաջնակարգ պետական կարևորություն» ուներ⁴²: Ռուսական դիվանագիտությունը նպատակահարմար էր գտնում, որ Ռուսաստանը բարձրացներ Հայաստանում բարենորոգումների խնդիրը⁴³: Դրանով նա նպատակ ուներ Հայկական հարցի ընթացքը համապատասխանեցնել ռուսական արտաքին քաղաքականության շահերին, ամրապնդել Ռուսաստանի

նկատմամբ հայերի համակրանքը և, դրանով իսկ՝ Ռուսաստանի ազդեցությունն Արևմտյան Հայաստանում՝ միսժամանակ թուլացնելով մյուս տերություններից հատկապես Գերմանիայի դիրքերը⁴⁴: Արևմտյան Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության վերջնակետն այդ տարածքի անեքսիան (գինագրավում կամ բռնակցում) էր, որը, Ս. Մազոնովի կարծիքով, սկիզբ կդնէր ասիական Թուրքիայի բաժանմանը և կհանգեցներ «եվրոպական պատերազմի»⁴⁵: Բայց Ռուսաստանը դրան դեռևս պատրաստ չէր ոչ դիվանագիտական և ոչ էլ ռազմական տեսակետից: Ահա թե ինչու ցարական կառավարությունը Բալկանյան պատերազմի ավարտից, Թուրքիայի հետ հաշտության պայմանների մշակումից և միջպետական հակասությունների թուլացումից հետո անհապաղ բարձրացրեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացման հարցը: Ռուսաստանի կառավարող շրջանների կարծիքով, դրանք պետք է ավելի թուլացնեին Թուրքիան, նախապատրաստեին Հայաստանի գրավումը:

Գլխակցելով Արևմտյան Հայաստանում թուրքական վարչակարգի արմատական բարեփոխման և այդ հարցում նախաձեռնությունը չկորցնելու անհրաժեշտությունը՝ ռուսական կառավարությունը քննարկման համար 1913 թ. հունիսի սկզբներին մեծ տերություններին ներկայացրեց Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանատան Առաջին դրագոման և խորհրդական Ա. Ն. Մանդելշտամի կազմած հայկական բարենորոգումների նախնական նախագիծը (avant-projet): Այն հիմնված էր Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանների 1895 թ. հիշատակագրի և բարենորոգումների ծրագրի, 1895 թ. հոկտեմբերի 20-ի սուլթանի հրովարտակի, 1880 թ. եվրոպական հանձնաժողովի օրինագծի, Լիբանանի արձանագրության ու կանոնադրության վրա և համապատասխանում էր Կոստանդնուպոլսի պատրիարքարանի ու Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ապրիլյան ներկայացրած վերոհիշյալ ծրագրերի դրույթներին⁴⁶: Նախագիծն առաջարկում էր հայկական վեց վիլայեթներից (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբեռլո, Սեբաստիա) հիմնել հայկական մի նահանգ, բացառությամբ Հեքիարիի, Բիշերիկի, Մալաթիայի, Սղերդից հարավ և Սեբաստիայից հյուսիս-արևմուտք ընկած սահմանային շրջանների, ուր գերակշռում էր քրդական բնակչությունը⁴⁷: Նահանգի գերագույն կառավարիչը պետք է լիներ թուրքահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի, որին նշանակելու էր սուլթանը հինգ տարի ժամկետով՝ մեծ տերությունների առաջարկությամբ: Ընդհանուր նահանգապետի կամ կոմիսարի ձեռքում էր կենտրոնացվելու երկրա-

մասի գերագույն գործադիր իշխանությունը: Նա էր նշանակելու և արձակելու բոլոր պաշտոնյաներին: Նրան էին ենթարկվելու ոստիկանությունը և ժանդարմական կորպուսը, ինչպես նաև երկրամասում կարգը պահպանելու համար նախատեսված զինված ուժերը: Ընդհանուր նահանգապետին օգնելու էր վարչական խորհուրդը՝ կազմված նահանգի վարչության ղեկավարներից, կրոնական համայնքների հոգևոր առաջնորդներից, մեկ եվրոպացի, ինչպես նաև երեք մահմեդական ու երեք քրիստոնյա խորհրդականներից: Նահանգում օրենսդիր իշխանությունն իրականացնելու էր հինգ տարի ժամկետով կազմվելիք ներկայացուցչական ժողովը: Նրա անդամները՝ հավասար թվով մահմեդականներ և քրիստոնյաներ, ընտրվելու էին կազմներում՝ գաղտնի քվեարկությամբ: Ընդ որում, նրանց տրվելիք տեղերի քանակը յուրաքանչյուր կազայի համար որոշվելու էր առանձին: Ներկայացուցչական ժողովի կազմած օրինագծերը երկամսյա ժամկետում պետք է հաստատվեին կամ մերժվեին սուլթանի կողմից: Վերջինիս պատասխանի ուշացումը նշված ժամկետը լրանալուց հետո մեկնաբանվելու էր որպես տվյալ օրինագծի հաստատում: Հավասարության սկզբունքը դրվելու էր նահանգում բոլոր պաշտոնների, օրենսդիր և գործադիր իշխանությունն իրականացնող մարմինների, ոստիկանության և ժանդարմերիայի կազմակերպման հիմքում: Ընդունվում էր նահանգում թուրքերենի, հայերենի և քրդերենի գործածման հավասարությունը: Քրդական «համիդիե» հեծելազորն արձակվելու էր: Նահանգի բոլոր ազգություններին տրվելու էր ազգային կրթության և կրթական հաստատությունների ծախսերի համար հարկեր սահմանելու հավասար իրավունք: Ընդհանուր նահանգապետը և հատուկ հանձնաժողովը միասին սահմանելու էին այն պայմանները, որոնց համաձայն հայերին վերադարձվելու էին նրանցից խլված հողերը: Մուհաջիրներին (Բալկաններից եկած մահմեդական վերաբնակիչներին) արգելվում էր բնակեցնել կազմավորվելիք հայկական նահանգում: Բարենորոգումների իրագործումը վերահսկելու էին մեծ տերությունները⁴⁸: Ռուսական նախագիծը, որը բնեցին նախ՝ այդ պետության, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ապա նաև՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի ու Իտալիայի ղեսպանները և ղեսպանատների ներկայացուցիչները հուլիսի 3-ից 24-ը, հանդիպեց Եռյակ Միության երկրների համառ դիմադրությանը⁴⁹: Շուտով թուրքական կառավարությունը տերությունների քննարկմանը ներկայացրեց Բեռլինից տրված խորհուրդներով շտապ կազմած բարենորոգումների յոթ նախագիծը: Այն նախատեսում էր ողջ փոքրասիական Թուրքիայի բաժանում վեց նահանգների, ո-

րոնք կառավարելու էին օտարերկրացի ընդհանուր վերատեսուչները: Նրանց նշանակելու էր սուլթանը: Վանի, Բիթլիսի, Դիարբեքիի և Խարբերդի վիլայեթները վարչականորեն բաժանվելու էին «հյուսիսային» և «հարավային» նահանգների⁵⁰: Վիլայեթների գործող իրավակարգը պահպանվելու էր, իսկ վերատեսուչները միմիայն հսկելու էին վարչությունը և արձակելու պաշտոնյաներին⁵¹: Հանգամանորեն ծանոթանալով Բ. Դռան ներկայացրած նախագծին՝ Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Մ. Գիրսը հունիսի 19-ին Պետերբուրգ ուղարկած ճեպագրում տեղեկացնում էր, որ «Բ. Դռան ներկայացրած օրենքները կրում են հատվածական ու ծրագրային բնույթ: Դրանք հեռու են 1895 թ. սահմանված և Ա. Ն. Մանդելշտամի նախագծում զարգացված բարենորոգումներից»⁵²: Նախագծում ոչինչ չէր ասվում նահանգի վարչությանը քրիստոնյաների մասնակցության և նրանց իրավունքների մասին: Ըստ էության, բարենորոգումների թուրքական նախագծի իրագործումը նոր քայլ էր հանդիսանալու «հայերի կոտորածները շարունակելու, նրանց մահմեդական միջավայրին ձուլելու» պետական քաղաքականության ճանապարհին⁵³:

Վեց տերությունների դեսպանատների ներկայացուցիչների խորհրդակցությունում հայկական բարենորոգումների հիմքում ռուսակա՞ն, թե՞ թուրքական նախագիծը դնելու հարցի բննարկումը վերածվեց Ռուսաստանի և Գերմանիայի միջև դիվանագիտական լարված մենամարտի: Բացի այն, որ Եռյակ միության ներկայացուցիչները դժվարությամբ համաձայնեցին ռուսական նախագծի բննարկմանը, Գերմանիայի դիվանագետները ձգտում էին նվազագույնի հասցնել այն: Ռուսական դեսպանատան ներկայացուցիչը՝ Ա. Մանդելշտամը, պայքարում էր ռուսական նախագծի յուրաքանչյուր դրույթի համար⁵⁴: Գերմանական կողմի նրա հակառակորդը դեսպանատան երկրորդ խորհրդակցական Շոնբերգն էր: Ռուսական նախագծի բննարկումը նպաստեց համաձայնության կայացման միայն դպրոցների բացման, լեզուների հավասար գործածման, «համիդիե» հեծելազորի վերացման հարցերում: Ինչ վերաբերում է նախագծի գլխավոր հիմունքներին՝ հայկական վեց վիլայեթներից մեկ նահանգի հիմնմանը, լայն իրավունքներ ունեցող ընդհանուր նահանգապետի նշանակմանը մեծ տերությունների համաձայնությամբ, ներկայացուցչական ժողովի գումարմանը, մահմեդականների և քրիստոնյաների հավասարությանը նահանգում պաշտոնները բաշխելիս, հողային խնդրի կարգավորմանն ու հայկական վիլայեթներում մուհաջիրների բնակեցումն արգելելուն, ապա Եռյակ միության երկրների

ներկայացուցիչները դրանք որակեցին որպես «սուլթանի ինքնիշխանությամբ հակասող, Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը վտանգող» հողվածներ⁵⁵: Ռուս-գերմանական դիվանագիտական պայքարն այնքան լարված էր, որ ռուսական կառավարությունը հայկական խնդրի վերաբերյալ իր ծրագիրը պաշտպանելու նպատակով հունիսի 25-ին հանդես եկավ Եռյակ միության երկրներին ուղղված հուշագրով: Իր պաշտոնական տեսակետը լրացնող ու ամբողջացնող այդ փաստաթղթով «Պետերբուրգի կառավարությունը հայտարարում էր», թե «Ռուսաստանը հակառակ է Օսմանյան կայսրության անդամահատության գաղափարին, բայց ուժգնորեն պնդում է անդորրություն հաստատել թուրքահայկական մահանգներում, ուր չի կարող հանդուրժվել անկարգության և անիշխանության վիճակը, որը կարող է խիստ վտանգավոր անդրադարձում ունենալ Կովկասի սահմանակից շրջաններում»: Ռուսական կառավարությունը ցանկություն էր հայտնում, որ «պետությունները անհասպաղ ձեռք առնեն պահանջված բարենորոգումների իրականացումը» և հույս էր հայտնում, որ «միայն մի արագ և ըստ կարելվոյն լիակատար համաձայնությունը պետությունների միջև կարող է առաջն առնել այլապես ահավոր բարդություններով մոտալուտ վտանգի»⁵⁶: Չնայած դրան, գերմանական ներկայացուցիչ Շոնբերգը խորհրդակցության մասնակիցներին առաջարկեց բարենորոգումների հիմք ընդունել թուրքական նախագիծը, իսկ ռուսականից վերցնել միայն ոչ հիմնական հողվածները: Ա. Մանդելշտամը կտրականորեն մերժեց այդ առաջարկը: Քննիչ հանձնաժողովը, իր նիստերում այդ հարցերի շուրջ համաձայնության չգալով, դադարեցրեց աշխատանքը⁵⁷:

Հայկական բարենորոգումների հարցի քննարկումը վեր հանեց Մերձավոր Արևելքում տերությունների քաղաքական շահերն ու հակասությունները, որոնցից գլխավորը ռուս-գերմանական հակամարտությունն էր: Բեռլինում այն կարծիքին էին, որ բարենորոգումների ռուսական ծրագրի իրագործումը սկիզբ կդնեք Օսմանյան կայսրության մասնատմանը, կվտանգեր Միջագետքում և Բաղդադի երկաթուղագծի երկայնքով փռված գերմանական ազդեցության ոլորտների անձեռնմխելիությունը⁵⁸: Գերմանիան ոչինչ չէր շահի Օսմանյան կայսրության մասնատումից: Թուրքական «ժառանգության» ամենամեծ բաժինը կստանար Ռուսաստանը, որը տիրում էր Սև ծովին և ցամաքային երկար սահման ուներ Թուրքիայի հետ: Անգլիան անմիջապես կգավթեր Սուեզի ջրանցքն ու Պարսկական ծոցը, Ֆրանսիան՝ Սիրիան՝ «գրեթե ոչինչ չթողնելով Գերմանիային»: Ահա թե ինչու Բեռլինում

աշխատում էին երկարաձգել «հիվանդ մարդու» կյանքը, հետաձգել Օսմանյան կայսրության մասնատումն այնքան, մինչև Գերմանիայի ազդեցությունն իշխող դառնար կայսրության հասարակական կյանքի բոլոր բնագավառներում⁵⁹, մինչև Գերմանիան «ազդեցության գոտիներում համախմբեր իր ուժերը և սլատրաստ լիներ զավթումների»⁶⁰: Համագերմանության շահը Բեռլինի կառավարությանը մղում էր քաղաքական աջակցություն ցույց տալ Բ. Դռանը, բարենորոգումների խնդրում հանդես գալ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության պահպանման դիրքերից: Դռանով իսկ Հայկական հարցում Գերմանիայի վարած քաղաքականությունը հակադրվում էր Ռուսաստանի քաղաքականությանը: Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ ռուս-գերմանական բանակցություններին մասնակցած Կ. Գուլկևիչը Ս. Սազոնովին գրած նամակներից մեկում նշում էր. «Գերմանիան բանակցությունների մեջ մտավ մեզ հետ Հայկական հարցի առթիվ երկու նպատակով. նախ, որպեսզի հարմար ժամանակին հիշեցնի Դռան, որ շնորհիվ իր միջամտության նա զսպեց Ռուսաստանին պահանջելու լայն բարենորոգումներ...: Երկրորդ, որպեսզի գրավի դեպ իրեն հայերի ուշադրությունը, որոնց Գերմանիան կարևորություն է ընծայում շնորհիվ նրանց գերակայության Կիլիկիայում, որը գերմանացիները դասում են իրենց ազդեցության շրջանում: Այդ պատճառով Գերմանիայի վերաբերմունքը բոլոր ժամանակ հայտնի եղավ իր կեղծությամբ: Իրոք, գերմանական դիվանագետները թուրքերի հավատարիմ խորհրդակիցներն էին»⁶¹: Այս առումով հատկապես երկդիմի էր Եռյակ միության երկրներից Իտալիայի կեցվածքը: Ճիշտ է, դեռևս 1911 թ. սեպտեմբերի 29-ին Իտալիան պատերազմ էր սկսել Թուրքիայի դեմ, որը տևել էր մեկ տարուց ավելի և ավարտվել 1912 թ. հոկտեմբերի 15-ին: Տրիպոլիտանյան ամուրով այդ պատերազմում Թուրքիան ծանր պարտություն էր կրել և Իտալիային զիջել աֆրիկյան իր վերջին տիրույթները Եգիպտոսից դեպի արևմուտք՝ մինչև Թունիս: Եվ այժմ, թվում է, թե Իտալիան պետք է շարունակեր Օսմանյան կայսրությունը մասնատելու քաղաքականությունը: Սակայն միջազգային իրադրությունն այժմ այլ խնդիր էր կարևորում այդ պետության և նրա դաշնակից Ավստրո-Հունգարիայի համար: Դա Բալկաններում հարավսլավոնական փոքր պետությունների ամրապնդման վտանգն էր, որը կանխելու համար երկու դաշնակիցներն էլ շահագրգռվածություն էին արտահայտում Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու հարցում: Ահա թե ինչու Հայաստանի բարենորոգումների

խնդրին նրանց միջամտությունը դրսևորվում էր Գերմանիայի քաղաքականությանն աջակցելով: Այդ է վկայում Բեռլինի հայ-գերմանական ընկերության հիշատակագրերից մեկը, որը կրում է «Չանագան կառավարությունների վերաբերմունքը Հայկական խնդրին» վերնագիրը⁶²:

Մեծ Բրիտանիայի կառավարությունը երկյուղում էր Մերձավոր Արևելքում թե՛ Գերմանիայի և թե՛ Ռուսաստանի քաղաքական ու ռազմական առաջխաղացման դեպքում Փոքր Ասիայում և Հնդկաստանում իր շահերի անձեռնմխելիությանը սպառնացող վտանգից: Ահա թե ինչու նա հետևում էր երկդիմի քաղաքական գործելակերպի, որի էությունը Մերձավոր Արևելքում բրիտանական գաղութային շահերը պաշտպանելն էր այնտեղից Ռուսաստանին և Գերմանիային դուրս մղելու միջոցով: Ընդ որում, անգլիական դիվանագիտությունը, հավատարիմ մնալով ուրիշի ձեռքով կրակից շագանակներ հանելու սկզբունքին, ոչ թե գործում էր բացահայտորեն, այլ աշխատում էր ռուս-գերմանական հակասությունները սրելով՝ խոչընդոտել այդ սրցակիցների դիրքերի ուժեղացումը տարածաշրջանում⁶³: Այդ էր վկայում 1913 թ. մայիսին անգլո-թուրքական համաձայնագրի կնքումը: Դրան նախորդել էր Պոտսդամում ռուս-գերմանական համաձայնության կնքումն, ըստ որի՝ Գերմանիան՝ հրաժարվել էր Պարսկաստանում ակտիվ դիրքեր գրավելուց, իսկ Ռուսաստանը համաձայնել էր չխոչընդոտել Բաղդադի երկաթուղու կառուցմանը: Դիվանագիտական այս փոխզիջումն անմիջապես պատասխան քայլերի առիթ ծառայեց Անգլիայի և Ֆրանսիայի համար: Անգլիան, այլևս ապարդյուն համարելով Բաղդադի երկաթուղու կառուցմանն ընդդիմանալու քաղաքականությունը, առիթը բարեպատեհ համարեց հարավային Պարսկաստանի և Պարսից ծոցի շրջանում իր դիրքերն ամրապնդելու համար: Անգլիական կառավարության և Բ. Դռան միջև ձեռք բերվեց պայմանավորվածություն, որ Բաղդադի երկաթուղին չշարունակվի Բասրայից այն կողմ, որտեղից սկսվում էր անգլիական ազդեցության շրջանը: Այդ համաձայնագրով Թուրքիան ճանաչում էր Քուվեյթի շեյխի ինքնուրույնությունը, ինչը նպաստելու էր Անգլիայի ազդեցության ամրապնդմանն այդ տարածքում: Դրա փոխարեն անգլիական կառավարությունը պարտավորվում էր Թուրքիայի առջև «ամեն ջանք գործադրել հայերին հանգստացնելու և թույլ չտալու օտարերկրյա ոչ մի միջամտություն հայկական շարժման պատրվակի տակ», խոստանում էր երեք միլիոն ֆունտ ստեռլինգ տրամադրել թուրքական բանակի վերակառուցման նպատակին, քառասուն տարով երաշխավորում էր Թուրքիայի ասիական տիրույթների անձեռնմխե-

լիությունը: Պատահական չէ, որ անգլո-թուրքական համաձայնության կնքումից հետո անգլիական ձեռներեցները նոր իրավունքներ ստացան Բաղդադում և Մոսուլում⁶⁴:

Ֆրանսիան ևս Օսմանյան կայսրությունում ուներ իր շահերն ու հետաքրքրությունները: Դրանք կապված էին Սիրիայում և Կիլիկիայում երկաթուղային երկարաժամկետ ներդրումների հետ, որոնք գերմանական կառավարությունը ֆրանսիական ձեռներեցներին էր զիջել Բաղդադի երկաթուղագծի բաժնետոմսերի տերը դառնալուց հետո: Ֆրանսիան պլաններ էր մշակում իր մրցակիցներից ետ չմնալու, Կիլիկիայում, Սիրիայում և Պաղեստինում ֆրանսիական ազդեցությունն ամրապնդելու համար: Ֆրանսիական կապիտալիստներն այդ նպատակով ձգտում էին թուրքական կառավարությունից ստանալ Սամսուն–Սեբաստիա–Խարբերդ–Դիարբեքիր և Դիարբեքիր–Էրզրում–Տրապիզոն գծերով երկաթուղային ներդրման հնարավորությունն Արևմտյան Հայաստանում և Երուսաղեմ–Հալեպ գծով ներդրման իրավունքը Սիրիայում: Այդ տեսանկյունից էր Ֆրանսիան առնչվում Հայկական հարցին, և նա, բնականաբար, կողմ չէր, որ Ռուսաստանն ինքնուրույն հաջողության հասներ Արևմտյան Հայաստանում: Եթե Գերմանիայի դեմ Եվրոպայում միայնակ մնալու երկյուղը նրան մերձեցրել էր Ռուսաստանի հետ, ապա Մերձավոր Արևելքում ոչ միայն Գերմանիայի, այլև Ռուսաստանի հավակնությունների դեմ պայքարի անհրաժեշտությունը միավորել էր Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի շահերն ու ջանքերը: Ֆրանսիական դիվանագիտությունը շահագրգռված էր Օսմանյան կայսրությունում գերմանական ազդեցության ներթափանցմամբ այնքանով, որքանով դա շեղում էր Գերմանիայի կառավարող շրջանների ուշադրությունը Աֆրիկայում ֆրանսիական հետաքրքրությունների ոլորտը հանդիսացող Մարոկկոյից, զսպում Օսմանյան կայսրությունում Ռուսաստանի տնտեսական, քաղաքական ներթափանցումը: Մինչդեռ այդ երկրում Գերմանիայի ազդեցության դեմ նրանք հենվում էին ռուսական հակակշռի վրա: Ահա թե ինչու Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցի քննարկման ընթացքում Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչները ձևականորեն աջակցում էին Ռուսաստանին, որպես իրենց ռազմաքաղաքական դաշնակցի՝ գործնականում չընդունելով ռուսական առաջարկները: Իրար հակադրելով բարենորոգումների հարցում առավելագույնի հասնելու Ռուսաստանի ձգտումն ու Թուրքիայի ինքնիշխանությանը սպառնացող ոտնձգությունները կանխելու գերմանական դիրքորոշումը՝ անգլիական ու ֆրան-

սիական դիվանագետներն իրականում փորձում էին հավասարակշռել Մերձավոր Արևելքում քաղաքական ուժերի ազդեցությունը և պահպանել սեփական դիրքերը: Ո՛չ Մեծ Բրիտանիան և ո՛չ էլ Ֆրանսիան շահագրգռված չէին Արևմտյան Հայաստանի բարենորոգումներով:

Մեծ տերությունների դեսպանների Ենի-Քյոյի խորհրդակցության ձախողումից հետո ռուսական կառավարությունը բանակցություններ սկսեց գերմանական կողմի հետ⁶⁵: Իր դաշնակիցներից աջակցություն չստանալով՝ Ռուսաստանը հարկադրված էր զիջումների գնալ⁶⁶: Կոստանդնուպոլսում ռուսական և գերմանական դեսպաններ Մ. Գիբսի և Հ. Վանգենհայմի բանակցությունների արդյունքում 1913 թ. սեպտեմբերի 10-ին ստորագրվեց համաձայնագիր վեց հոդվածներից բաղկացած ծրագրի վերաբերյալ: Այն նախատեսում էր Արևմտյան Հայաստանի բաժանում երկու հատվածների՝ «հյուսիսային» և «հարավային»: «Հյուսիսային» հատվածն ընդգրկելու էր Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի վիլայեթները, «հարավայինը»՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիլի վիլայեթները: Հատվածները կառավարելու էին եվրոպացի ընդհանուր վերատեսուչները: Այդ պաշտոնում թեկնածուներին առաջադրելու էին տերությունները, բայց նշանակելու էր Բ. Դուռը: Թուրքական կառավարությունը պարտավորվելու էր հետագայում ևս այդ հարցով դիմել տերություններին: Ընդհանուր վերատեսուչներն էին նշանակելու և արձակելու պաշտոնյաներին, սուլթանի հաստատմանը ներկայացնելու բարձր պաշտոնյաների ու դատավորների թեկնածուներ: Յուրաքանչյուր հատվածում սահմանվում էր ներկայացուցչական ժողով՝ բաղկացած հավասար թվով մահմեդականներից և քրիստոնյաներից: Հավասարության սկզբունքը կիրառվելու էր նաև երկու հատվածների վարչական պաշտոնների բաժանման հարցում: Տերություններն իրավունք էին ստանում վերահսկելու բարենորոգումների կենսագործումը Կոստանդնուպոլսում իրենց դեսպանների, իսկ գավառներում՝ հյուպատոսների միջոցով⁶⁷: Ռուս-գերմանական համաձայնագրի ստորագրումով և հայկական վեց վիլայեթներից վարչական մեկ միավոր ստեղծելու մասին դրույթից հրաժարումով բարենորոգումների իրագործումը զրկվեց կարևոր երաշխիքից: Հայկական վեց վիլայեթներից կազմվելու էր երկու առանձին վարչական միավոր: Փաստորեն, վիլայեթները զրկվելու էին միասնությունից և փոխադարձ կապերի համաչափությունից: Այս պայմաններում մնում էր հուսալ, որ ընդհանուր վերատեսուչների պաշտոնում եվրոպացիների նշանակումը, հատվածների խորհուրդներում մահմեդականների ու քրիստոնյաների թվի հավասար

րությունն ապահովեին արևմտահայերի ազգային իրավունքների պաշտպանությունը: Թեև նվազագույնի հասցված ռուս-գերմանական ծրագիրը քայլ էր դեպի հետ ռուսական սկզբնական ծրագրի համեմատ, այնուամենայնիվ թուրքական կառավարությունը չընդունեց այն⁶⁸: Ռուսական դեսպանությունը հարկադրված էր հետևողական ու դժվարին դիվանագիտական պայքար մղել թուրքական կառավարության դեմ: Ի վերջո, 1914 թ. հունվարի 26 (փետրվարի 8)–ին Թուրքիայում գործերի ռուսական հավատարմատար Կ. Գուլկևիչը և մեծ վեզիր Մայիդ Հալիմ փաշան Կոստանդնուպոլսում ստորագրեցին համաձայնագիր Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ: Ըստ այդ համաձայնագրի, Էրզրումի, Տրապիզոնի, Սեբաստիայի վիլայեթներից և Վանի, Բիթլիսի, Դիարբեքիի ու Խարբերդի վիլայեթներից կազմվելու էին երկու առանձին հատվածներ, որոնք ղեկավարելու էին տերությունների առաջադրած ու թուրքական կառավարության նշանակած եվրոպացի ընդհանուր վերատեսուչները: Նրանք իրականացնելու էին հատվածների վարչության, արդարադատության, ոստիկանության և ժանդարմերիայի կազմակերպումն ու վերահսկողությունը: Ընդհանուր վերատեսուչներն ունենալու էին նաև ռազմական ուժի միջոցով կարգուկանոն ապահովելու, պաշտոնյաներին նշանակելու և արձակելու, սուլթանի հաստատմանը բարձր պաշտոնյաների ու դատավորների թեկնածուներ ներկայացնելու իրավունք: Հողային վեճերը լուծվելու էին ընդհանուր վերատեսուչների անմիջական վերահսկողությամբ: Վերատեսուչների հետ ստորագրած պայմանագրերի՝ ուժը կորցնելու դեպքում Բ. Դուռը կրկին պետք է դիմեր տերություններին՝ թեկնածուներ առաջադրելու հարցով: Բոլոր օրենքները, հրովարտակները և կառավարական հաղորդագրությունները յուրաքանչյուր հատվածում հայտարարվելու էին տեղական լեզուներով: Տվյալ վիլայեթի ժողովրդական կրթության բյուջեում յուրաքանչյուր ազգություն ունենալու էր լուսավորության նպատակներով իր վճարած հարկերին համեմատական մասնաբաժին: Յուրաքանչյուր ազգություն ստանում էր մասնավոր դպրոցներ ունենալու իրավունք: Յուրաքանչյուր թուրքահպատակ խաղաղ ժամանակ զինվորական ծառայություն էր կատարելու այն շրջանում, որտեղ ապրում էր: «Համիդիև» զորագնդերը վերակառուցվելու էին պահեստի հեծելազորի: Չենքը նրանց տրվելու էր միմիայն գորահավաքի ու զինավարժության ժամանակ:

Երկու հատվածներում տարբեր ազգությունների, կրոնական գաղափարախոսությունների և լեզուների ներկայացուցիչների հարաբերակցու-

թյունը որոշելու նպատակով մեկ տարվա ընթացքում անցկացվելու էր հանրաքվե: Մինչև հանրաքվեի անցկացումը Վանի ու Բիթլիսի վիլայեթների ընդհանուր ժողովներում պահպանվելու էր մահմեդականների և քրիստոնյաների հավասար ներկայացուցչության սկզբունքը: Նույն սկզբունքը կիրառվելու էր նաև Էրզրումի վիլայեթում, եթե այնտեղ հանրաքվեն չավարտվեր մեկ տարվա ընթացքում: Սեբաստիայի, Խարբերդի ու Դիարբեքիի վիլայեթներում անհապաղ մտցվելու էին համամասնական ընտրություններ: Հավասարության սկզբունքը մահմեդականների և քրիստոնյաների միջև կիրառվելու էր վարչական խորհուրդներում, երկու հատվածների ոստիկանության և ժանդարմերիայի պաշտոններում: Համաձայնագրում շեշտվում էր երկու ընդհանուր վերատեսուչների հայտնի դառնալուն պես համաձայնագրի բովանդակությունը հուշագրով տերություններին ներկայացնելու՝ Բ. Դռան պարտավորությունը⁶⁹:

✓ Հունվարի 26-ի համաձայնագիրը հայերին չէր տալիս ինքնավարության այն լայն իրավունքները և անվտանգության երաշխիքները, ինչ որ առաջարկվում էր ռուսական սկզբնական նախագծով: Համաձայնագիրը նաև չէր ընդգրկում սեպտեմբերյան ռուս-գերմանական ծրագրի մի քանի դրույթներ: Սկսելով տերությունների վերահսկողությամբ և նրանց առաջադրած եվրոպացի նահանգապետի իշխանության ներքո հայկական մեկ նահանգի ստեղծման, նրա համար մեկ ներկայացուցչական ժողովի հիմնման, վիլայեթների՝ մահմեդական բնակչություն ունեցող մասերը նահանգի սահմաններում չընդգրկելու վերաբերյալ հիմնադրույթներից՝ ռուսական կառավարությունը Բեռլինից Պետերբուրգի վրա կատարված ճնշման, Հայկական հարցում գերմանաթուրքական համագործակցության ազդեցությամբ, Լոնդոնի և Փարիզի կառավարությունների երկդիմի կեցվածքի պայմաններում հանգեց հունվարի 26-ի համաձայնագրով Արևմտյան Հայաստանի համար նախատեսված բարենորոգումների սահմանափակ ծրագրին: Ըստ այդ ծրագրի՝ հայկական վիլայեթներից կազմվելու էին երկու առանձին վարչական միավորներ՝ երկու ընդհանուր տեսուչների վերահսկողությամբ, իսկ վարչական միավորներում ընդգրկվելու էին նաև հայկական վիլայեթների՝ բացառապես մահմեդական բնակչություն ունեցող հատվածները և Տրապիզոնի վիլայեթը: Ռուսաստանը նահանջել էր նաև հայերի համար կենսականորեն կարևոր հողային հարցում՝ բռնագրավված հողերը վերադարձնելու և բալկանյան փախստականներին հայկական վիլայեթներում վերաբնակեցնելն արգելելու վերաբերյալ պահանջի փոխարեն ընդունելով հողային հար-

ցերն ընդհանուր վերատեսուչների ուղղակի վերահսկողությամբ կարգավորելու մասին անորոշ բանաձևը: Իսկ վերջինս թուրքերին հնարավորություն էր տալիս շարունակել Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերն արմատապես փոխելու հակահայկական քաղաքականությունը: Չնայած արևմտահայերի համար աննպաստ այդ հիմնադրույթներին՝ հայ հասարակական շրջաններում ակնկալվում էր, որ հայկական նահանգներում համաձայնագրի իրագործումը հնարավորություն կտար ապահովել հայ բնակչության ֆիզիկական գոյությունը, հիմք կդառնար տերությունների՝ նախ և առաջ Ռուսաստանի վերահսկողությամբ հայերի ինքնակառավարման համար⁷⁰: Այս տեսանկյունից հունվարի 26-ի համաձայնագիրը համաճանաչվեց էր և խոստումնալից:

Ամփոփելով ռուս-թուրքական համաձայնության արդյունքները՝ Կ. Գուլկիչը հունվարի 26-ին արտգործնախարար Ս. Սազոնովին ուղարկած նամակում գրում էր. «Այդպիսով, ընդգծվում է պաշտոնապես Ռուսաստանի ղեկավար դերը հայկական բարենորոգումների հարցում, թերևս հաստատվում է Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը: Այդ հանգամանքն, իհարկե, չի կարող չունենալ ամենանպաստավոր հետևանք Ռուսաստանի միջազգային հեղինակության համար և Մերձավոր Արևելքի քրիստոնյա ազգաբնակչության սիրտը կլցնի նոր երախտագիտությամբ դեպի ռուսական միապետը»⁷¹:

Համաձայնագիրը թուլացրեց թուրքական պետության հնարավոր բաժանման մտավախությունից առաջացած միջազգային լարվածությունը, պահպանեց Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, որը տվյալ պատմական պահին նախընտրելի էր բոլոր տերությունների համար:

Օգտվելով եվրոպական տերությունների երկդիմի քաղաքականությունից՝ երիտթուրքական կառավարությունը ձգձգում էր ռուս-թուրքական համաձայնագրով ստանձնած բարենորոգումների իրագործումը: Իր հուշերում Ջենալ փաշան խոստովանում էր. «Հայկական բարենորոգումների հարցում մենք ձգտում էինք ազատվել այն պարտավորություններից, որոնք մեզ էին պարտադրել ռուսները»⁷²: Երիտթուրքական կառավարության այդ ձգտումը բացահայտորեն դրսևորվեց բարենորոգումների ծրագրում Արևմտյան Հայաստանի երկու հատվածների վերատեսուչների ընտրության և նշանակման կարգի վերջնական ձևակերպումից հետո, երբ տերությունների միջև լարված պայքար ծավալվեց այդ պատասխանատու պաշ-

տոնում սեփական թեկնածուին հաստատելու համար: Ռուսական դիվանագիտության ջանքերի շնորհիվ Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրի քննարկմանը մասնակցած եվրոպական վեց տերությունների միջև համաձայնեցվեց վերատեսուչների պաշտոնին հավակնող հինգ թեկնածուների ցուցակ: Դրա հանգամանալից քննարկման արդյունքում՝ ապրիլի 2–ին թուրքական կառավարությունն ընտրեց Արևելյան Հնդկաստանում Հուլանդիայի մշտական ներկայացուցչի օգնական Վեստենենկին և Նորվեգիայի ռազմական նախարարության գլխավոր քարտուղար Հոֆֆին⁷³: Երկուսն էլ անձանոթ էին Թուրքիայի պետական կառավարման ձևին և մեթոդներին, անտեղյակ՝ հայ ժողովրդի ճակատագրին ու Հայկական հարցի պատմությանը⁷⁴: 1914 թ. մայիսի 24–ին Կոստանդնուպոլսում Վեստենենկի և Հոֆֆի հետ ստորագրած աշխատանքային պայմանագրերով Բ. Դոտն էականորեն կրճատեց վերատեսուչների իրավունքները՝ նրանց գործունեությունն ամբողջովին ենթարկելով թուրքական կառավարության կամքին⁷⁵: Վեստենենկը նշանակվեց այն հատվածի ընդհանուր վերատեսուչ, որն ընդգրկում էր Էրզրումի, Տրապիզոնի, և Սեբաստիայի վիլայեթները, իսկ Հոֆֆը նշանակվեց Վանի, Բիթլիսի, Խարբեթի և Դիարբեքի վիլայեթներն ընդգրկող հատվածի ընդհանուր վերատեսուչ: Առաջինի նստավայրը գտնվելու էր Սեբաստիա քաղաքում, իսկ երկրորդինը՝ Վանում⁷⁶: Սեբաստիայի ընտրությունն ինքնին հակասում էր հայերի պահանջներին, որոնք կենսականորեն անհրաժեշտ էին համարում տվյալ հատվածի ընդհանուր վերատեսուչի տեղավորվելն Էրզրումում⁷⁷: «Թուրքական կառավարության հրահանգի» համաձայն՝ վերատեսուչներն աշխատանքային պարտականությունները ստանձնելու էին 1914 թ. հուլիսի 5–ին՝ «անձնական գործերն ավարտելու» նպատակով տրված արձակուրդից հետո⁷⁸: Ակնհայտ էր, որ այդ գործողություններով Բ. Դոտը ձգտում էր ազատվել ռուս–թուրքական համաձայնագրով ստանձնած պարտավորություններից, ձախողել բարենորոգումները, տերություններին զրկել դրանց իրագործումը վերահսկելու լծակներից, իսկ վերատեսուչների գործունեությունն ամբողջովին ենթարկել թուրքական կառավարության կամքին: Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումն Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցը վերջնականորեն մտցրեց փակուղի: Օգտագործելով համաշխարհային քաղաքական ճգնաժամի առիթը՝ Բ. Դոտը լուծեց վերատեսուչներ Հոֆֆի և Վեստենենկի հետ ստորագրած պայմանագրերը և երկրից շտապ հեռանալու պահանջ ներկա-

յացրեց նրանց⁷⁹: Դրանով թուրքական կառավարությունը փաստացիորեն (միջազգային դիվանագիտության մեջ՝ de facto) չեղյալ հայտարարեց ռուս-թուրքական համաձայնագիրն Արևմտյան Հայաստանի բարենորոգումների մասին: Միայն Ռուսաստանի հետ կնքված լինելու փաստը թուրքական կառավարության համար հեշտացրեց նրա պարտավորություններից հրաժարվելը: Իսկ 1914 թ. նոյեմբերից համաշխարհային պատերազմին Թուրքիայի, որպես գերմանա-ավստրիական խմբավորման դաշնակից պետության, մասնակցության հետևանքով համաձայնագիրը կորցրեց ուժը:

Համաշխարհային պատերազմը մոռացության մատնեց հայկական բարենորոգումների խնդիրը՝ Արևմտյան Հայաստանում թուրքերի ձեռքերն ազատ արձակելով եվրոպական վերահսկողությունից: 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագիրը, Սան Ստեֆանոյի պայմանագրից սկսած Հայկական հարցի վերաբերյալ նախորդ որոշումների և համաձայնագրերի նման մնաց թղթի վրա: Միջազգային իրավունքի ուժը հերթական անգամ անզոր գտնվեց:

**§ 2. Թուրք-գերմանական գործակցությունը
Հայկական հարցում**

Հայերի բնաջնջման, տեղահանման և Հայաստանի հայաթափման ծրագիրը, որը պետական քաղաքականության մակարդակի էր հասցվել սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի օրոք, «Ժառանգեցին» 1908 թ. իշխանության գլուխ անցած երիտթուրքերը: Նրանց ազգային քաղաքականության հավատամքը բոլոր թուրքալեզու ժողովուրդների միավորումն էր թուրք-օսմանների գերագույն իշխանության ներքո և համաթուրքական պետության սահմաններում թրքանալ չջանկացող բոլոր ժողովուրդների բնաջնջումը⁸⁰: Համաթրքության գաղափարախոսությունն Օսմանյան կայսրություն մուտք էր գործել Ռուսաստանի թաթարական շրջաններից XIX-XX դարերի սահմանագլխին: Նրա հիմնադիրներից ու տեսաբաններից էին Յուսուֆ Աքչուրան, Ալի Հուսեյնզադեն, Իսմայիլ Գասպրինսկին (Ռուսաստանում), Չիյա Գյոյ Ալիլը, Մահմեդ Էմինը, Թեքին Ալիլը, Օմեր Մեյֆեդդինը, Ահմեդ Հիբեթը, Հալիդե Էդիպ Աղիվարը (Թուրքիայում)⁸¹: Չիյա Գյոյ Ալիլը թուրքական իդեալի իրականացումը տեսնում էր երեք խնդիրների աստիճանական իրագործման մեջ: Առաջինը թուրքականությունն էր (թուրքիզմ), որը ենթադրում էր Թուրքիայի մաքրում ոչ թուրք տարրերից՝

նրանց բռնի թուրքացման, բնաջնջման կամ հարկադրական արտագաղթի միջոցով, երկրորդը՝ Թուրքիան և ռուսական ու պարսկական Ադրբեջանները, որպես թուրքալեզու օղուզների սերունդներով բնակեցված տարածքներ, միավորելը, երրորդը՝ թուրքերի գլխավորությամբ թուրանական ժողովուրդների համադաշնության ստեղծումը⁸²: Համաթրքության մեկ այլ գաղափարախոս՝ Թեքին Ալփը, պաշտպանելով թուրքական իրերեղենտիզմի (չվերամիավորված տարածքների) գաղափարը, գտնում էր, որ Թուրքիային պետք է միավորվեն Ղրիմը, Կովկասը, Սիբիրը, Աֆղանստանը, եվրոպական Ռուսաստանում՝ Վոլգայի և Կամայի ափերը⁸³: Ընդ որում, քաղաքական համաթրքությունը «գուզորդում էր համիսլամության (պանիսլամիզմ) հետ, որը, որպես մուեռանդ հավատացյալներին հարագատ ու հասկանալի գաղափարախոսություն, կոչված էր համախմբելու աշխարհի մահմեդականներին թուրք-օսմանների գերիշխանության ներքո»⁸⁴: Միջերկրական ծովից մինչև Չինաստան ձգվող ընդարձակ տարածքում թուրքալեզու ժողովուրդների համալուարած շրթան ընդհատվում էր միայն Հայաստանում, որտեղ քրիստոնյա հայությունը խոչընդոտ էր մահմեդական Թուրքիայի ու Ադրբեջանի միավորման ճանապարհին: Հայ տարրի մտավոր բարձր զարգացումը, ճարտարարվեստական ընդունակությունները, իբրև ազգ գոյատևելու համառ ջանքերը, ազգային կրոնական ներքին անջատ կազմակերպությունը, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրին եվրոպական պետությունների միջամտությունն «անձուլելի էին դարձնում նրան թուրքականության ծրագրում»⁸⁵: Հայերի նկատմամբ երիտթուրքական կառավարության դիրքորոշումը պայմանավորված էր նաև տնտեսական գործոնով: Օսմանյան նորաթուխ բուրժուազիան արդեն դժկամությամբ էր ընդունում, որ Թուրքիայի քաղաքներում առևտրի, արդյունագործության, գիտության և տեխնիկայի գրեթե բոլոր մասնաճյուղերը շարունակում էին գլխավորել թուրքահպատակ քրիստոնյաները, այդ թվում և հայերը⁸⁶: Նա իր տնտեսական դիրքերն ամրապնդելու միակ ելքը համարում էր հպատակների բուլությունը: Գաղափարաքաղաքական և տնտեսական այս նկատառումներով հրապարակ էր նետվում շատ որոշ և կտրուկ բանաձև. «Հայկական խնդիրը պիտի լուծենք հայերին ջնջելով»: Այսպիսի պաշտոնական դիրքորոշում որդեգրեց երիտթուրքական կուսակցության 1911 թ. հոկտեմբերին Սալոնիկում տեղի ունեցած համագումարը, որում համաթրքությունը հռչակվեց պետական գաղափարախոսություն⁸⁷: Երիտթուրքերի պարագլուխներից Նազըմը, ելույթ ունենալով համագումարում, շեշտեց հետևյալը.

«Մեր սրբազան պարտքն է իրականացնել թուրք ցեղի միությունը Միջերկրական ծովից մինչև Արալի ծովը... Այդ քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը Հայկական հարցի արմատական լուծումն է... Պետք է բնաջնջել հայերին մեր կայսրության մեջ»⁸⁸:

Բալկանյան առաջին պատերազմի արդյունքում «Օսմանյան կայսրությունը գրեթե դադարեց գոյություն ունենալ որպես եվրոպական պետություն»⁸⁹: Նա կորցրեց իր եվրոպական տիրույթները, բացառությամբ Կոստանդնուպոլսի և նրան հարող արևելյան Թրակիայի տարածքի: Ավելին, պատերազմը բացահայտեց նաև երկրի տնտեսական հետամնացությունը և քաղաքական դրության անկայունությունը⁹⁰: Այս ամենը երիտթուրքերի մեջ ամրապնդեցին այն համոզումը, որ «աշխարհագրական, ազգագրական և ազգային տեսակետից անմիատարր» կայսրության անկումը հնարավոր է կանխել միայն թուրքալեզու ժողովուրդների միավորման, համաթուրքական պետության ստեղծման միջոցով⁹¹:

Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման, թուրքացման և համաթուրքական պետության ստեղծման ծրագրերում Թուրքիայի աջակիցը և ռազմաքաղաքական դաշնակիցը դարձավ աննախադեպ տնտեսական վերելք ապրող կայգերական Գերմանիան: Այդ պետության ներքին զարգացման խթաններն էին՝ գերմանական մանր պետությունների քաղաքական միավորումը, ֆրանս-պրուսական պատերազմում Սաարի ածխավազանի ու ռազմավարական առումով կարևոր Էլզաս-Լոթարինգիայի գրավումը և պարտված Ֆրանսիայից ստացած 5 մլրդ ֆրանկ ռազմատուգանքը, որն ամբողջությամբ ներդրվել էր արդյունաբերության մեջ: Աշխարհի գաղութային բաժանման սեղանից ուշացած և նրա վերաբաժանման մոլուցքով տարված, սպառման շուկաներ և կապիտալների արտահանման ասպարեզ որոնող գերմանական կառավարող շրջանների համար Բալկանները, Մերձավոր և Միջին Արևելքը եվրոպական պետությունների կողմից դեռևս չգաղութացված ամենահարմար տարածքներն էին գերմանական ազդեցության տարածման համար, ընդհուպ մինչև դրանց նվաճումը: XIX դարի վերջին ձևավորվելով որպես Գերմանիայի արտաքին քաղաքականության պաշտոնական կուրս՝ այն պատմության մեջ մտավ «Գրոհ դեպի Արևելք» անվամբ: Գերմանիայի քաղաքական ու տնտեսական հիմնական ուժերն ուղղված էին դեպի Արևելք, որի հետ էլ գերմանական նվաճողական քաղաքականության՝ համագերմանության կամ պանգերմանիզմի տեսաբանները, սկսած Ֆրիդրիխ Լիստից մինչև Բեռնհարդի.

Պառու Ռոհրբախ, Ֆրիդրիխ Նաուման, Հանս Դելբրուկ և Էմիլ Դանիելս, կապում էին Գերմանիայի ապագան: Նրանք փայտախուրդ էին Հյուսիսային ծովից մինչև Բոսֆորի ավերն ու Պարսից ծոցը, Ֆրանսիայի՝ երկաթահամքերով հարուստ արևելյան հողերից ներառյալ Ուկրաինան տարածվելիք գերմանական նոր կայսրության ստեղծման ծրագիրը⁹²: Գերմանական կառավարող շրջաններում մտադիր էին գրավելիք տարածքներից տեղի բնակչության տեղահանումների և դրանցում գերմանացիների վերաբնակեցումների միջոցով ստեղծել «նորաբնակների հողագործական շրջաններ»⁹³: Փաստորեն, տեղահանումը, որպես նվաճելիք տարածքներում Գերմանիայի դիրքերի ամրապնդման միջոց, կառավարող շրջաններում քննարկման առարկա էր դարձել դեռևս առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին: Ապագա տերությունը, որի «միջուկը» հանդիսանալու էին Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, ցամաքում ու ծովում իր հզորությամբ չէր զիջելու Մեծ Բրիտանիային: Այն իր սահմաններում ընդգրկելու էր Անգլիայի, Ֆրանսիայի, Բելգիայի ու Պորտուգալիայի գաղութները և զորեղ ազդեցություն էր ունենալու Օսմանյան կայսրության նկատմամբ: Ընդ որում, այդ աշխարհակալ պետության՝ ստեղծման ճանապարհին Թուրքիան և նպատակ էր, և միջոց: Քանի դեռ Գերմանիան ի վիճակի չէր լինելու սրընթաց արագությամբ կլանել Մերձավոր Արևելքը, նա ստիպված էր հովանավորել Օսմանյան կայսրությունը, թույլ չտալ նրա փլուզումը, թուրքական կառավարությանն աջակցել դիմագրավելու եվրոպական մյուս պետությունների ազդեցությանն ու ճնշումներին, խեղդելու հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը, ամրապնդելու Գերմանիայի տնտեսական, քաղաքական ու ռազմական դիրքերը կայսրությունում⁹⁴: Գերմանական կառավարող շրջաններում այն կարծիքին էին, որ Թուրքիայի միջոցով կարող էին կանխել Մերձավոր ու Միջին Արևելքում անգլիական առաջխաղացումը և Գերմանիայի շրջափակումը հակառակորդ պետությունների օղակով, նվաճել Եգիպտոսը և Պարսկաստանը, նախադրյալներ ստեղծել Կովկասում գերմանական ազդեցության ներքո անկախ պետությունների ձևավորման համար: Կարևորվում էր նաև այն հանգամանքը, որ մոտալուտ համաշխարհային պատերազմում Թուրքիայի հետ դաշինքը հնարավորություն կընձեռներ օգտագործել Անտանտի դեմ «սրբազան պատերազմի» և Դարդանելի նեղուցը փակելու լծակները՝ Ռուսաստանին իր դաշնակիցներից կտրելու նպատակով⁹⁵:

Փաստորեն, Օսմանյան կայսրությունն այն պետությունն էր, որտեղ հատվում էին մի կողմից՝ արդեն ձեռքբերած գաղութները, տնտեսական և ռազմաքաղաքական ազդեցությունը պահպանելու Եռյակ համաձայնության (Անտանտ) տերությունների, մյուս կողմից՝ տարածքային նոր նվաճումների ձգտող կայզերական Գերմանիայի քաղաքական նպատակները: Ահա թե ինչու գերմանական կառավարող շրջաններում ձգտում էին տիրել Թուրքիային ամբողջապես՝ «այն նվաճելով ներսից»⁹⁶: Կոստանդուպոլսում այդ խնդիրը հաջողությամբ իրականացնում էր Վիլհելմ կայսեր ընտրությամբ դեսպան նշանակված Հանս Ֆրեյդեր ֆոն Վանգենհայմը (1912 թ. — 1915 թ. հոկտեմբերի 25)⁹⁷: Դեպի Արևելք «գրոհի» քաղաքականության դրսևորումն էր Բաղդադի երկաթուղու շինարարությունը, որն ավելի մեծ հնարավորություններ էր ընձեռելու գերմանական կապիտալին՝ շահագործելու Օսմանյան կայսրության ժողովուրդներին և տարածաշրջանի նավթային հարստությունները, ապահովելու էր Գերմանիայի հաջողությունը Միջին Արևելքում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ մրցակցությունում⁹⁸: Այդ ուղղությամբ առաջին քայլն արվել էր 1911 թ., երբ «Դոյչե բանկը» ձեռք էր բերել Գ. Գյուլբենկյանի «Թուրքական նավթային ընկերության» բաժնետոմսերի 25%-ը⁹⁹: Բացի այդ, Բաղդադի երկաթուղին պայմաններ էր ստեղծելու լայնորեն շահագործելու Տավրոսի պղնձահանքերը, Գերմանիա արտահանելու Սիրիայի հացահատիկը, միրգը, Կիլիկիայի բամբակը, թուրքական ծխախոտը: Ավելին, նվաճողական մտադրություններ ունեցող գերմանական կառավարող շրջաններում անխուսափելի էին համարում առճակատումն իրենց գաղութային դիրքերն ամուր պահող եվրոպական պետությունների հետ: Պատահական չէ, որ 1913–1914 թթ. Օսմանյան կայսրության ասիական վիճելի տիրույթների շուրջ Գերմանիայի և Անտանտի կառավարությունների բանակցությունները և դրանց արդյունքում կնքված միջպետական գաղտնի զիջումնային պայմանագրերը¹⁰⁰ ժամանակավորապես ուշացրին, բայց չկամխեցին առճակատումը:

Կայզերական Գերմանիան իր շահերի տեսանկյունից էր մոտենում նաև Արևմտյան Հայաստանի ու արևմտահայերի ճակատագրին: Գերմանական քաղաքագետների կարծիքով Արևմտյան Հայաստանը Թուրքիայի գոյության հիմնաքարն էր: Փոքր Ասիայի գիտակ Յոհաննես Լեփսիուսի բնորոշմամբ այն կարող էր դառնալ «կամ գոյության անկյունաքար, կամ կործանման պատճառ» Թուրքիայի համար¹⁰¹: Գերմանական աշխարհաքաղաքականության խոշոր տեսաբան, 1914 թ. հունիսին Բեռլինում ստեղծ-

ված Գերմանահայկական ընկերության փոխնախագահ Պաուլ Ռոիրբախը, ելույթ ունենալով Ասիայում Գերմանիայի շահերը պաշտպանելու և ամրապնդելու նպատակով ստեղծված «Գերմանա-ասիական ընկերության» 1913 թ. նոյեմբերի 23-ի խորհրդակցությունում, ընդգծում էր. «Աշխարհագրական առումով Հայաստանը բնական և գրեթե ամնատաշելի ամրոց է: Մի կողմից՝ այն սահմանակից է Ռուսաստանին, մյուս կողմից՝ իշխում է համաշխարհային ուղիներին, որոնք, անցնելով նրա ստորոտներով, ձգվում են դեպի Փոքր Ասիա՝ հարուստ երկրներն ու ծովերը միացնելով Եվրոպային: Հայաստանի կորստով Թուրքիան կդադարի գոյություն ունենալ»¹⁰²: Հայաստանի կորուստ ասելով՝ գերմանական քաղաքագետը նկատի ուներ սևծովյան նեղուցների, Կոստանդնուպոլսի և դրանց ցամաքային ճանապարհը բացող Արևմտյան Հայաստանի նկատմամբ ռուսական հավակնությունները, որոնք իրական վտանգ էին ներկայացնում Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությանը, հետևաբար՝ նաև Մերձավոր Արևելքում կայգերական: Գերմանիայի ծավալապաշտական ծրագրերին: Ռոիրբախի կարծիքով, «տիրելով թուրքական Հայաստանին՝ Ռուսաստանը հնարավորություն կստանար մտնել Փոքր Ասիայի մյուս մասերը, սպառնալ Միջագետքին և Բաղդադի երկաթուղագծին: Ռուսական զորքից դրանք պաշտպանելու համար Գերմանիայից կպահանջվեին վիթխարի ռազմական ուժեր»¹⁰³: Այսպիսով՝ Մերձավոր Արևելքում Գերմանիայի ռազմաքաղաքական շահերի տեսանկյունից Արևմտյան Հայաստանն ուներ ռազմավարական կարևոր նշանակություն: Գերմանական կառավարությունը ոչ միայն շահագրգռված էր Արևմտյան Հայաստանն Օսմանյան կայսրության կազմում պահպանելու հարցում, այլև այն դիտում էր որպես ռազմավարական հենակետ Ռուսաստանի դեմ ապագա բախումներում: Բեռլինում մտահոգ էին սակայն, որ Օսմանյան կայսրությունում Գերմանիայի քաղաքական ծրագրերի իրագործմանը կարող էր խոչընդոտել դեպի Ռուսաստան կողմնորոշված և այդ պատճառով էլ «ամհուսալի» հայությունը¹⁰⁴: Գերմանական կառավարությունը հայերին «ռուսներից հեռացնելու» նպատակով Տրապիզոնի և Մոսուլի, ինչպես նաև 1913 թ. սեպտեմբերին բացված Էրզրումի հյուպատոսությունների միջոցով հովանավորում էր գերմանական գրականության ու գիտության դասավանդումը հայկական դպրոցներում, նպաստում էր Արևմտյան Հայաստանի բնական հարստությունների հայտնաբերման, հայ ժողովրդի անցյալի հնագիտական ուսումնասիրման ուղղությամբ տարվող գիտական աշխատանքներին, մշակել էր հայկական վիլայեթներ-

րում գերմանական դայրոցներ կազմակերպելու ծրագրեր¹⁰⁵: Գերմանական քարոզիչներն ակտիվ գործունեություն էին ծավալել Ադանայում, Մարաշում, Խարբեթում, Ուրֆայում և Վանում: Հայերին «ռուսներից հեռացնելու» նպատակով տարվող գաղափարական աշխատանքում հատկապես աչքի էին ընկնում Էրզրումի հյուպատոս Էդգար Անդերսը և Մոսուլի փոխհյուպատոս Հոլշտայնը¹⁰⁶: Գերմանական դիվանագիտությունը ջանում էր իր շահերին ծառայեցնել նաև Գերմանահայկական ընկերությունը, որի գործունեությանն աջակցում էին գերմանական հյուպատոսներ Շուլենբուրգ ֆոն-Բերգը Թիֆլիսում, Լիստոնը Թավրիզում, Է. Անդերսն Էրզրումում¹⁰⁷: Չնայած գերմանական դիվանագիտության ջանքերին, հակառուսական քարոզչությունը հայերի շրջանում հաջողություն չէր վայելում: Ահա թե ինչու միայն գաղափարական աշխատանքով չէ, որ կայգերական Գերմանիան պայքարում էր հայերի ռուսական կողմնորոշման դեմ: Գերմանական ռազմածովերը խրախուսում էին երիտթուրքերի համաթուրքական նկրտումները, դրանով իսկ՝ Հայաստանի հայաթափման նրանց ծրագիրը¹⁰⁸: Գերմանիայի արտգործնախարարության պետքարտուղարի օգնական Արթուր Ցիմմերմանը (1911 թ. մայիս — 1916 թ. նոյեմբեր, այնուհետև՝ արտգործնախարար՝ 1916 թ. նոյեմբերի 22 — 1917 թ. օգոստոսի 6) գտնում էր, որ գերմանական կառավարությունը Ռուսաստանի հարավային սահմանին պետք է այնպիսի պայմաններ ստեղծի, որոնք «թուլացնեն... նրա արտաքին հզորությունը»: «Ըստ էության,— հայտարարեց նա 1913 թ. դեկտեմբերին,— հայերը պետք չեն Գերմանիային: Հայերով բնակեցված Հայաստանը վնասաբեր է նրա համար, քանի որ հայ ժողովուրդը Թուրքիայի թուլության աղբյուրն է: ...Հանուն Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող վտանգից խուսափելու՝ Գերմանիան, ըստ էության, հայերին պետք է դնի թուրքերի տրամադրության տակ...»¹⁰⁹: Ցիմմերմանին համակարծիք էր Օսմանյան կայսրության ներքին գործերին քաջածանոթ գեներալ-ֆելդմարշալ ֆոն դեր-Գուլը, որը ղեկավարում էր գերմանաթուրքական կոմիտեն և 1909 թ. նշանակվել էր թուրքական բանակի գլխավոր վերատեսուչ¹¹⁰: Նա Բ. Դռանն առաջարկում էր վերջ դնել «կենտրոնախույս ուժերին» Արևմտյան Հայաստանում և ողջ ուշադրությունը կենտրոնացնել կովկասյան սահմանի ամրապնդման վրա: 1914 թ. փետրվարին գերմանաթուրքական կոմիտեի առաջին պաշտոնական նիստում ֆոն դեր-Գուլը հայտարարեց. «Թուրքիան նոր աղետից փրկելու համար անհրաժեշտ է ռուս-թուրքական սահմանին

հարող Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներից մեկը ընդմիշտ հեռացնել կես միլիոն հայությանը և փոխադրել հարավ՝ Հալեպի և Միջագետքի կողմերը, իսկ այդ վայրերի արաբներին տեղափոխել ռուս-թուրքական սահման»¹¹¹։ Դրանով իսկ երկու քաղաքական խնդիրներ կարող էին լուծվել. մեկը հայերի, մյուսը՝ արաբների վերաբերյալ, քանի որ թե մեկին, թե մյուսներին իրենց պատմական հայրենիքից տեղահանելն, ըստ ֆոն դեր-Գոլցի, նրանց մեջ ընդմիշտ կխեղդեր ներկա ու ապագա ազգային անկախության ամեն հույս և ակնկալիք։ Հայության նկատմամբ գերմանական կառավարող շրջանների դիրքորոշման որոշակի ձևակերպում էր դեռևս 1913 թ. դեկտեմբերին գերմանական դիվանագետների, Գլխավոր շտաբի սպաների և արդյունաբերողների մեղ շրջանակի համար Գերմանիայի արտաքին գործերի նախարարության Արևելքի բաժնի ղեկավար Պաուլ Ռոտրբախի կարդացած զեկուցումը, որը վերաբերում էր Թուրքիայում Գերմանիայի խնդիրներին։ Ըստ Ռոտրբախի զեկուցման հիմնական դրույթների, Թուրքիան ամեն կերպ պետք է մոտենար ռուսական Կովկասում և Ադրբեջանում ապրող ու թուրքերին ազգակից 8 միլիոն մահմեդականներին՝ կազմավորելով մինչև 15 միլիոնանոց ազդեցիկ ուժ ներկայացնող համատարած ազգային զանգված։ Այդ պլանի իրագործման հիմնական խոչընդոտ հանդիսացող հայերին նախատեսվում էր դուրս մղել իրենց բնակավայրերից, տեղափոխել Միջագետք՝ Բաղդադի երկաթուղու շրջակա տարածքում որպես էժան աշխատուժ օգտագործելու համար, իսկ Հայաստանում վերաբնակեցնել թուրք գաղթականներ Թրակիայից և Ռուսաստանից¹¹²։ Այսպիսով, առաջ էր քաշվում Անատոլիայում «ընդդեմ Ռուսաստանի հավաքական մահմեդական մեծամասնություն» ստեղծելու գաղափարը, այսինքն՝ Հայաստանի հայաթափման, հայերի տեղահանման և բնաջնջման գաղափարը, որը ժողովուրդների տեղահանման և վերաբնակեցումների՝ կայգերական Գերմանիայի մեծ ծրագրի մի օղակն էր¹¹³։ Հայաթափելով Արևմտյան Հայաստանը՝ գերմանական կառավարությունը կհեշտացներ ապագա թուրք-ռուսական ռազմաճակատի խնդիրը, կվերացներ հայկական «սեպը», որը կարող էր հիմք դառնալ Մերձավոր Արևելքում Ռուսաստանի գորեղ ազդեցության համար, բացառապես մահմեդական վերաբնակիչներից կստեղծեր ամուր պատմեչ ընդդեմ Ռուսաստանի, կլուծվեր Հայկական հարցը, Միջագետքում հայերի վերաբնակեցումը կնպաստեր Գերմանիայի տնտեսական ծրագրերի իրականացմանը։ Իր շահերից բխող այս ռազմավարական, քաղաքական և տնտեսական նկատառումներով գերմանական կառավարությունը երիտթուրքե-

րին հուշեց արևմտահայերին տեղահանելու գաղափարը, որն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական կառավարության համար դարձավ Հայաստանի հայաթափման և հայերի բնաջնջման ծրագիրն իրագործելու միջոցներից մեկը: Իր պատմական հայրենիքից ողջ ժողովրդի բռնի տեղահանումը և վերաբնակեցումը սուկ մեխանիկական տեղափոխություն չէ, ինչպես հարցին մոտենում էին գերմանական քաղաքագետները: Դա նշանակում է ժողովրդին կտրել իրեն սնած, ոգեշնչած հողից, այն պատմաաշխարհագրական, տնտեսական, քաղաքական և մշակութային միջավայրից, որում նա ստեղծել է իր պատմությունը, որտեղ պատմականորեն ձևավորվել են նրա փոխհարաբերությունները բնության և հարևան ժողովուրդների հետ: Դա նշանակում է, ժողովրդի ինքնապաշտպանության բնական իրավունքին ընդդիմանալով, նրան դատապարտել ձուլման՝ դամոկղ վերացման: Հայերի տեղահանման ծրագիրն իր հետևանքներով նույնքան ողբերգական էր լինելու հայ ժողովրդի համար, ինչպիսին եղավ ցեղասպանությունը: Գերմանական կառավարությունը տեղյակ էր, որ անգամ ցանկության դեպքում, եթե չխանգարեր էլ հայերի ցեղասպանության թուրքական քաղաքականությունը, ապա դարձյալ անհնար էր կանոնավոր տեղահանություն իրականացնել: Իր մասշտաբներով աննախադեպ այդ տեղահանությունը հավասարագոր էր հայ բնակչության զանգվածային ոչնչացման, որովհետև Թուրքիայի՝ ճանապարհներից, տեղափոխման միջոցներից զուրկ պայմաններում տեղահանվողների կեսը հազիվ հասներ նշանակված վայրերը, իսկ տեղահանությունը կհանգեցներ հայերի, հետևաբար՝ նաև առանց այն էլ թույլ օսմանյան Թուրքիայի տնտեսական քայքայմանը: Համագերմանության տեսաբաններից Պ. Ռոհրբախը նույնիսկ չէր էլ թաքցնում Հայկական հարցը հայերի բնաջնջմամբ լուծելուն կողմնակից լինելը՝ «Հայաստանն ամենավտանգավոր և գրեթե միակ օջախն է, որտեղ կարող են ծագել ներքին լուրջ անկարգություններ, ընդ որում, հրդեհի կրակը կարող է տարածվել Օսմանյան կայսրության մյուս, թեև այդ առումով պակաս վտանգավոր մասերը: Այդ պատճառով էլ Հայաստանում հանգստություն հաստատելը ներկայումս պետք է դառնա թուրքական կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը: Դա մինևույն ժամանակ մեր՝ գերմանական քաղաքականությունն է: Հայերի բնաջնջումն այդ երկրում խաղաղություն ապահովելու և այն Թուրքիայի կազմում պահպանելու միջոցներից մեկն է»¹⁴, — շեշտեց նա Գերմանա-ասիական ընկերության խորհրդակցության ժամանակ՝ 1913 թ. նոյեմբերի 23-ին: Հայերի

ապագայի հարցում թուրքական և գերմանական տեսակետների ընդհանրությունն ամրապնդվեց երկու պետությունների ռազմաքաղաքական մերձեցմամբ, որի արդյունքում 1914 թ. օգոստոսի 2-ին Կոստանդնուպոլսում կնքվեց զինակցության մասին զաղտնի պայմանագիր: Այն ենթադրում էր Գերմանիայի և Թուրքիայի չեզոքությունն ավստրո-սերբական կոնֆլիկտում: Բայց վերջինիս Ռուսաստանի միջամտության և դրանով իսկ ավստրո-գերմանական ռազմական դաշինքի զործողության համար պայմանների ստեղծման դեպքում (դիվանագիտության մեջ՝ լատ. Casus foederis) այդ պայմանագիրը համանման ուժ էր ստանալու Թուրքիայի համար, այսինքն՝ Թուրքիան պատերազմի մեջ էր մտնելու ավստրո-գերմանական խմբավորման կողմում¹⁵: Պայմանագրով թուրքական բանակի ընդհանուր ղեկավարումը հանձնվեց գերմանական զինվորական առաքելությանը¹⁶: Փաստաթուղթն ուժի մեջ էր լինելու ստորագրման պահից մինչև 1918 թ. դեկտեմբերի 31-ը¹⁷: Շահելով Թուրքիայի զինակցությունը՝ Գերմանիան նպատակ ուներ նրա միջոցով նոր ռազմաճակատներ բացել Ռուսաստանի և Անգլիայի դեմ, փակել սևծովյան նեղուցներն անգլիական և ֆրանսիական նավերի առաջ, որոնցով ռազմամթերք էր հասցվում Ռուսաստան, օգտագործել թուրքական սուլթան-խալիֆի հեղինակությունը մահմեդական աշխարհին Անտանտի տերությունների դեմ «արբազան պատերազմի» տանելու համար¹⁸: Գերմանիայի հետ ռազմաքաղաքական դաշինքը համապատասխանում էր նաև Թուրքիայի քաղաքական ծրագրերին: Այն Թուրքիային հնարավորություն էր տալիս մասնակցել Ռուսաստանի դեմ սկսված պատերազմին, որի հետ էլ թուրքական կառավարող շրջանները կապում էին համաթրքության ծրագրի իրագործման հույսերը: Մինչդեռ Անտանտի տերությունները ռազմաքաղաքական դաշինքի փոխարեն Թուրքիային առաջարկում էին պատերազմի ընթացքում լինել չեզոք և ապահովել ազատ ելումուտ իրենց ռազմանավերի համար սևծովյան նեղուցներով: Ակնհայտ էր, որ այդ պայմանները բավարարելը նպաստելու էր Ռուսաստանի ու նրա դաշնակիցների հաղթանակին և Օսմանյան կայսրությունը դատապարտելու էր մասնատման նրանց միջև¹⁹: Ահա թե ինչու կայսրության տարածքային ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը հարգելու վերաբերյալ Անտանտի երկրների խոստումները վստահություն չէին ներշնչում թուրքական կառավարությանը: Ակնհայտ էր նաև, որ մասնատման վտանգը սպառնալու էր «հիվանդ մարդուն» նաև Եռյակ համաձայնության երկրների պարտության դեպքում, երբ նրանք կայսրության տիրույթներն օգտագործեին հաղթողների պահանջնե-

որ բավարարելու համար: Ինչ վերաբերում է Եռյակ միության պարտության տարբերակին, ապա այն ևս ճակատագրական էր լինելու Թուրքիայի համար: Բայց Գերմանիայի հետ դաշինքի առավելությունն այն էր, որ Թուրքիան, առանց իր տարածքային ամբողջականությունը վտանգելու, շահում էր Եռյակ միության երկրների հովանավորությունն ու ռազմական աջակցությունը, երաշխավորվում էր կայսրության անվտանգությունը Ռուսաստանի ու Թուրքիայի բալկանյան հարևանների հարձակումներից և Անտանտի երկրների միջև մասնատվելու վտանգից: Գերմանիան ճանաչում էր Թուրքիան որպես դաշինքի իրավահավասար կողմ, պարտավորվում էր հարգել նրա զավթումները¹²⁰: Ավելին՝ օգոստոսի 6-ին Սայիդ Հալիմ փաշային ուղղված հատուկ հայտագրով Հ. Վանզենհայնը տեղեկացնում էր Գերմանիայի պատրաստակամությունը Թուրքիայի համար ապահովել որոշակի «արտոնություններ, եթե իր պարտավորություններին հավատարիմ՝ օսմանյան կառավարությունը պատերազմի մեջ մտնի Եռյակ համաձայնության դեմ»: Այնուհետև, թվարկվում էին վեց կետեր, որոնցից երկուսը կարևոր էին Հայկական հարցի տեսանկյունից. «Գերմանիան պարտավորվում էր՝ 1. աջակցել Թուրքիային կապիտուլյացիաների վերացման խնդրում... 5. այնպես ուղղել Օսմանյան կայսրության արևելյան սահմանները, որպեսզի ապահովվի Թուրքիայի անմիջական սահմանակցունը Ռուսաստանում ապրող մահմեդական բնակչության հետ»¹²¹: Մովորական, ոչ դիվանագիտական լեզվով այդ պարտավորությունները նշանակում էին, որ Անտանտի դեմ տանելիք հաղթանակից հետո Գերմանիան Թուրքիային օգնելու էր ազատվել թե կապիտուլյացիաների համակարգից, թե Հայկական հարցից և ապահովելու էր նրա սահմանակցությունը Ռուսաստանի մահմեդական բնակչության հետ: Թեև Գերմանիայի և Թուրքիայի կառավարությունները չվավերացրին հուշագիրը, թեև նրանում նախատեսված գերմանական պարտավորություններն իրագործելի էին միայն Գերմանիայի հաղթանակի դեպքում, հուշագիրը համոզիսանում էր համիսլամական և համաթուրքական ծրագրերի իրականացման խնդրում գերմանական աջակցությունը երաշխավորող փաստաթուղթ, որը լրացնում էր երկու պետությունների ռազմաքաղաքական համաձայնությունը¹²²: Վերջինս ամբողջապես ուղղված էր Ռուսաստանի դեմ և, թուրքական կառավարողները չէին էլ թաքցնում այդ. «Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին արդարացվում է մեր ազգային իղեալով: Մեր ազգի իղեալը... մղում է մեր մոսկովյան թշնամու ոչնչացմանն այն բանի համար, որպեսզի դրա շնորհիվ հաստատենք մեր

կայսրության բնական սահմանները, որոնք իրենց մեջ կառնեն և կմիավորեն մեր ռասայի բոլոր ճյուղերը»¹²³, — հայտարարում էին նրանք:

Օգոստոսի 3-ին Ավստրո-Հունգարիան միացավ գերմանաթուրքական դաշինքին: Նույն օրը թուրքական կառավարությունը հայտարարություն հրապարակեց Օսմանյան կայսրության չեզոքության վերաբերյալ: Իրականում, օգոստոսի 2-ին զինակցության մասին թուրք-գերմանական համաձայնագրի ստորագրումը, Գերմանիայի պատրաստակամությունն օժանդակել թուրքիային քաղաքական և տարածքային հարցերում, օգոստոսի 11-ին գերմանական «Գեբեն» ու «Բրեսլաու» հաժամավերի՝ սևծովյան նեղուցներ մտնելը¹²⁴ և, թուրքական կառավարության կողմից դրանց ձևական գնումն արդեն կանխորոշել էին մոտալուտ պատերազմին թուրքիայի մասնակցությունը որպես կայգերական Գերմանիայի դաշնակից պետություն: Թուրքիան պատերազմական գործողությունների մեջ մտավ միայն հոկտեմբերի վերջին, իսկ այդ ամբողջ ժամանակամիջոցում կեղծ չեզոքություն էր պահպանում, բանակցություններ վարում Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ: Ավելին՝ օգոստոսի 5-ին Կոստանդնուպոլսում ռուսական դիվանագետների հետ սկսած բանակցությունների ժամանակ թուրք գործիչները նույնիսկ հանդես եկան Ռուսաստանի հետ դաշինք կնքելու կեղծ առաջարկով: Այդ փաստերը բացատրվում էին լոկ ժամանակ շահելու, զորահավաքն ավարտելու, թուրքական զինված ուժերը կարգի բերելու և պատեհ ժամանակ դրանք պատերազմի մեջ մտցնելու միտումով¹²⁵, որն իրագործվում էր չեզոքության «բացահայտ և կոպիտ» խախտումներով՝ հոգուտ Գերմանիայի¹²⁶: Այդ են վկայում նույնիսկ ժամանակի թուրք քաղաքական գործիչները և խնդրին հետամուտ թուրք պատմաբանները¹²⁷:

Թուրքական կառավարությունը չհապաղեց գործնական հիմք տալ ռազմական դաշինքին: Օգտագործելով համաշխարհային պատերազմի առիթը՝ Բ. Դուռը 1914 թ. դեկտեմբերի 3 (10)-ի սուլթանական հրովարտակով շեղյալ հայտարարեց հայկական վիլայեթների բարենորոգումների վերաբերյալ հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը¹²⁸: Ոգևորվելով եվրոպական ռազմաճակատում գերմանական բանակի սրընթաց առաջխաղացմամբ, օգտվելով թուրքիային սիրաշահելու մեծ տերությունների քաղաքականությունից՝ թուրքական կառավարությունը դեռևս հոկտեմբերի 1-ին հայտարարել էր կապիտուլյացիաները, այսինքն՝ Օսմանյան կայսրությունում մեծ տերությունների քաղաքացիների արտոնու-

թյունների համակարգը վերացնելու մասին¹²⁹: Արևելքի բարբարոսական երկրում իրենց կառավարության պաշտպանության, պետական հոգածության իրավունքից օտարերկրացիներին զրկելը մասն էր թուրքական պետությունն «օտար խնամակալությունից» ազատագրելու և «Թուրքիան թուրքերին» ծրագրի իրագործման: Թուրքական կառավարության հաջորդ քայլը լինելու էր համաթուրքականության ճանապարհին ընկած հայկական խոչընդոտը վերացնելը:

§ 3. Արևմտահայերի ցեղասպանությունը և մեծ տերությունների քաղաքականությունը

Պատերազմական իրավիճակը երիտթուրքական իշխանությունների համար ամենահարմար ժամանակն էր՝ քիչ աղմուկով և մեծ հաջողությամբ լուծելու Հայկական հարցը՝ հայ տարրից ազատվելու, դրանով իսկ Արևելյան Անատոլիան թուրքերով բնակեցված միատարր երկիր դարձնելու, «Մեծ Թուրանի» ստեղծման համար ճանապարհի հարթելու, Հայաստանի հայաթափման արդյունքում հայերի հարստությունները յուրացնելու նպատակով: Երիտթուրքական կառավարությունը դրա համար հանգամանորեն նախապատրաստել էր և՛ ծրագիր, և՛ մարդասպանների ջուրհատներ, և՛ աշխարհի հասարակական կարծիքի առջև արդարանալու հնարքներ: Ինչպես նկատում է ճանաչված պատմաբան Վ. Դադրյանը, «ոստիկանությունը և ժանդարմերիան, կլոնական ու ազգային հողի վրա մահմեդական զանգվածների կանխամտածված գրգռվածությունն ընդլեռն քրիստոնյաների կենսոլորնական դեր խաղացին ցեղասպանության ծրագրման և իրագործման մեջ»¹³⁰:

Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Մ. Գիրսը տակավին 1914 թ. սեպտեմբերի 20-ին արտգործնախարար Ս. Սազոնովին ուղարկած հեռագրում տեղեկացնում էր, որ «մահմեդականներին զենք է բաժանվում հայերի վերահաս կոտորածի համար»¹³¹: Միաժամանակ, հետևողականորեն գործող թուրքական դիվանագիտությունը և պետական քարոզչությունը ռուսական բանակից կրած իրենց պարտությունները պատճառաբանում էին հայերի «դավաճանությամբ», «դասավրթությամբ», «ապստամբությամբ», վկայակոչում էին մասնավորապես հայ կամավորներին, որոնք կռվում էին ռուսների հետ կողք կողքի¹³²: Այդ ամենն, իհարկե, սոսկ

պատրվակ էր, քաղաքական մեղադրանք՝ արդարացնելու հայերի բնաջնջումը, սաստկացնելու հակահայկական կրքերը երկրում: Իրականում, թուրքերի պարտությունները նրանց երկրի հետամնացության, ընդհանուր թուլության և պատերազմին լավ նախապատրաստված շինելու արդյունք էին, իսկ դասալքությունը զանգվածային երևույթ էր հենց թուրք զինվորների համար, մինչդեռ հայերը Թուրքիայում պատերազմի սկզբից կատարում էին իրենց քաղաքացիական պարտականությունները¹³³:

Հայերի բնաջնջման մասին որոշումն ընդունվեց 1915 թ. սկզբներին՝ երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստում, որը նախագահում էր ներքին գործերի նախարար Թալեաթը¹³⁴: Արևմտահայերի զանգվածային ջարդի և տարազրության գործադրությունը հանձնարարվեց երեք հոգուց բաղկացած հանձնախմբին, անդամակցությամբ՝ Նազըմի, Բեհաեդդին Շաքիրի և Մյուհաթ Շյուքրիի: «Այս երեքի գործադիր կոմիտեն անկախ, ոչ պաշտոնական և, սակայն, անպատասխանատու գործադիր մարմին լինելով, մասնավոր գրասենյակ, բննիչներ և այլ պաշտոնյաներ ուներ. պետության մեջ պետություն և կուսակցություն», — գրում է թրքացած քուրդ հրապարակախոս Բիֆաթը¹³⁵: Օսմանյան կայսրության բոլոր հայաբնակ շրջանները նախապես բաժանվել էին երեք գոտիների՝ Արևմտյան Անատոլիա, Արևելյան Անատոլիա, Կիլիկիա և Հյուսիսային Սիրիա: Արևմտյան Անատոլիայում հայաբնակ էին Իզմիրը (նախկինում՝ Չմյուռնիա) և Բուրսայի, Կաստամունուի, Անկարայի ու Կոնիայի վիլայեթները: Թուրքական Արևելյան Անատոլիան ընդգրկում էր Արևմտյան Հայաստանն իր վեց վիլայեթներով (Վանի, Էրզրումի, Սեբաստիայի, Բիթլիսի, Դիարբեքիի, Խարբերդի) և Տրապիզոնի վիլայեթը: Կիլիկիայի շրջանն ընդգրկում էր Ադանայի վիլայեթը և Հալեպի վիլայեթի առավել բարձրադիր մասերն՝ ընկած Տավրոսում ու Ամանոսում (Մարաշի սանջակ): Հյուսիսային Սիրիայի և Միջագետքի շրջանում ընդգրկվել էին Հալեպի, Ամտիոքի, Սուտիայի, Քեսարի, Ալեքսանդրետի, Քիլիսի, Այնթապի և Ուրֆայի հայաբնակ շրջանները: Հանձնախմբի անդամներից յուրաքանչյուրը հայասպանությունը դեկավարելու էր իրեն հանձնարարված տեղամասում:

Հանձնախմբի աշխատանքների հսկողությունը դրվեց Թալեաթ փաշայի վրա, իսկ նրա հրահանգները տեղերում իրագործելու նպատակով վիլայեթներում կարգվեցին լիազորներ: Ցեղասպանությունն անմիջականորեն իրականացնելու համար Թալեաթի գլխավորությամբ ստեղծվեց հատուկ կազմակերպություն՝ Թեշքիլաթը մախսուսե, բաղկացած 50–ական զինյալ թուր-

քերից կազմված «չեթեմերի» 200 ջոկատներից: Փետրվարի 18-ին բոլոր վիլայեթներն ուղարկվեցին հրահանգներ հայերին բնաջնջելու վերաբերյալ¹³⁶:

Դեռևս 1914 թ. օգոստոսին երիտթուրքական կոմիտեի ներկայացուցիչներ Բեհաեդդին Շաքիրը, Օմեր Նաջին և Հիլմին հայ հասարակական-քաղաքական կյանքում ազդեցիկ ուժ ներկայացնող Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչներին Էրզրումում կայացած կուսակցական 8-րդ ընդհանուր ժողովի ընթացքում առաջարկել էին մոտալուտ պատերազմում ապահովել ողջ Կովկասի հայ բնակչության աջակցությունը թուրքերին՝ ռուսական ուժերին Կովկասյան լեռներից հյուսիս մղելու նպատակով: Երիտթուրքերը խոստացել էին Ռուսաստանի դեմ հաղթանակ տանելուց հետո Կովկասում ստեղծել ինքնավար պետություններ: Հյուսիս-արևմուտքում Բուքարխի, Թիֆլիսի, Բաթումի նահանգները և Տրապիզոնի վիլայեթի մի մասն ընդգրկվելու էին ինքնավար Վրաստանի կազմում: Կովկասի հյուսիս-արևելքում ստեղծվելու էր ինքնավար մահմեդական մարզ, որն ընդգրկելու էր Դաղստանի, Բաքվի նահանգները և Ելիզավետպոլի նահանգի մի մասը: Ինքնավար Հայաստանն իր տարածքում ունենալու էր Երևանի, Կարսի նահանգները, Ելիզավետպոլի նահանգի արևմտյան մասը և Էրզրումի, Վանի ու Բիթլիսի վիլայեթները: Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը մերժել էր երիտթուրքերի առաջարկը և հայտարարել ռուս-թուրքական պատերազմի դեպքում կուսակցության չեզոք դիրքորոշման մասին¹³⁷: Սակայն երիտթուրքերը հայերի չեզոքությունը գնահատեցին որպես դավաճանություն օսմանյան հայրենիքին: Փաստ է նաև այն, որ հայերի դիրքորոշումը Ռուսաստանի և նրա դաշնակիցների հարցում ավելին էր, քան չեզոքությունը: Անտանտի տերությունները վայելում էին ամբողջ աշխարհի հայ բնակչության մեծ մասի համակրանքը¹³⁸: XIX դարի վերջին սաստկացած թուրքական հայահալած և հայաջինջ քաղաքականության հետևանքով հայերի մեջ կուտակված ցասումն ու ազատագրության ձգտումը համահունչ էին սևծովյան նեղուցների ու Կոստանդնուպոլսի նկատմամբ հավակնություններ ունեցող Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը: Օգտագործելով այդ հանգամանքը՝ ռուսական կառավարությունն ընդառաջել էր հայերի ցանկությանը և նախաձեռնել հայ կամավորների մասնակցությունն իր բանակի մարտական գործողություններին¹³⁹: Ռուսական իշխանությունների հետ համագործակցելու հայերի փորձերն էլ հենց երիտթուրքական կառավարության ղեկավարներիցն ավելի ցանկալի արդարացումը Հայկական հարցը հայերի բնաջնջմամբ «լուծելու», Օսմանյան և Ռու-

ասկան կայսրությունների թուրքերի միջև էթնիկական հիմնական խոչընդոտը վերացնելու համար¹⁴⁰:

Ուրի ծրագիրը գործողության մեջ դրվեց 1915 թ. գարնանից: Նախ՝ ռազմական նախարար Էնվեր փաշայի՝ փետրվարի 27-ին թուրքական բանակի հրամանատարությանն ուղարկած հրահանգի համաձայն ոչնչացվեցին թուրքական բանակում ծառայող 18–45 տարեկան մոտ 60 հազար հայ ռազմունակ տղամարդիկ, որոնք արևմտահայության պաշտպան բազուկն էին ու բնակչության ամենակենսունակ և ամենաաշխատունակ մասը¹⁴¹: Ապա ոչնչացվեց հայ մտավորականությունը՝ ժողովրդին լուսավորող, կազմակերպող և ղեկավարող ուժը¹⁴²: Այնուհետև թուրքական կառավարությունն անցավ անգեն ու անպաշտպան հայ բնակչության բնաջնջմանը, որի հրահանգը ներքին գործերի նախարար Թալեաթի, ռազմական նախարար Էնվերի, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար դոկտոր Նազըմի ստորագրությամբ տեղական իշխանություններին էր ուղարկվել դեռևս ապրիլի 15-ին և ամրապնդվել մայիսի 14 (27)–ին թուրքական մեծ վեզիրի ստորագրած Տեղահանության մասին օրենքով¹⁴³: Դրա արդյունքում Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում կոտորվեց, տեղահանվեց և բռնագաղթի ճանապարհներին ոչնչացվեց կամ Միջագետքի անապատներում բնաջնջվեց շուրջ 1,5 միլիոն հայ, որը կազմում էր արևմտահայության երկու երրորդը և հայության ընդհանուր թվաքանակի մեկ երրորդը¹⁴⁴: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անգեն ու անպաշտպան հայ բնակչությունն իր տանը՝ ռազմաճակատներից հեռու, այնքան կորուստներ ունեցավ, որքան Մեծ Բրիտանիան, Իտալիան ու ԱՄՆ-ը միասին՝ եվրոպական և ասիական ռազմաճակատներում¹⁴⁵: Բայց բարբարոսությունները դրանով չսահմանափակվեցին: Բռնի մահմեդականացվեցին մոտ 200 հազար հայ¹⁴⁶: Ցեղասպանության և բռնագաղթի հետևանքով ծայր առավ տարագրության հզոր ալիք: Յավալիորեն հարկ է նշել, որ 1915–1916 թվականներին մոտավորապես մեկ միլիոն հայ սփռվեց աշխարհով մեկ¹⁴⁷: Այս ամենի հետ մեկտեղ ավերվեցին ու թալանվեցին Արևմտյան Հայաստանի հայոց հոգևոր ու նյութական արժեքները¹⁴⁸: Ճիշտ է, Վանում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուսա լեռան վրա և այլուր հայերը հերոսական դիմադրություն ցույց տվեցին թուրքական կանոնավոր զինված ուժերին ու հրոսակներին, բայց պետական քաղաքականություն դարձած ցեղասպանության ու բռնագաղթի պայմաններում դյուրեւ սոսկ ժամանակավորապես ուղացրին տեղի

հայության կոտորածը: Հայերն ամբողջությամբ չտեղահանվեցին միայն Կոստանդնուպոլսից, բացառությամբ 1915 թ. ապրիլին տեղահանվածների և ոչնչացվածների, Ադրիանապոլսից և Իզմիրից, որտեղ երիտթուրքական կառավարության հայաջինջ քաղաքականությունը միանգամից կզրավեր աշխարհի հասարակայնության ուշադրությունը:

Երիտթուրքական կառավարությունը պաշտոնական հաղորդագրություններում ճարպկորեն թաքցնում էր հայերի տեղահանման փաստը, աշխատում էր կանխել հայության բնաջնջման մասին լուրերի տարածումը, իսկ եվրոպական հասարակական կարծիքին հայտնի դարձած փաստերը հերքում էր կամ պատճառաբանում որպես հայերի «հեղափոխական ելույթները»՝ ճնշող միջոցառումներ կամ էլ ռազմավարական նկատառումներով և հայության կյանքի ապահովության նպատակով բնակչության տեղափոխություն¹⁴⁹: Այսօր էլ թուրքական իշխանությունները և ժամանակակից թուրքական պատմագրությունը շարունակում են շրջանառել երիտթուրքական կառավարության ղեկավարների այն «բացատրությունը», որով արևմտահայերի ցեղասպանությունը հիմնավորվում էր հայերի կողմից թուրքմական պետությանը վտանգ սպառնալու, հայկական «ապստամբության» պատճառով¹⁵⁰: Նրանց «ճշմարտությունը», սակայն, անկարող է գլխիվայր շրջել եղելությունը: Նախ՝ կամավորական շարժումը նախաձեռնել էին արևելահայերը, որոնք ռուսական պետության քաղաքացիներ էին, իսկ երիտթուրքերը «մոռանում էին» այդ: Ինչ վերաբերում է հայերի բնաջնջման ծրագրին, ապա այն մշակվել էր շատ ավելի վաղ, քան սկսվեց կամավորական շարժումը կամ տեղի ունեցավ Վանի ինքնապաշտպանությունը: Ընդհակառակն, վերջիններս հետևանք էին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ հետևողականորեն գործադրվող բռնությունների, ազգային հալածանքների ու կոտորածների քաղաքականության: Ավելին՝ հայ տղամարդկանց բոլոր բնակավայրերից հավաքագրելուց ու կոտորելուց հետո զանգվածային տեղահանության ենթարկվեցին ծերերը, կանայք ու երեխաները: Այս պարագան ևս անհեթեթ է դարձնում թուրքերի փորձը հայերի բռնագաղթը ներկայացնել իբրև «կանխարգելիչ միջոցառում» հայ ժողովրդի «ապստամբության» դեմ: Այսպիսով, ո՛չ քաղաքական, ո՛չ էլ ռազմավարական նկատառումները չէին կարող արդարացնել հայերի բնաջնջումը, որը հետևանք էր օսմանյան պետության թուրքացման ծրագրի:

Հայերի ցեղասպանության ողջ պատասխանատվությունն ընկնում է երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեի, կառավարության

և իշխանության տեղական մարմինների վրա: Կոստանդնուպոլսից էին տրվում հայերի բնաջնջման հրամանները, որոնք, չնայած առանձին պաշտոնյաների, երբեմն նաև առանձին բնակավայրերի թուրք բնակչության դիմադրությանը, անվերապահորեն կատարվում էին: Կոստանդնուպոլիսն էր վերահսկում այդ, ընտրում եղեռնագործ կադրերին՝ քաջալերելով առավել դաժաններին և պաշտոնագուրկ անելով խղճի խայթ ունեցողներին¹⁵¹:

Մ թուրքական կառավարողների գործողությունների, արևմտահայերի ցեղասպանության ընթացքի և հետևանքների վրա մեծապես ազդեց այն քաղաքականությունը, որ վարում էին մեծ տերությունները XX դարում մարդկության դեմ ուղղված առաջին հանցագործության՝ հայերի ցեղասպանության հարցում:

Մեծ տերությունների շարքում կայգերական Գերմանիան՝ գերմանա-ավստրիական խմբավորման կենտրոնական պետությունը, հայերի ցեղասպանության գլխավոր մեղսակիցն էր: Արևմտյան Հայաստանը Մերձավոր Արևելքում Գերմանիայի ազդեցության հենակետը դարձնելու ծրագրերը, հայերի ռուսական արտաքին քաղաքական կողմնորոշումը, հետևաբար, գերմանացիների համար նրանց «անհուսալիությունը» դեռևս XIX դարի վերջերից կանխորոշել էին կայգերական Գերմանիայի դիրքորոշումը հայերի ճակատագրի հարցում: Գերմանական քաղաքագետները տեղահանման ընթացքում արևմտահայերի բնաջնջման մասին իրենց հայտնի դարձած առաջին փաստերից հասկացան թուրքական կառավարության իրական նպատակը՝ պատերազմական իրավիճակն օգտագործել Հայկական հարցը թուրքական տարբերակով լուծելու համար այնպես, որ բացառվեր դրսից դիվանագիտական միջամտությունը¹⁵²: «Թուրքական կառավարության նպատակը ամբողջ հայ բնակչության բնաջնջումն է բոլոր վիլայեթներում»,— Կոստանդնուպոլսի դեսպանին իր հեռագրում հայտնում էր Հալեպի գերմանական հյուպատոս դոկտոր Վոլտեր Ռյոսլերը (1910–1918) 1915 թ. մայիսի 10–ին¹⁵³: Մայիսի 31–ին Վիլիելմշտրասսե՝ արտաքին գործերի նախարարությանն ուղարկած հեռագրում, պաշտպանելով թուրքական պաշտոնական տեսակետը, Հ. Վանգենհայնը գրում էր. «Էնվեր փաշան խնդրում է, որ մենք դրանում նրանց արգելք չհանդիսանանք»: «...Անշուշտ,— շարունակում էր նա,— այդ միջոցառումները ծայրահեղորեն խիստ են հայ բնակչության համար... Մենք կմեղմենք դրանք, բայց սկզբունքորեն չենք արգելակի տեղահանությանը»: Խոսելով Ռուսաստանի «հրահրած», իրականում մտացածին հայկական հեղափոխական ելույթ-

ների մասին, որոնք, իբրև սպառնում էին Թուրքիայի գոյությանը, նա ընդ-
գծում էր այն հանգամանքը, որ Թուրքիայի ռազմաքաղաքական դրություն-
նից ելնելով՝ «նշված միջոցառումներն անխուսափելի են»¹⁵⁴: Մեծ ուժի
նկատմամբ գերմանական պաշտոնական տեսակետը ձևակերպվեց եղեռ-
նագործությունը սկսվելուց անմիջապես հետո: Ահա թե ինչպես էր այն ար-
դարացվում Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանության հետևյալ
հայտարարության մեջ. «Կայսերական կառավարության կողմից Արևե-
լյան Անատոլիայի հայերի նկատմամբ իրականացվող ճնշիչ միջոցառում-
ները թելադրված են ռազմական անհրաժեշտությամբ և պաշտպանական
օրինական միջոցառումներ են: Գերմանական կառավարությունը հեռու է
դրանց անցկացմանը հակազդելուց, քանի որ այդ գործողությունները նպա-
տակաուղղված են Թուրքիայի ներքին դրության կայունացմանը և ապս-
տամբության բոլոր փորձերի կանխմանը: Այդ տեսանկյունից գերմանա-
կան կառավարության տեսակետն ամբողջովին համընկնում է Բ. Դոան
մեկնաբանություններին...»¹⁵⁵: Կայզերական կառավարության այս դիրքո-
րոշումը բացատրվում էր Գերմանիայի պետական և ռազմաքաղաքական
շահերի տեսանկյունից թուրք-գերմանական զինակցության կարևորու-
թյամբ: Այդ էր վկայում թուրքական կառավարության վրա ազդեցիկ ճնշում
գործադրելու՝ Յո. Լեփսիուսի պահանջին արտաքին գործերի մախարարու-
թյան պետքարտուղարի օգնական Ա. Յիմմերմանի պատասխանը. «Ի՞նչ
կարող ենք մենք անել: Թուրքերի հետ մեր դաշինքը մախ և առաջ դաշինք
է Թալեաթի, Էնվերի և Խալիլի հետ: Եթե նրանք համակարծիք չեն մեզ,
մնում է խզել դաշինքը: Իսկ այդ մենք չենք կարող»¹⁵⁶: Դա նշանակում էր
խուսափել իրագործվող ոճրագործության մասին փաստերը վերլուծելուց,
չդատապարտել, այլ, աշխարհի հասարակական կարծիքի քննադատու-
թյանը հակառակ, արդարացնել դաշնակցի գործելակերպը և ազատվել հա-
յերի ցեղասպանությանը Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ ար-
դարացի մեղադրանքներից՝ «ապացուցելով», թե «հայերն են սադրել թուր-
քերին դիմելու խիստ միջոցառումների»: Հենց այս դիրքորոշումից բխող
համապատասխան հրահանգներ էին տրվում գերմանական լրագրողնե-
րին: Այս նպատակին էր ծառայում նաև խիստ զրաքննությունը¹⁵⁷: «Ազգա-
յին քաղաքականություն. ահա՛ այն բարոյական խոր պատճառը, որի հա-
մար մենք՝ իբրև պետական այրեր՝ պետք է անտարբեր դառնանք Թուր-
քիայի քրիստոնյա ժողովուրդների տառապանքների համդեպ, որքան էլ
դրանք մեր մարդկային զգացումները խոցոտող լինեն... Այդ է մեր պար-

տականությունը... Եթե այս պատճառով մենք պահպանում ենք թուրքական պետության գոյությունը, մենք այդ բանն անում ենք մեր սեփական շահախնդրության համար, որովհետև ինչ որ նկատի ունենք մենք, մեր մեծ ապագան է... Վիլիելմ 2-րդն իր ընտրությունը կատարել է: Նա դարձել է սուլթանի բարեկամը, որովհետև մտահոգված է ավելի մեծ և անկախ Գերմանիայով»¹⁵⁸: Կոստանդնուպոլսի ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի «Հուշեր»-ից ներկայացված այս քաղվածքը դիպուկ բնութագրում է նախ և առաջ գերմանական քաղաքագետներին և դիվանագետներին:

Հայերի ցեղասպանության հարցում գերմանական կառավարության չմիջամտելու, դաշնակցի հակամարդկային գործելակերպն արդարացնելու և հովանավորելու կեցվածքն ավելի էր ոգևորում թուրքական իշխանություններին: Վերջիններս չէին էլ քաբքնում հայերի բնաջնջման գործում գերմանական կառավարության մասնակցությունը. «Հայերի բնաջնջումը ռազմական միջոցառում է, իսկ բանակը գտնվում է գերմանացիների ազդեցության ներքո: Ուրեմն, շնորհակալ եղեք գերմանացիներին»,— շեշտում էին թուրք պաշտոնյաները: Իսկ Էնվեր փաշան, Հայկական հարցի լուծման թուրքական տարբերակը զնահատելով որպես «Երիտասարդ Թուրքիայի ամենահիանալի արարքը», ասում էր, թե գերմանացիները պետք է երախտապարտ լինեն թուրքերին, որ վերջիններս ոչնչացնում են նրանց թշնամիներին¹⁵⁹: Փաստերը վկայում են, որ գերմանական կառավարությունն իր դիրքորոշմամբ քաջալերում էր հայերի զանգվածային սպանող, թուրքական բանակում ծառայող գերմանացի բարձրաստիճան սպաներն անմիջականորեն նպաստում էին տեղահանության ծրագրի մշակմանն ու իրագործմանը¹⁶⁰, իսկ որոշ վայրերում գերմանական զինված ուժերը նույնիսկ մասնակցեցին արևմտահայ բնակչության ջարդերին¹⁶¹:

✓ Հայերի ցեղասպանության մասին տեղեկություններ պարունակող առաջին լուրերն Արևմտյան Եվրոպա էին հասել 1915 թ. ապրիլի վերջին: Մինչ այդ ոչ մի տեղեկություն Թուրքիայից ստանալ հնարավոր չէր ոչ փոստի, ոչ հեռագրի միջոցով: Նույնիսկ չեզոք երկրների դեսպանությունների և հյուպատոսությունների համար անհնար էր որևէ մյուս հաղորդել: Դրա պատճառը ոչ միայն պատերազմական իրավիճակն էր, այլև այն, որ բոլոր հեռագրերն ու նամակները, դեպքերի ժամանակակիցների վկայությամբ, (ուսիքան հասցեատիրոջը հասնելն անցնում էին Թալեաթի և Էնվերի գրասենյակներով¹⁶²: Այնուամենայնիվ, եղեռնագործությունը հնարավոր չէր քաբքնել: Շուտով Եվրոպա հասան դեպքերին ականատես և իրագեկ եվրո-

պական պետությունների դիվանագիտական ու հոգևորական առաքելությունների անդամների վկայությունները, Օսմանյան կայսրությունում և տարազիր հայերի խլյակներին ապաստան տվող երկրներում ծառայող հյուպատոսների ու դեսպանների գրությունները, որոնցում ուղղակի, թե անուղղակի կերպով արտահայտվում էր «հայերի հեղափոխական ելույթների» կամ «կյանքի ապահովության նպատակով ռազմական գործողությունների վայրերից նրանց հեռացնելու» մասին թուրքական կառավարող շրջանների փաստաթղթերի սնանկությունը¹⁶³: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում են այն փաստաթղթերը, որոնցում արևմտահայերի նկատմամբ երիտթուրքական կառավարության քաղաքականության իսկական դեմքը մերկացնում են օսմանյան Թուրքիայի դաշնակիցներ կայզերական Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի դիվանագետները, պետական և ռազմական գործիչները, որոնք քաջատեղյակ էին Թուրքիայի ներքին դրությանը և, իբրև դաշնակից պետության ներկայացուցիչներ, «չէին գունազարդում» փաստերը հօգուտ հայերի¹⁶⁴:

Մեծ տերությունների կառավարող շրջանների ուշադրությունը հայ բնակչության զանգվածային տեղահանությունների ու կոտորածների վրա բևեռելու նպատակով տակավին 1915 թ. ապրիլի 7-ին Ամենայն հայոց կաթողիկոսը դիմել էր Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովին, դեռևս պատերազմի մեջ չմտած Իտալիայի թագավորին ու ԱՄՆ նախագահին՝ խնդրելով հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանել Արևմտյան Հայաստանում գոհվող ամենը քրիստոնյաներին, Բ. Դռան առջև միջամտել հայերի ջարդը դադարեցնելու պահանջով: Հենվելով այդ փաստաթղթի վրա՝ Ս. Սազոնովը հրահանգել էր Հոռոմում ու Վաշինգտոնում ռուսական դեսպաններին կայսերական կառավարության անունից գորավիզ լինել կաթողիկոսի խնդրանքին¹⁶⁵: Միաժամանակ Ռուսաստանն իր դաշնակիցներին պաշտոնապես տեղեկացրել էր Թուրքիայում կատարվող հանցագործությունների մասին և առաջարկել էր հրապարակել համատեղ հայտարարություն՝ Թուրքիայի նախարարների խորհրդի անդամներին, ինչպես նաև հայերի կոտորածներին ուղղակի առնչված թուրք պաշտոնյաներին «ամձամբ պատասխանատու համարելու» մասին: Մինչ Լոնդոնում մի կողմ կոնցիսիոն անվճռականությունն ու կհայտնեին պաշտոնական դիրքորոշումը, Բ. Դռանն իրենց կառավարությունների բողոքները ներկայացրին Կոստանդնուպոլսում ամերիկյան, իտալական ու բուլղարական ներկայացուցիչներին:

րը¹⁶⁶։ Իսկ մայիսի 4–ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5–րդը ղիմեց անգլիական Ջորջ 5–րդ թագավորին՝ խնդրելով հրահանգել չեզոք երկրների բրիտանական դիվանագիտական ներկայացուցիչներին, որպեսզի այդ պետությունների կառավարությունների ազդեցիկ միջամտությամբ վերջ տրվեր «թուրքական մուեռանդությանն ու կատաղությանը թողնված արևմտահայության ահավոր հալածանքին»¹⁶⁷։ Սակայն Լոնդոնում հապաղում էին, իբր տարակուսում էին, որ ջարդերի դատապարտումը մեղմացնող ազդեցություն ունենալու փոխարեն կարող էր, ընդհակառակը, թուրքական իշխանություններին «գրգռել քրիստոնյաների նկատմամբ ավելի ևս վրեժխնդիր լինելու»։ Թվում է, թե Լոնդոնում նույնիսկ հույս չունեին, որ նման հայտարարությունը թուրքերի համար դառնար արգելակիչ ազդակ։ Նույն պատճառաբանությամբ հապաղում էր նաև ֆրանսիական կառավարությունը։ Չնայած դրան՝ Անտանտի երկրները գիտակցում էին ցեղասպանությունը դատապարտելու, այն կազմակերպողներին ու իրականացնողներին մերկացնելու անհրաժեշտությունը, որովհետև կատարվածը հանցագործություն էր՝ ուղղված մարդկության դեմ։ Դաշնակիցները կարևորում էին նաև այն հանգամանքը, որ ցեղասպանությունն իրագործվում էր պատերազմական հակառակորդ հանդիսացող Թուրքիայում, իսկ նրա հակամարդկային գործելակերպը հովանավորում էր դաշնակիցը՝ համաշխարհային պատերազմը սանձազերծած Գերմանիան։ Բնական է, որ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը պետք է օգտագործեին իրենց թշնամու դատապարտելի արարքների մասին զանազան աղբյուրներից ստացված տեղեկությունները՝ հանրային կարծիքը հակառակորդ պետությունների անարդարության, անգթության, բռնի ուժի գործադրման փաստերի դեմ տրամադրելու նպատակով։ Այդ տեսանկյունից Լոնդոնում հատկապես կարևորում էին ամերիկյան հասարակական կարծիքի վրա ազդելու անհրաժեշտությունը՝ չեզոք Միացյալ Նահանգները պատերազմին մասնակից դարձնելու ակնկալիքով¹⁶⁸։ Հայերի ցեղասպանության դատապարտումը մեկ այլ շահադիտական նպատակ էլ ուներ՝ չկորցնել հայերի աջակցությունը պատերազմում¹⁶⁹։ Չէ՞ որ շուրջ 250 հազար ռուսահայեր կռվում էին ռուսական բանակում և հազարավոր ուրիշները հայկական սփյուռքից զինվորագրվել էին բրիտանական ու ֆրանսիական բանակներին։

Ռուսական կառավարությունն առաջարկվող հայտարարությունը դաշնակիցներին հանձնեց Լոնդոնում ու Փարիզում իր դեսպանների միջո-

ցով: Սկզբնական նախագծում այն ակնարկությունը, թե այս ոճիւրները «քրիստոնեւոյան դեմ» են գործվում, հանվեց Փարիզում քրիտանական դեսպան սըր Բերտիի առաջարկութեամբ և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարների համաձայնութեամբ: Նրանք պատճառաբանեցին, որ չեն կարող անտեսել անգլիական ու ֆրանսիական տիրապետութեան ներքո գտնվող ոչ քրիստոնյա բնակչութեան կրոնական զգացումները: Ի վերջո, 1915 թ. մայիսի 24-ին Ռուսաստանի նախաձեռնութեամբ Անտանտի կառավարությունները միասնաբար, հրապարակային հայտարարութեամբ պաշտոնապես դատապարտեցին հայերի կոտորածները: Փաստաթուղթն ուներ հետևյալ բովանդակությունը. «Վերջին մեկ ամսվա ընթացքում օսմանյան իշխանությունների ակնհայտ, հաճախ էլ նույնիսկ ուղղակի աջակցութեամբ տեղի է ունենում հայերի կոտորած: Այրիլի կեսերին նոր թափով այդպիսի կոտորածներ են տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Չեյթունում և ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակայքում հարյուրավոր գյուղերի բնակիչներ ամբողջապես կոտորվել են: Վան քաղաքի հայկական թաղամասը պաշարել են քրդերը: Մյուսնայն ժամանակ թուրքական կառավարությունը ձերբակալում և աննախադեպ ճնշումների է ենթարկում Կոստանդնուպոլսի անմեղ հայ բնակչութեանը:

Թուրքիայի կատարած այս նոր ոճրագործություններն ընդդէմ մարդկութեան ու քաղաքակրթութեան, պարտավորեցնում են Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարություններին հրապարակավ հայտարարելու Բ. Դռանը, որ իրենք կատարված հանցագործութեան անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարութեան բոլոր անդամների, ինչպէս նաև տեղերում կառավարութեան այն ներկայացուցիչների վրա, որոնք մասնակցել են կոտորածին»¹⁷⁰: Սա հայերի ցեղասպանութեան պաշտոնական ճանաչման առաջին վիաստն է, քայլ, որը կատարեցին Եռյակ համաձայնութեան երկրները: Նրանց հայտարարությունն առանձնահատուկ է նրանով, որ հրապարակավ սահմանում էր Անտանտի կառավարությունների միասնական պարտավորությունը՝ պատերազմից հետո ճանաչել թուրքական կառավարութեան և տեղական իշխանությունների պատասխանատվությունը կատարված հանցագործութեան համար: Փաստաթղթում տերություններն իրենց պարտավորությունը հիմնավորեցին «Թուրքիայի կատարած նոր ոճրագործություններով»՝ այդ արտահայտութեան մեջ ներառելով ոչ միայն 1915 թ. սահմնկե-

ցուցիչ դեպքերը, այլև 1894–1896 թթ. հայերի կոտորածները, որոնք հայոց Մեծ եղեռնի նախերգանքն էին եղել: Հայերի ցեղասպանությունը որակվեց իբրև «հանցագործություն ընդդեմ մարդկության ու քաղաքակրթության»: Այդ բնորոշումը նոր հենք ստեղծեց միջազգային իրավունքում՝ շրջանառության մեջ մտցնելով «ոճրագործություն ընդդեմ մարդկության ու քաղաքակրթության» հասկացությունը:

Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի համատեղ հայտարարությանը թուրքական կառավարությունը պատասխանեց հունիսի 6–ին: Հայերի ցեղասպանությունը գնահատելով որպես Թուրքիայի «ներքին խնդիր»՝ Բ. Դուռն արյունահեղության պատասխանատվությունը դնում էր հայերի վրա և կարծիք հայտնում, թե նրանք սպստամբել են անգլիական, ֆրանսիական ու ռուսական կառավարությունների դրոմամբ: Հայտարարության համաձայն, «հայերի հեռացումը որոշ շրջաններից», իբր եղել է «ռազմական հրամայական անհրաժեշտությամբ պարտադրված միջոցառում», որ թուրքական կառավարությունը հայերի դեմ պատժիչ միջոցների չի դիմել մինչև 1915 թ. հունիս, երբ նրանք Վանում և այլ վայրերում զենք վերցրին: Կատարվածն, իբր, հաջորդել է հայերի կողմից Թուրքիայի թշնամիներին օգնելու փաստին¹⁷¹: Վերոնշյալ փաստերը համադրելու դեպքում ժամանակային անջրպետ է առաջանում թուրքական կառավարության նշած ժամանակի և ռուսական կառավարության ապրիլի 27–ի հայտարարության միջև, որով նա ջարդերի մասին տեղեկացրել էր դաշնակիցներին և առաջարկել հանդես գալ ոճրագործությունը դատապարտող միասնական հայտարարությամբ: Դա վկայում է, որ պատժիչ միջոցառումները շատ ավելի վաղ էին ձեռնարկվել և, որպես դրանց հետևանք, հայերը ստիպված էին եղել որոշ վայրերում զենքի դիմել ինքնապաշտպանության նպատակով:

1915 թ. հուլիսին հայերի բնաջնջման թուրքական քաղաքականության դեմ բողոքով, իսկ սեպտեմբերին՝ սուլթանին ուղղված նամակով հանդես եկավ Հռոմի Բենեդիկտ 15–րդ պապը, բայց նրա նամակը մնաց անպատասխան: Չնայած դրան՝ գիտակցելով խնդրի կարևորությունը, Հռոմի պապն առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև իր մահը (1922 թ.) շարունակեց հանդես գալ ի պաշտպանություն հայերի հայրենիքի պահպանման: Իսկ նրանից բռնազավթված տարածքները ետ ստանալը Բենեդիկտ 15–րդն իրավացիորեն համարում էր հայ ազգի ինքնապահպանման ու ազգային մշակույթը զարգացնելու ամենագլխավոր պայմանը: Այսպես է ներկայացնում Հռոմի պապի դիրքորոշումը Հայկական հարցի վերա-

բերյալ իտալացի Մարիո Կարոլան «Սուրբ Աթոռը և Հայկական հարցը (1918–1922)» հոդվածում (Հոռն, 1996), որի կարևոր աղբյուրագիտական հիմքը Վատիկանի արխիվների հարուստ նյութերն են¹⁷²:

✓ Ժամանակն անցնում էր, բայց տերությունների խոստումներն ու բարձրագույն ճառերը գործի վերածվելու միտում չունեին: Կառավարական բարձր շրջաններում տիրող անտարբերության մթնոլորտում սովորական էր ընդունվում մի ողջ ժողովրդի ցեղասպանության փաստը, լուրջ վերաբերմունք չէր ցուցաբերվում այն հանգամանքին, որ մարդկության դեմ գործվում էր ռճրագործություն, որ միջազգային հարաբերություններում, ազգային հարցի լուծման ոլորտում ամրապնդվում էր նոր՝ հակամարդկային եղանակ՝ ցեղասպանության պետական քաղաքականությունը: Հարցին այս տեսանկյունից մոտենալու փոխարեն անգլիական կառավարությունը հրաժարվեց անզամ մասնակցել արևմտահայերի բեկորներին նյութական օգնություն ցույց տալու նպատակով 1916 թ. հունվարին Ռուսաստանի նախաձեռնած ծրագրին: Ըստ այդ ծրագրի՝ հավասար մասնաբաժիններով հավաքված անգլո-ֆրանս-ռուսական մեկ միլիոն ֆրանկի միացյալ և միանվագ դրամական օժանդակությունը հայոց պատրիարքի կամ Սսի կաթողիկոսի տրամադրության տակ էր դրվելու Կոստանդնուպոլսի ամերիկյան դեսպանի կամ էլ հայերին էր բաշխվելու ամերիկյան գործակալների միջոցով: Ընդ որում, գումարի աղբյուրը գաղտնի էր պահվելու՝ թուրքական կառավարության նոր բռնարարքների վտանգից հայերին զերծ պահելու համար¹⁷³: Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարարության կարծիքով ավելի մպատակահարմար էր, որ այդ գործը ստանձնեին մասնավոր հիմնադրամներն ու անհատները: Իսկ արտաքին գործերի նախարարությունում գտնում էին, որ նկատի առնվող նպատակը այնքան «ազդեցիկ չէր» բրիտանական շահերի համար, որպեսզի արդարացվեր պետական բյուջեից մոտավորապես 20 հազար ստեռլինգի (որը միացյալ օժանդակության մեջ Մեծ Բրիտանիայի մասնաբաժինն էր) տրամադրումը դևպի Հալեսայ-Մոսուլ ճանապարհի շրջան և ավելի հեռու՝ դեպի Բաղդադ արստրված հայերին: Նախարարության պատասխանատու պաշտոնյա Հարոլդ Նիքոլսոնի կարծիքով «նվիրատվության ամբողջ նպատակը Միացյալ Նահանգներում նրա ունենալիք ազդեցությունը պիտի լիներ. և անարժեք էր լինելու այդ նվիրատվությունը, եթե գաղտնի պահվեր»¹⁷⁴: Ահա թե ինչու ամերիկացի թղթակիցներին փոխանցված հայտարարությունները և տեղեկագրերը, ինչպես նաև թուրքական վայրագությունները նկարագրող «Կապույտ գիրքն» ավելի օգտակար և կարևոր էին

արտաքին գործերի նախարարության համար Մեծ Բրիտանիայի պետական շահերի տեսանկյունից, քան զաղտնի մասնակցությունը բարեգործական որևէ նպաստի¹⁷⁵: Բրիտանական կառավարության հրաժարումը ենթադրում էր նաև ֆրանսիական կառավարության հրաժարում արևմտահայերի՝ Մեծ եղեռնից նազապուրծ հատվածներին դրամական աջակցություն ցույց տալու գործից, որովհետև նա այդ մարդասիրական առաքելությանն իր մասնակցությունը պայմանավորել էր միայն անգլիական կողմի մասնակցությամբ¹⁷⁶: Հարցին թերևս ավելի լրջորեն էր վերաբերվում Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը: Բայց այս դեպքում էլ, ինչպես վկայում է 1915 թ. դեկտեմբերի 18-ին արտգործնախարար Ս. Սազունովին ուղարկված նամակը, ֆինանսների նախարարությունը հնարավոր չէր համարում «առկա ֆինանսական դրության պայմաններում զանձատան վրա պետական անհրաժեշտությամբ չթելադրված ծախս դնելը», «մանավանդ, որ այդ գումարը նախատեսվում էր փոխադրել թշնամական երկիր՝ թշնամու հպատակներին օգնություն ցույց տալու նպատակով»¹⁷⁷: Պարզվում է, ցարական կառավարությունը եվրոպական տերությունների առջև պաշտպանում էր իր իրավունքներն Արևմտյան Հայաստանում, իսկ նրա տարածքում բնակվող հայերին անհրաժեշտ չէր համարում օգնել՝ պատճառաբանելով, որ նրանք «թշնամու հպատակներ» են:

1915 թ. հուլիսի 27-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդին հասցեագրված գրության մեջ Պողոս Նուբար փաշան ցավում էր, որ չի կարողացել որևէ գործնական արդյունքի հասնել տարագիր հայերին օգնելու հարցի շուրջ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի և մյուս դաշնակից պետությունների ղեկավարների հետ զրույցներում: Նրանք, ցավակցելով հայերին, «խոստովանել էին, թե ներկայումս որևէ գործնական միջոց չունեն հայերին օգնելու համար»: Եվրոպական քաղաքագետները հասկացրել էին, թե «մինչև պատերազմի մտարը Դաշնակիցների կողմը չթեքվի, անհնար է այդ խնդիրների, դրանց թվում Հայկական հարցի լուծման մասին այժմվանից որոշակի հանձնառություններ ստանձնել և անկարող գտնվել դրանք գործադրելու»¹⁷⁸: Իրականում, 1915 թ. աշնանից Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի, իսկ 1916 թ. գարնանից նրանց և Ռուսաստանի միջև բանակցություններ էին տեղի ունենում Թուրքիայի ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ: Չսմանյան «ժառանգությանը» տիրելը մասն էր նրանց նվաճողական ծրագրերի և տվյալ պահին ավելի կարևոր էր ու շահեկան, քան տարագիր հայերին օգնելը:

Ահա հենց այս արդյունքներով էլ սահմանափակվեց Եռյակ համաձայնության երկրների միասնական քաղաքականությունը հայերի ցեղասպանության հարցում 1915–1916 թթ.: Դիվանագիտական բողոքներն ու հայտարարությունները, եղեռնից մազապուրծ հայերին օգնելու վերաբերյալ խոստումներն ու նախագծերը, չնայած հարմարեցվում էին մեծ տերությունների քաղաքական շահերին, անշուշտ, անհրաժեշտ էին, բայց իբրև այդպիսին, ցավոք, ոչ բավարար՝ հայերի սպանող կանխելու համար:

Այնուամենայնիվ, թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականությունը դատապարտելու և կայզերական Գերմանիայի թուրքամետ դիրքորոշումը մերկացնելու ուղղությամբ Եռյակ համաձայնության երկրների ձեռնարկած քայլերի ազդեցությամբ կատարվեց երկու դրական տեղաշարժ: Նախ, 1915 թ. հունիսի կեսերին Գերմանիայի կառավարության, մասնավորապես արտաքին գործերի նախարարության, Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանության ու հյուպատոսությունների կեցվածքում նկատելի դարձավ թուրքական դաշնակցի հակահայկական քաղաքականության համարձակ գնահատումն ու քննադատումը¹⁷⁹: Հայերի կոտորածների առիթով Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանությունը նույնիսկ պաշտոնական բողոք–հուշագրեր ներկայացրեց թուրքական կառավարությանը, որոնցից առաջինը՝ 1915 թ. հուլիսի 4–ին, այսինքն՝ Վանի դեպքերից ճիշտ ելքեր ամիս և Մուշի, Էրզրումի, Տրապիզոնի ու այլ շրջաններում կատարված կոտորածներից մեկ ամիս հետո: Գերմանական դիվանագիտությունը ստիպված էր հավուր պատշաճի այդպիսի քայլի դիմել, քանի որ զանգվածային ջարդերի, տեղահանության, արևմտահայերի ունեցվածքի բռնագրավման ու թալանի հետևանքով վնասներ էին կրում Արևմտյան Հայաստանում գործող գերմանական ձեռնարկություններն ու բանկերը¹⁸⁰: Բացի այդ, Անտանտի երկրների համատեղ հայտարարությունից հետո առաջացել էր թուրքական գազանություններից սահմանագատվելու անհրաժեշտություն: Դա ուներ դիվանագիտական ու քաղաքական նշանակություն՝ պաշտպանել կայզերական Գերմանիայի հեղինակությունը հայերի ցեղասպանությանը մեղսակից լինելու վերաբերյալ թշնամական աշխարհի մեղադրանքներից: Իր հուշագրում գերմանական կառավարությունը, հայերի ցեղասպանությունը որակելով որպես Թուրքիայի «ներքին խնդիր», միայն կցկտոր դժգոհություն էր հայտնում, այն էլ սոսկ թուրքական տեղական իշխանություններին՝ «ռազմական պատճառներով թելադրված» քայլերի, «օ-

րինական պաշտպանական միջոցառումների» և «ներքին խնդրի» լուծման ժամանակ նրանց թույլ տված «ծայրահեղությունների» համար¹⁸¹:

Հայերի ցեղասպանության հարցում կայզերական Գերմանիայի դիրքորոշման վերաբերյալ առկա բազմաթիվ պաշտոնական փաստաթղթերից ներկայացվածներն էլ թույլ են տալիս եզրակացնել, որ գերմանական դիվանագիտությունը Հայկական հարցում 1915–1916 թթ. գործում էր երկու ուղղությամբ. մի կողմից, գերմանաթուրքական դաշինքին հավատարիմ, փորձում էր ապացուցել, որ Օսմանյան կայսրության հայերի մեջ գոյություն է ունեցել լայնորեն տարածված հեղափոխական շարժում, և որ Անտանտը խրախուսել է նրանց «ղավաղրական գործունեությունը», մյուս կողմից ջանում էր հակառակորդ պետություններին, գերմանական և միջազգային հասարակական կարծիքին ցույց տալ, որ Գերմանիան հնարավոր բոլոր միջոցներով աշխատում է «կանխել հայերի նկատմամբ ծայրահեղորեն դաժան վարվելակերպը»: Այժմ հասկանալի է, թե ինչու թուրքերը որևէ կարևորություն չտվեցին այս և հաջորդ բոլոր բողոքներին, որ ներկայացնում էին մասնաձևերով. Վանգեմիպյմին հաջորդած գերմանական դեսպաններ իշխան Պաուլ ֆոն Վուլֆ-Մետտերնիխսն (1915 թ. նոյեմբերի 15 — 1916 թ. հոկտեմբերի 3) ու դոկտոր Ռիչարդ ֆոն Կյուլմանը (1916 թ. նոյեմբերի 16 — 1917 թ. հունիսի 24), և մյուս պետությունների արտաքին գործերի նախարարություններն ու դեսպանները:

Արևմտահայերի ցեղասպանությունը չդատապարտեցին և տարազիր հայերին օգնելու նպատակով գործնական քայլերի չդիմեցին Ավստրո-Հունգարիան, Իտալիան, ինչպես մասնաձևերով 1915 թ. հոկտեմբերի 1-ին Գերմանիայի կողմում պատերազմի մեջ մտած Բուլղարիան: Ավստրո-Հունգարիայի պաշտոնական շրջաններում թուրքական կառավարության հակահայկական քաղաքականությունը զնահատում էին որպես Թուրքիայի «մաքրում կասկածելի հայերից», «համահայկական հեղափոխության վտանգից» և հավատարիմ մնացին այդ դիրքորոշմանը պատերազմի ողջ ընթացքում: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Կոստանդնուպոլսի ավստրո-հունգարական դեսպան Յոհան Մարկգրաֆ Պալլավիչինին (1906 թ. հոկտեմբերի 5 — 1918 թ. նոյեմբերի 30) հետևում էր գերմանական դեսպան Հ. Վանգեմիպյմի թուրքամետ դիրքորոշմանը և գործում էր մեծ զգուշավորությամբ՝ չվիրավորելու համար թուրքերի զգացմունքները: Այսպես, 1915 թ. մայիսի 1-ին Թալեաթի հետ զրույցի ժամանակ, խոսելով հայ կանանց ու երեխաների «հետապնդումների» մասին, Թուրքիայի դաշնակից պետության

դեսպանն անհանգստություն հայտնեց ոչ թե վերջիններիս սպասող ողբերգական ճակատագրի վերաբերյալ, այլ նրա, որ բռնությունների շարունակումը վտանգում էր Թուրքիայի միջազգային հեղինակությունը: Հունիսի 24-ին Ավստրո-Հունգարիայի արտգործնախարարին ուղղված հաղորդագրության մեջ Յ. Պալլավիչինին խոստովանում էր, որ «թուրքերի անձեռնհաս քաղաքականության հետևանքով» հայերն «ուղղակի հայտնվել են ռուսների ձեռքում»¹⁸²: Ժամանակի ընթացքում ավստրո-հունգարական դիվանագետներին պարզ դարձավ, որ երիտթուրքերի այդ «անձեռնհաս քաղաքականության» նպատակը հայերի բնաջնջումն էր¹⁸³: Չնայած դրան՝ ավստրո-հունգարական կառավարող շրջանների դիրքորոշումը մնաց անփոփոխ: Խնդրի վերաբերյալ հայտնաբերված դիվանագիտական փաստաթղթերը չեն տալիս որևէ ապացույց այն մասին, որ Ավստրո-Հունգարիայի կառավարությունը մտադիր եղած լիներ Թուրքիայի նկատմամբ խիստ ճնշումներ կիրառելու, բացի դիվանագիտական բողոքներից:

Արևմտյան Հայաստանում գործող իտալական հյուպատոսությունները և Կոստանդնուպոլսում իտալական դեսպանությունը 1914-1916 թթ. ընթացքում իրենց կառավարությանը պարբերաբար տեղեկացնում էին ջարդերի և տեղահանության փաստերի մասին: Հատկապես հարուստ փաստացի նյութ էին պարունակում Վանի իտալական հյուպատոսական գործակալ Գ. Սբորդոնի և Տրապիզոնի հյուպատոս Ջ. Գորրինիի զեկուցագրերը¹⁸⁴: Բայց Իտալիայի կառավարությունը ևս այդպես էլ չդատապարտեց հայերի ցեղասպանության երիտթուրքերի քաղաքականությունը:

Հայերի ցեղասպանության հարցում Անտանտի երկրների դիրքորոշումը նպաստեց մաս ԱՄՆ-ի քաղաքականության ճշգրտմանը, բայց դա տեղի ունեցավ աստիճանաբար՝ առաջին համաշխարհային պատերազմի և կռվող ռազմաքաղաքական խմբավորումների նկատմամբ ԱՄՆ-ի վերաբերմունքի փոփոխությանը համապատասխան: Սկզբում ԱՄՆ-ի՝ չեզոք քաղաքականություն վարող կառավարությունը, նույնպես չէր ցանկանում Թուրքիայի և Գերմանիայի հետ հարաբերություններում բարդություններ առաջացնել բողոքներով կամ հուշագրերով՝ ուղղված թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականության դեմ՝ նման քայլերը որակելով որպես միջամտություն Թուրքիայի ներքին գործերին: Ամերիկյան կառավարության պատասխանի ուշացումն էր պատճառներից մեկը, որ Ամենայն հայոց կաթողիկոսը 1915 թ. հուլիսի 5-ին կրկին հեռագրեց Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովին՝ խնդրելով Վաշինգտոնում ռուսական

դեսպանի միջոցով միջնորդել ամերիկյան կառավարության առջև՝ «տեղահանվող ու բնաջնջվող հայերին պաշտպանելու խնդրանքով»: Նա գրում էր. «Կոստանդնուպոլսից և Կիլիկիայից իմ ստացած հավաստի տեղեկությունների համաձայն, թուրքական կառավարության հրամանով Թուրքիայում ամնախաղեպ գազանությամբ զանգվածաբար ոչնչացնում են ամենդ հայերին: Հայ բնակչությունը բռնի տեղահանվում է Իկոնիա և Միջագետք, որտեղ նրանք անբարենպաստ պայմաններից ու կլիմայից կմեռնեն, ինչն էլ թուրքական կառավարության նպատակն է: Արևմտյան Հայաստանում և, մասնավորապես, Կիլիկիայում հայերի օրհասական դրությունից ելնելով՝ ես հարկադրված եմ կրկին դիմել հյուսիսամերիկյան նահանգների նախագահին՝ ամենդ մեռնող հայերին պաշտպանելու խնդրանքով: Հայտնելով այդ մասին Չերո Բարձր Գերագանցությանը՝ խոնարհաբար խնդրում եմ հանձնարարել Վաշինգտոնի կայսերական դեսպանին ամերիկյան կառավարության առջև պաշտպանել իմ միջնորդությունը»¹⁸⁵: Վերջապես, 1915 թ. դեկտեմբերի 1-ին «Նյու Յորք Թայմսը» հրապարակեց Վուդրո Վիլսոնի դիրքորոշումը հայերի ցեղասպանության հարցում: ԱՄՆ-ի նախագահը, նկատի ունենալով գերմանական ներխուժումը Բելգիա, գրում էր, որ նույնիսկ նախորդ մեկուկես տարվա սարսափներից բթացած և ուժասպառ ջղերի համար հայերին վիճակված սարսափելի ճակատագրի լուրը, «հայերի մեծածավալ սպանդի գերագույն անօրինությունը» պետք է որ համակրանքի և ցասման նոր պոռթկում տային: Բայց նախագահ Վիլսոնն անօգուտ էր համարում այն համակրանքն ու ցասումը, որոնք «պիտի վատնվեին միայն բառերով»: Մրացյալ Նահանգների նախագահին ընդունում էր ԱՄՆ-ի գլխավորությամբ չեզոք պետությունների թերացումը, ամիրավության հանդեպ լռելը. «Մենք մերժեցինք կատարել մեր պարտականությունը Բելգիայի հանդեպ. մենք մերժում ենք կատարել մեր պարտականությունը Հայաստանի հանդեպ, որովհետև մենք աստվածացրել ենք խաղաղությունն ամեն գնով... Ամիրավությունը պիտի կասեցվի միայն ա՛յն մարդկանց կողմից, որոնք քաջ են և արդար՛ նաև, որոնք պատիվը գերադասում են ապահովությունից... և որոնք ոչ մի վտանգի առջև չեն ընկրկում, ոչ էլ նույնիսկ պատերազմի վտանգից, եթե այդ անհրաժեշտ է՝ ծառայելու համար արդարության մեծ դատին»¹⁸⁶: Մեծ տերություններին հիշեցնելով Բելգիայի և Հայաստանի նկատմամբ իրենց պարտավորությունների մասին՝ ԱՄՆ-ի նախագահն իրականում արտահայտում էր իր պետության կառավարող շրջանների անհանգստությունը եվրոպական ռազմաճակատներում կայգերական Գերմա-

նիայի հաջողությունների առիթով, որոնք անուղղակիորեն հանգեցնելու էին գերմանա-ամերիկյան հակամարտության: Կոչ անելով կասեցնել «անիրավությունն» աշխարհում՝ Վուդրո Վիլսոնը հայտարարում էր իր պետության պաշտոնական վերաբերմունքը թե՛ պատերազմի և թե՛ կռվող խմբավորումների նկատմամբ: Փոփոխված ռազմաքաղաքական իրադրության պայմաններում ԱՄՆ-ի պետական շահը պահանջում էր մասնակցել համաշխարհային պատերազմին, կռվել ընդդեմ Գերմանիայի, նպաստել Անտանտի երկրների հաղթանակին և նրանց հետ մասնակցել նաև աշխարհի վերաբաժանմանը: Վերջին հանգամանքը պատերազմի ավարտական փուլում գերիշխող դարձավ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության համար:

Շուտով, ԱՄՆ-ի արտգործնախարարությունը երկու անգամ բողոք ներկայացրեց թուրքական կառավարությանը: Միաժամանակ, Սպիտակ տանը կարծում էին, որ պետք չէ Թուրքիայի դեմ կիրառել պաշտոնական միջոցառումներ՝ չվտանգելու համար ամերիկացի առաքյալների և ամերիկյան կալվածների շահերը: Չնայած կառավարության զգուշավոր դիրքորոշմանը՝ ԱՄՆ-ում ստեղծվել էր Հայերի օգնության կոմիտե՝ բաղկացած թուրքական հարցերով հետաքրքրվող ամերիկյան երևելի բարեգործներից ու քարոզիչներից¹⁸⁷: Նրանք հավաքում էին հայերի կոտորածների մասին փաստերը և հետազոտում: Իր տեղեկագրերից մեկում կոմիտեն շեշտում էր, որ հայերի նկատմամբ գործադրված ոճիրներն իրենց անգթությամբ գերազանցում են վերջին հազար տարիների ընթացքում պատմության արձանագրած համանման փաստերին¹⁸⁸:

1916 թ. փետրվարին ամերիկյան մամուլը տեղեկացրեց ամերիկյան կառավարության պաշտոնական բողոքի մասին՝ ներկայացված թուրքական կառավարությանը՝ հայերի կոտորածներին վերջ տալու պահանջով¹⁸⁹: Փաստաթղթում, որն ամբողջացնում էր Միացյալ Նահանգների պաշտոնական տեսակետը, ամերիկյան կառավարությունը հայերի դեմ գործված բռնությունների պատասխանատվությունը դնում էր թուրքական իշխանությունների վրա: Փաստորեն, ԱՄՆ-ի դիրքորոշումն էսպես փոխվել էր, որովհետև 1916 թ. սկզբին արդեն այլ էր Միացյալ Նահանգներում վերաբերմունքը թե՛ պատերազմի և թե՛ Թուրքիայի ու Գերմանիայի նկատմամբ: Հարցն այն է, որ պատերազմում չեզոքության քաղաքականությունն այլևս չէր համապատասխանում ԱՄՆ-ի աշխարհակալական ձգտումներին: Պատերազմի առաջին երեք տարիների ընթացքում ամերիկյան մոնոպոլիաները վիթխարի շահույթներ էին կորզել կռվող երկրներից՝ գլխավորապես Ան-

տանտի պետություններին ռազմաճակատներ, սննդամթերք մատակարարելու և փոխառություններ տրամադրելու հաշվին: Հետին պլան էին մղվել Միացյալ Նահանգների ու Անտանտի պետությունների տարածայնությունները, սրվել էին հակասությունները Գերմանիայի հետ: Ավելին՝ Վաշինգտոնում ամհանգստանում էին, որ Անտանտի պարտության դեպքում ԱՄՆ-ը կկորցնե՞ր Ռուսաստանին, Անգլիային և Ֆրանսիային տրամադրած վարկերն ու փոխառությունները: Իսկ Անտանտի հաղթանակի դեպքում էլ չեզոքությունն ամերիկյան կառավարությանը կգրկեր աշխարհի վերաբաժանմանը մասնակցելու իրավունքից:

Ճիշտ է, եվրոպական տերությունները և ԱՄՆ-ը դատապարտեցին արևմտահայերի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ գործված հանցագործություն և դրա ողջ պատասխանատվությունը դրեցին երիտթուրքական կառավարության վրա, բայց նրանց Արևելյան քաղաքականության ոլորտում բնաջնջվող հայերի շահերի պաշտպանությունը երկրորդական տեղ էր գրավում: Տերությունները հետամուտ էին իրենց նեղ պետական շահերը պաշտպանելու, իրենց քաղաքական նկատառումներով առաջնորդվելու:

Մեծ էր ոճրագործության ծանրությունը, որն ընկնում էր նաև եվրոպական ու ամերիկյան կառավարությունների խղճին: Միջազգային հանրությանը հայ ժողովուրդը հայտնի էր ոչ այլ կերպ, քան իրեն հասցվող հարվածներով: Նրա անցյալը, ազգային նպատակները մնում էին չհասկացված: Թուրքական կառավարության կեղծիքի մթնոլորտում քչերն էին հասկանում իրականությունը: Առաջինը նշանավոր պետական, հասարակական-քաղաքական գործիչներ, գիտնականներ և գրողներ Վ. Բոյուսովը, Յու. Վեսելովսկին ու Մ. Կովալսկին էին Ռուսաստանում, Ֆ. Նանսենը՝ Նորվեգիայում, Գ. Կացարովը՝ Բուլղարիայում, Ջ. Բրայսը, Ա. Վիլյամսը, Ռ. Սեսիլը, Ֆր. Կավենդիշը, Ռ. Դևիսոնը, Ա. Թոյնթին և Ջ. Հարրիսը՝ Մեծ Բրիտանիայում, Յո. Լեփսիուսը, Յո. Մարկվարտը, Ա. Վեգները, Հ. Շտյուրմերը՝ Գերմանիայում, Է. Դումերզը, Ժ. Մորգանը, Ռ. Պինոնը և Ա. Ֆրանսը՝ Ֆրանսիայում, Հ. Մորգենթաուն և Հ. Հիքքոնսն ԱՄՆ-ում, որ խղճի կոչնակ հնչեցրին: Նրանք էին, որ փորձեցին փոքր-ինչ թեթևացնել հայերի ցեղասպանության հարցում իրենց կառավարությունների խղճին ծանրացած պատասխանատվության բեռը¹⁹⁰:

Արևմտահայերի ցեղասպանության հարցում 1915–1916 թթ. մեծ տերությունների վարած քաղաքականությունը ցույց է տալիս, որ մարդկության

դեմ ուղղված ռճրագործությունը հնարավոր չէ կանխել ո՛չ նեղ պետական շահերի և ո՛չ էլ անգամ պետությունների խմբի շահերի ընդհանրության պայմաններում: Միայն համամարդկային շահերի գիտակցումն ու այդ տեսանկյունից մշակված միջազգային իրավական, քաղաքական նորմերի հետևողական իրագործմանն ու դրա վերահսկողության միջոցով է հնարավոր կանխարգելել ռճրագործությունը կամ կանխել դրա ընթացքը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 **Диллон Эм.**, Положение дел в Турецкой Армении, "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году" (под ред. проф. Камаровского), Москва, 1896, էջ 333:
- 2 **Տե՛ս** Сборник договоров России с другими государствами (1856–1917), փաստ. No 25, էջ 168–169, 173, No 27, էջ 205: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. No 4, էջ 92, No 7, էջ 128:
- 3 **Այս մասին մանրամասն տե՛ս** Հայ ժողովրդի պատմություն, ՀԱՄՀ ԳԱ հրատ., հ. VI, Երևան, 1981, էջ 107–123: **Գալոյան Գ. Ա.**, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878 թ. Բեռլինի վեհաժողովում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1997, No 1, էջ 7–22:
- 4 **Տե՛ս** Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. No 4, էջ 83–105:
- 5 **Տե՛ս** Сборник договоров России с другими государствами (1856–1917), փաստ. No 26, էջ 178:
- 6 **Роллен—Жекмен М. Г.**, Армения, армяне и трактаты, "Положение армян в Турции", էջ 39:
- 7 **Киракосян Дж. С.**, Дипломатическая борьба вокруг Армянского вопроса в 1878 году, "Страны и народы Ближнего и Среднего Востока. Турция", т. X, Ереван, 1979, էջ 90–110:
- 8 **Փաստարդի բովանդակությունը տե՛ս** «Փորձ», Թիֆլիս, 1879, No 7–8, էջ 204–205:
- 9 **Տե՛ս** **Фадеева И. Л.**, Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм—панисламизм), Москва, 1985, էջ 182–183:
- 10 **Նախագծի բովանդակությունը տե՛ս** Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. No 9, էջ 138–148: Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 246–248:
- 11 **Տե՛ս** Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 151–193: Թումայան Կ., Պատմություն Արևելյան խնդրի և առաջնորդ Հայկական հարցի, հ. Բ. Լոնդոն, 1905, էջ 560:
- 12 **La Turquie. Conference de M. André Mandelstam.** Paris, 1918, էջ 11–12:
- 13 **Кочар М.**, Армяно—турецкие общественно—политические отношения и Армянский вопрос в конце XIX — начале XX веков, Ереван, 1988, էջ 73–76, 93:
- 14 **Акчам Т.**, Турецкое национальное "я" и армянский вопрос, Москва, 1995, էջ 35–37:
- 15 **Mourad Bey, Le Palais de Yıldiz et la Sublime Porte. La véritable mal d'Orient,** Paris, 1895, էջ 15:
- 16 **Ջաղվածքը տե՛ս** **Зареванд**, Турция и пантуранизм, Париж, 1930, էջ 59–61:
- 17 **Տե՛ս** **Մարտիրոսյան Հ.,** Կիլիկիայի 1909 թ. ապրիլի հայկական կոտորածը և երիտասարդ բուրքերի պատասխանատվության հարցը, «Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. V, Երևան, 1970, էջ 301:
- 18 **Տե՛ս** **Թէրզեան Յ.,** Կիլիկիոյ աղետը, հ. 2. Կոստանդնուպոլիս, 1912, էջ 256, 275, 291–295: **Կարապետյան Ն. Վ.,** 1908 թ. երիտրորբական հեղաշրջումը և արևմտահայության վիճակը, «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 497–498:
- 19 **Տե՛ս** Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. No 98, էջ 243–246: Թէր-

- գեան 3., նշվ. աշխ., էջ 215–243:
- 20 Տե՛ս Դայերի գեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. No 91, էջ 231–232; No 95, էջ 235–236:
- 21 **Борьян Б.**, նշվ. աշխ., էջ 65:
- 22 **Инджикян О. Г.**, Буржуазия Османской империи, Ереван, 1977, էջ 269–272:
- 23 **Toynbee A. J.**, Turkey: A Past and a Future, London–New York, 1917, էջ 40–41:
- 24 **Macler Fr.**, Autour de l'Arménie, Paris, 1917, էջ 157–158:
- 25 ԳԳ ԴԶԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 1162, ք. 17:
- 26 Տե՛ս **Минахорян В.**, Трагедия Турции, Баку, 1919, էջ 16:
- 27 Տե՛ս «Դորիզոն», Թիֆլիս, 1912, դեկտեմբերի 16: Տե՛ս նաև Будущее устройство Армении..., փաստ. No 8, էջ 20: Сборник дипломатических документов. Реформы в Армении, փաստ. No 12, էջ 22 (հայերեն թարգմանությունը՝ «ժողովածու դիվանագիտական փաստաթղթերի: Բարենորոգումները Հայաստանում», թարգմ.՝ Ս. Ավագյան, Թիֆլիս, 1915):
- 28 ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, ք. 24: Տե՛ս նաև Будущее устройство Армении..., փաստ. No 8, էջ 20:
- 29 «Աշակ», Թիֆլիս, 1912, սեպտեմբերի 11: Տե՛ս նաև **Саркисян Е. К.**, Армянский вопрос и Россия в 1912–1914 гг., «Պատմա–բանասիրական հանդես», Երևան, 1995, No 1, էջ 111–114:
- 30 Տե՛ս ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 55, ք. 15–16, 18: Դայերի գեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. No 113, էջ 292: **Համբարյան Ա. Ս.**, նշվ. աշխ., էջ 230–234: “Речь”, СПб, 1914, 5 декабря:
- 31 Տե՛ս **Саркисян Е. К.**, Армянский вопрос и Россия в 1912–1914 гг., «Պատմա–բանասիրական հանդես», Երևան, 1995, No 1, էջ 111–113:
- 32 Տե՛ս **Փափազյան Վ.**, Հայկական բարենորոգումները (1912–1914 թթ.), «Վե՛ն», հանդես մշակոյթի եւ պատմութեան, Փարիզ, 1934, հունւար–փետրւար, էջ 67:
- 33 **Саркисян Е. К.**, Армянский вопрос и Россия в 1912–1914 гг., «Պատմա–բանասիրական հանդես», Երևան, 1995, No 1, էջ 111–112:
- 34 ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, ք. 1, 2–3: Տե՛ս նաև **Կարապետյան Ն. Վ.**, Հայկական բարենորոգումների խնդիրը 1912–1914 թվականներին, «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 520:
- 35 Մետենադարան, ֆ. Կաթողիկոսի դիվան, ց. 20, թրք. No 238, փաստաթուղթ No 64, No 110: ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, ք. 7; գ. 53, ք. 47: Դայերի գեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. No 110, էջ 283–284: 1912 թ. նոյեմբերի 23–ին կաթողիկոսին զրած նամակում Գրիգորիս վարդապետ Պալաքյանը Հայկական հարցը բարձրացնելու նախաձեռնություն Ամենայն հայոց կաթողիկոսին վերապահելը բացատրում էր «անհաջողության դեպքում» այլ պետության միջամտությունը հարուցելու մասին թուրքական կառավարության մեղադրանքից պատրիարքությանն ազատելու նպատակով:
- 36 Տե՛ս ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, ք. 10; գ. 55, ք. 12: «Դորիզոն», Թիֆլիս, 1913, հունիսի 1: Ազգային պատմիականության անդամներն էին՝ արևմտահայ գործիչներ Գևորգ Եպիսկոպոս Ուրուճյանը՝ Եվրոպայում հայոց թեմի առաջնորդը, Հայկական Ընդհանուր Բարեգործական Միության փոխնախագահ Յաղուբ Արքին փաշան, Կոստանդնուպոլսի Կեդրոնական ուսումնարանի մախխին տեսուչ Հարություն Սուտիչյանը եւ Մինաս Չերազը: Տե՛ս ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, ք. 10; գ. 58, ք. 17: **Արզումանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 76:
- 37 ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, ք. 5–6:
- 38 Տե՛ս նույն տեղը, ք. 7:
- 39 Տե՛ս **Փափազյան Վ.**, Հայկական բարենորոգումները (1912–1914), «Վե՛ն», հանդես մշակոյթի եւ պատմութեան, Փարիզ, 1934, հունւար–փետրւար, էջ 64:
- 40 Տե՛ս նույն տեղը, էջ 67:
- 41 Նույն տեղում:
- 42 Сборник дипломатических документов. Реформы в Армении, փաստ. No 1, էջ 3–5:
- 43 Տե՛ս նույն տեղում, փաստ. No 31, էջ 39: **Կարապետյան Ն. Վ.**, Հայկական բարենորոգումների խնդիրը 1912–1914 թվականներին, «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 520–521:
- 44 Տե՛ս «Դորիզոն», Թիֆլիս, 1913, հունիսի 4: **Լեռ**, Անցալից, Թիֆլիս, 1925, էջ 250:

- 45 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 65, ք. 28–29: «Մշակ», Թիֆլիս, 1913, մայիսի 26:
- 46 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 51, ք. 1–3: Կարապետյան Ն. Վ., Հայկական բարենորոգումների խնդիրը 1912–1914 թվականներին, «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 523–524:
- 47 Տե՛ս Сборник дипломатических документов. Реформы в Армении, փաստ. No 50, էջ 52–69: Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), док. от 3.07.1913, R. 14080, Ab. 13761:
- 48 Նախագծի ամբողջական բովանդակությունը տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 314–329: Сборник дипломатических документов. Реформы в Армении, փաստ. No 50, էջ 52–69:
- 49 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. No 67, էջ 222–223: Дипломатическая переписка России, предшествовавшая войне с Турцией, с. 45. Сборник дипломатических документов. Реформы в Армении, док. No 32, с. 41, No 42, с. 46, No 43, с. 47, No 44, с. 47–48, No 45, с. 48, No 48, с. 49–50, No 51, с. 69, No 54, с. 71. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), док. от 28.06.1913, R. 14079, Ab. 12947; док. от 30.06.1913, R. 14080, Ab. 13152. Documents diplomatiques français, 1871–1914. 3–e série, t. VII, p. 320–321; 331: Մանդելշտամ Ա. Ն., Ռուսաստանի քաղաքականությունը Թիւրքիայում Մեծ պատերազմից առաջ, մաս II, «Վե՛ն», հանդես մշակոյթի եւ պատմութեան, Փարիզ, 1935, մայիս–յունիս, էջ 64: Bayur Y. H., Türk inkilâbi tarihi, cilt II, kısım IV, Ankara, 1952, s. 350.
- 50 «Բյուզանդիոն», Կոստանդնուպոլիս, 1913, հունիսի 21: Сборник дипломатических документов. Реформы в Армении, փաստ. No 15, էջ 26: Джемаль–паша, Գլվ. աշխ., էջ 227:
- 51 Տե՛ս Павлович (Вельтман) М., Борьба за Азию и Африку, Ленинград, 1924, էջ 78:
- 52 Сборник дипломатических документов. Реформы в Армении, փաստ. No 54, էջ 71–72:
- 53 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, ք. 92–93: «Մշակ», Թիֆլիս, 1913, հուլիսի 20:
- 54 Տե՛ս Mandelstam A., Գլվ. աշխ., էջ 213:
- 55 Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), док. от 14.07.1913, R. 14080, Ab. 14922; док. от 22.07.1913, R. 2125 sek., Ab. 15416.
- 56 Մանդելշտամ Ա. Ն. Ռուսաստանի քաղաքականությունը Թիւրքիայում Մեծ պատերազմից առաջ, մաս II, «Վե՛ն», հանդես մշակոյթի եւ պատմութեան, Փարիզ, 1935, մայիս–յունիս, էջ 58:
- 57 Տե՛ս նույն տեղը, էջ 65–66:
- 58 Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), док. от 03.07.1913, R. 14080, Ab. 13761.
- ♦ 59 Տե՛ս Материалы по истории франко–русских отношений за 1910–1914 гг. Сборник секретных дипломатических документов бывшего императорского Российского Министерства иностранных дел, Москва, 1922, էջ 634–635:
- 60 Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), док. от 28.07.1913, R. 2125, sek., zu, Ab. 15416.
- 61 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. No 189, էջ 351: Մանդելշտամ Ա. Ն., Ռուսաստանի քաղաքականությունը Թիւրքիայում Մեծ պատերազմից առաջ, մաս III, «Վե՛ն», հանդես մշակոյթի եւ պատմութեան, Փարիզ, 1935, յուլիս–օգոստոս, էջ 71–72:
- 62 Տե՛ս ՀՀ ՀԶԿԲ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 1162, ք. 9:
- 63 Տե՛ս Նախապետ Ա., Գլվ. աշխ., էջ 71: Павлов М., Գլվ. աշխ., էջ 61: Георгиев В. А., Киняпина Н. С., Панченкова М. Т., Шеремет В. И., Восточный вопрос во внешней политике России (конец XVIII–начало XX вв.), Москва, 1978, էջ 371:
- 64 Տե՛ս Կիրակոսյան Ջ., Գլվ. աշխ., էջ 150:
- 65 Տե՛ս Сборник дипломатических документов. Реформы в Армении, փաստ. No 69, էջ 84, 86–87, No 73, էջ 89–90:
- 66 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 35, ք. 20; գ. 52, ք. 8: Сборник дипломатических документов. Реформы в Армении, փաստ. No 59, էջ 78, No 60, էջ 78–79, No 62, էջ 80, No 148, էջ 167:

- 67 Փաստաթղթի ամբողջական բովանդակությունը տե՛ս Сборник дипломатических документов. Реформы в Армении, փաստ. No 78, էջ 93–94: Mandelstam A., նշվ. աշխ., էջ 235–236: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. No 114, էջ 276–277:
- 68 Տե՛ս Сборник дипломатических документов. Реформы в Армении, փաստ. No 91, 92, էջ 101–102:
- 69 Համաձայնագրի ամբողջական բովանդակությունը տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 59, ք. 1–4; գ. 60: ՀՀ ՀԶԿԲ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 393: Сборник дипломатических документов. Реформы в Армении, փաստ. No 147, էջ 162–165: Сборник договоров России с другими государствами, (1856–1917), էջ 421–424: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. No 188, էջ 339–342:
- 70 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 53, ք. 13, 25–26; գ. 58, ք. 51; գ. 62, ք. 1; գ. 65, ք. 3: «Մշակ», Թիֆլիս, 1914, հունվարի 1 և 13: «Հորիզոն», Թիֆլիս, 1914, փետրվարի 26: «Արարատ», Էջմիածին, 1914, ապրիլ, մայիս: "Новое время", СПб, 1914, 8 февраля: Կարինյան Ա., Իսվերիալիստական պատերազմը և Հայաստանը, Երևան, 1924, էջ 57–60:
- 71 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. No 189, էջ 351:
- 72 *Джемаль–паша*, նշվ. աշխ., էջ 56:
- 73 Այդ ցուցակում ընդգրկված էին նաև Հոլանդիայի ռազմական նախարարության գլխավոր քարտուղար Դուրմանը, բելգիացիներ գեներալ–մայոր Դեզիզը և Բելգիական Կոնգոյի նախկին փոխ-նահանգապետ Հենրիին: Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 60, ք. 7–8; գ. 65, ք. 3: Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительств, 1878–1917, серия 3 (1914–1917), т. I, Москва–Ленинград, 1931, փաստ. No 360, էջ 475–476:
- 74 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, ք. 138–143:
- 75 Ընդհանուր վերատեսչիչների հետ ստորագրած աշխատանքային պայմանագրերի և «Հրահանգի» դրույթների մանրամասն վերլուծությունը տե՛ս նույն տեղը, ք. 97–102:
- 76 Տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, էջ 343–345:
- 77 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 65, ք. 25:
- 78 Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), док. от 25.05.1914, R. 14084, Ab. 10249.
- 79 Տե՛ս «Բյուզանդիոն», Կոստանդնուպոլիս, 1914, օգոստոսի 20:
- 80 Տե՛ս Тарле Е., Сочинения в 12–ти т. (Редкол.: А. С. Ерусалимский и др.), т. 5, Москва, 1958, էջ 199: Гасратян М. А., Орешкова С. Ф., Петросян Ю. А., Очерки истории Турции, Москва, 1983, էջ 154: Karabekir K., Cihan habine neden girdik, nasil girdik, 7–8; idare ettik? Kitap II, ikinci kisim, Istanbul, 1938, էջ 33–34, (Ինչո՞ւ, ինչպե՞ս մենք մտանք համաշխարհային պատերազմի մեջ. ինչպե՞ս մղեցինք այն), քարգմանությունը Ա. Բոգուչինի և Ն. Պլուզյանի:
- 81 Տե՛ս Зареванд, նշվ. աշխ., էջ 37, 42–44, 70: Dizdaroglu H., Omer Seyfettin. Ankara, 1964, էջ 9, 14: Червоная С. М. Идея национального согласия в сочинениях Исмоила Гаспринского, "Отечественная история", Москва, 1992, No 2, էջ 25–33:
- 82 Տե՛ս Зареванд, նշվ. աշխ., էջ 12: Բաղալեան Ն., Յոգնե՞ Պոմեակովսկու «Օսմանեան կայսրութեան փլուզումը» աշխատութեան գրախոսականը, «ԿԵՄ», հանդես մշակոյթի եւ պատմութեան, Փարիզ, 1933, սեպտեմբեր–հոկտեմբեր, էջ 147:
- 83 Տե՛ս Готлиб В. В., նշվ. աշխ., էջ 41:
- 84 Նույն տեղում, էջ 42:
- 85 Մուշեղ արքեպիսկոպոս, Հայկական մղձավանջը (ընճական վերլուծումներ), Բոստոն, 1916, էջ 19:
- 86 Տե՛ս Ինժիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984, էջ 158–159: Киракосян Дж. С., նշվ. աշխ., էջ 136–137:
- 87 Խուրշուդյան Լենդրուշ, Հայոց ցեղասպանության պատճառները և պատմական դասերը, «Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր», մաս 1, Ազգային հարցի և գենոցիդի ուսումնասիրման կենտրոն, Երևան, 1995, էջ 17:
- 88 «Արարատ», Բեյրութ, 1963, No 6542–6543:

- 89 • **Тыркова А.**, Старая Турция и младотурки, Петроград, 1916, էջ VI:
- 90 • **Տե՛ս Գաբրյան Մ. Ա., Օրշոկոյա Տ. Փ., Սերոսյան Յ. Ա.**, Եջվ. աշխ., էջ 155–156:
- 91 • **ՀՀ ՊԿՊԱ**, ֆ. 422, ց. 1, գ. 885, ք. 23: **Սիմոնյան Վ.** Հայկական հարցը եւ իր տարրերը, «Հայրենիք», Բուսոն, 1934, հոկտեմբեր, էջ 97: **Dadrian V. N.** The History of the Armenian Genocide, էջ 179:
- 92 • **Տե՛ս Ոտովիչ Փ. Ի.**, Եջվ. աշխ., էջ 169–171, 177–179: Տե՛ս նաև **Советско–германские отношения от переговоров в Брест–Литовске до подписания Раппальского договора**. Сборник документов, т. 1, 1917–1918 гг., Москва, 1968, էջ 699–707: **Տեփանյան Տ.**, Եջվ. աշխ., էջ 95: **Marriott Sir John A. R.** Եջվ. աշխ., էջ 487:
- 93 • **Ոտովիչ Փ. Ի.**, Եջվ. աշխ., էջ 199:
- 94 • **Տե՛ս Տազոնով Տ. Դ.**, Եջվ. աշխ., էջ 148:
- 95 • **Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ**, ֆ. 57, ց. 5, գ. 28, ք. 93: **Գոտլիբ Յ. Յ.**, Եջվ. աշխ., էջ 43–50:
- 96 • **Տոյնբեք Ա. Յ.**, Turkey: A Past and a Future, էջ 52:
- 97 • **Տե՛ս Սիմոնյան Վ.**, Եջվ. աշխ., էջ 8–12:
- 98 • **Տե՛ս Րազմազատիկ Տյուրքի**, էջ 51: **Earle E. M.**, Turkey, the Great Powers and the Bagdad Railway, New York, 1923, էջ 130: Տե՛ս նաև **Կիրակոսյան Ջ.**, Եջվ. աշխ., էջ 159–160: **Տեփանյան Տ.**, Եջվ. աշխ., էջ 12–14:
- 99 • **Տե՛ս Գոտլիբ Յ. Յ.**, Եջվ. աշխ., էջ 34:
- 100 • **Տե՛ս Լազարև Մ. Տ.**, Крушение турецкого господства на Арабском Востоке (1914–1918 гг.), Москва, 1960, էջ 55–57:
- 101 • **Քաղվածքը տե՛ս Ասետյան Ա. Տ.**, Եջվ. աշխ., էջ 44:
- 102 • **Քաղվածքը տե՛ս Այոկյան Տ. Մ.**, Եջվ. աշխ., էջ 39:
- 103 • **Քոբախ Ս.**, Եջվ. աշխ., էջ 62, 63–64: **Քավովիչ Մ.**, Եջվ. աշխ., էջ 79:
- 104 • **ՀՀ ՊԿՊԱ**, ֆ. 57, ց. 5, գ. 28, ք. 85: Судебный процесс Талаат паши: стенографический отчет, Москва, 1992, էջ 25:
- 105 • Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913, հունիսի 28: **Երանյան Չ.** Յուշարձան Վան–Վասպուրականի, հ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 176: **Կիրակոսյան Ջ.**, Եջվ. աշխ., էջ 177: **Տեփանյան Տ.**, Եջվ. աշխ., էջ 102:
- 106 • **Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ**, ֆ. 57, ց. 5, գ. 49, ք. 8: Տե՛ս նաև **Տեփանյան Տ.**, Եջվ. աշխ., էջ 103:
- 107 • Տե՛ս «Աշակ», Թիֆլիս, 1914, հուլիսի 13: **Արմանյանի Վ.** Կոնստանդուպոլիսի արմենյան ցեղասպանության հարցը (1913–1919), Դոկ. ըմ ադա 1914, Ր. 14084, ԱԲ. 8873. **Տարկիսյան Ե. Կ.**, Եջվ. աշխ., էջ 140:
- 108 • **Տե՛ս Միլլեր Ա. Փ.**, Турция и Германия в годы первой мировой войны, Москва, 1944, էջ 5:
- 109 • **Միջազգային ռաբադնախոնախոնա...**, տ. I, Դոկ. No 110, ս. 119.
- 110 • **Տե՛ս Կիրակոսյան Ջ.** Եջվ. աշխ., էջ 161: **Տեփանյան Տ.**, Եջվ. աշխ., էջ 104:
- 111 • **Քաղվածքը ըստ Պալաթյան Գրիգորի Օ. Վարդ.** Հայ զոհոգրան: Դրվագներ հայ մարտիրոսագրությունների, Բեռլինից դեպի Չոք (1914–1920), Երևան, 1991, էջ 38–39:
- 112 • **Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ**, ֆ. 43, ց. 1, գ. 89, ք. 16: ֆ. 57, ց. 5, գ. 28, ք. 87–88: «Голос Москвы», 1914, 14 января. «Кавказское слово», Тифлис, 1916, No 8: **Կիրակոսյան Ջ.** Եջվ. աշխ., էջ 174:
- 113 • **Տե՛ս Ոտովիչ Փ. Ի.**, Եջվ. աշխ., էջ 199:
- 114 • **Քաղվածքը ըստ Այոկյան Տ. Մ.**, Եջվ. աշխ., էջ 41:
- 115 • **Տե՛ս Մատերիալս ըմ իստորիա ֆրանկո–ռուսսիկ ռաբադնախոնախոնա...**, էջ 634–635, 688–690: **Միջազգային ռաբադնախոնախոնա...**, տ. I, փախտ. No 84, էջ 91–92: **Ջեմալ–պաա**, Եջվ. աշխ., էջ 55–56, 57, 58: **Արուտյան Ա. Օ.**, Եջվ. աշխ., էջ 69–70, 75: **Իստորիա արաբադնախոնախոնա...** 1914–1918, в двух томах, т. 1, Москва, 1975, էջ 388: **Քավովիչ Մ.**, Եջվ. աշխ., էջ 52–53: **Fay S. B.** The Origins of the World War, New York, 1928, էջ 522–524: **Sanders Liman von**, Եջվ. աշխ., էջ 3: **Karabekir K.**, Եջվ. աշխ., էջ 66:
- 116 • **Գերմանական զինվորական առաքելությունը թուրքական կառավարության նախաձեռնությամբ և հրավերով դեմս 1913 թ. դեկտեմբերին էր ժամանել Կոստանդուպոլիս: Նրանում ընդգրկված էին 42 փորձառու զինվորական գործիչներ, որոնց զխապարտում էր զեմերալ Լիման ֆոն Ջանդերսը: Գերմանական զինվորական առաքելությունը, շարունակելով Սոլտկեի և ֆոն դեր–Գոլց Կոլմարի վերափոխումները, վերակառուցում և վերազինում էր օսմանյան բանակը գերմանականի օ-**

րինակով: Լիման ֆոն Ջանդեբը ստացել էր թուրքական մարշալի կոչում և նշանակվել թուրքական բանակի ընդհանուր վերատեսուչի պաշտոնում՝ ստանալով թուրքական բոլոր զորամասերն ու ռազմական ամրությունները վերահսկելու իրավունք: Առաքելության կազմում էին նաև գեներալ-մայոր Վեբերը, որը նշանակվել էր թուրքական ամրոցների ինժեներ-վերատեսուչ, բրոնզադր ֆոն Շելլենդորֆը, որը ռազմական նախարարի տեղակալն ու Ղլխավոր շտաբի պետի ավագ խորհրդականն էր, և այլ հայտնի գերմանական զինվորականներ, որոնք կարևոր պաշտոններ էին ստացել ռազմական նախարարությունում, Ղլխավոր շտաբում, հրետազորում և տեխնիկական ուժերում:

Փաստորեն, առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին թուրքական կառավարությունը, չունենալով բանակին անհրաժեշտ ժամանակակից կիրք անձնակազմ, գերմանական զինվորականությանն էր հանձնել բոլոր կարևոր դիրքերն օսմանյան բանակում: Եվ այժմ, թուրք-գերմանական ռազմաքաղաքական դաշինքի կնքմանով իրավական հիմք էր ստանում թուրքական բանակի գերմանական ղեկավարման, վերակառուցման ու վերազինման փաստը:

- 117 St'yan История первой мировой войны. 1914—1918, т. 1, էջ 385: Лудшувейт Е. Ф., նշվ. աշխ., էջ 28: Emin Ahmed, Turkey in the World War, New Haven, 1930, էջ 67—68:
- 118 St'yan Нотович Ф. И., նշվ. աշխ., էջ 91:
- 119 St'yan Գ ԴԿՊԱ, ֆ. 450, ց. 2, Գ. 79, ք. 3—4: Готлиб В. В., նշվ. աշխ., էջ 57, 80:
- 120 St'yan նույն տեղը, էջ 87:
- 121 Գ ԴԿՊԱ, ֆ. 430, ց. 1, Գ. 1386, ք. 3: Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, մաս II, փաստ. No 10, էջ 17: St'yan նաև Լազեան Գ. Հայաստան եւ Հայ Պատը ըստ դաշնագրերու, Կահիրե, 1942, էջ 77—78:
- 122 St'yan Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, մաս II, փաստ. No 10, էջ 8, 9, 17: Лудшувейт Е. Ф., նշվ. աշխ., էջ 35:
- 123 Քաղվածքն ըստ Готлиб В. В., նշվ. աշխ., էջ 86: Կիրակոսյան Ջ. նշվ. աշխ., էջ 246:
- 124 St'yan Готлиб В. В., նշվ. աշխ., էջ 82—83:
- 125 St'yan Джемаль—паша, նշվ. աշխ., էջ 101—102:
- 126 Mandelstam А., նշվ. աշխ., էջ 7:
- 127 St'yan Գ ԴԿՊԱ, ֆ. 450, ց. 2, Գ. 79, ք. 4—6: Emin Ahmed, նշվ. աշխ., էջ 69, 72—73:
- 128 St'yan Dadrian V. N., The History of the Armenian Genocide, էջ 212:
- 129 St'yan Гасратян М. А., Орешкова С. Ф., Петросян Ю. А., նշվ. աշխ., էջ 157—158:
- 130 Dadrian V. N., The Secret Young-Turk Ilithadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians, "Journal of Political and Military Sociology" (այսուհետև՝ JPMS), Volume 22, No 1, Summer, 1994.
- 131 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. No 136, էջ 333:
- 132 Գ ԴԿՊԱ, ֆ. 57, ց. 5, Գ. 96, ք. 13—15: ֆ. 450, ց. 2, Գ. 79, ք. 6: «Արև», Բաքու, 1917, մարտի 1:
- 133 St'yan Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. No 176, էջ 400—401: Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919), док. от 20.04.1916, R. 21019, Ab. 12155.
- 134 St'yan Րիֆաթ Մեվլան Ջադե, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթքիատի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990, էջ 98:
- 135 նույն տեղում, էջ 112:
- 136 St'yan Անտոնյան Ա., Մեծ Ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և թալեթք փաշա, Երևան, 1990, էջ 130—133:
- 137 St'yan Գ ԳԲԿԿ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, Գ. 1162, ք. 173: Րիֆաթ Մեվլան Ջադե, նշվ. աշխ., էջ 89—90: Степанян Ст., նշվ. աշխ., էջ 109—110:
- 138 St'yan Գ ԴԿՊԱ, ֆ. 43, ց. 1, Գ. 76, ք. 3—5, 14, 20—21:
- 139 St'yan նույն տեղը, ֆ. 57, ց. 5, Գ. 26, ք. 33, Գ. 102, ք. 36—37:
- 140 St'yan Գ ԳԲԿԿ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, Գ. 1162, ք. 18—20: Այդ է վկայում նաև Անգլիայի արխիվներում հայտնաբերված անթվակիր ծածկագիր հրահանգ հեռագիրը, որը թալեթք փաշան՝ Թուրքիայի ներքին գործերի նախարարն ու «Երեքի հանձնախմբի» ղեկավարը, հասցեագրել էր Հալեպի կուսակալին նախքան 1915 թ. ապրիլի 24-ի ծերբակալությունները կոստանդնուպոլսում: St'yan Տիգ-

- րանեան Տ. Եշվ. աշխ., էջ 91–95:
- 141 Այս մասին մանրամասն տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. No 141, 143, 191, էջ 336–338, 470–471: Անտոնյան Ա., Եշվ. աշխ., էջ 232–233: Մինախորեան Վ., Ակադեմիկոս Ե. Տարլեն հայկական ջարդերի մասին, «Հայրենիք», Բոստոն, 1934, սեպտեմբեր, էջ 101–106:
- 142 Այս մասին մանրամասն տե՛ս «Ժողովուրդ», Կոստանդնուպոլիս, 1918, NoNo 5, 8, 9, 10–13, 15–20:
- 143 Տե՛ս ԳԴՊԱ, ֆ. 314, ց. 2, գ. 23, ք. 1–3: Bryce V., The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915–1916, էջ 2: Махмурия Г. Г., Вопросы новой истории Армении в современной историографии США, "Новая история Армении в трудах современных зарубежных авторов", Издательство НАН Армении, Ереван, 1993, էջ 147: Dadrian V. N., The History of the Armenian Genocide, էջ 221–222:
- 144 Հայոց Մեծ եղեռնի վերաբերյալ 1915–1995 թթ. ընթացքում հրատարակվել է ավելի քան 1 500 աշխատություն՝ 540–ը հայերեն, 400–ը ֆրանսերեն, 141–ը ռուսերեն, 103–ը անգլերեն լեզուներով: Տե՛ս Հայոց 1915–1916 թթ. ցեղասպանությունը: Մատենագիտություն, խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան, Երևան, 1995: Գեորգեան Տ., Ամասեան Յ. Ա., «Հայկական հարց»–ը եւ հայկական կոտորածները, համապարփակ մատենագիտութեան փորձ, Գահիրե, 1995:
- 145 Տե՛ս Թառե Ե. В., Европа в эпоху империализма. 1871–1919 гг. Изд. 2–е, Москва–Ленинград, 1928, էջ 182:
- 146 Տե՛ս Սիմոնյան Հր. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի զաղափարաբանությունը և քաղաքակա- նությունը, էջ 360–361:
- 147 Տե՛ս Брук С. И., Население мира. Этнографический справочник. Издание 2–е, Москва, 1986, էջ 776:
- 148 Տե՛ս ԳԴՊԱ, ֆ. 450, ց. 2, գ. 88, ք. 49: Bryce V., The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915–1916, էջ 291–292:
- 149 Տե՛ս ԳԴՊԱ, ֆ. 282, ց. 1, գ. 40, ք. 2, 4, 5: Աբեղյան Ա. Հայաստանը 1915 թվականին (մի քա- նի փաստաթղթեր), «Հայրենիք», Բոստոն, 1930, օգոստոս, էջ 33: Киракосян Дж. С., Եշվ. աշխ., էջ 182:
- 150 Տե՛ս «Երկիր», Երևան, 1993, մարտի 10 (Որուսաստանի Դաշնությունում Թուրքիայի նախկին դես- պան Վուրբան Վուրալի հարցազրույցը): Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը րուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 18–39: Ավետիսյան Հրանտ, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 25: Саакян Р. Г., Новая история Армении в освещении современной турецкой историографии, "Новая история Армении в трудах современных зарубежных авторов", էջ 10–54:
- 151 Այլ մասին մանրամասն տե՛ս Ohandjanian A., Osterreich–Ungarn und Armenien 1914–1918, փաստաթղթեր՝ 30.09.1915 ք. 79/P. A; 26.10.1915 ք. 95/P; 03.03.1916 ք. 19/P; 10.03.1916 ք. 21/P. B. Dadrian V. N., The Complicity of the Party, the Government, and the Military. Select Parliamentary and Judicial Documents. Տե՛ս JPMS, Volume 22. No 1. Summer, 1994, էջ 29–97: Судебный процесс Талаат паши. Стенографический отчет. Նաև Գերմանские источники о геноциде армян, էջ 16–17: Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, էջ 184–187:
- 152 Տե՛ս Степанян Ст., Геноцид армян в Османской империи в период первой мировой войны и преступное пособничество кайзеровской Германии, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1973, No 1, էջ 199:
- 153 Dadrian V. N., Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources, p. 106.
- 154 Deutschland und Armenien 1914–1918, s. 79. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), док. R. 14086, Ab. 17493, с. 174–175.
- 155 Deutschland und Armenien 1914–1918, s. 96–97.
- 156 Քաղվածքն ըստ Фирбюхер Г., Что скрыло кайзеровское правительство от немецких подданных. Армения, 1915. Уничтожение Турцией культурного народа, Ереван, 1991, էջ 68:
- 157 Տե՛ս նույն տեղը, էջ 69–70: Dadrian V. N., The History of the Armenian Genocide. էջ 206:

- 158 Մորզենթաու Չ., նշվ. աշխ., էջ 309:
- 159 Բաղվածքն ըստ Степанян Ст., Геноцид армян в Османской империи в период первой мировой войны и преступное пособничество кайзеровской Германии, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1973, No 1, էջ 198–199:
- 160 Այդ տեսանկյունից հատկապես բացասական դեր խաղացին օսմանյան Գլխավոր հրամանատարության Շտաբի պետ գեներալ–մայոր Ֆրից Բրոնզարդ ֆոն Եելլենդորֆը, ֆելդմարշալ ֆոն դեր Գոլցը, փոխգնդապետներ ֆոն Ֆելդմանն ու Բոեբրիչը, թուրքական 8–րդ բանակի հրամանատար գեներալ Կրես ֆոն Կրեսսենշտյենը, թուրքական զորքերի վերատեսուչ գեներալ ֆոն Ֆալկենհայնը, թուրքական 5–րդ բանակի հրամանատար գեներալ Լիման ֆոն Ջանդերսը, ծովակալ Գվիդո ֆոն Յուդեստնը, փոխօժակալ Կիլիեյն Մուշոնը, գեներալ–լեյտենանտ Հանս Ֆրեդերիկ Լեոպոլդ ֆոն Սիլբըրը, իշխան Եբերհարդ Վոլֆսըիլ ֆոն Բեյչենբերգը (մայոր), ծովային կցորդ Լեյտենանտ Հանս Գյումանը: Այս մասին մանրամասն տե՛ս Dadrian V. N., The History of the Armenian Genocide, էջ 255–273: Լույն հեղինակի German Responsibility in the Armenian Genocide, էջ 23: Տե՛ս նաև «Ժողովուրդ», Կոստանդնուպոլիս, 1918, No 19, 21, 25, 33:
- 161 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 43, ց. 1, գ. 89, ք. 26: Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 464–465, 537–538: "Кавказское слово", Тифлис, 1916, No 62.
- 162 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 824, ք. 55:
- 163 Տե՛ս նույն տեղը, ֆ. 57, ց. 5, գ. 96, ք. 26–47: Bryce V., The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915–1916, էջ 638: Deutschland und Armenien 1914–1918, էջ 10–11: Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո, Երևան, 1996, էջ 10–36:
- 164 Տե՛ս Deutschland und Armenien 1914–1918, էջ 66: Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), док. от 16.07.1915, R. 14086, Ab. 22101 с Приложением, док. от 05.08.1915, R. 14088, zu Ab. 28584, док. от 10.08.1915 (приложение 1), док. от 03.09.1915 и док. от 06.09.1915, Konst./Ankara, 170, Ab. 53a. Dadrian V. N., Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources, էջ 97–125:
- 165 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, ք. 34–35, 37, 38; գ. 27, ք. 20; գ. 28, ք. 156–157, 159–160:
- 166 Տե՛ս Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 74:
- 167 Զաղվածքը նույն տեղում:
- 168 Տե՛ս Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Armeniens dans les archives françaises 1914–1918, էջ 67:
- 169 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. No 215, էջ 376–377: Նասիպեան Ա. նշվ. աշխ., էջ 75:
- 170 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355–/–ն, ք. 149ա; ֆ. 450, ց. 2, գ. 88, ք. 30: Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 727: Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), док. от 02.06.1915, R. 14086, Ab. 17667. Papers Relating to the Foreign Relations of the United States. 1915 Supplement. The World War, Washington, 1928, ք. 981. Hovannisian R. G., Armenia on the Road to Independence, Berkeley and Los Angeles, 1967, ք. 51–52.
- 171 Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 93–94:
- 172 Տե՛ս Հակոբյան Հ. Վ., Հայրենիք վերադառնալու զաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000, էջ 189–200:
- 173 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. No 216, էջ 377–378: Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. No 197, էջ 499:
- 174 Զաղվածքն ըստ Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 83–84:
- 175 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 43, ց. 1, գ. 50, ք. 5: "Кавказское слово", Тифлис, 1917, 19 января.
- 176 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. No 198, էջ 500:
- 177 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. No 218, էջ 379–380:
- 178 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, ք. 43–44: Տե՛ս նաև Boghos Nubar's Papers and the Armenian

- Question 1915–1918. Documents. Edited and translated by Vatche Ghazarian, Wallham, 1996, doc. No 122, p. 210.
- 179 Տե՛ս Dadrian V. N. Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources, էջ 97–99:
- 180 Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), էջ 109–205, 324–325:
- 181 Կիրակոսյան Ջ. Այլ. աշխ., էջ 414–415:
- 182 Германские источники о геноциде армян, т. 1, с. 102.
- 183 Ohandjanian A., Այլ. աշխ., փաստ. 13.08.1915 ք. 66/P; 30.09.1915 ք. 79/P, A; 06.11.1915 ք. 98/P:
- 184 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. No 151, էջ 344: Ջ. Գորրի-նին 1920 ք. Նոյեմբերին նշանակվեց Իտալիայի դեսպան Հայաստանի հանրապետությունում:
- 185 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, ք. 45:
- 186 Քաղվածքն ըստ Նասիպեան Ա., Այլ. աշխ., էջ 79:
- 187 Հայերի օգնության կոմիտեն հիմնադրել էին մի խումբ զարեցիկ բարեգործներ և առաքյալներ՝ Բեյարդ Ղոչի և Ջեյնս Բարտոնի նախաձեռնությամբ: Հետագայում կոմիտեն վերափոխվեց Սերժավոր Արևելքի օգնության Ամերիկյան կոմիտեի (Ամերկոմ): Այդ կազմակերպության բարեգործությունը մեծապես օգնել է հայերին՝ հատկապես առաջին համաշխարհային պատերազմից հետո: Նշենք նաև, որ Բ. Ղոչը ժամանակի լավագույն կրթություն ստացած ամերիկացիներից էր, որը 1913 թվականից դասավանդել է Բեյրութի Ամերիկյան համալսարանում, տասը տարի անց ընտրվել նրա նախագահ և պաշտոնավարել մինչև 1948 թվականը: Առաջին համաշխարհային պատերազմից հետո նա ղեկավարել է Սերժավոր Արևելքի օգնության Ամերիկյան կոմիտեի Սի-րիայի ու Պաղեստինի մասնաճյուղերը: Իսկ Ջ. Բարտոնն իրենց հիմնադրած կազմակերպության գործունեությունն ամփոփել է "Story of Near East Relief (1915–1930)" աշխատության մեջ, որը հրատարակվել է Նյու Յորքում 1930 թվականին:
- 188 Տե՛ս Նասիպեան Ա., Այլ. աշխ., էջ 80:
- 189 Տե՛ս Նույն տեղը, էջ 83:
- 190 Տե՛ս Германские источники о геноциде армян, т. 1: Русские источники о геноциде армян в Османской империи. 1915–1916 годы. Составители Г. А. Абрамян, Т. Г. Севан–Хачатрян. Предисловие М. Г. Нерсисяна, Ереван, 1995. Гарибджанян Г. Б., Геноцид армян и мировая общечеловечность, Ереван, 1989.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՒ 1915-1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

§ 1. Օսմանյան կայսրության «Ժառանգության» բաժանման խնդիրը Եռյակ համաձայնության երկրների ծրագրերում

Առաջին համաշխարհային պատերազմն ամրապնդեց գերմանա-թուրքական ռազմաքաղաքական գործակցությունը և պատեհ առիթ հանդիսացավ Հայկական հարցի լուծման թուրքական ծրագրի որոշակիացման ու իրագործման համար: Բացի այդ, այն եկավ նոր ճշգրտումներ մտցնելու Հայկական հարցի լուծման անգլո-ֆրանս-ռուսական մոտեցման մեջ:

Բելլինի վեհաժողովից հետո մինչև առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանի և հայերի նկատմամբ եվրոպական տերությունների քաղաքականությունը գլխավորապես պայմանավորված էր եղել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը շխախտելու և նրա անձեռնմխելիությունը պահպանելու սկզբունքով: Դրա միջոցով նրանք ձգտում էին կանխել իրենց նրցակից պետությունների՝ նախ և առաջ Ռուսաստանի առաջխաղացումը դեպի սևծովյան նեղուցներն ու Կոստանդնուպոլիս, ամրապնդել իրենց դիրքերը Մերձավոր Արևելքում: Թե Մեծ Բրիտանիայի և թե Ռուսաստանի համար քաղաքական դեպքերի նշանակալի զարգացում էին նախ՝ Թուրքիայի աստիճանական, բայց հստակ կողմնորոշումը դեպի գերմանա-ավստրիական խմբավորում, ապա՝ նրա վտարումը Եվրոպայից Բալկանյան պատերազմների արդյունքում: Մեծ Բրիտանիայի վարչապետ Ասքվիթի բնորոշմամբ՝ «Ժամանակի հարց էր, մինչև որ թուրքական կայսրության անկայունությունը Ասիայում ևս նախապատրաստեր նրա անկումը»¹: Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Եռյակ համաձայնության պետությունների միջև պատերազմի հայտարարումից հետո Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու

Ռուսաստանի կառավարությունների համար կարևոր հարցերից մեկը Թուրքիայի դիրքորոշումն էր: Բրիտանական կառավարող շրջաններում մտահոգություն էին արտահայտում, որ Թուրքիայի՝ Անտանտի դեմ պատերազմելու դեպքում, մահմեդական մոլեռանդության պատճառով կարող էին վտանգվել Անգլիայի դիրքերը Հնդկաստանում ու Եգիպտոսում: Բայց այդ հանգամանքն ավելի շատ շահարկվում էր, քան իրոք մտահոգություն պատճառում: Իրականում, Լոնդոնում ջանում էին ապահովել Թուրքիայի չեզոքությունը կամ, գոնե, ուշացնել նրա մուտքը պատերազմի մեջ մինչև Հնդկաստանում տեղակայված անգլիական զորքն անցներ Սուեզի ջրանցքը և ապահով ուղևորվելու դեպի Ֆրանսիա²: Անգլիայի նման, Ֆրանսիան ևս հետամուտ էր չզրգռել իր արտասահմանյան երկրամասերի մահմեդականների կրոնական զգացմունքները: Շահագրգռված լինելով Հնդկաստանից ստացվելիք ռազմական օժանդակությամբ՝ Փարիզում կարևորում էին Սուեզի ջրանցքի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը: Բացի այդ, Թուրքիայի կողմից Դարդանելի նեղուցը փակելը կասեցնելու էր Ռուսաստանի ցորենի հոսքը դեպի Արևմուտք և զենքի հոսքն Արևմուտքից դեպի Ռուսաստան: Ռուսաստանը ևս նախընտրում էր Թուրքիայի չեզոքությունը, որովհետև դա կազատեր նրան կովկասյան ճակատում զորագնդերի ունենալու անհրաժեշտությունից: Թուրքիայի չեզոքության դիմաց Անտանտի կառավարությունները պատրաստ էին հարգել նրա անկախությունը և ամբողջականությունը թե՛ պատերազմի ընթացքում, թե՛ պատերազմից հետո: Թուրքիայից ոչինչ չէր պահանջվում՝ ոչ բացահայտ և ոչ էլ ծածուկ աջակցություն, միայն՝ չեզոքություն: Բայց երիտթուրքական կառավարությունը նախընտրեց դաշինքը և համագործակցությունը կայզերական Գերմանիայի հետ: 1914 թ. հոկտեմբերի 29-ին և 30-ին, երբ Եռյակ համաձայնության դաշնակից կառավարությունները դեռ փորձում էին Թուրքիան հակել չեզոքության, բուրքական հաժանավերը, առանց պատերազմի հայտարարության կամ որևէ նախազուշացման, գնդակոծեցին Սևաստոպոլը, Օդեսան, Թեոդոսիան, Նովոռոսիսկը: Նոյեմբերի 1-ին Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպանները թողեցին Կոստանդնուպոլիսը³:

Թուրքիայի մասնակցությունը պատերազմին, որպես կայզերական Գերմանիայի դաշնակից, ցրեց Եռյակ համաձայնության երկրների վերջին հույսերը թուրքական պետության չեզոքությունն ապահովելու մասին: Այս հանգամանքը Հայկական հարցի ընթացքի վրա ազդող լուրջ գործոն դարձավ: Անտանտի երկրներն առանց հապաղելու մի կողմ դրեցին Օսմանյան

կայսրության տարածքային ամբողջականության պահպանման դիվանագիտական սկզբունքը: Նրանք առաջ քաշեցին թուրքական «ժառանգության», այսինքն՝ Թուրքիայի ասիական տիրույթների բաժանման խնդիրը, որի բաղկացուցիչ մասն էր կազմում Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ապագայի հարցը: Անտանտի երկրներից յուրաքանչյուրն իր հետաքրքրություններն ուներ ասիական Թուրքիայում, որոնք այժմ՝ պատերազմական իրադրության պայմաններում որոշակիացման և համաձայնեցման կարիք էին զգում: Նրանցից յուրաքանչյուրը շտապում էր զենքի ուժով հաստատել իր իրավունքներն Օսմանյան կայսրության ասիական տիրույթներում: Հենց այստեղ է, որ դրսևորվեցին հակասություններն ու տարածայնություններն Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև: Ընդ որում, Թուրքիայի ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ դիվանագիտական ողջ գրագրությունը դաշնակիցների միջև տարվում էր գաղտնի, և դրա արդյունքները դրվելու էին հաշտության պայմանների հիմքում:

Ռուսաստանի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը Մերձավոր Արևելքում Միջերկրական ծով դուրս գալն էր կամ ծովային կարճ ճանապարհով, այսինքն՝ գրավելով Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները, կամ ցամաքային ճանապարհով, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի վրայով, թեև այս կողմից բաղձալի նեղուցներն ու Կոստանդնուպոլիսն ավելի հեռու էին: Ռուսական պետության համար այդ հարցն առաջնակարգ կարևորություն ուներ, որովհետև տիրելով սևծովյան նեղուցներին՝ Ռուսաստանը ծովային էժան ճանապարհով ազատորեն կկապվեր համաշխարհային շուկային: Արդյունաբերության և գյուղատնտեսության համար կարևոր հումքի այնպիսի տեսակներ, ինչպիսին էին Կովկասի նավթը, մանգանը, Ուկրաինայի երկաթը, քարածուխը, ցորենը, Արևմտյան Միջին կաթնամթերքը, երկրից արտահանման մեկ ուղի ունեին՝ Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները, քանի որ ծովային ճանապարհով մման ապրանքների տեղափոխումը ցամաքային տրանսպորտից անհամեմատ էժան էր և կարճ: Կարևորելով այդ հանգամանքը՝ Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը շեշտում էր. «Նեղուցներն այլ պետության ձեռքին մշանակում է Ռուսաստանի ողջ հարավի ենթարկում այդ պետությանը: Դրանք Ռուսաստանի տնտեսական կյանքի կենսատու երակն են»⁴: Տնտեսական նկատառումներից բխում էին ռուսական պետության քաղաքական և ռազմական շահերը: Միջերկրական ծով դուրս գալը կնպաստեր ռուսական ռազմածովային նավատորմի հզորացմանը, երկրի ռազմաքաղաքական կշռի բարձրացմանը, բալկանյան

երկրներում ռուսական ազդեցության ամրապնդմանը⁵: Սահմանադիր դեմոկրատական կուսակցության (կադետներ) լիդեր Պ. Ն. Միլյուկովն այն կարծիքն էր հայտնում, որ «Կոստանդնուպոլսի և նեղուցների գրավումը Ռուսաստանի կողմից վերջ կդնի ...Եվրոպային տևականորեն տանջած Արևելյան հարցին»⁶: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում էլ Կոստանդնուպոլսի և նեղուցները դիտում էին իբրև «ռուսական նավատորմի հիանալի հենակետ Միջերկրական ծովում, որի վրա հենվելով՝ Ռուսաստանը կարող էր ամրապնդել իր ազդեցությունն աշխարհում»⁷: Իսկ Կոստանդնուպոլսում ռուսական զինվորական գործակալ Կալինինը դեռևս 1902 թ. հունվարին կազմել էր «Գրություն Թուրքիայի դեմ Ռուսաստանի պատերազմի նպատակների մասին», որում ամփոփված էին ձևակերպելով Մերձավոր Արևելքում ցարիզմի արտաքին քաղաքական պլանները՝ նշում էր. «Եթե Օսմանյան կայսրությունը երբևէ դառնա իր ճակատագրի համար վճռորոշ ռազմական գործողությունների թատերաբեմ, ապա նրա բաժանման արդյունքում առյուծի բաժինը կստանա... Սուեզի ջրանցքը գրաված կամ, ծայրահեղ դեպքում, ցանկացած պահի այն գրավելու վտանգ ներկայացնող ռազմական դիրքեր նվաճած կողմը: Ահա ինչու ցանկացած առիթով Թուրքիայի և Ռուսաստանի նոր բախման դեպքում Ռուսաստանի նպատակը պետք է լինի կովկասյան սահմանում Սուեզի ջրանցքի ուղղությամբ հնարավորին չափ ընդարձակ տարածքներ նվաճելը: Ռուսական բանակը մոտեցնելով այդ կետին՝ դրանք Ռուսաստանից կախման մեջ կդնեն համաշխարհային առևտուրը: Իսկ համաշխարհային առևտրի ուղիների հետ սերտորեն կապված է Եվրոպայի կարևորագույն պետությունների ճակատագիրը...»⁸: Ռուսաստանում ազդեցիկ մյուս քաղաքական ուժերն ու գործիչները ևս համակարծիք էին, որ Կոստանդնուպոլսում ու սևծովյան նեղուցներում ռուսական պետության դիրքերի ամրապնդումը հրատապ խնդիր էր և ուներ կենսական նշանակություն:

Ռուսաստանի ամենակարճ ցամաքային ճանապարհը դեպի Միջերկրական ծով անցնում էր Արևմտյան Հայաստանով ու Կիլիկիայով: Այդ տարածքները Ռուսաստանի համար ոչ միայն բանալի էին դեպի Մերձավոր Արևելք, այլև զրահ՝ կովկասյան սահմանների պաշտպանության տեսակետից: Չնայած խնդրի կարևորությանը՝ Ռուսաստանի արտագործնախարարությունը բացահայտորեն չէր արտահայտում Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և սևծովյան նեղուցների նկատմամբ ռուսական պետության հա-

վակնությունները, որովհետև դեռ որոշակիորեն ծանոթ չէր ասիական Թուրքիայում դաշնակից Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի հետաքրքրություններին: Այդ պատճառով էլ ռուսական կառավարող շրջանակներում անհանգստանում էին, որ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի, Կոստանդնուպոլսի և սևծովյան նեղուցների գրավումը կարող էր առաջ բերել Անգլիայի ու Ֆրանսիայի անհաղթահարելի հակազդեցությունը: Ահա թե ինչու պատերազմի սկզբնական փուլում ռուսական դիվանագիտությունը բարձրացնում էր սևծովյան նեղուցներով ռուսական ռազմական նավատորմի ազատ ելումուտի ապահովման հարցը⁹, իսկ հայկական խնդրում ձեռնպահ մնաց վերջնական որոշում կայացնելուց, քանի դեռ քաջատեղյակ չէր Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում դաշնակիցների հետաքրքրություններին¹⁰: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման նախաձեռնությամբ հանդես եկավ Անգլիան 1914 թ. սեպտեմբերի կեսին, երբ Թուրքիան դեռ չէր մտել պատերազմի մեջ¹¹: Անգլիայում հատուկ շահագրգռություն էին ցուցաբերում թուրքական կայսրության արաբական տարածքների նկատմամբ: Լոնդոնում դեմ չէին, որ ռուսական բանակը գրավեր Արևմտյան Հայաստանը, բայց չէին կարող թույլ տալ, որ Ռուսաստանը Դիարբեքիրից հարավ անցներ: «Դա այն բնական սահմանն էր, որտեղից Ռուսաստանը կարող էր սպառնալ Պարսից ծոցին»,— նշում էին անգլիացի դիվանագետները¹²: Այդ տարածաշրջանին տրված կարևորությունը հստակորեն մատնանշված էր «Թուրքիայում բրիտանական հողային բաղձանքների վերաբերյալ» բրիտանական կառավարության միջնախարարական կոմիտեի կազմած տեղեկագրում: Փաստաթղթում շեշտվում էր այն միտքը, որ «Պարսից ծոցում բացառիկ և գերագույն դիրքի հասնելու՝ Բրիտանիայի նկատառումը Արևելքում բրիտանական քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկն է»¹³:

Մեծ Բրիտանիայից քիչ ավելի ուշ Թուրքիայի ասիական տիրույթների բաժանման առաջարկով հանդես եկավ Ֆրանսիան: Նա ոչ միայն չէր ցանկանում կորցնել իր կապիտալի տիրապետող դիրքերը Թուրքիայում, այլև հավակնություններ ուներ Սիրիայի և Պաղեստինի նկատմամբ: Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց մոտավորապես մեկ ամիս անց՝ նոյեմբերի 21-ին, Պետրոգրադում ֆրանսիական դեսպան Մ. Պալեոլոգը Նիկոլայ 2-րդին հայտնեց Սիրիան ու Պաղեստինը գրավելու Ֆրանսիայի մտադրության մասին¹⁴:

Միևնույն ժամանակ բրիտանական ու ֆրանսիական կառավարությունները բանակցություններ էին սկսել Հունաստանի կառավարության ներկայացուցիչների հետ Թուրքիայի դեմ պատերազմին այդ պետության մասնակցության վերաբերյալ՝ դրա դիմաց խոստանալով նրանց Իզմիրը շրջակա տարածքների հետ միասին¹⁵։ Հույների հետ բանակցություններ վարելուն զուգընթաց Լոնդոնում ու Փարիզում նախապատրաստվում էին Կոստանդնուպոլսի ու նեղուցների գրավմանը, որը հեշտացնելու էր Մերձավոր Արևելքում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ռազմաքաղաքական ծրագրերի իրագործումը, իսկ Ռուսաստանին զրկելու էր ազատորեն Միջերկրական ծով դուրս գալու հնարավորությունից։ Այդ նպատակով մշակվեց և 1915 թ. սկզբին իրականացվեց Դարդանեյի ռազմական գործողությունը, որի ընթացքում անգլո-ֆրանսիական զորքը ափ հանվեց Կոստանդնուպոլսի մատույցներում։

Այդ դեպքերն արագացրին Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման հարցի բարձրացումը Եռյակ համաձայնության երկրների միջև։ Հարցն այն է, որ Դարդանեյի ռազմական գործողությունը ռուսական կառավարող շրջաններում մտավախություն էր առաջացրել, որ դաշնակիցների հաղթանակի դեպքում նեղուցներն անցնելու էին Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի տրամադրության տակ։ Ցարական կառավարությունը որոշեց հանդես գալ Կոստանդնուպոլսի ու նեղուցների ճակատագրի վերաբերյալ հատուկ հայտարարությամբ։ 1915 թ. փետրվարի 19 (մարտի 4)–ին ցարը հաստատեց խնդրի վերաբերյալ արտգործնախարար Մ. Սազոնովի կազմած հուշագիրը, որը դաշնակից կառավարություններին հանձնվեց Պետրոգրադում ֆրանսիական ու բրիտանական դեսպաններ Մ. Պալեոլոգի և Ջ. Բյուրենենի միջոցով։ Հուշագրում ասվում էր, որ «Կոստանդնուպոլսի ու նեղուցների հարցը պետք է լուծվի վերջնականորեն՝ Ռուսաստանի դարավոր ձգտումներին համապատասխան», և որ «ցանկացած այլ լուծում կլինի անբավարար ու անկայուն»։ Փաստաթղթում հույս էր հայտնվում, որ դաշնակից կառավարությունները կհարգեն Ռուսաստանի ցանկությունը։ Միայն այդ պայմանով ցարական կառավարությունը խոստանում էր բարեհաւ լինել «Օսմանյան կայսրության մյուս մարզերում ու այլ վայրերում» Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հավակնությունների նկատմամբ¹⁶։ Փաստորեն, ռուսական կառավարությունն ասիական Թուրքիայում Անգլիայի ու Ֆրանսիայի նվաճողական ծրագրերի իրականացումն ուղղակի կախման մեջ դրեց Կոստանդնուպոլսի ու նեղուցների նկատմամբ Ռուսաստանի հա-

վակնությունների ճանաչումից: Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարող շրջաններում որոշեցին ընդունել ռուսական պահանջները, իհարկե, որոշակի պայմաններով: 1915 թ. փետրվարի 27 (մարտի 12)–ին անգլիական կառավարությունը պատասխան հուշագրով համաձայնեց Կոստանդնուպոլիսն ու նեղուցները Ռուսաստանին հանձնել այն պայմանով, որ Կոստանդնուպոլիսը հայտարարվեր բաց քաղաք, իսկ նեղուցներն անարգել բացվեին բոլոր երկրների ազատ նավագնացության համար, որ Ռուսաստանը ճանաչեր Մեծ Բրիտանիայի հավակնություններն Օսմանյան կայսրության այլ մարզերում ու երկրագնդի մյուս մասերում: Այս առումով բրիտանական կառավարությունը հարկ համարեց շեշտել իր հավակնություններից երկուսը: Առաջինը մահմեդական սուրբ վայրերի ու Արաբիայի անցումն էր անկախ մահմեդական պետության գերիշխանության ներքո: Դա նշանակում էր Անգլիայի գերիշխանության հաստատում նշված վայրերում, որովհետև անգլիական գործակալների ջանքերով Արաբիայում նախապատրաստվող ապստամբության հաղթական ավարտի դեպքում իշխանության գլուխ էին կանգնելու անգլիացիները: Բրիտանական կառավարության մյուս հավակնությունը վերաբերում էր Պարսկաստանն ազդեցության գոտիների բաժանելու մասին 1907 թ. ռուս–անգլիական պայմանագրի վերանայմանը՝ պայմանագրով սահմանագծված պարսկական չեզոք գոտին Մեծ Բրիտանիայի ազդեցության ոլորտում ընդգրկելու նպատակով¹⁷: Վերոհիշյալ պայմանները հիմք էին ապահովում Միջագետքում, Միջերկրական ծովի պաղեստինյան ափին ու Եգիպտոսում Անգլիայի ազդեցությունը հաստատելու և ամրապնդելու համար: Պատահական չէ, որ անգլիական կառավարությունը հրաժարվեց դաշնակիցների հետ ասիական Թուրքիայի բաժանման հարցի հետագա քննարկումից, մինչև Արաբիայում մահմեդական պետություն կազմավորելու իր պահանջի բավարարումը¹⁸:

Շուտով, ֆրանսիական կառավարությունը ևս դաշնակիցներին հայտնեց Թուրքիայի ասիական տիրույթների նկատմամբ իր սկզբնական պահանջները: Դրանք ձևակերպված էին Պետրոգրադում ֆրանսիական դեսպան Մ. Պալեոլոգի նամակում, որը 1915 թ. մարտի 1 (14)–ին հասցեագրվել էր Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովին: Դեսպանը նշում էր, որ Ֆրանսիան ձգտում է «բռնակցել Սիրիան, ներառյալ Ալեքսանդրետի ծովածոցի շրջանը, և Կիլիկիան՝ մինչև Տավրոսյան լեռնաշղթան»¹⁹: Երկու օր անց ֆրանսիական դեսպանը հաղորդեց ռուսական ցարին, որ իր կառավարությունը «Սիրիա» անվան ներքո ընդգրկում է նաև

Պաղեստինը²⁰: Ֆրանսիական կառավարության դիրքորոշումը Կոստանդնուպոլսի և նեղուցների վերաբերյալ որոշակիացվեց 1915 թ. մարտի 28 (ապրիլի 10)-ի հուշագրում, որը Պետրոգրադի ֆրանսիական դեսպանությունը հանձնեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին: Փաստաթղթում ֆրանսիական հանրապետության կառավարությունը պաշտոնապես հայտնում էր, որ կհամաձայնի «Կոստանդնուպոլիսն ու նեղուցները հանձնել Ռուսաստանին պատերազմի հաղթական ավարտից հետո այն դեպքում, երբ Ֆրանսիան ու Անգլիան իրականացնեն իրենց ծրագրերն Արևելքում և երկրագնդի այլ վայրերում»²¹: Այս հուշագիրն ամբողջացրեց Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև Կոստանդնուպոլսի ու նեղուցների վերաբերյալ 1915 թ. մարտ-ապրիլին ստորագրված գաղտնի համաձայնագիրը: Թուրքիայի ասիական տիրույթները մասնատելու՝ Անտանտի երկրների մտադրությունը հստակորեն ձևակերպվեց նաև 1915 թ. ապրիլի 26-ի Լոնդոնի գաղտնի համաձայնագրում: Այս համաձայնագրով նախատեսվում էր Ռուսաստանին միացնել Կոստանդնուպոլիս քաղաքը, Բոսֆորի, Մարմարա ծովի և Դարդանելի արևմտյան ափերը, Թրակիան՝ մինչև ծովեզերքը, Մարմարա ծովի կղզիները, որոշ հատված Իզմիրի ծոցի ծովահայաց տարածքից: Ռուսաստանին էին անցնելու նաև Սև ծովի եզերքը՝ ներառյալ Տրապիզոնից արևմուտք ընկած տարածքները, Քուրդիստանի մի մասը Վանից ու Բիթլիսից հարավ՝ Մուշ-Սդերդ-Տիգրիս գետ-Ջեզիրե Իբն Օմար-Ամադիա լեռնային գծով: Ֆրանսիան այդ համաձայնագրով ստանում էր Թուրքիային պատկանող ընդարձակ տարածքներ, որոնց հետ՝ նաև Կիլիկիան: Լոնդոնի համաձայնագրով Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը պարտավորվեցին Իտալիային մասնակից դարձնել ասիական Թուրքիայի բաժանմանը: Համաձայնագրի 9-րդ հոդվածում ասվում էր. «Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանն ընդունում են, որ Իտալիան շահագրգռված է, որպեսզի Միջերկրական տարածաշրջանում հաստատվի քաղաքական հավասարակշռություն: Իտալիան պարտավորվում է ընդունել ասիական Թուրքիայի արդար բաժանումը: Այդ տարածաշրջանում գտնվող Ադալիայի նահանգում Իտալիան ունի իուալո-բրիտանական համաձայնագրով որոշակիացված իրավունքներ ու հետաքրքրություններ: Եթե պատերազմի ընթացքում Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանն ասիական Թուրքիայում գրավեն որևէ տարածք, ապա Ադալիայի նահանգը և նրան հարակից շրջանը կվերապահվեն Իտալիային, որն իրավունք կունեն-

նա գրավել նշված տարածքը»²²։ Դա այն պայմանն էր, որով Խտալիան համաձայնեց մասնակցել առաջին համաշխարհային պատերազմին Անտանտի երկրների կողմից։ Լոնդոնի համաձայնագիրը չորս տերությունների միջև պաշտոնապես ստորագրվեց քիչ ավելի ուշ՝ մայիսի 9–ին։ Դիվանագիտական այս փաստաթուղթը համաշխարհային պատերազմի ընթացքում դաշնակիցների միջև կնքված գաղտնի համաձայնություններից ամենակարևորն ու հիմնարարն էր։ Բացի այդ, համաձայնագիրը նշանակալից էր նաև հայ ժողովրդի ազգային ձգտումների տեսանկյունից նրանով, որ նախատեսում էր պատմական Հայաստանի անցումը Ռուսաստանին։ Ակնհայտ էր Լոնդոնի գաղտնի համաձայնության ռազմաքաղաքական կարևորությունը հատկապես Ռուսաստանի համար։ Պատահական չէ, որ համաձայնագիրը ստորագրելուց անմիջապես հետո Պետերբուրգը դաշնակիցներից պահանջեց հրապարակել այն՝ ռուսական կայսրության զինվորներին և ժողովուրդներին պատերազմում քաջալերելու նպատակով։ Սակայն Մեծ Բրիտանիայի կառավարությունը վճռականորեն մերժեց ընդառաջել՝ նկատի ունենալով իր գաղութների՝ հատկապես Հնդկաստանի մահմեդականների դժգոհության հավանականությունն այն պատճառով, որ մահմեդականների գերագույն առաջնորդի՝ խալիֆի նստավայր Կոստանդնուպոլիսն անցնելու էր Ռուսաստանին։ Նշենք նաև, որ այս համաձայնագրի բովանդակությունը դաշնակից պետությունների մյուս բոլոր գաղտնի դիվանագիտական գործարքների, մամակների, հեռագրերի ու հուշագրերի հետ միասին առաջին անգամ հրապարակեց և հանրությանը հայտնի դարձրեց Ռուսաստանում իշխանության եկած բոլշևիկյան կառավարությունը, որը շահագրգռված էր մերկացնել և քննադատել Ռուսաստանի ցարական և Ժամանակավոր կառավարությունների արտաքին քաղաքականությունը։

Այսպիսով՝ Կոստանդնուպոլսի ու սևծովյան նեղուցների խնդրի հետ միասին առաջ քաշվեց ասիական Թուրքիայի բաժանման հարցը, որի բաղկացուցիչ մասն էր Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ապագայի խնդիրը։

Ասիական Թուրքիայում ռուսական հավակնությունների զլխավոր մրցակիցը Ֆրանսիան էր։ 1915 թ. փետրվարի 18 (մարտի 3)–ին Լոնդոնում ռուսական դեսպան կոմս Ա. Բենկենդորֆն արտգործնախարար Ս. Սազոնովին ուղարկած հեռագրում այն կարծիքն էր հայտնում, որ «եթե մեր՝ Կոստանդնուպոլսի նկատմամբ ունեցած հավակնությունները հանդիպեն էլ դժվարությունների, ապա վերջիններս ավելի շուտ Փարիզից առաջ կգան,

քան՝ Լոնդոնից: Անգլիայի կողմից ավելի շուտ կարելի կլինի տնտեսական երաշխիքների պահանջներ սպասել»²³: Անդրադառնալով ասիական Թուրքիայում Ֆրանսիայի հավակնություններին՝ փետրվարի 22 (մարտի 7)–ի հեռագրում նա ավելացնում էր, որ Լոնդոնում ֆրանսիական դեսպան «Կամբոնը հատկապես պնդում է Փոքր Ասիայում ու Սիրիայում Ֆրանսիայի ունեցած շահերի վրա»²⁴: Կիլիկիայի ու Պարսից ծոցի շրջանում հարավային ծովերը դուրս գալու ուղիներն իր ազդեցության ներքո պահելու, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի նկատմամբ դաշնակից պետությունների հետաքրքրությունները զգուշորեն շոշափելու, միաժամանակ նշված տարածքները գրավելու հնարավորությունը պարզելու նպատակով ռուսական կառավարությունը մշակեց թուրքական պետության սահմաններում Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հովանավորությամբ հայկական վեց վիլայեթների (Վանի, Էրզրումի, Սեբաստիայի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքի) և Կիլիկիայի (միջերկրածովյան Մերսին նավահանգստով հանդերձ, բացառությամբ Ալեքսանդրետի ծովածոցի՝ Յունուրթալիքով) տարածքում ինքնավար Հայաստանի ստեղծման ծրագիրը: Այն հիմնված էր 1913 թ. Կոստանդնուպոլսում Ռուսաստանի առաջարկած բարենորոգումների նախագծի վրա՝ ընդհանուր քաղաքական փոփոխված պայմաններից բնականորեն բխող ընդլայնումով²⁵:

Եթե ռուսական կառավարության համար նախագծի իրագործումը միջոց էր Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի տարածքով ապահովելու Ռուսաստանի ելքը դեպի Միջերկրական ծով, ապա հայ ժողովրդի համար այդ ծրագիրն ազգային նպատակների իրականացման հիմք կարող էր դառնալ: Հետևաբար՝ հայ գործիչները կարող էին ջերմորեն այն պաշտպանել: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Ռուսաստանի արտգործնախարարությունը, Պետրոգրադում հայ ներկայացուցիչների հետ զաղտնի բանակցություններից հետո, Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ինքնավարության ծրագիրը և հատկապես հայկական վեց վիլայեթներին Կիլիկիայի միացման գաղափարը Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի կառավարությունների առջև պաշտպանելու գործը դրեց հայերի վրա: Նախատեսվեց հայ պատգամավորներ ուղարկել Անգլիա ու Ֆրանսիա: Նախարարությունն իր օգնությունը խոստացավ հայ պատվիրակներին Լոնդոնում և Փարիզում իր դեսպանների միջոցով: Բայց քանի որ վերջիններին «բացահայտ աջակցությունը կարող էր հրահրել Անգլիայի և Ֆրանսիայի կասկածամտությունն այդ պատգամավորների դերի նկատմամբ, հատկապես Կիլիկիայի հարցում», ուստի

արտգործնախարարությունում նպատակահարմար համարեցին, որ հայ պատգամավորները գործեին որքան հնարավոր է առանց ռուսական դեսպանների տեսանելի միջամտության: «Վերջիններիս միջամտությունը կարող է տեղի ունենալ լոկ դժվարության դեպքում, ինչպես նաև այն ժամանակ, երբ իրենք՝ դեսպանները, դա հարկավոր համարեն»²⁶, — 1915 թ. մայիսին Պողոս Նուբարին տեղեկացնում էր Պետրոգրադի քննարկումներին մասնակցած հասարակական գործիչ բժիշկ Հակոբ Չավրիյանը:

Փաստաթղթերը վկայում են, որ ռուսական արտգործնախարարությունը խուսափեց իր իսկ ներկայացրած ծրագրի վերաբերյալ լուրջ երաշխիքներ տալուց և եվրոպական կառավարությունների առջև այն բացահայտորեն պաշտպանելուց, որովհետև տեղյակ էր Կիլիկիայի Մերսին նավահանգստի ու նրա շրջակա տարածքների նկատմամբ Ֆրանսիայի հավակնություններին²⁷:

Իր իրական նպատակները նրբորեն քողարկող ռուսական արտաքին գործերի նախարարության հանձնարարությամբ 1915 թ. ապրիլին Փարիզ, իսկ մայիսին այնտեղից Լոնդոն մեկնեցին Հ. Չավրիյանը և Ա. Ղուկասյանը²⁸: Մինևույն ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդի ապրիլի 10-ի հեռագրով ու ապրիլի 28-ի No 761-րդ հայրապետական կոմնյակով «Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունների առջև Հայաստանի ինքնավարության ծրագիրը պաշտպանելու» հանձնարարություն ստացավ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը²⁹: Նրան Հ. Չավրիյանը Փարիզում հանգամանորեն տեղեկացրեց Պետրոգրադի ծրագրի և նրա քննարկումների մասին³⁰:

Հայ գործիչների նպատակն էր՝ Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին ու հանրային կարծիքը տրամադրել հոգուտ հայ ժողովրդի քաղաքական նպատակների իրականացման, միջազգային հանրությանը «բացատրել, որ թուրքական կառավարությունը վեց վիլայեթների և Կիլիկիայի հայ բնակչությանը կոտորածով ու զանգվածային արսորներով բնաջնջելու նպատակ է հետապնդում»³¹: Նրանք տեսակցություններ ունեցան Ֆրանսիայի արտգործնախարար Դելկասեի, Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության պետքարտուղարի օգնական Արթուր Նիքոլսոնի, լորդ Բրայսի, լորդ Լենսթոնի, անգլիական ու ֆրանսիական խորհրդարանների բազմաթիվ անդամների, քաղաքական գործիչների, ականավոր լրագրողների հետ³²: Այդ հանդիպումները ցույց տվեցին, որ եվրոպական կառավարությունների իրական շահերը չէին համապատասխանում հայկական

վեց վիլայեթների և Կիլիկիայի տարածքում ինքնավար Հայաստանի ստեղծման ծրագրին: «Ասիական Թուրքիայի բաժանման դեպքում Ֆրանսիան կպահանջի Սիրիան ու Կիլիկիան մինչև Տավրոս: Նրանք ապացուցում են, որ, քանի որ Կոստանդնուպոլիսը Դարդանեյի հետ միասին, որի քաղաքական ու տնտեսական կարևորությունը վեր է կասկածից, անցնում է Ռուսաստանին և, Անգլիան արդեն նվաճել է Միջագետքը, Ֆրանսիան չի կարող բավարարվել միայն Սիրիայով, քանի որ վերջինս հարուստ երկիր չէ: Հետևաբար, նրանք լրջորեն շահագրգռված են նաև Կիլիկիայով»³³,— 1915 թ. հունիսի 17–ին Փարիզից կաթողիկոս Գևորգ 5–րդին տեղեկացնում էր Պողոս Նուբարը:

Հ. Չավրիյանը դեռևս 1915 թ. մայիսին Փարիզում, իսկ Պողոս Նուբարը հուլիսին Լոնդոնում ռուսական դեսպաններին Հայկական հարցի մասին զեկուցագիր ներկայացրին՝ ակնկալելով նրանց աջակցությունն ինքնավար Հայաստանի ու Կիլիկիայի ստեղծման ծրագրին³⁴: Բայց ռուսական դիվանագետները խոստովեցին հայ գործիչներին որոշակի երաշխիքներ տալուց, հատկապես ապագա ինքնավար Հայաստանին Կիլիկիան միացնելու գաղափարը պաշտպանելուց, որովհետև հետևում էին արտգործնախարարության դիրքորոշմանը³⁵: Դեռևս 1915 թ. հուլիսի 3 (16)–ին Ս. Սազոնովն այն մեկնաբանել էր հետևյալ կերպ. «Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի եռակի հովանավորության ներքո լինելիք ու հնարավոր ինքնավար Հայաստանի սահմաններից Կիլիկիան Ադանայով ու Մերսինով հանդերձ հանելը տեղի ունեցավ մեր այն ցանկության շնորհիվ, որով ուզում էինք մեր կանխահաճ վերաբերմունքը ցուցադրել Ֆրանսիայի այն հավակնությունների նկատմամբ, որ այդ պետությունն ունի այս տարածքի վերաբերմամբ: Իսկ եթե հայ պատվիրակներին կհաջողվի Փարիզի կառավարությանը հակել Կիլիկիան ապագա հայկական մարզի մեջ մտցնելու կողմը, ապա կայսերական կառավարությունը կարող է համակրություն տաձել տաճկահայերի ցանկությունների իրագործման նկատմամբ»³⁶:

Պետրոգրադում մտադիր չէին Կիլիկիայի պատճառով սրել հարաբերությունները Փարիզի հետ: Ուստի հայ գործիչները ստիպված էին կրկին ուղղակի դիմել ֆրանսիական ու անգլիական կառավարող շրջաններին: Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ինքնավարության ծրագիրը Ֆրանսիայի արտգործնախարարության հավանությանն արժանացնելու նպատակով Պողոս Նուբարն արտգործնախարար Դելկասեին ներկայացրեց հուշագիր «Հայկական հարցի մասին», որն Արևմտյան Հայաստանի ու Կի-

լիկիայի ինքնավարության ծրագրի և ասիական Թուրքիայում ֆրանսիական ազդեցության ոլորտներն ապահովելու փոխզիջումային տարբերակ էր: Ըստ այդ տարբերակի, առաջարկվում էր Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի ու Ռուսաստանի վերահսկողության և հովանավորության ներքո ստեղծել ինքնավար Հայաստան՝ կազմված վեց փլայեթներից և Արևմտյան Կիլիկիայից, որն ունենար ելք դեպի Միջերկրական ծով: Նախատեսվում էր Կիլիկիայի մյուս մասերը հանձնել Ֆրանսիային՝ ինքնավար Հայաստանի հարևանությամբ ստեղծելով ինքնավար Քրդստան Ֆրանսիայի հովանավորության ներքո³⁷: Այդ ծրագրի իրագործման դեպքում մասամբ կլուծվեր հայ ժողովրդի ազգային միասնության ցավոտ խնդիրը, Ռուսաստանն Արևմտյան Հայաստանով ու Կիլիկիայով կատանար իր համար կենսականորեն անհրաժեշտ ելքը դեպի Միջերկրական ծով: Բայց Ֆրանսիան չէր կարող ու չհամաձայնեց Կիլիկիայի թեկուզ արևմտյան մասը կորցնելու տարբերակին³⁸:

Իսկ Մեծ Բրիտանիայի արտագործնախարարության պետքարտուղարի օգնական Ա. Նիքոլսոնի հետ հանդիպման ժամանակ Պողոս Նուբարը, Կիլիկիայի ճակատագրով մտահոգ, առաջարկեց Եռյակ համաձայնության դաշնակցային գորքերի մի մասը ավի հանել Կիլիկիայում, Մերսինի ու Ալեքսանդրետի մավահանգիստներում, նրանց օգնությամբ զինել Կիլիկիայի հայերին՝ թուրքական կառավարության կողմից իրականացվող ազգային ճնշումները, տեղահանությունն ու կոտորածները կանխելու նպատակով³⁹: Նա համոզված էր, որ «դաշնակից պետությունների գորքերի ներկայության շնորհիվ, մի կողմից՝ տեղի հայերի կյանքը, պատիվը և ունեցվածքը կարելի էր ապահովել, թուրքերին չեզոքացնել, մյուս կողմից՝ հայկական ապստամբական շարժումով ավելացնել Կիլիկիայի նկատմամբ հայերի քաղաքական նպատակների կշիռը»⁴⁰: Բայց Եռյակ համաձայնության երկրներն առաջնորդվում էին շահադիտական նկատառումներով: Ծիշտ է, նրանք արդեն հանդես էին եկել հայերի բնաջնջման թուրքական քաղաքականությունը դատապարտող հայտարարությամբ և գիտակցում էին, որ Կիլիկիայում ու Արևմտյան Հայաստանում իրենց գործողությունների ուշացումը կարող էր նպաստել Օսմանյան կայսրությունում հայասպանության ծրագրի իրագործմանը, այնուամենայնիվ, Անտանտի երկրները չշեղվեցին իրենց համար առաջնային նեղ պետական խնդիրներից: Արտահայտելով արևմտահայերին ռազմական օգնություն ցույց տալու հարցին Եռյակ համաձայնության երկրների ընդհանուր մոտեցումը՝ Ա. Նիքոլսոնը Պողոս Նուբարին պատասխանեց, որ Կիլիկիայում դաշնակից գորքերի ավիհանումն անհնար

է: «Մենք արդեն գերծանրաբեռնվել ենք,— ասաց նա,— որքա՞ն նոր գործողություն կարող ենք մեզ վրա վերցնել: Դարդանելի գործողությունը ներկայումս խլում է մեր բոլոր ուժերը, որոնք Դաշնակիցներն ընդհանրապես ի վիճակի են տրամադրել աշդախի մի ծրագրի»⁴¹: Ընդհակառակն, Փարիզում, իսկ պատերազմի ավարտական փուլում նաև Լոնդոնում ֆրանսիական ու անգլիական քաղաքագետները և դիվանագետները իրենք էին ձգտում օգտագործել հայկական մարդուժը թուրքական ռազմաճակատի սիրիական հատվածում, Միջագետքում ու Պարսկաստանում: Անա թե ինչու հայկական վեց վիլայեթների ու Կիլիկիայի տարածքում ինքնավար Հայաստանի ստեղծման շուրջ հայ գործիչների հետ տարվող բանակցություններում Ֆրանսիայի ու Անգլիայի արտաքին գործերի նախարարությունների աշխատակիցները, թեև խուսափում էին Հայկական հարցում գործնական խոստումներից, բայց, միաժամանակ, ջանում էին չհիասթափեցնել Պողոս Նուբարին ու Հակոբ Չավրիյանին⁴²: Չէ՞ որ անհրաժեշտության դեպքում նրանք կարևոր դեր կարող էին ունենալ Անտանտի երկրների բանակներից հայկական մարդուժի զինվորագրման գործում: Ինչ վերաբերում է ինքնավար Հայաստանի ստեղծմանը, ապա Լոնդոնում այն դիտում էին որպես «Կովկասում բանսարկություններ անող երկրորդ Բուլղարիայի ստեղծում»:
Ավելին՝ Ռուսաստանի հետ դիվանագիտական դժվարություններից խուսափելու նպատակով անգլիական դիվանագետներն ու քաղաքական գործիչները հայերի հետ բանակցությունները կախման մեջ էին դնում ապագա ինքնավար Հայաստանի սահմաններում Կիլիկիան ընդգրկելու հարցում Ֆրանսիայի դիրքորոշման ճշգրտումից⁴³: Իսկ ֆրանսիական կառավարությունը մտադիր չէր հրաժարվել Կիլիկիայի նկատմամբ հավակնություններից: Ուստի և եվրոպական կառավարությունների՝ հայ գործիչներին տված խոստումները չէին կարող ու չպետք է անցնեին «ակադեմիական գրույցներից այն կողմ»⁴⁴:

Ինքնավար Հայաստանի ստեղծման մեկ ուրիշ տարբերակ էր թուրքական հովանավորության ներքո հայկական ինքնավարության ծրագիրը, որը 1915 թ. աշնանը Եռյակ համաձայնության երկրների դիվանագիտական քննարկումների առարկա դարձավ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ, Հ. Չավրիյանի միջոցով: Այն ասիական Թուրքիայում սուլթանի ժառանգական իշխանության ներքո Սիրիայի, Պաղեստինի, Միջագետքի, Արաբիայի, Կիլիկիայով հանդերձ Հայաստանի ու Զրդստանի ինքնավար մահանգներով միապետության ստեղծման ընդար-

ձակ ծրագրի բաղկացուցիչ մասն էր: Ծրագրի հիմքում Թուրքիայի ռազմա-ծովային նախարար ու Սիրիայում գործող 4–րդ թուրքական բանակի հրամանատար Ջենալ փաշայի և Էնվերի ու Թալեաթի միջև ծագած տարածայնություններն էին⁴⁵, որոնք Ռուսաստանի արտոգործնախարարությունում դիտվում էին իբրև միջոց Կոստանդնուպոլսի ու սևծովյան նեղուցների խնդիրը ռուսական պետության շահերին համապատասխան լուծելու համար⁴⁶: Այդ նպատակով Պետրոգրադում պատրաստ էին ընդունել ասիական Թուրքիայի անկախությունն ու անձեռնմխելիությունը երաշխավորելու, նրան Թուրքիայի սուլթանի ժառանգական իշխանությամբ օժտելու վերաբերյալ Ջենալի պայմանները, որոնք հայտնի էին դարձել Կոստանդնուպոլսի հայկական շրջանակներից: Ավելին՝ Ռուսաստանի արտոգործնախարարությունն անմիջապես բանակցություններ սկսեց դաշնակից երկրների ղեկավարների հետ Ջենալի առաջապած պայմանները բավարարելու և դրա միջոցով նրան երիտթուրքական կառավարության դեմ արշավանքի մղելու, Կոստանդնուպոլսի ու նեղուցների խնդիրը կարգավորելու վերաբերյալ⁴⁷: Բայց Փարիզում ու Լոնդոնում չընդունեցին ռուսների առաջարկած ծրագիրը և մերժեցին Ջենալի հետ նախատեսվող համաձայնագիրը, որովհետև դրանով Ռուսաստանը կստանար Կոստանդնուպոլսին ու նեղուցները, իսկ իրենք՝ ոչինչ «թուրքական ժառանգությունից»: Թուրքական գերիշխանության ներքո «ասիական Թուրքիայի անկախությունն ու անձեռնմխելիությունը» փոփոխված իրադրության պայմաններում չէին համապատասխանում Մերձավոր Արևելքում Անգլիայի ու Ֆրանսիայի ռազմաքաղաքական շահերին⁴⁸: Ինչ վերաբերում է ծրագրում Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ինքնավարության դրույթին, ապա արևմտահայերի զանգվածային տեղահանություններից ու կոտորածներից, Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայաթափումից հետո, այն էլ թուրքական գերիշխանության պայմաններում այդ դրույթն անիրագործելի էր, հետևաբար՝ անհեռանկար: Այդ առաջարկը լոկ միջոց էր ռուսական և նրա դաշնակից եվրոպական կառավարությունների համար օգտագործելու հայ գործիչների կապերն ու հնարավորությունները Ջենալի հետ իրենց և, միաժամանակ, միմյանց միջև բանակցություններում: Ավելին՝ Հայկական հարցը խաղաքարտ էր տերությունների համար հասնելու իրենց ծրագրերի իրականացմանը: Հարցն այն է, որ դեռևս 1915 թ. նոյեմբերի 23–ից բրիտանական ու ֆրանսիական կառավարությունների միջև, դաշնակից Ռուսաստանից անջատ, բանակցություններ էին սկսվել Թուրքիայի ասիական տիրույթների բաժանման նպատակով:

Անգլիան և Ֆրանսիան շահագրգռված էին նախապես հստակեցնել ու սահմանագծել ասիական թուրքիայում իրենցից յուրաքանչյուրին անցնելիք տարածքները, որովհետև նրանց անհանգստացնում էին Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի հաղթանակները: Չէ՞ որ դրանց շնորհիվ Ռուսաստանի սահմանները կարող էին ընդիուս մոտենալ կամ այդ պետության դիրքերը կարող էին ամրապնդվել Մերձավոր Արևելքի այն տարածքներում, որոնց նկատմամբ լուրջ հետաքրքրություններ ունեին Անգլիան ու Ֆրանսիան: Անհրաժեշտ էր նախապես դիվանագիտական ճանապարհով իրականացնել ասիական թուրքիայի բաժանումը և այդպիսով պատենշել սեփական հետաքրքրությունների ոլորտները ռուսական ռազմական ներթափանցման վտանգից: Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունների զաղտնի բանակցությունների արդյունքում 1916 թ. հունվարի 3-ին կայացավ նախնական համաձայնություն⁴⁹: Ըստ անգլո-ֆրանսիական նախագծի, որի հեղինակներն էին Բեյրութի ֆրանսիական նախկին գլխավոր հյուպատոս Ֆրանսուա Ժորժ Պիկոն և բրիտանական կառավարության արտակարգ լիազոր ներկայացուցիչ, Մերձավոր Արևելքի փորձագետ Մարկ Սայքսը (նա անգլո-ֆրանսիական բանակցություններում փոխարինել էր Ա. Նիքոլսոնին)⁵⁰, թուրքիայի ասիական տիրույթները, բացառությամբ Արևմտյան Հայաստանի՝ Ռուսաստանին սահմանակից հյուսիսային մասի, բաժանվում էին հինգ գոտիների: Ֆրանսիային էին անցնելու Արևմտյան Հայաստանի մի մասը Փոքր Հայքով, Կիլիկիան, Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Այնթապը, Ուրֆան, Մարդինը, Դիարբեքիրը և Հեբիարի մարզը (նախագծում այդ տարածքները նշված էին որպես «Կապույտ» գոտի): Արևելյան Սիրիան և Մոսուլի նավթառատ վիլայեթը դառնալու էին Ֆրանսիայի ազդեցության ոլորտ («Ա» գոտի): Մեծ Բրիտանիային անցնելիք տարածքներն ու ազդեցության ոլորտներն ընդգրկում էին արաբական վիլայեթները և որևէ կերպ չէին առնչվում հայկական տարածքների խնդրին: Դրանք ընդգրկում էին Միջագետքը՝ Բաղդադով, բայց առանց Մոսուլի: Մեծ Բրիտանիային էին հատկացվել նաև Հայֆա և Ազրա նավահանգիստները («Կարմիր» գոտի): Արաբիայի մեծ մասը՝ Անդրհորդանանը և Բաղդադի վիլայեթի հյուսիսային մասը, ճանաչվում էր Մեծ Բրիտանիայի ազդեցության ոլորտը («Յ» գոտի): Ըստ համաձայնագրի նախագծի՝ Անգլիան և Ֆրանսիան Ռուսաստանի հետ համաձայնեցնելու էին Պաղեստինի միջազգային վարչության ձևի հարցը («Շազանակագույն» գոտի): Ռուսաստանին անցնելիք

տարածքներից կազմավորվելու էր «Դեղին» գոտին⁵¹: Փաստաթղթում Ֆրանսիան արտահայտել էր իր ընդարձակված հավակնություններն Արևմտյան Հայաստանի նկատմամբ, որտեղ Ռուսաստանն առանձնահատուկ շահեր ուներ: Չնայած դրան՝ ոչ Մեծ Բրիտանիան և ոչ էլ Ֆրանսիան չէին կարող Ռուսաստանից երկար ժամանակով թաքցնել անգլո-ֆրանսիական անջատ բանակցությունների արդյունքները, քանի որ դեռևս 1914 թ. օգոստոսի 23 (սեպտեմբերի 5)–ին ռուսական, անգլիական ու ֆրանսիական կառավարությունների միջև Լոնդոնում ստորագրվել էր համաձայնագիր «պատերազմի ընթացքում առանձին հաշտություն չկնքելու վերաբերյալ»: Միաժամանակ, երեք կառավարությունները պարտավորվել էին հաշտության պայմանները քննարկելիս չառաջադրել միմյանց միջև չհամաձայնեցված խաղաղության պայմաններ⁵²: Այս համաձայնության նպատակը ռազմական ու դիվանագիտական ոլորտում դաշնակից երկրների միասնական քաղաքականությանն մշակումն էր, որը թելադրված էր պատերազմական իրադրությամբ և համաշխարհային պատերազմում հաղթելու մտադրությամբ: Վերոհիշյալ համաձայնագրով ստանձնած պարտավորություններից բացի, պակաս կարևոր չէր նաև ռազմական գործոնը: Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի հաղթանակները 1916 թ. գարնանը սպառնում էին ոչ միայն անգլո-ֆրանսիական համաձայնագրի նախագծով Արևմտյան Հայաստանում Ֆրանսիային անցնելիք տարածքներին, այլև ռուսական բանակը կարող էին հասցնել Կիլիկիայի, Սիրիայի ու Իրաքի սահմաններին:

1916 թ. փետրվարի 25 (մարտի 9)–ին անգլո-ֆրանսիական համաձայնագրի նախագծի բովանդակության հաղորդումը որպես անակնկալ ընդունեց ցարական կառավարությունը: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը դժգոհ էր, որ անգլո-ֆրանսիական նախագծով Ռուսաստանի հարավային սահմանագծի մեծ երկայնության վրա՝ Ուրմիա լճից և Վանից, Բիթլիսից, Մուշից ու Խարբերդից դեպի հարավ՝ Տավրոսի ու Անտիտալլոսի լեռնաշղթաների վրայով դեպի Անամուր ձգվելու էին եվրոպական մեծ, թեկուզև դաշնակից երկրի՝ Ֆրանսիայի տիրույթների սահմանները և անկյունով մխրճվելու ռուս-պարսկական սահմանագծի մեջ⁵³: Ծիշտ է, տեղագրական տեսակետից այդ սահմանը «բնական էր, որովհետև ընթացում էր գլխավոր լեռնազանգվածի ուղղությամբ, սակայն քաղաքական ու ռազմագիտական կշռադատությունների տեսակետից», արտգործնախարար Ս.

Սազոնովի համոզմամբ, «այն հազիվ թե կարելի էր ընդունելի համարել»⁵⁴, որովհետև Ֆրանսիային էր վերապահում Ուրմիա լճի հյուսիսային առափնյա տարածքներն ու Բիթլիսի լեռնանցքները և սեպի մման մխրճվում ռուս-պարսկական սահմանագծի մեջ վերոհիշյալ լճի մոտերքում:

Հայկական տարածքների բաժանման հարցում ռուս-ֆրանսիական տարածայնությունը հարթելու միջնորդությամբ հանդես եկան անգլիացիները: Նրանք առաջարկեցին Ուրմիա լճի առափնյա տարածքները և Բիթլիսի լեռնանցքները զիջել Ռուսաստանին՝ դրա դիմաց Սեբաստիա-Խարբերդ-Կեսարիա աշխարհագրական եռանկյունին միացնելով Ֆրանսիային անցնելիք տարածքներին⁵⁵: Անգլիական առաջարկով Արևմտյան Հայաստանը բաժանվում էր գրեթե իրար հավասար երկու մասերի, որոնցից մեկն անցնելու էր Ֆրանսիային, մյուսը՝ Ռուսաստանին: Ընդ որում, Ֆրանսիային անցնելիք տարածքների մեջ անգլիացի դիվանագետները նկատի էին առել մասնապատկան Փոքր կամ Հռոմեական Հայաստանը (Armenia Romana): «Այս չափազանց ձեռնտու կլինի Ռուսաստանին, որովհետև Փոքր Հայաստանի հայերը կդերական ու պահպանողական տրամադրություններով են տոգորված, հակառակ կովկասահայերի ու արևելահայերի, որոնք ամարխո-սոցիալիստներ են: Եթե հայերի ազգային զգացման կիզակենտրոնը Էրզրումը լիներ, ապա ամարխո-սոցիալիստներն իրենց ձեռքը կառնեին հայ ամբողջ քաղաքական մեխանիզմը և կամրապնդեին վերջինս: Իսկ այս դրության ժամանակ չափավոր տարրերն իրենց կենթարկեն հայոց ազգային ձգտումները ֆրանսիական հովանու ներքո, որ կբխի Փոքր Հայաստանից»⁵⁶,— ռուս դիվանագետներին էր հավատացնում Մարկ Սայքսը:

Օգտագործելով հայ ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումների նկատմամբ ցարական իշխանությունների անհանգստության հանգամանքը՝ անգլիացի դիվանագետն այնուհետև ռուսներին առաջարկում էր Ֆրանսիային զիջել Մշո հովիտը, «որովհետև այս հանգամանքը Ռուսաստանին կազատեր հեղափոխական գործունեության տնկարանից և կովկասյան հեղափոխականների քարոզչության համար ամենանպաստավոր մարզերից մեկը կկտրեր նրանց գործունեության ոլորտից»⁵⁷: Անգլիական առաջարկի դրույթներից ելնելով՝ 1916 թ. մարտի 4 (17)–ին Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը Պետրոգրադում բրիտանական ու ֆրանսիական դեսպաններին՝ Ջ. Բյուքենենին և Մ. Պալեոլոգին հայտնեց իր կառավարության դիրքորոշումը. այն է՝ Ֆրանսիային զիջել Փոքր Հայաս-

տանի՝ Սեբաստիայի, Խարբերդի ու Կեսարիայի միջև ընկած տարածքը և հավանություն տալ անգլո-ֆրանսիական համաձայնագրի մյուս հատվածներին միայն այն դեպքում, երբ Ռուսաստանին անցնեն Կոստանդնուպոլիսն ու ճեղուցները, Բիթլիսի լեռնանցքները, Ուրմիա լճի հարակից շրջանները, Սև ծովի հարավային ափը, իսկ Պաղեստինում ապահովված լինեն ուղղափառ եկեղեցու իրավունքները⁵⁸։ Ֆրանսիական կառավարությունը համաձայնեց ռուսական արտգործնախարարության առաջարկած փոփոխություններին⁵⁹։

Ակնհայտ էր, որ անիական Թուրքիայի բաժանման հարցը ենթակա էր վեճերի։ 1916 թ. մարտ-ապրիլին դեռ շարունակվում էին բանակցությունները Պետրոգրադում։ Դրանց արդյունքում 1916 թ. ապրիլի 13 (26)–ին Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովի և Պետրոգրադում ֆրանսիական դեսպան Մ. Պալեոլոգի միջև հուշագրերի փոխանակման ձևով ստորագրվեց ռուս-ֆրանսիական համաձայնագիր, որով ռուսական կառավարությունը միացավ Սայքս-Պիկոյի անգլո-ֆրանսիական նախագծին։ Ռուս-ֆրանսիական համաձայնագիրը նախատեսում էր. «Ռուսաստանը զինագրավում է Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի վիլայեթները մինչև Սև ծովի ափին Տրապիզոնից արևմուտք ընկած և ապագայում որոշվելիք կետը։

Վանից ու Բիթլիսից արևմուտք և հարավ, Մուշի, Սդերդի, Տիգրիսի հոսանքի, Ջեզիրե-իբն-Օմարի, Ամադիային ու Մերգներին իշխող լեռնագագաթների գծի միջև ընկած Զուրդիստանի շրջանը զիջվում է Ռուսաստանին, որը փոխադարձաբար Ֆրանսիայի սեփականությունն է ճանաչում Ալա-Դադի, Կեսարիայի, Ակ-Դադի, Իլդիզ-Դադի, Չարայի, Ակնի և Խարբերդի միջև ընկած տարածքը»⁶⁰։

Փաստորեն, ռուս-ֆրանսիական համաձայնագրով պատմական Հայաստանի հողերը նոր մասնատման էին ենթարկվելու։ Ռուսաստանին էին անցնելու նրան սահմանակից Էրզրումի և Վանի վիլայեթները, Տրապիզոնի ու Բիթլիսի վիլայեթների արևելյան մասերը, ինչպես նաև Դիարբեքիթի, Խարբերդի և Սեբաստիայի վիլայեթների ծայրամասային ոչ մեծ հատվածները։ Վերջիններիս տարածքի մնացած մասը, Բիթլիսի վիլայեթի արևմտյան հատվածը, Կիլիկիայի և նրան հարակից շրջանների հետ միասին հարավում՝ Այնթապ-Մարդին, հյուսիսում՝ Ալա-Դադ-Կեսարիա-Ակ-Դադ-Իլդիզ-Դադ-Չարա-Ակն-Խարբերդ գծով տրվելու էին Ֆրանսիային։ Արևմտյան Հայաստանի մեծ մասը ճանաչվելու էր որպես

ռուսական ազդեցության ոլորտ: Թուրքական կայսրության «ժառանգության»՝ Ռուսաստանին անցնելիք տարածքներում ցարական կառավարությունը ճանաչելու էր Ֆրանսիայի տնտեսական իրավունքներն ու արտոնությունները, երկարաժամկետ փոխառություններն ու ֆրանսիական հիմնարկների և հաստատությունների այն արտոնությունները, որոնք ֆրանսիական կառավարությունը ապահովել էր սուլթանական կառավարության հետ ստորագրած պայմանագրերով ու համաձայնագրերով: Դա չէր վերաբերում Ռուսաստանին և Ֆրանսիային անցնելիք տարածքներում նրանց դատավարության, կրոնական ու կապիտոլյացիաների իրավունքներին: Վերջապես, երկու կառավարություններն էլ ընդունում էին, որ թուրքական տարածքը գրավող պետություններից յուրաքանչյուրը պետք է մասնակցի «օսմանյան հանրային պարտքի» վարչությանը⁶¹:

Ռուս-ֆրանսիական համաձայնագրով էլ ավարտվեցին Եռյակ համաձայնության երկրների ներկայացուցիչների պետրոգրադյան գաղտնի բանակցությունները: Չզգձվում էին միայն ասիական Թուրքիայում, մասնավորապես, Արևմտյան Հայաստանում փոխադարձ արտոնությունների և շահերի ճանաչման շուրջ անգլո-ռուսական բանակցությունները: Ի վերջո, ռուսական կառավարությունն ընդունեց անգլիական պահանջները Տրապիզոնից արևմուտք ընկած ռուսական սահմանագծի որոշման հարցը Անտանտի երկրների միջև ապագայում համաձայնեցնելու հեռանկարով անորոշ թողնելու, ասիական Թուրքիայի՝ Ռուսաստանին անցած տարածքներում երկարաժամկետ փոխառությունների, տարանցիկ առևտրի, մաքսային հարկահավաքման հարցերում Լոնդոնի իրավունքներն ու արտոնությունները պահպանելու մասին: 1916 թ. օգոստոսի 19 (սեպտեմբերի 1)–ին Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովի՝ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Է. Գրեյին ուղարկած հուշագրով, որը վերջինիս մայիսի 10 (23)–ի հուշագրի պատասխանն էր, ավարտվեցին Արևմտյան Հայաստանի բաժանման վերաբերյալ անգլո-ռուսական գաղտնի բանակցությունները:

1916 թ. ապրիլի 13 (26)–ի ռուս-ֆրանսիական համաձայնագրով, մայիսի 9–ին և 16–ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Է. Գրեյի ու Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնի միջև հուշագրերի փոխանակմամբ երկու կառավարությունների կողմից Սալյս-Պիկոյի նախագծի պաշտոնական ընդունումով, ինչպես նաև անգլո-ռուսական համաձայնագրով Եռյակ համաձայնության երկրները ձևակերպեցին Թուրքիայի ասիական տիրույթները՝ այդ թվում Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան միմյանց

միջև մասնատելու ծրագիրը: Մակայն Օսմանյան կայսրության «ժառանգության» բաժանումն անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերով չավարտվեց: Հենվելով 1915 թ. Լոնդոնի գաղտնի համաձայնագրի վրա, որով նախատեսվում էր Իտալիայի միացումը թուրքական «ժառանգության» բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանսիական համաձայնագրին՝ Իտալական կառավարությունն առաջ քաշեց իր տարածքային պահանջներն ասիական Թուրքիայում: 1917 թ. ապրիլի 20-ին Սեն-ժան-դե Մորիենի⁶² գաղտնի համաձայնագրով, որը ստորագրվեց Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարներ Լյոյդ Ջորջի, Ռիբոնյի ու Սոնինոյի հանդիպման արդյունքում, Անգլիան և Ֆրանսիան որոշակիացրին ասիական Թուրքիայում օսմանյան «ժառանգության» Իտալիայի մասնաբաժինը: Այն ընդգրկում էր Իզմիր քաղաքը և վիլայեթը, Կոնիայի վիլայեթի մեծ մասը, Մուղլին, Դենիզլին, Բուրդուրը, Իսպարտան և Անթալիան («Կանաչ» գոտի): Իտալիային տրվեց նաև ազդեցության գոտի, որը գտնվում էր Իզմիրից հյուսիս («Շ» գոտի): Իտալիան օգտվելու էր այն իրավունքներից ու արտոնություններից, որոնք ստացել էին Ֆրանսիան ու Անգլիան Մայքս-Պիկոյի համաձայնագրով⁶³: Անգլո-ֆրանս-իտալական համաձայնագրի հողվածներից մեկում անհրաժեշտ էր համարվում Ռուսաստանի հավանությունը ստանալը, բայց Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը, զբաղված Փետրվարյան հեղափոխությամբ առաջ քաշված ներքին խնդիրներով, այդպես էլ չկարողացավ միանալ Սեն-ժան-դե Մորիենի համաձայնագրին: Նշենք նաև, որ Իտալիայի միանալը 1916 թ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերին փոփոխություն չմտցրեց Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի բաժանման քարտեզի մեջ:

Ահա այսպես՝ Թուրքիայի տարածքների բաժանման հարցում միմյանց միջև առաջ եկած լուրջ հակասությունները դիվանագիտական ջանքերով հարթեցնելու և փոխզիջումների միջոցով միայն դաշնակից կառավարությունները կարողացան պահպանել Եռյակ համաձայնության ներքին կայունությունը:

Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերի ստորագրումից հետո մեծ տերությունների շահարկման առարկա դարձավ Կիլիկիայի հարցը: Հայկական մարդուժը փոքրասիական ռազմաճակատում սղվելիք գործողություններում օգտագործելու նպատակով ֆրանսիական կառավարությունում մշակվում էր

ծրագիր Արևելյան լեզեոն կազմակերպելու մասին⁶⁴: Այն լավագույն խաղաքարտը դարձավ Եվրոպայում գործող Հայկական ազգային պատվիրակության համար՝ կրկին բարձրացնելու հայկական ինքնավարության հարցը, որը, Ֆրանսիայի ռազմաքաղաքական շահերին համապատասխան, վերածնակերպվեց Կիլիկիայի ինքնավարության պահանջի⁶⁵:

Կիլիկիայի ինքնավարության, նրա «ներքին կարգն ու անվտանգությունը պահպանելու նպատակով» հայ կամավորներ հավաքագրելու վերաբերյալ ֆրանսիական ու անգլիական կառավարությունների տեսակետները պարզելու համար Պողոս Նուբարը Լոնդոնում հանդիպումներ ունեցավ Մարկ Սայքսի և Ժորժ Պիկոյի հետ: Երկու գործիչներն էլ հայտնեցին իրենց համերաշխությունը Ֆրանսիայի հովանավորության ներքո ինքնավար հայկական Կիլիկիայի ստեղծման գաղափարին⁶⁶: 1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում ֆրանսիական դեսպանատանը Ֆրանսիայի ու Անգլիայի պաշտոնական ներկայացուցիչներ Ժորժ Պիկոյի, Մարկ Սայքսի և Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի միջև համաձայնություն կայացավ ֆրանսիական զինված ուժերի կազմում Արևելյան լեզեոնի ստեղծման, հայ կամավորների ուժերը Փոքր Ասիայում Անտանտի դաշնակցային զորքերի մղած ռազմական գործողություններում օգտագործելու մասին⁶⁷: Լեզեոնը կազմակերպվելու էր Կիպրոսում, հրամանատար Ռոմիեոյի անմիջական պատասխանատվությամբ, գաղտնի: Համաձայնագիրը ստորագրեցին Ժորժ Պիկոն՝ հանուն Ֆրանսիայի կառավարության, և Պողոս Նուբար փաշան՝ վերջինիս առաջարկով: Այսուհետև Հայկական ազգային պատվիրակության և ֆրանսիական կառավարության ներկայացուցիչների միջև շատ ավելի սերտ համագործակցության ժամանակաշրջան սկսվեց: Բազմաթիվ հայ կամավորներ, Հայաստանի վերածննդի հեռանկարով, Հյուսիսային և Հարավային Ամերիկայից, Եգիպտոսից, Եթովպիայից, Հնդկաստանից զինվորագրվում էին Արևելյան լեզեոնին: Նրանց ոգևորում էր քաջ մուսալեռցիների օրինակը, որոնք 1915 թ. աշմանից ֆրանսիական դրոշի ներքո կռվում էին Հայկալիում ընդդեմ թուրքերի: Ֆրանսիական իշխանությունները, երիտթուրքական կառավարությանը հայերի դեմ չգրգռելու նպատակով, մույն լեզեոնի կազմում, բայց առանձին խմբերի բաժանելով, ընդունեցին նաև Սիրիայի և Լիբանանի կամավորների դիմումները:

Եռյակ համաձայնության երկրներն արդեն համաձայնել էին ասիական Թուրքիայի մասնատմանը, հետևաբար, անգլիական ու ֆրանսիական

պետական գործիչներին պարզապես նպատակահարմար էր խոսել Օսմանյան կայսրության ոչ թուրքական շրջանների՝ Արաբիայի, Միջագետքի, Սիրիայի, Պաղեստինի, Հայաստանի, Կիլիկիայի ազատագրման, ինքնուրույնության, նրանց նկատմամբ եվրոպական տերությունների հովանավորության բարձր սկզբունքների մասին: Չէ՞ որ նման սկզբունքների հրապարակումը կարող էր քաջալերել պատերազմական ընթացքը՝ Եռյակ համաձայնության երկրների համար հեշտացնելով մարդու ժի հնարավոր աղբյուրների օգտագործումը: Սակայն դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ պատերազմի ավարտից հետո ֆրանսիական կառավարությունը մոռացավ Կիլիկիայի վերաբերյալ հայերին տված հանդիսավոր խոստումները, չնայած Արևելյան լեզեռնի հայ մարտիկների «արիությանն ու ցուցադրած ռազմական հազվագյուտ հատկություններին»⁶⁸: Ավելին, առաջնորդվելով քաղաքական շահախնդրությամբ, նա Թուրքիային հանձնեց Կիլիկիան, Ալեքսանդրետը, Մուսալետը, Անտիոքի շրջանը, Քեսաբի մեծ մասը, ուր ապաստան էին գտել Մեծ եղեռնը վերապահած հայերը:

Այսպես, 1915–1916 թվականներին, սկսելով Արևմտյան Հայաստանին և Կիլիկիային ինքնավարություն տալու ծրագրից, Եռյակ համաձայնության երկրները հանգեցին դրանց գրավմանն ու բաժանմանը: Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի պետական ու քաղաքական հեղինակավոր անձանց հետ հայ գործիչների հանդիպումները ցույց տվեցին, որ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության ծրագրերը լոկ միջոց էին դաշնակիցների համար շոշափելու միմյանց իրական նպատակներն ասիական Թուրքիայում և հասնելու դրանց իրականացմանը: Անտանտի երկրների կառավարական շրջանակներում Հայկական հարցի լուծումը մշակում էին նեղ պետական և քաղաքական շահերի տեսանկյունից՝ շրջանցելով հայության ազգային նպատակները, ոտնահարելով ազգային ինքնորոշման հայ ժողովրդի իրավունքը: Լոնդոնի, Սայքս–Պիկո–Մազոնովի և Սեն–ժան–դե Մորիենի գաղտնի համաձայնագրերով Անտանտի երկրները և Իտալիան ձևակերպեցին Օսմանյան կայսրության «ժառանգության»՝ Թուրքիայի ասիական տիրույթների մասնատումը:

Այսպիսով՝ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում փոխվեց Անտանտի երկրների քաղաքականությունն Օսմանյան կայսրության նկատմամբ: Ճիշտ է, մինչ այդ էլ միջազգային դիվանագիտության մեջ եղել էին Օսմանյան կայսրությունը մասնատելու ծրագրեր, բայց դրանք առաջ էին քաշվել կամ Անգլիայի, կամ Ռուսաստանի կողմից և չէին կրել

միասնական, փոխհամաձայնեցված քաղաքականության բնույթ: Այս տեսանկյունից, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ասիական Թուրքիայի մասնատման հարցի բարձրացումը շրջադարձ էր Անտանտի երկրների Արևելյան քաղաքականության ոլորտում: Խնդրի մյուս առանձնահատկությունն էլ այն էր, որ Կոստանդնուպոլսի ու սևծովյան նեղուցների, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի հավակնությունների ճանաչումը նոր ու անսպասելի դիվանագիտական քայլ էր, որ կատարեցին Անգլիան ու Ֆրանսիան: Ի՞նչը դրդեց նրանց Արևմտյան Հայաստանը, Կոստանդնուպոլիսն ու սևծովյան նեղուցները զիջել Ռուսաստանին: Նախ՝ ռուսական զորքերի լայնածավալ ու հաղթական ռազմական գործողություններն Արևմտյան Հայաստանում, որոնք կարող էին ռուսական բանակը հասցնել ասիական Թուրքիայում բրիտանական ու ֆրանսիական ազդեցության սահմաններին: Պակաս կարևոր չէր նաև ասիական Թուրքիայում միմյանց ռազմաքաղաքական շահերը փոխադարձորեն ճանաչելու ու հարգելու՝ Անտանտի երկրների քաղաքականությունը: Նշված հանգամանքներն Օսմանյան «ժառանգության» մասնատման խնդրի քննարկումների ընթացքը պայմանավորող կարևոր գործոններ էին: Եթե սկսած 1878 թվականից մինչև առաջին համաշխարհային պատերազմն Անտանտի երկրներն Արևմտյան Հայաստանի ապագան և արևմտահայության ճակատագիրը կապում էին Օսմանյան կայսրության սահմաններում բարենորոգումների իրագործման հետ, ապա այժմ՝ Օսմանյան կայսրության մասնատման հարցով, ինքնըստիներյան, առաջ քաշվեց նաև նոր մոտեցում Հայկական հարցում⁶⁹: Եվ իշտ է, անգլո-ֆրանս-ռուս-իտալական բանակցություններում ու համաձայնագրերում տերությունները չօգտագործեցին «Հայկական հարց» արտահայտությունը, բայց սխալման համար Հայաստանի հողերի մասնատումը վերաբերում էր Հայկական հարցին:

§2. Կովկասյան ֆեդերացիայի սրեղծման բուրք-գերմանական ծրագիրը և Հայաստանը

Չնայած Կովկասյան ռազմաճակատում Թուրքիայի կրած պարտություններին և ռուսական բանակի առաջխաղացմանն Արևմտյան Հայաստանում, Թուրքիան ու կայզերական Գերմանիան ևս մշակում էին նախագիծ հաղթանակի դեպքում իրենց տնօրինության տակ

անցնելիք տարածքների կազմակերպման վերաբերյալ: Զննարկվում էին նաև Կովկասի ապագա վարչաքաղաքական կառուցվածքում հայկական տարածքների ճակատագրին, Կովկասի էթնիկական բազմազանության մեջ նաև հայերի ապագային վերաբերող հարցերը:

Այդ տեսանկյունից՝ Արևմտյան Հայաստանի հայաթափմամբ, հայերի տեղահանմամբ և բնաջնջմամբ Հայկական հարցը լուծելու թուրք-գերմանական տարբերակի տրամաբանական շարունակությունը կազմեց 1915 թ. վերջերին Թուրքիայի հովանավորությամբ իբր «անկախ, քաղաքականապես միավորված, առանց ազգային և դավանական խտրականության Կովկաս» ստեղծելու գաղափարը, որն առաջ քաշվեց թուրքական կառավարության և Կովկասի մահմեդականության հասարակական-քաղաքական շրջանակների նախաձեռնությամբ⁷⁰:

Կովկասյան ֆեդերացիայի գաղափարը որոշակիորեն ձևակերպվեց Գերմանիայի արտաքին գործերի նախարարության հովանավորությամբ 1916 թ. Տյուրքիստան գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն հրատարակված, ազգությամբ վրացու վերագրվող «Վրաստանը և պատերազմը» գրքույկում⁷¹:

Հեղինակի դատողությունների ելակետ էր Վրաստանի դրությունը ռուսական տիրապետության ժամանակ: 1783 թ. հուլիսի 24-ին Ռուսաստանի և Վրաստանի միջև Գեորգիսկսկում կնքված պայմանագիրը գնահատելով որպես «իր նախնիների քաղաքական սխալ»՝ նա կոչ էր անում օգտագործել համաշխարհային պատերազմի, մասնավորապես, ռուս-թուրքական պատերազմի իրադրությունը՝ թոթափելու ռուսական գերիշխանությունը և Վրաստանին վերադարձնելու ավելի քան մեկ դար առաջ կորցրած անկախությունը: Գրքույկում կարևորվում էր այն միտքը, որ վրացիներն իրենց ծրագիրը կարող են իրականացնել միայն Թուրքիայի ու նրա դաշնակիցների աջակցությամբ: Հեղինակը հավատում էր, որ Կովկասի բոլոր ժողովուրդները կհամախմբվեն ռուսներին վտարելու համար: Որպեսզի թուրքերը չկրկնեն ռուսների սխալները և, ետ նվաճելով Կովկասը, չընդգրկվին այն օսմանյան նահանգների թվում, ծրագրի հեղինակներն անհրաժեշտ էին համարում նախօրոք պայմանավորվել թուրքերի հետ կովկասյան հողերի ապագա կարգավիճակի մասին: Նրանց ծրագրի համաձայն՝ նախ՝ Թուրքիային թույլ էր տրվելու բռնակցել հարակից հողերի մի մասը ի հատուցումն նրա մղած պատերազմի, այնուհետև՝ որպես կովկասյան հիմնախնդրի միակ հնարավոր լուծում, առաջարկվում էր կովկասյան տարածաշրջանի մնա-

ցյալ և մեծ մասը միավորել ազատ դաշնության կամ ֆեդերացիայի մեջ: Ծրագրի հեղինակները նախատեսվող ֆեդերացիայի մեջ մտնող ժողովուրդներին բաժանում էին չորս խմբի՝ վրացիներ, լեզգիներ, թաթարներ, հայեր: Թուրքիային իրավունք էր վերապահվում Հայաստանից զավթել Երևանի նահանգի և Կարսի մարզի մի մասը՝ «որպես թուրքերով բնակեցված հողեր»: Վրաստանը վերակազմավորվելու էր որպես պետություն իր պատմական սահմաններում՝ Աբխազիայից մինչև Տրապիզոն՝ արևելքում ներառելով Ջաքաթալայի օկրուգը: Վրաստանի սահմաններում ընդգրկվելու էր նաև Հյուսիսային Հայաստանը: Վրաստանում մնալ ցանկացող հայերը, իբրև քաղաքացիներ, ունենալու էին ներքին ինքնուրույնություն ազգային եկեղեցու, լեզվի և մշակույթի պահպանման հարցում: Թաթարներին և հայերին իրավունք էր տրվելու ստեղծել թաթարահայկական խառը գավառներ՝ հարևաններից կամ եվրոպացիներից կազմված միջնուղ խորհրդի հսկողությամբ: Լեռնական ժողովուրդները՝ չերքեզները, չեչենները՝ Դաղստանով հանդերձ, պետք է միավորվեին մեկ ֆեդերացիայում: Անդրկովկասը դառնալու էր չեզոք պետություն, և տերությունները երաշխավորելու էին նրա մշտնջենական չեզոքությունը⁷²: Դժվար չէ կռահել, որ Կովկասյան ֆեդերացիայի ստեղծումը հնարավորություն էր տալու Թուրքիային Կովկասը պահելու իր ազդեցության ոլորտում: Կովկասյան երկրամասի «քաղաքական վերածնության» պատկերը գետնից էր գրքային կցված քարտեզում:

Նման մախազով գրքային երևան գալը համաշխարհային պատերազմի ամենաեռուն փուլում խիստ հատկանշական էր, բայց ոչ վրաց ժողովրդի մտայնության առումով: Ծրագրում արտահայտված մտքերը կարող էին արտացոլել վրացական հասարակության որոշ խավերի տրամադրությունը միայն, բայց ոչ թե ողջ վրաց ժողովրդի ազգային իղձերը: Նախագիծը հատկանշական էր Կովկասում նաև կայզերական Գերմանիայի ռազմաքաղաքական շահերի տեսանկյունից: Գերմանիայի Արևելյան քաղաքականության մեջ արդեն ձևավորվում էր Թուրքիայի և Ռուսաստանի սահմանին մի շարք մանր պետություններ ստեղծելու գաղափարը, որով գերմանական դիվանագետներն առաջնորդվելու էին նաև Գերմանիայի ու Ռուսաստանի միջև ընկած սահմանային գոտու կարգավորման հարցում: Այս հանգամանքը նախագծին հաղորդում էր կարևոր քաղաքական փաստաթղթի ուժ: «Պատերազմի հենց սկզբից գերմանական իշխանությունները ամբողջ աշխարհով մեկ լայն քարոզչություն են վարում Համաձայնության տերությունների ճամբարում հնարավորին չափ ավելի շատ ընդդիմադիր ուժեր ուղղի

հանելու: Չարմանալի կլիներ, եթե ամենահաս գերմանական ձեռքը չփոր-
ձեր հրդեհ բորբոքել կովկասյան ժողովուրդների մեջ... Վերջին տարիներին
վրացիների՝ քաթարների հետ բարեկամություն անելու համբավը այնպես
անլուելի էր ուռճացվում Կովկասի բարեկամների ու թշնամիների կողմից, որ
գերմանացիները գերմանացի չէին լինի, եթե չօգտվեին և այդ հաղ-
թաբղթից... Նախագծին, անկասկած, հաղորդակից է գերմանական ու-
զին»⁷³,— վերլուծելով Կովկասյան ֆեդերացիայի նախագիծը՝ եզրակաց-
նում է Նիկողայոս Ադոնցը:

Այսպիսով՝ Հայկական հարցի լուծման թուրք-գերմանական տար-
բերակն ունեցավ իր տրամաբանական շարունակությունը: Արդեն
1915–1916 թթ. Անդրկովկասում ևս դրվում էր Հայաստանի վերացման
հարցը և նախատեսվում էր հայերին տարրալուծել Կովկասում ստեղծվե-
լիք պետական միավորների մեջ: Փաստորեն, առաջին համաշխարհային
պատերազմում Գերմանիայի, Թուրքիայի և նրանց դաշնակիցների հաղ-
թանակի դեպքում արևելահայությանը սպառնալու էր ձուլման ու կոտո-
րածների վտանգը:

§3. Արևմտյան Հայաստանի գրավումը և ռուսական Ժամանակավոր զինվորական ընդհանուր նահանգապետության ստեղծումը

Թուրքական կայսրության «ժառանգության» բաժանման վերա-
բերյալ անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցություննե-
րում Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ճանաչեցին Ռուսաստանի հավակ-
նություններն ինչպես սևծովյան մեղուցների, այնպես էլ Արևմտյան Հայաս-
տանի նկատմամբ, որոնց տիրելը նրա վաղեմի նպատակն էր: Ռուսական
դիվանագիտության այդ հաղթանակը պատահական չէր: Այն պայմանա-
վորված էր առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակա-
տում ռուսական բանակի վճռական, սրընթաց ու հաջող ռազմական գործո-
ղություններով:

Թուրքիայի համար, որի բանակները տեղաբաշխված էին Սև ծովի ա-
փերին, Արևմտյան Հայաստանում, Միջերկրական ծովի ափերին, Միջա-
գետքում և Կարմիր ծովի հյուսիսային ափին, ռազմական գործողություննե-
րի զլխավոր քատերաբեմը Կովկասյան ռազմաճակատն էր: Այդ ճակատում

ռազմական հաջողություններն ապահովելու էին Կովկասի, Ղրիմի, Պարսկական Ատրպատականի, Միջին Ասիայի գրավումը և, դրանով իսկ, երիտթուրքերի համաթուրքական ծրագրի իրագործումը: Դրան էլ նպատակաւորված էր թուրքական բանակի գլխավոր շտաբի մշակած ռազմական պլանը, որի համաձայն թուրքական գլխավոր ուժերը պետք է արագորեն գրավեին Անդրկովկասը և շարժվեին դեպի Ռուսաստանի՝ մահմեդականներով բնակեցված մյուս շրջաններն ու Պարսկական Ատրպատական: Թուրքական գլխավոր շտաբը հաշվի էր առել նաև ռուսական զորքերի հարձակման տարբերակը: Այդ դեպքում թուրքական բանակի խնդիրն էր լինելու կանխել հակառակորդի ուժերի ներթափանցումը թուրքական տարածք և հակահարված տալ նրան: Ռուսական հիմնական ուժերի՝ Էրզրումի ուղղությամբ հարձակվելու դեպքում թուրքերը նրանց շրջապատելու էին Էրզրումից արևելք⁷⁴: Թուրքական գլխավոր հրամանատարությունը Կովկասյան ռազմաճակատում կենտրոնացրել էր 300 հազարանոց 3-րդ բանակը, որը կազմված էր 9-րդ, 10-րդ և 11-րդ կորպուսներից: Դրանք տեղաբաշխված էին Բայբուրդ-Էրզրում-Մուշ-Վան, Երզնկա-Խարբերդ և Սամսուն-Սերաստիա ուղղություններով: Բանակի հրամանատարն էր Հասան Իզզեթ փաշան, իսկ շտաբի պետը՝ գերմանացի մայոր Ֆելիքս Գուզեն: Թուրքական բանակը վատ էր զինված, ապահովված չէր պարենով, սպայական կազմը կիսազրագետ էր, զորամասերում չկար կարգուկանոն ու կազմակերպվածություն: Բացի այդ, բանակում տարածված էին հիվանդությունները: Մեծ թիվ էր կազմում զինվորների դասալքությունը⁷⁵: Այդ հանգամանքներն էապես նվազեցնում էին թուրքական բանակի մարտունակությունը:

Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակն ուներ և՛ պաշտպանական, և՛ հարձակողական խնդիրներ. պահել Կովկասը, հնարավորության դեպքում ներխուժել Արևմտյան Հայաստան, ջախջախել թուրքական առաջապահ զորքերին և պաշտպանել գրաված դիրքերը: Կովկասյան ռուսական բանակը, որի գլխավոր հրամանատարն էր փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը, կազմված էր 1-ին կովկասյան ու 2-րդ թուրքեստանյան կորպուսներից և առանձին զորամիավորումներից: Այդ բանակի զինվորների թիվն ավելի քան 170 հազար էր⁷⁶: Ճիշտ է, ռուսական բանակը թվաքանակով զիջում էր թուրքականին, բայց, դրա փոխարեն, գերազանցում էր նրան հրամանատարական կազմի պատրաստվածությամբ, զինվորների մարտունակությամբ և տեխնիկական հագեցվածությամբ: Ռազմաճակատի պայմաններին համապատասխան ռուսական զորքերը կենտրոնաց-

ված էին ինը խմբավորումներում՝ առանձին չորս ուղղություններով գործելու նպատակով: Դրանք էին Բասենի, Էրզրումի, Ալաշկերտի և Բայազետ-Վանի ուղղությունները⁷⁷:

Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունները սկսվում են 1914 թ. նոյեմբերին: Ռազմաճակատի զինը 720 կմ երկարությամբ ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճը: Իր լեռնոտ տեղանքով, գետերի առատությամբ, կլիմայի կտրուկ ու մեծ փոփոխություններով և ճանապարհների բացակայությամբ պատերազմի կովկասյան ռազմաբեմն անբարենպաստ էր գործերի տեղաշարժի ու գործողությունների համար⁷⁸: Չնայած դրան՝ հաջողությամբ է պսակվում ռուսական զորքի հարձակումը, որը բանակի հրամանատարությունը նախաձեռնել էր ռուսական սևծովյան նավահանգիստների վրա գերմանաթուրքական նավատորմի հարձակումից և Թուրքիային պատերազմ հայտարարելու վերաբերյալ ցարական հրովարտակի հրապարակումից հետո: Ռուսական բանակի Օլթիի, Սարիղամիշի և Երևանի ջոկատներին հաջողվում է նոյեմբերի սկզբներին գրավել Կարա-Դերբենտի լեռնանցքն ու Զյուֆրի քյոյը, Բայազետն ու Դիադինը, Ալաշկերտն ու Ղարաքիլիսան: Ավելին՝ ռուսական զորքերի ընդհանուր հարձակումը սպառնալից դրություն է ստեղծում Էրզրումի համար: Հարձակողական գործողություններ են ծավալում նաև թուրքերը, բայց նրանք հաջողության են հասնում միայն Բաթումի մարզում, որը ռուսական հարձակման համար առավել խոցելի տեղերից մեկն էր⁷⁹: Օգտագործելով այն հանգամանքը, որ ռուսական զորքերի մի մասը Կովկասից տեղափոխվել էր Արևմտյան ռազմաճակատ, թուրքական զորախմբին հաջողվում է գրավել ռուսական սահմանամերձ բնակավայրեր Արդվինը, Արտանուջը և Բորչիան՝ անմիջական սպառնալիք ստեղծելով Արդահանի համար: Թուրք զինվորները կտորորում են զավթած տարածքների հայ, հույն և ասորի բնակչությանը⁸⁰:

Կովկասյան ռազմաճակատում հակառակորդ ուժերի միջև առաջին խոշոր և նշանակալից իրադարձությունը Սարիղամիշի ճակատամարտն էր: Ովկորված առաջին հաջողությամբ՝ 1914 թ. դեկտեմբերի 9 (22)–ին թուրքական 90 հազարանոց բանակն Էնվերի հրամանատարությամբ հարձակման է անցնում Օլթիի ուղղությամբ ընդդեմ ռուսական 64 հազարանոց բանակի՝ նպատակ ունենալով ներխուժել և գրավել Կովկասը: Էնվերը հույսը դրել էր իր զորքերի թվական գերակշռության վրա: Երկու կողմերն էլ կռվում էին համառորեն, դաժան ծմռան և լեռնային ծանր պայմաններում: Արյունահեղ

մարտերից հետո թուրքական զորքերը ներխուժում են Սարիղամիշ, նույնիսկ գրավում են վերին Սարիղամիշը: Շուտով Սարիղամիշի ռուսական զորախումբը ստանում է համալրում և անցնում հակահարձակման, որի նպատակն էր ետ մղել թշնամուն, շրջապատել ու ոչնչացնել նրան: 1915 թ. հունվարի 2-ին ռուսները գրավում են Բարդուսի լեռնանցքը և կտրում թուրքական 9-րդ կորպուսի նահանջի ուղին, իսկ հունվարի 4-ին շրջապատում ու զերում են այն՝ կորպուսի հրամանատար Իսհան փաշայի ու թուրքական երեք դիվիզիաների հրամանատարների հետ միասին: Հաջողությամբ զարգացնելով հարձակումը՝ ռուսական զորքերը հունվարի 14-19-ին Սարիղամիշի ամբողջ ճակատով թուրքերին հարկադրում են նահանջել ճակատամարտի նախօրեին ունեցած դիրքերը⁸¹: Այդ ընթացքում Կարաուրգանի մոտ մղված եռօրյա համառ մարտերն ավարտվում են թուրքական 11-րդ կորպուսի ջախջախումով: Էնվերը հանձնում է 3-րդ բանակի մնացորդները՝ մոտ 13 հազար մարդ, զնդապետ Հաքքը բեյին, իսկ ինքը, գաղտագողի լքելով բանակատեղը, հազիվ խույս է տալիս գերի ընկնելուց⁸²:

Միաժամանակ, ակտիվ գործողություններ են ծավալվում Բաթումի շրջանում: Հունվարի 3-ին ռուսական զորքը գրավում է Արդահանը:

1915 թ. հունվարի 19-ին Կովկասյան ռազմաճակատում ճակատամարտից առաջ եղած ռուս-թուրքական գծի վերականգնումով ավարտվեց Սարիղամիշի մեծածավալ ռազմական գործողությունը: Սարիղամիշի մարտերում թուրքական 90 հազար զինվորներից սպանվեցին, ցրտահարվեցին կամ գերի ընկան շուրջ 78 հազար մարդ: Կոստանդնուպոլսում արգելված էր խոսել կամ գրել այդ աղետի մասին:

Սարիղամիշի ճակատամարտում ռուսական զորքերի հաղթանակը մեծ ազդեցություն ունեցավ Կովկասյան ճակատում ռազմական գործողությունների հետագա ողջ ընթացքի վրա: Նախ՝ ձախողվեց թուրքական սահմանի ուղղությամբ Կովկաս ներխուժելու Էնվերի ծրագիրը, դրանով իսկ, կանխվեց Կովկասի քրիստոնյա ազգաբնակչությանը սպառնացող կոտորածների ու թալանի վտանգը: Ավելին՝ ռազմական գործողություններն ամբողջությամբ տեղափոխվեցին Թուրքիայի տարածք՝ Արևմտյան Հայաստան: Սարիղամիշի ճակատամարտում թուրքական զորքերի կրած պարտությունը թուրքական հրամանատարությանը ստիպեց մյուս ճակատներից Կովկաս փոխադրել մեծ քանակությամբ զորք, ինչը հեշտացրեց անգլիացիների գործողությունները Միջագետքում և Մուեզի ջրանցքի գոտում: Բացի այդ, չիրականացավ Կովկասի մահմեդական ազգաբնակչությանն ընդդեմ

Ռուսաստանի «սրբազան պատերազմի» տանելու ծրագիրը: «Չնայած սրբազան պատերազմի հայտարարմանը, ապստամբությունը, որի վրա մենք հույս էինք դրել, չէր բռնկվում»⁸³,— նշում էր Քյազիմ Կարաբեքիրը:

Երբ սկսվեց 1915 թ. պատերազմաշրջանը, Կովկասյան ռուսական բանակը գտնվում էր բարենպաստ վիճակում և ամրապնդում էր իր դիրքերը Էրզրումի ուղղությամբ՝ շարժվելու դեպի Արևմտյան Հայաստանի արևմտյան ու հարավային շրջանները: Թույլ էր միայն զորքերի ձախ թևը, որն էլ ամրապնդելու նպատակով հարձակում է ձեռնարկվում Ուրմիա և Վանա լճերի շրջանում: Ռուսական զորամասերի անընդմեջ հարվածների ներքո թուրքական զորքը, հարկադրված, անկանոն նահանջում է դեպի Մուշ ու Բիթլիս՝ թալանելով հայկական գյուղերը, բնաջնջելով նրանց բնակիչներին: Հետապնդելով հակառակորդին՝ ռուսական զորամասերը 1915 թ. փետրվար–մայիսին գրավում են Պատմոսը, Մանազկերտը, Բաշկալեն, Շատախը, Կոթուրը, Ադիլջևազը, Խլաթը, Արճեշը, իսկ մայիսի 5–ին մտնում են Վան, որի հայ բնակչությունը կենաց մահու կռիվ էր մղում քաղաքը պաշարած թուրքական զորքի ու քրդական հրոսակախմբերի դեմ⁸⁴: Վանի գրավումն ուներ կարևոր նշանակություն, որովհետև քաղաքը կապի և հաղորդակցության ուղիների հանգուցակետ էր, վարչական կենտրոն: Վանի վիլայեթի հայությանն իսպառ բնաջնջվելուց փրկելու գործում կարևոր նշանակություն է ունենում նաև Դիլմանի ճակատամարտը, որում ռուսական զորքի հաղթանակին մեծապես նպաստում են 2–րդ Կովկասյան հրաձգային դիվիզիան գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ և 1–ին հայկական կամավորական ջոկատն ազգային հերոս Անդրանիկի հրամանատարությամբ⁸⁵: Սակայն հուլիսի 9–ին ռուսական զորքը հանկարծակի սկսում է նահանջել Վանից և Ալաշկերտի դաշտից՝ դիրքերը զիջելով Արդուլ Քերիմի զորքին: Ռուսական բանակի հրամանատարության այդ քայլին նպաստում են «4–րդ կորպուսի ճակատի ձգվածությունը 400 կմ, զորքերի կառավարման և ռազմական ու նյութական մատակարարման անբավարար կազմակերպումը, հետախուզության թույլ դրվածքը, զինղեկների անհեռատեսությունը»,— մեկնաբանում է Ա. Հարությունյանը⁸⁶: Ռուսական բանակի նահանջը կատարվում է այն ժամանակ, երբ Մուշում տեղի էին ունենում հայկական ջարդեր, իսկ սասունցիներն էլ օրհասական կռիվ էին մղում՝ սպասելով ռուսական փրկարար օգնությանը: Բայց ռուսական բանակը չի հասնում Մուշ ու Սասուն, և դա ողբերգական հետևանքներ է ունենում հայ բնակչության համար: Բացի այդ, ռուսական բանակի հանկար-

ծակի նահանջի հետևանքով սկսվում է լքվող վայրերից հայ բնակչության աղետաբեր և խուճապալիճ գաղթ դեպի Կովկաս: Բարձր գնահատելով հայ կամավորների դերն այդ գաղթը հնարավորին չափ անվտանգ դարձնելու գործում՝ Հայոց ազգային բյուրոն Գևորգ 5-րդ կաթողիկոսին ուղարկած «Համառոտ տեղեկագրում» նշում էր. «Բյուրոն չի կարող երախտագիտությամբ չհիշել այն մեծ ծառայությունը, որ նրանք մատուցեցին հայ տառապյալ ժողովրդին՝ ուղեկցելով դեպի կովկասյան սահմանը Տաճկաստանի և Պարսկաստանի մեր տարաբախտ գաղթականների: Այս թշվառները, սպառնալի սարսափներից փախչելով, կարող էին ճանապարհին թուրք և քուրդ հրոսակների հարձակումներին ենթարկվել և կոտորվել առանց սեռի ու հասակի, եթե հայ կամավորներից չգտնեին պաշտպանություն և հայրախնամ հոգատարություն»⁸⁷:

Միայն հուլիսի 22-ին, օժանդակ ուժեր ստանալով, ռուսական 4-րդ կորպուսի զորամասերն անցնում են հակահարձակման և կրկին գրավում Վանը, որտեղ թուրքերն ամբողջովին կոտորել էին մնացած բնակչությանը: Շուտով, Արևմտյան Հայաստանի ողջ հարավարևելյան մասն ազատագրվում է թուրքերից: Դրա շնորհիվ լիովին ապահովվում է Կարս-Էրզրում ուղղությամբ գործող ռուսական ուժերի ձախ թևը: Ռուսական բանակը նախապատրաստվում է հարձակման Թուրքիայի ամենակարևոր ռազմական հենակետի՝ Էրզրումի վրա: Նախապես մշակված պլանի համաձայն՝ 1915 թ. դեկտեմբերի 28 (1916 թ. հունվարի 10)-ին Կովկասյան բանակն Օլթիի, Կարս-Էրզրումի և Ալաշկերտի ուղղություններով հարձակման է անցնում: Ռուսական բանակը ճեղքում է թուրքերի պաշտպանությունը՝ հակառակորդին հարկադրելով երկրորդ անգամ թողնել Քյոփրի-քյոյը և Հասան-կալան: Հետապնդելով նահանջող թուրքական զորամասերին՝ ռուսական բանակը 1916 թ. հունվարի կեսերին երեք կողմից շրջապատում է Էրզրումը: Լուրջ նախապատրաստությունից հետո հունվարի 29 (փետրվարի 11)-ի երեկոյան ռուսական զորքը սկսում է Էրզրումի գրոհը: Թուրքերը չեն կարողանում այն դիմագրավել՝ չնայած քաղաքի լայն պաշտպանական հնարավորություններին: Հարձակման ճիշտ կազմակերպման, զինվորների անձնվիրության ու հուսալի պատրաստվածության շնորհիվ ռուսական զորքը փետրվարի 3-ին գրավում է Էրզրումը: Ռազմական այս գործողության արդյունքում երկրորդ անգամ ջարդվեց թուրքական 3-րդ բանակը՝ կորցնելով 66 հազար մարդ (իր կազմի 2/3-ը), այն դեպքում, երբ ռուսները կորցրին ընդամենը 17 հազար մարդ: Էրզրումի գրավումը նպաստեց, որպեսզի ռու-

սական զորքերն ամուր դիրքեր գրավեն Կովկասյան ռազմաճակատի արևմուտքում և հարավում՝ անմիջական վտանգ սպառնալով Տրապիզոնին ու Երզնկային: Էրզրումը հենակետ դարձավ ռուսական բանակի հետագա հարձակողական գործողությունների համար, որոնց արդյունքում էլ այն հայտնվեց գործող բանակի խորը թիկունքում:

Ռուսական բանակի հաջողությունն Էրզրումում հաջողություն բերեց նաև ռուսական դիվանագիտությանը: Այս պայմաններում է, որ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան շտապեցին համաձայնության գալ Ռուսաստանի հետ օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ՝ նրա առաջխաղացումն ասիական Թուրքիայում դիվանագիտական ճանապարհով դադարեցնելու նպատակով:

1916 թ. մարտ–սեպտեմբերին ռուսական զորքերը գրավեցին Տրապիզոնը, Երզնկան, Մուշը և Բիթլիսը՝ ընդհուպ մոտենալով կառուցվող Բաղդադի երկաթուղագծին: Մուշն ու Բիթլիսը գրավելուց հետո ռուսական բանակի հրամանատարությունը դադարեցրեց հետագա հարձակումը: Անհրաժեշտ էր կարգի բերել զորամիավորումները, ամրանալ նվաճված բնագծերում՝ թուրքերի հնարավոր հարձակումները կանխելու նպատակով: Միաժամանակ, աշխատանքներ սկսվեցին գրաված տարածքներում կյանքի վերականգնման ուղղությամբ: Կովկասյան բանակը 1916 թ. վերջին պաշտպանում էր 2 600 կմ երկարություն ունեցող ռազմաճակատ, որը կայունացավ և համարյա անփոփոխ մնաց մինչև պատերազմի վերջը:

Այսպիսով՝ ռուսական բանակը Կովկասյան ռազմաճակատում կատարեց իր հիմնական խնդիրները. նախ՝ ձախողեց Անդրկովկաս ներխուժելու թուրքական ծրագիրը և հակառակորդի բանակին հարկադրեց անցնել պաշտպանության, ապա՝ նվաճեց Արևմտյան Հայաստանի մեծ մասը:

Ռուսական Կովկասյան բանակի առաջխաղացմանը մեծապես նպաստեց հայ ժողովրդի աջակցությունը: Պատերազմի ողջ ընթացքում Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարողները ձգտում էին հավաստիացնել համաշխարհային հանրությանը, թե պատերազմը մղվում է հանուն «թույլ պետությունների, Փոքր Ասիայում զգալի թիվ կազմող քրիստոնյա փոքրամասնությունների պաշտպանության և ազատագրման»⁸⁸: Թեև, իրականում, այդ հայտարարություններով Անտանտի երկրների ղեկավարները փորձում էին քողարկել պատերազմում իրենց պետության հետապնդած զավթողական նպատակները, այնուամենայնիվ, դրանք Արևմտյան Հայաստանն ազատագրելու հույսեր արթնացրին հայ հասարա-

կական–քաղաքական շրջաններում: Եթե Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ–ի բանակներին զինվորագրվեցին ավելի քան 50 հազար հայ, ապա ռուսական բանակին ավելի քան 200 հազար զինվոր տալուց բացի, հայերն օժանդակեցին նրան կամավորական ջոկատներով: Ռուսական կառավարությունն ինքն էր նախաձեռնել և 1914 թ. հուլիսի 23–ին արված հայտարարությամբ խրախուսեց Թիֆլիսում Հայոց ազգային բյուրոյի ջանքերով փորձառու հայդուկապետների գլխավորությամբ հայկական կամավորական յոթ ջոկատների և դրանց կից հայկական հեծելազորի ստեղծումը: Կամավորների մեծ մասը, Կովկասում ապաստանած արևմտահայեր լինելով, քաջատեղյակ էին Արևմտյան Հայաստանի աշխարհագրությանը և կարող էին ստանձնել ռուսական բանակի առաջապահի պատասխանատու գործը⁸⁹: Այդ հանգամանքը երիտթուրքական կառավարության համար առիթ հանդիսացավ հայերին դավաճանության մեջ մեղադրելու և նրանց բնաջնջման նախապես ծրագրված ոճիրն իրագործելու համար:

Կամավորական շարժման համար ամեն ինչ նախապատրաստված էր, երբ 1914 թ. օգոստոսի 5–ին Ամենայն հայոց կաթողիկոսը նամակով դիմեց փոխարքային: Նամակում, հիշատակելով Արևմտյան Հայաստանում բարենորոգումների գործի ձախողումը, կաթողիկոսը խնդրում էր, որ ռուսական կառավարությունն իր վրա վերցնե դրանց իրականացման ծանրությունը: Նա հայ ժողովրդի անունից Կովկասում ցարական իշխանության բարձրաստիճան ներկայացուցչին էր հայտնում համաշխարհային պատերազմից և Թուրքիայի ասիական տարածքներում ռուսական բանակի հաղթանակներից արևմտահայության սպասելիքները՝ պատերազմի ավարտից հետո Արևմտյան Հայաստանը տեսնել ինքնավար՝ Ռուսաստանի հովանավորության ներքո⁹⁰:

Այս գրությանը սեպտեմբերի 2–ին տրված պատասխանում Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով–Դաշկովը ցարական կառավարության անունից հավաստիացնում էր, որ իրենք հաստատապես կանգնած են հայկական բարենորոգումների՝ Ա. Մանդելշտամի մշակած ծրագրի պաշտպանության դիրքերում: Նա իր պարտքն էր համարում նախազգուշացնել կաթողիկոսին, որ «հայերի գործողությունները ներկա պահին պետք է խստիվ համաձայնեցվեն իր ցուցմունքների հետ, որովհետև Թուրքիայի և Ռուսաստանի միջև տիրող լարված դրության պատճառով ... շատ կարևոր է, որ Թուրքիայի դեմ պատերազմի առիթ տա ինքը՝ Թուրքիան, և ոչ թե որևէ գործողություն Ռուսաստանի կողմից, ուստի շատ անցանկալի կլինի և նույնիսկ վտանգավոր,

առաջ բերել որևէ ապստամբություն Թուրքիայի հայերի մեջ»: Միաժամանակ, փոխարքան խնդրում էր կաթողիկոսին «գործի դնել հեղինակավոր ազդեցությունը հոտի վրա այն մտքով, որպեսզի հայերը սահմանի մյուս կողմի հայերի հետ պատրաստ լինեն ... կատարել այն հանձնարարությունները, որ ըստ ժամանակի պահանջի, կարևոր կհամարեր և կառաջարկեր նրանց ի կատարում»⁹¹: Համոզված հայերի հավատարմության ու նվիրվածության մեջ՝ ռուսական կառավարությունն այնպես էր ուղղորդում նրանց պահվածքը և գործունեությունը, որ կամավորական ջոկատներն անընդհատ գտնվեին ռուսական բանակի հրամանատարության ազդեցության ներքո: Այդ նկատառումով ցարական հրամանատարությունը կամավորական ջոկատները չմիավորեց մի զորասյան մեջ, այլ ցրեց ամբողջ ճակատով՝ կցելով զանազան զորամասերի. «Խմբերը,— հիշում է պատերազմի մասնակից գորավար Գ. Ղորղանյանը,— չմիացվեցին ավելի բարձր ռազմական կազմակերպությունների մեջ, այլ կցվեցին տարբեր զորամասերի և ջոկատների այն նկատառումով, թե դրանք օգտակար կլինեն գլխավորաբար հետախուզական գործողությունների համար. այդ պատճառով նրանց դասավորումը ամբողջ ռազմաճակատի երկայնքով բնական էր թվում»⁹²: Նույն կերպ, ցարական բանակ գորակոչված հայերը ցրված էին Արևմտյան ռազմաճակատի ռուսական տարբեր զորամասերում: Յարական կառավարությանը ձեռնտու չէր, որ հայերն ունենային կենտրոնացված զինվորական ուժ, որ արևմտահայությունն ազատագրվեր հայերի ջանքերով, որովհետև դա կստիպեր հաշվի նստել նրանց պահանջների հետ:

Ռուսական կառավարող շրջանները որոշակիորեն գիտեին իրենց նպատակները և ընդառաջ էին գնում դրանց քայլ առ քայլ: Ճիշտ է, Կովկասի փոխարքայի վերոնշյալ նամակում Արևմտյան Հայաստանի բարենորոգումների սկզբնական ծրագրից չհրաժարվելու մասին դրույթը համապատասխանում էր հայոց կաթողիկոսի ցանկությանը: Այն, սակայն, հայերի ազգային նպատակներն իրականացնելու ռուսական բարեհաճություն չէր բնավ, այլ նեղ պետական շահով թելադրված քայլ, որով Ռուսաստանն արտահայտում էր իր ձգտումը հաստատվել Արևմտյան Հայաստանում՝ հենվելով «հայերի ցանկության» վրա⁹³:

Արևմտյան Հայաստանը գրավելուց հետո ռուսական բանակը հայ կամավորների կարիքն այլևս չէր գգում, իսկ կառավարությունը երկյուղում էր. որ Արևմտյան Հայաստանում իր ծրագրերի իրագործման ճանապարհին այդ ջոկատները կվերածվեն հայոց ազգային—ազատագրական պայքարի

շարժիչ ուժի: Ուստի, ռուսական բանակի շարքերում անձնվիրաբար կռվող հայ կամավորներին անտեղի մեղադրելով անկազմակերպվածության ու անկարգապահության մեջ՝ 1916 թ. սեպտեմբերին ցարական կառավարությունը ցրում է բոլոր հայկական կամավորական ջոկատները՝ դրանք վերածելով ռուսական բանակի հինգ հրաձգային զումարտակների⁹⁴: Չնայած հայկական կամավորական ջոկատների գործունեության նկատմամբ ցարական կառավարության վարած այս զուշավոր քաղաքականությանը՝ օսմանյան Թուրքիայում առիթը բաց չէին թողնում մեղադրելու հայերին «ռուսասիրության» մեջ: Դեռևս 1915–1916 թթ. աստիճանաբար ձևավորվում էր հայերի «ռուսասիրության» թուրքական կոնցեպցիան, որի համաձայն իբր թե Թուրքիայի հայ հսկատակները Ռուսաստանի աջակցությամբ թուրքական պետության դեմ ապստամբություններ կազմակերպող պետական հանցագործներ էին և, իբր թե նրանք էին մեղավոր Կովկասյան ռազմաճակատում ռուսներից թուրքերի կրած պարտություններում: Եթե սկզբում այս կոնցեպցիան ծառայում էր երկրում հակահայկական կրքերը բորբոքելու, հայերի նկատմամբ բռնությունները խթանելու, թուրքական պետության ռազմական անհաջողությունների իսկական պատճառներից հասարակայնության ուշադրությունը շեղելու նպատակներին, ապա հետագայում այն դարձավ միջոց արդարացնելու հայ բնակչության բռնի տեղահանությունն իր պատմական հայրենիքից:

Վերադառնանք մեր խնդրին: Արևմտյան Հայաստանը գրավելուց և կամավորական ջոկատները ցրելուց հետո ռուսական կառավարության համար օրակարգի հարց էր արդեն հայաթափված ու ավերված Արևմտյան Հայաստանում գրաված տարածքների կարգավիճակի որոշակիացումը և կառավարման կազմակերպումը: Այդ ուղղությամբ առաջին քայլերը ցարական կառավարությունը ձեռնարկել էր տակավին պատերազմի առաջին փուլում, երբ Կովկասյան բանակի հրամանատարության ենթակայության ներքո ստեղծել էր իրարից անջատ ռազմավարչական միավորներ. ինչպիսին էին Ալաշկերտի, Բայազետի, Դիադինի օկրուգները: Դրանց ղեկավարներին նշանակում էին Կովկասյան բանակի այն գորամիավորումների հրամանատարները, որոնց զորամասերը տեղաբաշխված էին տվյալ օկրուգի տարածքում⁹⁵: Կառավարման այս ձևը կրում էր ժամանակավոր բնույթ և պահպանվեց մինչև պատերազմի իրավունքով գրավված տարածքների կառավարման հարցում ցարական կառավարության դիրքորոշման որոշակիացումը: Ցարական արքունիքում Թուրքիայից ու Պարսկաստանից գրավված

տարածքները դիտում էին որպես Անդրկովկասում ռուսական կայսրության տարածքի «բնական» շարունակությունը: Այդ իմաստով նրանց համար գոյություն չունեին ոչ մի Հայկական հարց: Ահա թե ինչու ցարական կառավարությունն ընթացք չտվեց Արևմտյան Հայաստանի ապագա վարչական կառուցվածքի վերաբերյալ ռուսական բանակի Գլխավոր շտաբի աշխատակից, Պետական խորհրդի անդամ գեներալ-համհարզ Կուրոպատկինի մշակած մանրամասն ծրագրին: Այն նախատեսում էր գրաված տարածքի բաժանում երկու ընդհանուր-նահանգապետությունների՝ դրանց կառավարման հիմքում դնելով Արևմտյան Հայաստանում բարենորոգումների մասին 1913 թ. ռուսական նախագիծն այն տարբերությամբ, որ վեց տերությունների փոխարեն ընդհանուր-նահանգապետությունների կառավարումն իրականացնելու էր Ռուսաստանը: Կովկասի փոխարքան ևս այն կարծիքին էր, թե ժամանակն է մշակել Թուրքիայից գրաված տարածքները ռուսական կայսրության մեջ ընդգրկելու հիմնարար դրույթները: Ինչ վերաբերում է Հայկական հարցին, ապա փոխարքայի կարծիքով «ռուսական կայսրության շրջանակներում ոչ մի այդպիսի հարց չպիտի գոյություն ունենա, քանի որ ցարի բոլոր հավատարիմ հպատակները համարվում են հավասար քաղաքացիներ»: Փոխարքան գտնում էր, որ սոհասարակ «հայկական ինքնավարության մասին առայժմ խոսք լինել չի կարող, բայց եկեղեցական, դպրոցական, լեզվի և տեղական մի շարք այլ հարցերի գծով, նայած պայմաններին, կարելի է որոշակի արտոնություններ շնորհել»⁹⁶: Հաշվի առնելով խնդրի հրատապությունը՝ դեռևս 1916 թ. սկզբներին «Պատերազմի ընթացքում Թուրքիայից գրաված մարզերի կառավարման ժամանակավոր կանոնադրություն» մշակելու նպատակով ցարական կառավարությունը ստեղծել էր հատուկ հանձնաժողով գեներալ-լեյտենանտ Պեշկովի գլխավորությամբ: Հանձնաժողովը մշակեց կանոնադրությունը և հունիսի 5-ին ներկայացրեց ցարին: Հունիսի 8-ին Նիկոլայ 2-րդը հաստատեց այն⁹⁷: Կանոնադրության համաձայն՝ թուրքական կայսրությունից գրաված բոլոր տարածքներից կազմվեց Ժամանակավոր զինվորական ընդհանուր-նահանգապետություն: Դրա կառավարումը հանձնվեց Կովկասյան ռազմաճակատի զինվորական իշխանություններին: Զինվորական-ընդհանուր նահանգապետի պաշտոնում նշանակվեց գեներալ Պեշկովը⁹⁸: Ժամանակավոր զինվորական ընդհանուր-նահանգապետության նպատակը «պատերազմի իրավունքով գրավված մարզերի սահմաններում գտնվող զորական թիկունքային հիմնարկները միացնելը, հսկելն ու ղեկավարելն էր, նրանց վարչական

կառավարման հաստատություններ հիմնելը և վերջիններիս գործունեությանն ուղղություն տալը»⁹⁹:

Ժամանակավոր զինվորական ընդհանուր-նահանգապետի վարչությանը ենթակա էր հյուսիսում՝ նախկին ռուս-թուրքական սահմանի, արևելքում՝ թուրք-պարսկական սահմանի, արևմուտքում և հարավում՝ Տրապիզոնի ամրացված շրջանից սկսվող, Սերմանց և Բյուրակնյան լեռներով, Վանա լճի հյուսիսային ու արևելյան ափերով մինչև Խոշաբի գետաբերանը և Կոթուրի բարձունքներով մինչև թուրք-պարսկական սահմանը ձգվող սահմանագծի միջև ընկած ընդարձակ տարածքը¹⁰⁰: Ըստ «Կանոնադրության»՝ Ժամանակավոր զինվորական ընդհանուր-նահանգապետության ամբողջ տարածքը բաժանվում էր 4 մարզերի՝ Վանի, Խնուսի, Էրզրումի և Պոնտականի: Մարզերն իրենց հերթին բաժանված էին շրջանների: Սկզբում դրանց թիվը 8-ն էր, իսկ Փետրվարյան հեղափոխության նախօրեին շրջանները 29-ն էին¹⁰¹: Մարզերն ու շրջանները սահմանագծված էին այնպես, «որ ըստ հնարավորության չխախտվեր երկրի վարչական նախկին բաժանումը»¹⁰²: «Կանոնադրության» համաձայն՝ շրջանների ղեկավարներն ունեին երկու օգնականներ՝ մեկը վարչատնտեսական մասի, մյուսը՝ ոստիկանական: Շրջանների ղեկավարների ընտրությունը և նշանակումը տևեց մինչև 1917 թ. սկզբները: 29 շրջանների ղեկավարներից (որոնցից 7-ի անունները պարզված չեն) հայ էր ընդամենը մեկը՝ Վանի շրջանը ղեկավարող կոմիսար ինժեներ Կ. Համբարձումյանը: Մարզերի ու շրջանների բոլոր ղեկավարներն էլ զինվորականներ էին, ինչը որոշակի ազդեցություն էր ունենալու երկրամասում ներքին կյանքի կարգավորման վրա: Նրանց գլխավոր պարտականություններն էին՝ «իրենց ենթակա շրջաններում կարգուկանոնի վերականգնումն ու պաշտպանությունը, բնակչության կյանքի, պատվի, ունեցվածքի, քաղաքացիական ազատությունների պաշտպանությունը, բոլոր ազգություններին ռուսական կառավարության առաջ լիակատար հավասարության պարագայում խաղաղ աշխատանքով ապահովելը, հարկերի գանձումն ու բնավճար ծառայությունների կատարումը վերահսկելը»¹⁰³: «Կանոնադրության» մեջ ընդգծված էր. «Թշնամու գանձարանի ողջ անշարժ գույքը, ինչպես նաև պետական իրավունքները Չինվորական ընդհանուր-նահանգապետի ցուցումով առնվում են ռուսական իշխանության իրավասության ներքո և օգտագործվում իբրև ռազմավարի իրավունքով ռուսական

գանձարանին պատկանող գույք: Թշնամու գորքի ու պետական հիմնարկների թողած շարժական գույքն անցնում է ռուսական գանձարանին»¹⁰⁴:

«Պատերազմի իրավունքով Թուրքիայից նվաճած մարզերում» ցարական կառավարության Զինվորական ընդհանուր-նահանգապետությունը կառավարման ժամանակավոր ձև էր, որի հաստատումը թելադրված էր պատերազմական իրադրությամբ, Արևմտյան Հայաստանում գտնվող ռուսական բանակի կարիքները հոգալու անհրաժեշտությամբ: Միաժամանակ, կառավարման այդ ձևը պայմաններ էր ստեղծելու Արևմտյան Հայաստանում կյանքի վերակենդանացման, կայուն խաղաղության ու կարգուկանոնի հաստատման համար և նախապատրաստելու էր անցումը զինվորականից քաղաքացիական իշխանության: Այդ տեսանկյունից տրամաբանական ինչպիսի՞ շարունակություն էր ունենալու ռուսական ցարական կառավարության քաղաքականությունը Հայկական հարցում, երբ նրա լուծումն այժմ գտնվում էր Ռուսաստանի ու Ֆրանսիայի ձեռքում, երբ ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ զաղտնի համաձայնագրերով Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան փակել էին Արևմտյան Հայաստանի վրայով Միջերկրական ծով դուրս գալու Ռուսաստանի ամենակարճ ցամաքային ճանապարհը՝ խոստանալով պատերազմի հաղթական ավարտի դեպքում նրան հանձնել սևծովյան նեղուցները և Կոստանդնուպոլիսը:

Ռուսական կառավարող շրջաններում Արևմտյան Հայաստանը դիտում էին որպես ռուսական կայսրության վարչատարածքային միավորներից մեկը և գործնականորեն անընդունելի էին համարում ինքնավար Հայաստանի ստեղծումը: Արտահայտելով ցարական արքունիքի վերաբերմունքը խնդրի նկատմամբ՝ արտգործնախարար Ս. Սազոնովը 1916 թ. հունիսի 14 (27)-ին գրում էր. «Ինչ վերաբերում է հայերին լայն ինքնավարություն տալուն, ապա չպետք է մոռանալ, որ պատերազմի ընթացքում հայերի նկատմամբ թուրքերի գործադրած պատժիչ միջոցառումներից հետո, որոնք հայերի իսկ վկայությամբ սարսափելի չափեր են ունեցել, Մեծ Հայքում բնակչության հարաբերակցությունը փոխվել է ի վնաս հայերի: Այժմ նրանք հազիվ թե կազմեն բնակչության մույնիսկ 1/4-ը: Այդ պայմաններում հայկական փոքրամասնության ինքնավարությունը, իրականում, կհանգեցնի մեծամասնության անարդարացի ստրկացմանը»¹⁰⁵: Նույն տեսակետն ունենր նաև Կովկասի նոր փոխարքան՝ Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլակիչ Ռոմանովը: Նա այն կարծիքին էր, որ «հարկ չկա բարձրացնել Ռուսաստանի հովանավորությամբ ինքնավար Հայաստանի ստեղծման հարցը, որովհետև

այն կխանգարեր համաշխարհային պատերազմի հետևանքով ծագած հիմնախնդիրների խաղաղ ու հանգիստ լուծմանը»¹⁰⁶:

Ինքնավար Հայաստանի ստեղծումից հրաժարվելը, սակայն, չէր նշանակում, թե ռուսական կառավարող շրջաններում պատրաստվում էին «հայ բնակչությանը զոհաբերել մահմեդականներին կամ վերջիններիս ռազմական աջակցություն ցույց տալ հայերի հետ նրանց ընդհարումների ժամանակ»¹⁰⁷: Ս. Սազոնովը գտնում էր, որ «դա հայերին կոնի ավելի դժվար դրության մեջ, քան թուրքական կառավարման օրոք է եղել, և կհարկադրի նրանց կարոտով հետևել մեր սահմաններից այն կողմ տեղի ունեցող դեպքերին: Բացի այդ, հարցի նմանօրինակ լուծումը Ռուսաստանին կոնի անօգնական ու անհարմար դրության մեջ, որովհետև բոլոր կառավարություններից ռուսականն էր հետևողականորեն պահանջում բարենորոգումների իրականացում Արևմտյան Հայաստանում»¹⁰⁸: Իսկ Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում հայտնաբերված ցարական դիվանագիտական փաստաթղթերից մեկում շեշտվում էր այն միտքը, որ, «եթե թուրքերին ու գերմանացիներին Հայաստանն անհրաժեշտ է առանց հայերի, եթե նրանց անհրաժեշտ է վերացնել հայկական սեպը, բնաջնջել ռուսական մահմեդականների և քրդերի ու թուրքերի միջև հայկական խոչընդոտը», ապա Ռուսաստանի խնդիրը «հայկական սեպի վերստեղծումն է, թուրքերի, քրդերի և ռուսական թաքարների միջև հայկական պատմեշի» պահպանումը: «Հայ բնակչության պահպանումն անհետաձգելի խնդիր է: Ահա թե ինչու ամեն կերպ անհրաժեշտ է ձգտել ռուսական պետության սահմաններում հայ գաղթականների գոյության ապահովմանը՝ պատերազմի ավարտից հետո նրանց Արևմտյան Հայաստանում վերաբնակեցնելու նպատակով»¹⁰⁹, — նշվում էր նույն փաստաթղթում:

Ռուսաստանի նեղ պետական շահերի տեսանկյունով Թուրքիայից գրաված տարածքների կառավարման հիմքում նպատակահարմար էր դնել «օրենքի և արդարության խստագույն իրագործման, բոլոր ժողովուրդների ու ցեղերի նկատմամբ միատեսակ վերաբերմունքի ապահովման» սկզբունքները: Դրանց շրջանակներում նախատեսվում էր «հայերի դպրոցական և եկեղեցական ինքնուրույնության, ազգային լեզվի օգտագործման և քաղաքային ու գյուղական ինքնակառավարման իրավունքի ճանաչում ու րոշակի սահմաններում»¹¹⁰:

Այսպիսի դիրքորոշումն, իհարկե, մահանջ էր ռուսական 1913 թ. ծրագրից և 1914 թ. հունվարի 26–ի ռուս–թուրքական համաձայնագրով նա-

խատեսված բարենորոգումներից: Այնուամենայնիվ, այն կամայականությամբ ճիշտագործողից ազատված երկրում կարգուկանոնի և օրինականության հաստատման հույս էր տալիս:

Հարկ է նշել, որ ցարական կառավարության քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում գերծ չէր հայերի ազգային ձգտումների ու շահերի ռոմանտիկական այլ դրսևորումներից ևս: Ռուսական կառավարության պաշտոնական փաստաթղթերը վկայում են, որ հայ կամավորական գնդերի և բնակչության գործուն աջակցությամբ Արևմտյան Հայաստանը գրավելուց հետո ցարական կառավարությունում ծրագրել էին նրանից ու շրջակա տարածքներից կազմել սահմանամերձ կազակություն և բնակեցնել այն Կուբանից ու Դոնից գաղթածներով: Այդ էր վկայում գյուղատնտեսության մախարար Ա. Կրիվոշենի տեղեկագիրն ուղարկված արտգործնախարար Ս. Սազոնովին: Նրանում մատնանշված էին Ռուսաստանի գյուղատնտեսության համար էական հետաքրքրություն ներկայացնող տարածքները՝ Սև ծովի ափը՝ մինչև Սամսուն, Էրզրումի, Վանի վիլայեթները, Բիթլիսի վիլայեթի մի մասը, որոնք «լիովին պիտանի» էին դիտվում ռուս վերաբնակիչների համար: Իսկ Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Յուդենիչն անընդունելի էր համարում հայերի մտադրությունը հաստատվել Ալաշկերտի հովտում քրդերի և թուրքերի լքած հողերում, գտնելով, որ «հայերի զավթած հողերը պատերազմից հետո դժվար կլինի ետ վերցնել կամ ապացուցել, թե զավթածն իրենց չի պատկանում»¹¹¹: Հենց այս նկատառումներից ելնելով էլ Արևմտյան Հայաստանը 1916 թ. սկզբներին գրավելուց հետո ցարական կառավարությունը խոչընդոտում էր Մեծ եղեռնից հրաջքով փրկված և ռուսական կայսրությունում ապաստանած հայերի վերադարձը: Բացի այդ, ռուսական գործի գրաված տարածքներում հաճախ հայերին ցույց չէր տրվում անհրաժեշտ օգնություն, նրանք պաշտպանված չէին քրդերի ու չերքեզների բռնություններից, խոչընդոտվում էր հայ բնակչության վերադարձը տեղահանության կամ ռուսական բանակի մահազների ժամանակ թողած բնակավայրերը: Ջիմվորական իշխանություններն էլ իրենց հերթին առիթը բաց չէին թողնում հայ զինվորներին դավաճանության, հակառուսական կամ ազգայնական տրամադրությունների մեջ մեղադրելու և զինաթափելու համար: Այդ էին վկայում Հայոց Ազգային խորհրդի և Ամենայն հայոց կաթողիկոսի բազմաթիվ բողոքները, որոնք ցարական կառավարությունը, ցավոք, անտեսում էր¹¹²:

Այսպիսով՝ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ռուսական բանակը գրավեց Արևմտյան Հայաստանը: Այն ցամաքային ամենակարճ ճանապարհով Միջերկրական ծով դուրս գալու լավագույն հենակետն էր ռուսական պետության համար: Թուրքական «ժառանգության» բաժանման վերաբերյալ Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի հետ ստորագրած գաղտնի համաձայնագրով Արևմտյան Հայաստանում իր իրավունքներն ամրապնդելուց հետո ցարական կառավարությունը «պատերազմի իրավունքով Թուրքիայից նվաճած մարզերից» ստեղծեց ընդհանուր-մահանգապետություն, որով Արևմտյան Հայաստանի գրավված տարածքը դրվեց Կովկասյան ռազմաճակատի զինվորական իշխանությունների ժամանակավոր տնօրինության ներքո: Հայկական հարցը, բացի միջազգային դիվանագիտական հարց լինելուց, դարձավ նաև ռուսական պետության ներքին հարց: Դիշտ է, իր աշխարհակալական ձգտումներին հետամուտ՝ ցարական կառավարությունը մտադիր չէր Թուրքիայից գրաված հայկական տարածքներում ստեղծել ինքնավար Հայաստան, բայց շահագրգռված էր հայ բնակչության անվտանգությամբ, թուրքերի և Կովկասի մահմեդականների միջև հայկական «պատմեշի» պահպանմամբ: Այս տեսանկյունից ռուսական Ժամանակավոր զինվորական ընդհանուր-մահանգապետության ստեղծումը հայ ժողովրդի համար մախրընտրելի էր թուրքական հայաջինջ քաղաքականությունից: Զննադատելի էր, թերևս, ցարական կառավարության վերաբերմունքը հայության ազգային իրավունքներին ու իղծերին, որոնք ստորադասվում էին Արևմտյան Հայաստանում ռուսական կառավարչաձևը հաստատելու և ամրապնդելու պետական քաղաքականությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Քաղվածքն ըստ Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 70:
- 2 St' u Grey of Fallodon, Twenty-Five Years 1892-1916, London, 1925, p. II, էջ 165, 167: St' u նաև Նասիպեան Ա. նշվ. աշխ., էջ 71:
- 3 * St' u Палеолог М., նշվ. աշխ., էջ 123-124:
- 4 Քաղվածքն ըստ Готлиб В. В., նշվ. աշխ., էջ 90:
- 5 St' u История дипломатии, т. 2, Москва, 1963, էջ 761:
- 6 * Քաղվածքն ըստ Готлиб В. В., նշվ. աշխ., էջ 91:
- 7 Քաղվածքն ըստ նշվ. աշխ., էջ 92:
- 8 Акоюн С. М., նշվ. աշխ., էջ 158:
- 9 St' u Палеолог М., նշվ. աշխ., էջ 128:

- 10 Տե՛ս *Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительств. Серия 3 (1914–1917), т. VI, ч. 1, Москва–Ленинград, 1935, էջ 247: Акопян С. М., նշվ. աշխ., էջ 198:*
- 11 Տե՛ս *Международные отношения в эпоху империализма, т. VI, ч. 1, փաստ. No 329, էջ 328:*
- 12 «Մշակ», Թիֆլիս, 1914, դեկտեմբերի 11:
- 13 Քաղվածքն ըստ *Նախագահ Ա. Նշվ. աշխ., էջ 123:*
- 14 Տե՛ս *Палеолог М., նշվ. աշխ., էջ 128:*
- 15 Տե՛ս *Раздел Азиатской Турции, փաստ. No 7, էջ 110:*
- 16 Նույն տեղում, փաստ. No 16, էջ 118–119: Տե՛ս նաև *Сборник договоров России с другими государствами (1856–1917), էջ 428–429:*
- 17 Տե՛ս *Раздел Азиатской Турции, փաստ. No 23, էջ 125–127:*
- 18 Տե՛ս նույն տեղը, փաստ. No 24, էջ 127:
- 19 Քաղվածքն ըստ նշվ. աշխ., էջ 127:
- 20 *Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительств. Серия 3 (1914–1917), т. VIII, ч. 1, Москва–Ленинград, 1935, с. 254, примечание 2.*
- 21 *Сборник договоров России с другими государствами (1856–1917), с. 435.*
- 22 *Documents on British Foreign Policy 1919–1939. Edited by E. L. Woodward and Rohan Butler. First Series. Volume 1, London, 1947, pp. 84–85.*
- 23 «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան: Վավերագրեր ինպերիալիստական պատերազմի շրջանից, Աշոտ Դովհաննիսյանի առաջաբանով, Երևան, 1926, փաստ. No 4, էջ 5:
- 24 Նույն տեղում, փաստ. No 6, էջ 7:
- 25 Տե՛ս նույն տեղը, փախտ. No 14, էջ 10: Տե՛ս նաև *Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915–1918, փաստ. No 8, էջ 19–20:*
- 26 ԴԴ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, ք. 87: *Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915–1918, փաստ. No 8, էջ 20:*
- 27 Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, փաստ. No 14, 15, էջ 11, No 16, էջ 12: *Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915–1918, փաստ. No 8, էջ 19–20:*
- 28 Տե՛ս ԴԴ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, ք. 86:
- 29 Նույն տեղում, գ. 27, ք. 34–35, գ. 28, ք. 185:
- 30 Տե՛ս նույն տեղը, գ. 19, ք. 86–87: *Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915–1918, փաստ. No 67, էջ 109, No 108, էջ 183, No 156, էջ 268–270:*
- 31 ԴԴ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, ք. 44:
- 32 Տե՛ս նույն տեղը, ք. 42:
- 33 *Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915–1918, doc. No 67, p. 109.*
- 34 Դ. Չափրիյանի գեկուցարի ամբողջական թվանդակությունը տե՛ս *Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительств. Серия 3 (1914–1917), т. VII, ч. 2, Москва–Ленинград, 1935, փաստ. No 765, էջ 455–458: Պողոս Լուրարի գեկուցարի ամբողջական թվանդակությունը տե՛ս *Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915–1918, փաստ. No 93, էջ 152–154. Раздел Азиатской Турции, փաստ. No 45, էջ 138–139:**
- 35 Տե՛ս նույն տեղը, փաստ. No 40, էջ 135, 136; No 45, էջ 138–139:
- 36 «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, փաստ. No 17, էջ 12:
- 37 *Раздел Азиатской Турции, փաստ. No 43, էջ 138: Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительств. Серия 3 (1914–1917), т. VII, ч. 1, Москва–Ленинград, 1935, փաստ. No 375, էջ 489: Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915–1918, փաստ. No 35, էջ 63, No 42, էջ 71:*
- 38 Տե՛ս *Акопян С. М., նշվ. աշխ., էջ 205:*
- 39 Տե՛ս *Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915–1918, փաստ. No 90, էջ 142:*
- 40 ԴԴ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, ք. 45:
- 41 *Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915–1918, doc. No 90, p. 142.*
- 42 Տե՛ս *Международные отношения в эпоху империализма, т. VIII, ч. 1, փաստ. No 371, էջ 478:*

- Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915–1918, փաստ. No 35, էջ 63: Տե՛ս "Кавказское слово", Тифлис, 1916, 29 сентября.
- 43 Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, փաստ. No 42, էջ 27:
- 44 Նույն տեղում, փաստ. No 15, էջ 11, No 19, էջ 14:
- 45 Տե՛ս Раздел Азиатской Турции, փաստ. No 50, էջ 141–142:
- 46 Տե՛ս Նույն տեղը, փաստ. No 52, էջ 142–143:
- 47 Այդ բանակցությունների վերաբերյալ դիվանագիտական զրազրությունը Ռուսաստանի արտգործնախարար Ս. Ազադունվի և Փարիզում, Լոնդոնում ու Դոմոնոս ռուսական դեսպաններ Ա. Իզվոլսկու, Ա. Բենկենդորֆի ու Մ. Գիրսի միջև տե՛ս ԳԳ ԶԶԿԲ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 439, ք. 1–6:
- 48 Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, փաստ. No 37, էջ 25, No 49, էջ 34: Տե՛ս նաև Акopian С. М., նշվ. աշխ., էջ 208–210:
- 49 † Տե՛ս Bayur Y. H., նշվ. աշխ., էջ 70:
- 50 † Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, փաստ. No 39, էջ 26: Տե՛ս նաև Акopian С. М., նշվ. աշխ., էջ 211:
- 51 † Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. No 221, էջ 381–384: Տե՛ս նաև Արզումանյան Մ. Վ., նշվ. աշխ., էջ 674:
- 52 · Համաձայնագիրը ստորագրել էին Լոնդոնում ռուսական դեսպան Ա. Բենկենդորֆը, Սեժ Բրիտանիայի արտգործնախարար Է. Գրեյը և Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնը: Համաձայնագրի ամբողջական բովանդակությունը տե՛ս Сборник договоров России с другими государствами (1856–1917), էջ 425:
- 53 Տե՛ս Bayur Y. H., նշվ. աշխ., էջ 82–83:
- 54 † «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, փաստ. No 43, էջ 30:
- 55 Տե՛ս Акopian С. М., նշվ. աշխ., էջ 213:
- 56 «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, փաստ. No 42, էջ 28:
- 57 Նույն տեղում, էջ 29:
- 58 Տե՛ս Նույն տեղը, փաստ. No 43, էջ 31, No 45, էջ 32:
- 59 Տե՛ս Նույն տեղը, փաստ. No 55, էջ 38–39:
- 60 Նույն տեղում, փաստ. No 60 և 61, էջ 50–53: Տե՛ս նաև Կիրակոսյան Ջ. նշվ. աշխ., էջ 441: Акopian С. М., նշվ. աշխ., էջ 216–221:
- 61 † «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, փաստ. No 60 և 61, էջ 50–53:
- 62 Սեժ–ժան–դե Մորիենը (Saint-Jean-de Maurienne) երկաթուղային կայարան էր ֆրանս–իտալական սահմանի մոտ:
- 63 Martens G. Fr. de, Nouveau recueil général de traités, 3 sér., t. 12, Lpz., 1923–1924, p. 573.
- 64 Տե՛ս Պելլերյան Ա., Զրանսա և Հայկական հարցը առաջին համաշխարհայինի տարիներում (1914–1918), «Պատմա–բանասիրական հանդես», Երևան, 1990, No 2, էջ 38:
- 65 Տե՛ս Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915–1918, փաստ. No 214, էջ 380:
- 66 Տե՛ս Նույն տեղը, փաստ. No 215, էջ 382–383; No 220, էջ 395–396; No 229, էջ 419:
- 67 Տե՛ս Նույն տեղը, փաստ. No 220, էջ 393–397:
- 68 «Դորիզոն», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 19:
- 69 Տե՛ս Դովհաննիսյան Լ. Օսմանյան կայսրության «ժառանգության» բաժանման խնդիրը և Հայկական հարցը 1915–1917 թթ., «Հայկական հարց: Հայկական հարցի միջազգայնացման 120–ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (Նոյեմբեր, 1998)», Երևան, 2000, էջ 121–125:
- 70 Ավետիսյան Զրանտ, նշվ. աշխ., էջ 9:
- 71 Georgia and the War. Zurich, 1916: Գրքույկի հիմնական դրույթները Զովի. Հակոբյանի թարգմանությամբ և վերլուծությամբ տպագրվել են «Մշակ» թերթի 1917 թ. 197–204 համարներում: Տե՛ս նաև Աղոնց Եիկողայոս, Հայկական հարցը և զերմանական ծրագրերը (ռուս. թարգմ.): Երկեր չորս հատորով, հ. Ա. Հայկական հարց: Կազմող՝ Պ. Դովհաննիսյան: Թարգմանիչ՝ Վ. Կիլոյան, Երևան, 1996, էջ 59–62:
- 72 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1917, սեպտեմբերի 25–27:

- 73 Ադոնց Լիկոզայու, Հայկական հարցը և գերմանական ծրագրերը: Երկեր չորս հատորով, հ. Ա. Հայկական հարց, էջ 61:
- 74 Տե՛ս Корсун Н. Г., Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк, Москва, 1946, էջ 21:
- 75 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 428, ց. 1, գ. 160, ք. 12, 15, 23:
- 76 Տե՛ս История первой мировой войны. 1914–1918, т. 1, էջ 393:
- 77 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, ք. 1–2:
- 78 Տե՛ս նույն տեղը, ք. 3:
- 79 Տե՛ս История первой мировой войны. 1914–1918, т. 1, էջ 389:
- 80 Տե՛ս "Кавказское слово", Тифлис, 1914, 31 декабря.
- 81 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, ք. 8–9: Հարությունյան Ա. Սարիզամիչի ճակատամարտի դերը Կովկասը թուրքական ներխուժման վտանգից փրկելու գործում (1914 թ. դեկտեմբեր), «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1967, No 2, էջ 99–100:
- 82 Տե՛ս Арутюнян А. О., նշվ. աշխ., էջ 147–149:
- 83 Karabekir K., Cihan habine neden girdik, nasil girdik, idare ettik? Kitap I, Istanbul, 1938, s. 490.
- 84 Տե՛ս «Աշխատանք», վան, 1915, No 16: Арутюнян А. О., նշվ. աշխ., էջ 176:
- 85 Տե՛ս Աղայան Ծ. Պ., նշվ. աշխ., էջ 402: Չելեայան Ա., Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը. կենսագրական ակնարկ, Երևան, «Արևիկ», 1990, էջ 304–320: Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, «Կախս», 1996, էջ 433–449:
- 86 Арутюнян А. О., նշվ. աշխ., էջ 198:
- 87 Զաղվածքն ըստ Ներսիսյան Մ. Գ., Խրիմյան Հայրիկի դիմումը Լիկոզայ Երկրորդին (1907 թ.) և արխիվային այլ նյութեր Հայկական հարցի ու հայ կամավորական շարժման մասին (1912–1915 թթ.), «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1993, No 1–2, էջ 166:
- 88 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 736: Ллойд Джордж Д., նշվ. աշխ., էջ 6, 12:
- 89 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 102, ք. 37: Կամավորական ջոկատների կազմակերպման աշխատանքների մասին մանրամասն տե՛ս Հայ կամավորական խմբերի կարգադրիչ մարմնի 1915 թ. փետրվարի 17-ի հավելվածությունը ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 87, ք. 18–24:
- 90 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. No 135, էջ 330–332:
- 91 Զաղվածքն ըստ Լազեան Գ. Հայաստան և Հայ դատը հայկառու յարաբերություններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 174: Борян Б., նշվ. աշխ., էջ 350–351:
- 92 Ղորղանեան Գ. Հայերու մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազմա-ճակատին վրայ (նիւթեր պատմութեան համար), «Հայրենիք», Բոստոն, 1927, No 11, էջ 108–109:
- 93 Палеолог М., նշվ. աշխ., էջ 128:
- 94 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 43, ց. 1, գ. 83, ք. 17: Արզումանյան Մ. Վ. նշվ. աշխ., էջ 265:
- 95 Տե՛ս Арутюнян А. О., նշվ. աշխ., էջ 355–357: Акопян С. М., նշվ. աշխ., էջ 171:
- 96 Նույն տեղում, էջ 158:
- 97 Տե՛ս Арутюнян А. О., նշվ. աշխ., էջ 357:
- 98 Գեներալ-լեյտենանտ Պեչկովը պաշտոնավարեց մինչև 1917 թ. հունվարի 18-ը: Նրան հաջորդեցին գեներալ-լեյտենանտ Ղրյազիկը, ապա՝ գեներալ-մայոր Ռոմանովսկի-Ռոմանկոն: 1917 թ. ապրիլի 24-մայիսի 2 ժամանակահատվածում, մինչև ժամանակավոր կառավարությունը կհաստատեր նոր վարչակազմը, ընդհանուր-նահանգապետի պաշտոնը զբաղեցնում էր գեներալ-մայոր Տերմենը:
- 99 ՀՀ ՀԶԿՊ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 290, ք. 1:
- 100 Տե՛ս Акопян С. М., նշվ. աշխ., էջ 172:
- 101 Տե՛ս Հարությունյան Ա. Հ., Ֆարսկան և ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճված տերիտորիայում 1915–1917 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1971, No 3, էջ 63:
- 102 «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, հավելված IV:
- 103 ՀՀ ՀԶԿՊ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 290, ք. 2:

- 104 Նույն տեղում, ք. 3:
105 Раздел Азиатской Турции, էջ 208–209: Տե՛ս նաև Bayur Y. H., նշվ. աշխ., էջ 82:
106 Նույն տեղում, էջ 85:
107 Նույն տեղում, էջ 82:
108 Քաղվածքն ըստ նշվ. աշխ., նույն տեղում:
109 Քաղվածքն ըստ Арутюнян А. О., նշվ. աշխ., էջ 342–343:
110 Քաղվածքը՝ նույն տեղում:
111 Լազեան Պ., Հայաստան և Հայ դատը հայնոսու յարաբերութիւններու լոյսին տակ, էջ 185–186:
112 Տե՛ս նույն տեղը, էջ 186–189:

**ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՅԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՈՐՏՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԱՏՅԱՆ
ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*§ 1. Արևմտյան Հայաստանը Ժամանակավոր կառավարության
ազգային քաղաքականության ոլորտում*

Թուրքիայից «պատերազմի իրավունքով գրավված մարզերում» Չինվորական ընդհանուր-նահանգապետության ստեղծումը ոչ միայն պատերազմական իրադրությանը, այլև նվաճված տարածքներում տիրող տնտեսական և հասարակական-քաղաքական ծանր կացությանը թելադրված քայլ էր: Ցարական կառավարությունն Արևմտյան Հայաստանում ստեղծեց մոր կառավարչաձևի հիմքերը, բայց հնարավորություն չունեցավ զարգացնելու իր քաղաքականությունը՝ Շուտով, 1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակով Ռուսաստանում տապալվեց ցարիզմը: Երկիրն անցավ ժողովրդավարության: Ռուսաստանում ստեղծված գործադիր իշխանության նոր մարմինը՝ Ժամանակավոր կառավարությունը, ցարական իշխանություններից ժառանգած պետական բազմաթիվ խնդիրների լուծման համար որդեգրել էր նոր՝ ժողովրդավարական սկզբունքներ: Այսպես, Ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականության հիմքում դրվեցին ազգերի ինքնորոշման հիման վրա հաշտության հասնելու, խղճի ազատության և ազգային սահմանափակումների վերացման սկզբունքները: Դրանք իրական երաշխիքներ էին ստեղծում ժողովրդավարության և ազգերի իրավահավասարության պայմաններում Արևմտյան Հայաստանում կայուն քաղաքացիական կարգ ապահովելու համար:

Ռուսական բազմազգ կայսրությունում զարթոնք ապրող ազգային կյանքի պայմաններում Հայկական հարցը ստացավ նոր հնչելություն: Այն,

քացի միջազգային դիվանագիտական հարց լինելուց, դարձավ նաև բոլոր հայերին հուզող կենսական հարց, որը պայմանավորված էր հայ իրականության ներքին կյանքի ոգվարին ու հակասական խնդիրներով: Դրանց շարքում հատկապես կարևորվում էին Արևմտյան Հայաստանի վերաշինման և ինքնավարության, նրա քաղաքացիական իշխանության ենթակայության և կառուցվածքի, ժողովրդավարական, հանրապետական կարգերի հաստատման, հին իշխանավորներին նոր՝ դեմոկրատ պաշտոնյաներով փոխարինելու, հայերի ինքնավաշտպանության և ազգային զորամասերի ձևավորման, հայկական ոստիկանության ստեղծման, մահմեդական հրոսակների զինաթափման, գաղթականների տուևղարծի, միասնական ազգային գաղափարախոսության ձևավորման, Հայկական հարցի լուծման համար հայկական և միջազգային կազմակերպությունների ներգրավման հիմնահարցերը: Դրանց լուծման հրատապությունից էլ բխում էին հայ հասարակությանը համակած զգոնությունն ու սպասման զգացումը: Արտահայտելով հայ ժողովրդի ակնկալիքները նոր իշխանություններից՝ Գևորգ 5-րդ Ամենայն հայոց կաթողիկոսը 1917 թ. մարտի 23-ին Ժամանակավոր կառավարությանը հղած հեռագրում հույս էր հայտնում, որ «վերանորոգված Ռուսաստանը, քաջարի դաշնակիցների համաձայնությամբ, կստեղծի նախկին տաճկական վիլայեթների վրա ազատ Հայաստան»¹:

1917 թվականին, շարունակվող պատերազմի պայմաններում, Հայկական հարցը դեռևս պահպանում էր պատերազմական հարցի բնույթը: Պատերազմը շարունակելու և հաղթական վախճանին հասցնելու վճռակալությունը, Արևմտյան Հայաստանն անբարձրադաս ենթարկելու քաղաքականությունը, որը Ժամանակավոր կառավարությունը ժառանգել էր իր նախորդից՝ ցարիզմից, այժմ լիովին համապատասխանում էին հայ ժողովրդի շահերին: Հայ հասարակական-քաղաքական շրջաններում պատերազմի ավարտի հետ էին կապում Թուրքիայից Արևմտյան Հայաստանն ազատագրելու և այն եվրոպական մեկ կամ մի քանի տերությունների հովանավորության ներքո ինքնավար դարձնելու հույսերը: Հենց այս հանգամանքն էլ հանդիսանում էր Հայկական հարցը 1917 թվականին բնութագրող հատկանիշներից մեկը:

Ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականության ոլորտում Հայկական հարցն առանձնանում էր իր ռազմավարական կարևորությամբ: Ռուսական պետության շահերի տեսանկյունից Արևմտյան Հայաստանը ոչ միայն Ռուսաստանի անդրկովկասյան սահմանների պատ-

վարն էր, այլև դրանք դեպի հարավ ընդարձակելու համար ցամաքային ամենահարմար հենակետը: Իսկ հայկական տարրի պահպանումը դիտվում էր որպես բռնակցված տարածքներում խաղաղության և կարգուկանոնի հաստատման, հասարակական ու քաղաքական կյանքի զարթոնքի գրավական:

Արևմտյան Հայաստանում Ժամանակավոր կառավարության առաջին քայլերն ուղղված էին քաղաքացիական իշխանության ձևավորմանը:

Ընդունելով արտաքին գործերի նախարարության առաջարկությունն Արևմտյան Հայաստանի՝ պատերազմի իրավունքով գրավված մարզերի կառավարման մասին՝ 1917 թ. ապրիլի 6-ին Ժամանակավոր կառավարությունը Կովկասյան բանակի շտաբի հերթապահ զեներալ Եվզենի Վիշինսկուն օժտեց Հայաստանի կառավարման հատուկ լիազորություններով²: Ապրիլի 26-ին հրապարակվեց «Թուրքահայաստանի կառավարման մասին» Ժամանակավոր կառավարության ապրիլի 25 (մայիսի 6)–ի որոշումը, որով Թուրքահայաստանի համար, մինչև հաշտության պայմանագրով նրա մարզերի վիճակի վերջնական լուծումը, հաստատվեց նոր կարգավիճակ: Ռուսական զորքերի գրաված Թուրքահայաստանի, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի տարածքի քաղաքացիական կառավարումը վերցվեց կովկասյան իշխանությունների, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության իրավասությունից և անմիջականորեն դրվեց Ժամանակավոր կառավարության տնօրինության տակ: Արևմտյան Հայաստանն ուղղակիորեն ենթարկվեց ռուսական պետությանը և նրա կենտրոնական կառավարությանը: 1916 թ. հունիսի 5-ի ժամանակավոր օրենքով Արևմտահայաստանի շրջանների ընդհանուր–նահանգապետին տրված իրավունքների իրագործումը Ժամանակավոր կառավարությունը հանձնեց իր նշանակած ընդհանուր կոմիսարին և նրան ենթակա վարչական մարմիններին: Արևմտահայաստանի ընդհանուր կոմիսարն ունենալու էր քաղաքացիական հարցերի գծով օգնական: Վերջինիս զեկուցագրով ընդհանուր կոմիսարը կարող էր Ժամանակավոր կառավարությանն առաջարկություններ ներկայացնել 1916 թ. հունիսի 5-ի ժամանակավոր կանոնադրության մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու նպատակով: Գյուղական և քաղաքային բնակչությունն օգտվելու էր ներքին ինքնավարության իրավունքներից և այլն³: Որոշումը ստորագրել էին նախարարների խորհրդի նախագահ իշխան Ե. Լվովը և արտաքին գործերի նախարար Պ. Միլյուկովը:

«Թուրքահայաստանի մասին» ապրիլի 25-ի որոշմամբ Արևմտյան Հայաստանն, առաջին անգամ իր պատմության մեջ, ուղղակիորեն ենթարկ-

վեց ռուսական պետությանը՝ ճանաչվելով նրա առանձին վարչական միավորը: Համաշխարհային պատերազմի պայմաններում հայկական տարածքների գրավումը և կցումը պատերազմում հաղթող ու արդեն ժողովրդավարական դարձած Ռուսաստանին՝ պատմական տվյալ իրադրության մեջ աներկբայորեն դրական կարևոր քայլ էր Մայր հայրենիքում արևմտահայերի ֆիզիկական անվտանգությունն ապահովելու, Արևմտյան Հայաստանում կյանքը վերակենդանացնելու ուղղությամբ: Հայերի համար ոգևորիչ էր նաև այն փաստը, որ «Թուրքահայաստանի մասին» որոշմամբ Ժամանակավոր կառավարությունը Թուրքիայից «պատերազմի իրավունքով գրաված մարզերում» պաշտոնապես ճանաչեց Արևմտյան Հայաստանի գոյությունը, հստակորեն սահմանեց նրա կառավարման կարգը:

Արևմտյան Հայաստանն ուղղակիորեն Ժամանակավոր կառավարությանը ենթարկելը բացատրվում էր նրա կովկասյան մարմնի՝ Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի (ՕՋակոմ)՝ Թուրքահայաստանի կառավարումն իրականացնելու անկարողությամբ, հայկական տարածքների ճակատագրի հարցում վրաց մենշևիկների և կովկասյան մահմեդականների գրաված բացահայտ թուրքամետ դիրքորոշմամբ, որի հետևանքով կարող էին վտանգվել Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի նվաճումները: Եվ վերջապես, Ժամանակավոր կառավարության քայլը թելադրվում էր «Կովկասյան բանակում հակապատերազմական, հեղափոխական շարժումների ուժեղացմամբ», Արևմտյան ռազմաճակատում Ռուսաստանի անհաջողությամբ: Այդ հանգամանքները ոչ միայն տազնասպ էին առաջացնում կառավարական շրջաններում, այլև ստիպում Արևմտյան Հայաստանի կառավարումը կենտրոնացնել ուժեղ ձեռքերում⁴:

«Թուրքահայաստանի մասին» որոշման մեջ առաջ քաշված հարցերն արմատական զարգացում ստացան կառավարության հետագա գործունեության ընթացքում: Ժամանակավոր կառավարության՝ մայիսի 15-ի հրամանով Արևմտահայաստանի ընդհանուր կոմիսար նշանակվեց գեներալ-լեյտենանտ Պ. Ավերյանովը, քաղաքացիական հարցերի գծով կոմիսարի տեղակալ՝ հայտնի հասարակական, ազգային գործիչ բժիշկ Հ. Ջավրիյանը: Պետրոգրադում Կովկասի հարցերի գծով լիագոր Վ. Նաբոկովի վրա դրվեցին Ժամանակավոր կառավարության և Արևմտյան Հայաստանի ընդհանուր կոմիսարի միջև անմիջական հարաբերությունների կարգավորման պարտականությունները:

1917 թ. մայիսի 15-ին Ժամանակավոր կառավարությունն ընդունեց արտաքին գործերի նախարար Մ. Տերեշչենկոյի նախագիծն Արևմտյան Հայաստանի ընդհանուր կոմիսարի հետագա գործունեության վերաբերյալ: Ելնելով երկրի տնտեսության վերականգնման ու զարգացման շահերից, ինչպես նաև հանուն արդարության և երիտթուրքերի իրականացրած տեղահանության ու կոտորածների հետևանքով հայերի ոտնահարված իրավունքների վերականգնման՝ Ժամանակավոր կառավարությունը հանձնարարում էր ընդհանուր կոմիսարին՝ միջոցներ ձեռք առնել գլխավորապես Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները Ռուսաստան գաղթած հայերով նորից բնակեցնելու ուղղությամբ: Ընդ որում, արգելք չպետք է հարուցվեր այդ վիլայեթներում բնակվելու ցանկություն ունեցող թուրքահպատակ հայերի դեմ: Ինչ վերաբերում է թուրքերին, քրդերին և լազերին, ապա, նպատակ չունենալով առաջացնել որևէ բարդություն տեղում մնացածների նկատմամբ, բայց և այնպես, թիկունքի ռազմական ապահովության նպատակով և ազգամիջյան հնարավոր բարդությունները կանխելու համար կառավարությունը հանձնարարեց ընդհանուր կոմիսարին չթույլատրել մինչև հատուկ կարգադրություն նրանց վերադարձը, ովքեր հեռացել էին թուրքական գործերի հետ⁵:

Այսպիսով՝ Ժամանակավոր կառավարությունն Արևմտահայաստանի ընդհանուր կոմիսարիատի առաջնահերթ խնդիրներն էր համարում արևմտահայերի ֆիզիկական գոյության ապահովումը և իր հայրենիքից հարկադրաբար հեռացած հայ բնակչության վերադարձի կազմակերպումը, որը պետք է իրագործվեր հայկական կազմակերպությունների՝ նախօրոք մշակած պլանի համաձայն:

1917 թ. հուլիսին հաստատվեց Ռուսաստանի պետական սահմանն Արևմտյան Հայաստանում, որն անցնում էր Սյուրմենե, Բաբերդ, Դերջան (Մանախաթուն), Վերին Արաքս, Խնուս, Մանազկերտ, Արճեշ, Բերկրի, Սարայ գծով: Շուտով Արևմտյան Հայաստանը վարչական բաժանման ենթարկվեց: Ընդհանուր կոմիսար Պ. Ավերյանովի իրամանով կազմվեց երեք շրջան՝ Էրզրումի՝ Էրզրում, Դերջան, Աշկալա, Մանսուր, Հասան-կալա գավառներով, Խնուսի՝ Ալաշկերտ, Ղարաքիլիսա, Դիադին, Խնուս, Մանազկերտ, Բայազետ գավառներով և Վանի՝ Բերկրի, Արճեշ, Սարայ, Բաշկալա, Խոշաբ, Վան գավառներով: Նշված շրջաններում կոմիսարներ նշանակվեցին Յա. Գլտոսովը, Կ. Համբարձումյանը, Ն. Նիկոլենկոն: Իսկ շրջանների կոմիսարների օգնականներ նշանակվեցին հայազգի գործիչներ⁶:

Իր առջև դրված նպատակներն իրագործելու ճանապարհին Ընդհանուր կոմիսարիատը բախվում էր և՛ ներքին, և՛ արտաքին դժվարությունների: Ռուսական բարձրաստիճան զինվորականության շրջանում քերահավատ էին ժամանակավոր կառավարության և տեղերում նրա մարմինների նկատմամբ, ինչը դառնում էր անտարբերության, օրինազանցության և ծառայողական պարտականությունները չկատարելու պատճառ: Բացի այդ, գրավված վայրերում զինվորական կոմիտեները հաճախ անտեղի միջամտում էին Ընդհանուր կոմիսարիատի տեղական կառավարման մարմինների ու պաշտոնյաների գործունեությանը: Այս մթնոլորտում, ըստ էության, ձայնողվեց Արևմտյան Հայաստանում մարզային ու քաղաքային ոստիկանության ստեղծումը, որը նախաձեռնել էր ժամանակավոր կառավարությունն օգոստոսի 31-ի օրենքով՝ նպատակ ունենալով կիսառազմականացված այդ ուժի միջոցով ամրապնդել Կովկասյան բանակի թիկունքը:

√ Արևմտյան Հայաստանում ժամանակավոր կառավարության քաղաքականությանը խոչընդոտում էր նաև Անդրկովկասում տիրող անիշխանությունը, որը ծանրանում էր պատերազմական իրադրությամբ, երկրամասում հասարակության կյանքի վատթար պայմաններով, ինչպես նաև հուլիսյան դեպքերից հետո երկրում, այդ թվում և ռազմաճակատներում խորացող հակապատերազմական տրամադրություններով: Վերջին հանգամանքը, հատկապես, աղետաբեր էր: «Մինչև իսկ գործին նվազ տեղյակ մարդկանց համար պարզ էր, որ ռուսական բանակը կորցրել էր իր ռազմունակությունը, և որ միայն ժամանակի խնդիր է, թե երբ այն կլքի ռազմաճակատը և զենքը ձեռքին կշարժվի երկրի խորքը՝ դեպի տուն,— ցավով հիշում էր գորավար Գ. Ղորղանյանը և ավելացնում,— արդեն բոլշևիկների հուլիսյան ապստամբությունից հետո սկսեցին լուրեր տարածվել, թե զորքը պիտի պահպանի ճակատը մինչև հոկտեմբերի 1-ը, ապա տուն երթա: Կովկասյան ճակատի վրա ռուսների տարած հաղթանակների հետևանքով գրավված էր Թուրքահայաստանի մեծ մասը: Այժմ, ճակատի լքումը կվճռեր ոչ միայն Թուրքահայաստանի, այլև ամբողջ Անդրկովկասի բախտը: Ի դերս կելնեին բոլոր նվաճումները, որոնք նվիրագործվել էին կովկասյան բանակի անօրինակ հերոսությամբ և անթիվ զոհերով:

Անհրաժեշտ էր լքողներն խորհել կովկասյան բանակի գրաված հայկական շրջանների պաշտպանության մասին, եթե մի օր ռուսները դատար-

կելին դրանք ու հեռանային: Հայ և թուրք մենամարտության ահավոր խնդիրն էր, որ կարող էր ծագել»⁷:

Ռուսական զորքերն առանց երաշխիքների հանելը վտանգավոր էր տարածաշրջանի կորստի և հայերի բնաջնջման տեսանկյունից: Խնդրի վերաբերյալ ռուսական Ժամանակավոր կառավարության տեսակետը վճռականորեն արտահայտվեց Բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդների համառուսական առաջին համագումարի 1917 թ. հունիսի 9-ի նիստում ռազմական ու ծովային նախարար Ա. Ֆ. Կերենսկու ելույթում. «Մենք չենք կարող հեռանալ Հայաստանից, որովհետև այդ ժամանակ Հայաստանից ոչինչ չի մնա: Նա կկորչի քրդերի ու թուրքերի հրի ու սրի տակ»⁸: Արևմտյան Հայաստանին սպառնացող թուրքական հարձակման վտանգի պայմաններում ռուսական զորքերի՝ այնտեղ թողնելը կենսական անհրաժեշտություն էր: Հենց այդ ոգով անցավ հայ պատգամավորների ժողովը Թիֆլիսում, որը բացվեց 1917 թ. հուլիսի 29-ին 50 պատգամավորների մասնակցությամբ: Ժողովը, Անդրկովկասի Առանձին կոմիտեի անդամ Մ. Պապաջանյանի բնութագրմամբ, հրավիրվել էր քննարկելու «հայ գյուղացիությանը սպառնացող սովի, Կովկասյան զորաճակատի հնարավոր բացման, ռուսական զորքի ընդհանուր նահանջի և դրանց հետևանքների, հայաբնակ վայրերում զլուխ բարձրացրած քրդական և թուրքական ավազակությունների հարցերը», որոնք պահանջում էին «ամենակտրուկ ու ամենահիմնական միջոցներ»⁹: Մասնավորապես, հայ ժողովրդի գոյապահպանման հրատապ խնդրի վերաբերյալ ժողովն ընդունեց հետևյալ բանաձևը. «Ընդունելով, որ հայ ռազմական ուժը շատացնելն ընդհանուր ռազմաճակատը պահպանելու միջոցներից մեկն է, որը հեղափոխական պետության պաշտպանության համար անհետաձգելի անհրաժեշտություն է՝ խորհրդակցական ժողովը գտնում է, որ հայ զինվորական խորհուրդը պետք է ամեն կերպ աջակցի այս գործում ռուսական զինվորական շտաբին»¹⁰: Ռուսական Կովկասյան բանակի՝ պատերազմի իրավունքով գրաված մարզերի պաշտպանությունը ենթադրում էր Կովկասյան ռազմաճակատի ամրապնդում, Կովկասյան բանակի մարտունակության վերականգնում: Այդ հանգամանքից ելնելով՝ 1917 թ. ընթացքում Ժամանակավոր կառավարությունը և ռուսական բանակի գերագույն հրամանատարությունը փոխեցին ազգային զորամիավորումների նկատմամբ իրենց վերաբերմունքը, քանի որ հանձինս դրանց կարելի էր ձեռք բերել առավել կարգապահ, մարտունակ և հուսալի ռազմական ուժ:

Այսպես, հետզհետե, դեպքերի տրամաբանական ընթացքը ծնեց նոր հայկական զորամասերի ստեղծման և արդեն գոյություն ունեցողների ստվարացման անհրաժեշտությունը:

✓ 1917 թ. ապրիլից սկսվեց բանակի ազգայնացման գործընթացը¹¹: Նրա իրավական հիմքը Ժամանակավոր կառավարության «Բանակի ազգայնացման հիմնական դրույթները» օրենքն էր, որում շեշտվում էր ազգայնացված բանակն արտաքին թշնամուց հայրենիքի պաշտպանությանը, բանակում համախմբվածության ու կարգուկանոնի հաստատմանը, բարոյական սպառախանատվության բարձրացմանը նպատակաուղղելու և դրանց հիման վրա ազգային կորպուսներ ստեղծելու գաղափարը¹²: Ա. Ֆ. Կերենսկու՝ հայկական հրաձգային վեց գումարտակները գնդերի վերածելու և դիվիզիաներ կազմելու մասին 1917 թ. հունիսի 7–ի կարգադրությանը հետևեց ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատար Լ. Կոռնիլովի՝ 1917 թ. հուլիսի 28–ի հրամանը հայկական զինվորական միավորում՝ բանակային կորպուս կազմակերպելու մասին¹³: Տակավին ապրիլի 19–ին Կովկասյան ռազմաճակատի վերաբերյալ հրամանի հիման վրա ռազմաճակատի շտաբ էր ուղարկվել Թ. Նազարբեկյանը՝ բանակի զորամասերի ազգայնացումն իրականացնելու նպատակով¹⁴: Միաժամանակ, ամենուր կազմակերպվում էին հայկական զինվորական հանձնաժողովներ, որոնց նպատակը հայ զինվորականներին Կովկասյան ռազմաճակատ տեղափոխելն էր: «Հիմնական զինվորական կազմակերպության՝ հայկական կորպուսի ստեղծման գաղափարը, որը միավորում էր ժողովրդին ռազմական տեսակետից, հասունացել էր ոչ միայն ռազմաճակատը պաշտպանելու, այլև հայերի ֆիզիկական գոյությունը պահպանելու տեսանկյունից,— գնահատելով խնդրի կարևորությունը՝ գրում էր ռուսական բանակի գեներալ Պ. Կուլեբյակինը,— հայ զինվորները գիտակցում էին, որ ռազմաճակատի մերկացման հետևանքով կրկին ահազանում էր արյունով ներկված Հայաստան դարավոր թշնամու ներխուժման վտանգը: Հայ զինվորները գիտակցում էին նաև, որ Կովկասյան ճակատի կորուստը հավասարազոր էր հայ ժողովրդի կործանմանը»¹⁵:

Հայկական ազգային զորամասերի ստեղծման գաղափարն Արևմտյան Հայաստանում Ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականության կարևոր կողմերից մեկն էր, որը հետապնդում էր Կովկասյան ռազմաճակատն ամրապնդելու, ռուսական բանակի մարտունակությունը բարձրացնելու և հարձակողական գործողությունները խթանելու նպատակներ:

Հայ հասարակության ակնկալիքների տեսանկյունից ազգային գործունակները, մասնավորապես՝ հայկական կորպորացիան, ոչ միայն վստահելի ուժ էին դառնալու թուրքական ներխուժմանը դիմագրավելու գործում, այլև հանդիսանալու էին հայ ժողովրդի անվտանգության պահպանման, այնուհետև հայոց անկախ պետականության ստեղծման հիմնական ռազմական ուժն ու երաշխավորը:

Այսպիսով՝ Արևմտյան Հայաստանի ռուսական անեքսիան և Ժամանակավոր կառավարության ջանքերով այնտեղ Ընդհանուր կոմիսարության ստեղծումը, ըստ էության, Հայկական հարցի լուծման նպատակ էին հետապնդում: Երկրում քաղաքական կայունության դեպքում Ընդհանուր կոմիսարությունը կարող էր ամուր հիմք դառնալ արևմտահայերի ֆիզիկական գոյության ապահովման, Արևմտյան Հայաստանի ինքնավարության համար:

Փետրվարյան հեղափոխությունից հետո թե՛ ավանդական ազգային և թե՛ հեղափոխությամբ ծնունդ առած հայկական կուսակցություններից ու քաղաքական հոսանքներից յուրաքանչյուրը որոշակի վերաբերմունք ունեւր Արևմտյան Հայաստանի խնդրի նկատմամբ: Հայ ազգային կուսակցությունները պաշտպանում էին Ժամանակավոր կառավարության նվաճողական քաղաքականությունն այնքանով, որքանով այն համընկնում էր հայ ժողովրդի ազատագրական ձգտումների, Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հետ:

1917 թ. մարտ–ապրիլին «Մշակ» թերթի շուրջը ստեղծվեց «առաջադիմականների» հայ կադետների¹⁶ Հայ ժողովրդական կուսակցությունը: Այն, հրապարակախոս պատմաբան և հասարակական գործիչ Դ. Անանունի բնորոշմամբ, «ազգային կյանքով հետաքրքրվող ձեռնարկատերերի ու բուրժուական մտավորականների կուսակցություն էր»¹⁷ և Փետրվարյան հեղափոխության անմիջական ազդեցությամբ ծնված միակ նորաստեղծ քաղաքական ուժը հայ իրականության մեջ: Հայ ժողովրդական կուսակցությունը Հայկական հարցը համարում էր միջազգային հարց և նրա լուծումը կապում միջազգային վեհաժողովի հետ: Նրա խնդիրն էր՝ աշխատել, որպեսզի այդ հարցը լուծվեր համաձայն արևմտահայերի ցանկության¹⁸:

Ազգային հարցում կուսակցությունը պահանջում էր, որպեսզի Անդրկովկասի հայաբնակ վայրերում հայերը ստանան լայն քաղաքական տարածքային ինքնավարություն՝ իր օրենսդրական մարմնով՝ մնալով Ռուսաստանի անբաժան մասը¹⁹: Փաստորեն, Հայ ժողովրդական կուսակցության համար Հայկական հարցը Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցն

էր, իսկ Արևելյան Հայաստանի առկա վիճակը դիտվում էր որպես ազգային հարց: Դրանով շեշտվում էր Հայկական հարցի միջազգային բնույթը: Կուսակցությունը պաշտպանում էր Ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականությունը՝ Արևմտյան Հայաստանի ռուսական անեքսիան գերադասելով Թուրքիայի կազմում ինքնավարություն ունենալուց «ոչ այն պատճառով, որ վերջինս ազգային հարցի լուծման լավագույն մեթոդն է, այլ այն, որ Հայկական ավտոնոմիա ասածը՝ Թուրքահայաստանի փեշերում, չի կարող տևական և ապահով ապագա ունենալ»²⁰: Հայ ժողովրդական կուսակցությունը համոզված էր, որ Հայկական հարցի արդարացի լուծման համար նրա հիմքում պետք է դնել ազգերի ինքնորոշման սկզբունքը և ոչ թե «հաշտություն առանց բռնակցումների ու ռազմատուգանքների» կարգախոսը²¹: Ճիշտ է, կուսակցությունը խստորեն առանձնացնում էր Արևմտյան Հայաստանում տեղական ինքնավարության, իսկ կովկասահայերի համար հարցի լուծման տարածքային ինքնավարության եղանակները, բայց կարևորում էր նաև Հայաստանի միավորումը: Կուսակցությունը գտնում էր, որ հայերի միավորման ընթացքը շատ հեռու է ավարտման փուլից, որ թուրքական տիրապետությունից Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցը նոր միայն գործնական հողի վրա է դրվել:

Հայ ժողովրդական կուսակցությունը, հատկապես հուլիսյան դեպքերից հետո, ջերմորեն պաշտպանում էր Ազգային ժողով հրավիրելու գաղափարը, որը համարում էր հայ քաղաքական ուժերին միավորելու և Հայկական հարցը վերջնականապես լուծելու միակ միջոցը²²:

Հայկական հարցի լուծման իր ուրույն տարբերակն էր առաջարկում հայ Սահմանադիր-ռամկավար կուսակցությունը, որը հիմնադրվել էր 1908 թվականին: 1915 թ. Մեծ եղեռնից հետո կուսակցության ղեկավար մարմինները հաստատվել էին Եգիպտոսում, ապա՝ տեղափոխվել Փարիզ, սակայն քաղաքական այս ուժի ծրագրերում գլխավորը Հայաստանի երկու հատվածների ապագայի հարցերն էին: Փետրվարյան հեղափոխության հաղթանակը նոր լիցք հաղորդեց սահմանադիր-ռամկավարների գործունեությանը: Արևմտյան Հայաստանի ասյազան կապելով ռուսական հեղափոխության բարեհաջող վախճանի, այսինքն՝ Ռուսաստանում սահմանադրական հանրապետության հաստատման հետ՝ Սահմանադիր-ռամկավար կուսակցությունը տեսնում էր այդ պետության սահմաններում Հայկական հարցի լուծման հետևյալ տարբերակները. առաջինը՝ Հայկական հարցի լուծումն էր Ռուսական դեմոկրատական պետության մեջ, որի դեպքում տարածքային

ինքնավարության խնդիրը դառնում էր երկրորդական, երկրորդը՝ նկատի էր առնում Ռուսական հանրապետության ֆեդերատիվ կառուցվածքի տարբերակը, որի դեպքում Հայաստանի տարածքային ինքնավարությունը հրամայական անհրաժեշտություն էր դառնալու²³: Երրորդ տարբերակի համաձայն՝ Արևելյան Հայաստանն ընդգրկվելու էր Ռուսական դեմոկրատական պետության սահմաններում, որպես նրա ինքնավար անդամներից մեկը, իսկ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ դրվում էր անկախ պետության ստեղծման պահանջը:

— Փետրվարյան հեղափոխության լուրը ոգևորությամբ ընդունեց Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը: 1917 թվականը նրա համար դարձավ բուռն գործունեության ժամանակաշրջան: Կուսակցությունը պաշտպանում էր «կատերազմ մինչև հաղթական ավարտ» կարգախոսը, որի իրագործման մեջ էր տեսնում Արևմտյան Հայաստանը թուրքական տիրապետությունից ազատագրելու ուղին²⁴: Հայ հեղափոխական դաշնակցությունը գտնում էր, որ Հայաստանի ռուսական անբասիայից հետո Ռուսական դեմոկրատական պետության հռչակած ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա կարելի է ապահովել Հայկական հարցի արդարացի լուծումը²⁵: 1917 թ. հոկտեմբերին Թիֆլիսում կայացած կուսակցության կովկասյան երկրային ժողովը ողջունեց Ժամանակավոր կառավարության քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում, մասնավորապես՝ Ընդհանուր կոմիսարության ստեղծումն այնտեղ՝ «միանգամայն անհրաժեշտ համարելով կոմիսարիատի առաջնությունը և անմիջական կապը կենտրոնական կառավարության հետ»: Ժողովի մասնակիցները հայտնեցին վճռականություն՝ պայքարել «Թուրքահայաստանը վարչապես Կովկասին միացնելու դիտավորությունների դեմ, որը նկատվում էր կովկասյան զանազան շրջաններում»²⁶:

Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության գործունեության մեջ ևս Հայկական հարցի լուծումը հիմնական խնդիրներից մեկն էր: Փետրվարյան հեղափոխությունից հետո կուսակցությունը շարունակում էր պայքարել Արևմտյան Հայաստանի ինքնավարության համար՝ ըստ այդմ շեշտելով Ռուսաստանում ժողովրդավարական կարգերի հաստատման, ազգային հիմնախնդիրներն ինքնորոշման սկզբունքի հիման վրա լուծելու անհրաժեշտությունը:

Արևմտյան Հայաստանի հարցում գրեթե նույն տեսակետն ունեին վերակազմյալ հնչակյանները, որոնք 1917 թ. վերջերին առանձնացան հայ սահմանադիր-առակավար կուսակցությունից:

Սպեցիֆիկները Հայկական հարցի ծանրության կենտրոնը տեղափոխում էին Ռուսաստան և նրա լուծումը կապում կայսրության ներքին վերափոխումների հետ: Սպեցիֆիկների կուսակցությունը պատերազմը շարունակելու խնդրին մոտենում էր ազգային դիրքերից և պաշտպանում էր Արևմտյան Հայաստանի անբասիայի քաղաքականությունը, որ վարում էր Ժամանակավոր կառավարությունը:

Ինչ վերաբերում է հայ էսեռներին, ս.–դ. մենչևիկներին ու բոլշևիկներին, ապա նրանք խուսափում էին Արևմտյան Հայաստանի ցավոտ հարցի բարձրացումից ու քննարկումից՝ սոցիալական ազատագրումը գերադասելով ազգային-ազատագրական պայքարից²⁷:

Քաղաքական հայացքների և տեսակետների բազմազանությունը հետևանք էր ազգային նպատակներին հասնելու ուղիների ու միջոցների վերաբերյալ տարակարծության: Վերջինս Փետրվարյան հեղափոխության հաղթանակով հռչակված ժողովրդավարության պայմաններում անխուսափելիորեն հանգում էր ազգային շահի վեհ գիտակցությանը: Իսկ այդ շահը հրամայաբար պահանջում էր, որ տարաբախտ հայն ունենա միասնական հայրենիք, մեկ երկիր, որտեղ երաշխավորված լինի ազգի գոյության հիմքերի՝ տարածքի, լեզվի, պատմության, հավաքական կենցաղի, մշակույթի, տնտեսության, ինչպես նաև ժողովրդի պատվի և կյանքի ապահովությունը, որ հայերն օգտվեն ազգային ինքնորոշման ու ինքնավարության իրավունքից: «Մեր արեան հարցն արդեն դրուած է ազատութեան և համաշխարհային խաղաղութեան համար պատերազմող պետութեանց դիվանագիտական սեղանի վրա... Արեան հարցի հետ և այնքան խոշոր՝ դրուած է մեր ժողովրդի առջև և վերաշինութեան հարցը, որուն պետք է լծուին մեր բոլոր ուժերը: Վերաշինութեան ծանրութեան տակ է, որ մենք բոլորս ալ հավաքականորեն պետք է մեր ուսերը տանք և որուն մեջ ոչ ոք պետք է ինքզինքը դուրս հաշուէ»²⁸, — աշխարհասփյուռ արևմտահայերին կոչ էր անում ազգային հերոս Անդրանիկն իր անմիջական ջանքերով հրատարակվող «Հայաստան» քերթի առաջին համարում:

Արևմտահայաստանի վերաշինության, նյութական ու մշակութային արժեքների պահպանության, հայրենի օջախներից բռնագաղթված հայերի Երկիր վերադարձի խնդիրները հանգամանորեն քննարկվեցին 1917 թ. մա-

յիսի 2–11–ը Երևանում կայացած Արևմտահայերի առաջին համագումարում: Համագումարի աշխատանքներին մասնակցում էին 59 պատվիրակ, 400 հյուրեր, այդ թվում՝ հոգևորականներ, գաղթականությանն օգնող ռուսական, անգլիական, ամերիկյան հայանպաստ կազմակերպությունների գործիչներ, ազգային կուսակցությունների ներկայացուցիչներ, գլխավորապես դաշնակցականներ²⁹: Համագումարը նախապատրաստվել էր Անդրանիկի, Արամ Մանուկյանի, Վահան Փափազյանի, Ջապել Եսայանի, Լևոն Շանթի, Փանոս Թերլեմեզյանի և այլ ազգանվեր գործիչների ջանքերով: Համագումարի պատվավոր նախագահ ընտրվեց Անդրանիկը, որը Հայրենիքն ազատ տեսնելու ցանկությամբ համերաշխության և միասնության կոչով դիմեց ներկաներին:

Համագումարի փաստաթղթերից արժանահիշատակ է ժամանակավոր կառավարությանը հղած ողջույնի հեռագիրը, որում հույս էր հայտնվում, որ ազատ Ռուսաստանի ղեմնկրատական կառավարությունը կպաշտպանի իր հռչակած մեծ նշանաբանը՝ փոքր ազգերի ինքնորոշման իրավունքը, այդ թվում և «հայ ժողովրդի դատը քաղաքակիրթ աշխարհի առաջ»³⁰: Հաստատելով, որ, չնայած հայերի բնաջնջման երիտթուրքական քաղաքականությանը, «հայ ժողովուրդը կա և պետք է ապրի իր ազգային քաղաքական տենչանքներն» իրագործելու համար՝ համագումարն ընդգծեց, որ վերաշինությունը պետք է հասկացվի որպես գերազանցապես ազգային քաղաքական գործ, որը պետք է ծառայի աշխարհասփյուռ հայությանը Մայր Հայրենիքում համախմբելու, Հայաստանի վարչական վերակառուցման ու տնտեսական վերաշինության գործին: Կարևորվեցին նաև Կովկասում ապաստանած մոտ 300 հազար արևմտահայ փախստականներին, Միջագետք և այլուր աքսորված, քրդերի ու արաբների մեջ ցրված, Ամերիկայի, Արևմտյան Եվրոպայի և Բալկանյան երկրներում ապաստանած հայերին պատերազմից հետո Երկիր տեղափոխելու խնդիրները: Իր աշխատանքի արդյունքում համագումարն ընդունեց կարևոր որոշումներ արևմտահայերի ֆիզիկական գոյության պահպանման, քայքայված տնտեսության վերականգնման, Հայրենիքի վերաշինության, նոր սերնդի կրթական, ֆիզիկական և քաղաքացիական դաստիարակության վերաբերյալ³¹: Համագումարի վերջին նիստում ընտրվեց Արևմտահայ խորհուրդ, որը զբաղվելու էր Արևմտահայաստանի ճակատագրով, ջարդերից մազապուրծ փրկված ու Կովկասում և Ռուսաստանի այլ վայրերում ապաստան գտած արևմտահայերի գոյապահպանման խնդիրներով: Խորհրդի կարևորագույն

անելիքներից մեկն էլ պետք է լիներ արևմտահայ երիտասարդներից զորամասեր կազմելը և դրանք ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության տրամադրության տակ դնելը: Արևմտահայ ազգային խորհուրդը կազմված էր 15 անդամներից, որոնցից 8-ը դաշնակցական էին, իսկ 7-ը՝ Սահմանադիր-ռամկավար, Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչներ³²: Խորհուրդը դարձավ Կովկասի արևմտահայ գաղթականության գործադիր մարմինը:

Արևմտահայերի առաջին համագումարը կարևոր նշանակություն ունեցավ արևմտահայերի համախմբման, նրանց ընդհանուր շահերի պաշտպանության գործում: Արևմտահայ ազգային խորհրդում Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչները մեծամասնություն էին կազմում: Նկատի ունենալով այդ կուսակցության ազդեցիկ լինելն Արևմտահայ ազգային խորհրդում՝ Դաշնակցության գործիչներից Կ. Սասունին պաշտպանում էր այն կարծիքը, որ ազգային հենց այդ կուսակցությունը պետք է ճանաչվեր որպես արևմտահայերի միակ ներկայացուցիչը և վերահսկիչ ֆունկցիաներ ունենար բոլոր այն գործերի վրա, որոնք տնտեսական, որբանոցային և գաղթականական անվան տակ կարող էին կապ ունենալ արևմտահայերի հետ³³: Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ ազգային քաղաքական ամենահեղինակավոր ուժը, իրոք, ձգտում էր ղեկավարել արևմտահայ Ազգային խորհուրդը: Այդ հանգամանքն ավելի ցայտուն էր դրսևորվում հայկական կուսակցությունների փոխհարաբերությունների տեսանկյունից: Դեռևս 1916 թ. վերջին և 1917 թ. մարտին կայացած միջկուսակցական խորհրդակցություններում ձեռք էր բերվել առաջին հաջողությունն ազգային քաղաքական միասնության ճանապարհին՝ ստեղծվել էր միջկուսակցական մարմին՝ բազմակուսակցական հիմքի վրա: Այն ծառայելու էր թե՛ կովկասահայ հիմնախնդիրների, թե՛ Հայկական հարցի լուծմանը: Բայց, քանի որ 1917 թ. մայիսին ստեղծված Արևմտահայ խորհուրդը չէր կարող իր վրա վերցնել համազգային բոլոր խնդիրների լուծումը, անհրաժեշտ էր հրավիրել ազգային համագումար: Թիֆլիսի միջկուսակցական մարմինն Ազգային բյուրոյի նախագահության և Պետրոգրադի ու Մոսկվայի Հայկական կոմիտեների նախագահներ Ն. Ադոնցի ու Ստ. Մամիկոնյանի մասնակցությամբ սեպտեմբերի 8-ին կայացած նիստում որոշեց մինչև Ազգային համագումարը հրավիրել համախորհրդակցություն: Հայոց ազգային համախորհրդակցությունը կամ Արևելահայոց համագումարը, հրավիրվեց 1917 թ. սեպտեմբերի 27-ին Թիֆլիսում: Նրա նիստերը կայացան սեպտեմբերի 29-ից հոկ-

տեմբերի 13–ը: Համագումարի պատգամավորները ներկայացնում էին հայկական ամենատարբեր քաղաքական հոսանքների, կուսակցությունների, հասարակական, ազգային–մշակութային կազմակերպությունների: Համախորհրդակցությանը մասնակցում էին շուրջ 200 պատգամավորներ, որոնցից 116–ը դաշնակցականներ էին, 35–ը՝ Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչներ, 23–ը՝ սոցիալ–դեմոկրատներ ու հնչակյաններ, 13–ը՝ անկուսակցականներ: Համահավաքի մասնակիցները ներկայացնում էին նաև հասարակության ամենատարբեր խավերին: Նրանց մեջ կային նաև հյուրեր Ռուսաստանի հայաշատ վայրերից: Համախորհրդակցությանը չէին մասնակցում միայն հայ բոլշևիկները, որոնք հանդես եկան գրավոր հայտարարությամբ:

Համախորհրդակցության օրակարգում դրված էին Փետրվարյան դեմոկրատական հեղափոխությամբ ծնված համազգային խնդիրների քննարկման, տվյալ քաղաքական պահի գնահատման, նոր վարչական սահմանագծման, զենստվային (ինքնավար) իշխանություններ հիմնելու, պարենավորման, գաղթականության, ազգամիջյան հարաբերությունների, Անդրկովկասյան հատուկ կոմիտեի նկատմամբ վերաբերմունքի, Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության, դպրոցների ազգայնացման և այլ հարցեր³⁴: Համախորհրդակցության մասնակիցներն իրենց արծարծած հարցերով արտահայտում էին ողջ հայ ժողովրդի մտահոգությունն ազգի պատմական ճակատագրով: Պատահական չէ, որ համախորհրդակցությունը կարևորեց ժողովրդի բոլոր ուժերը համախմբելու գաղափարը, շեշտեց Կովկասյան ռազմաճակատի պաշտպանությունն ամրապնդելու անհրաժեշտությունը: Համահավաքի մասնակիցները հանգեցին այն եզրակացության, որ ռուսական պետությունն իր կառուցվածքով պետք է լինի դաշնակցային հանրապետություն, որ Անդրկովկասը պետք է ենթարկվի նոր վարչական բաժանման՝ ստեղծվեն Ռուսաստանի հետ կապված երեք ազգային (հայկական, վրացական, թաթարական) ինքնավար միավորներ զենստվային կառավարմամբ:

Հայոց ազգային համախորհրդակցությունն ընտրեց երկու ղեկավար մարմին՝ Ազգային ժողով և Ազգային խորհուրդ: Ազգային ժողովը հայկական կուսակցությունների, խոշոր քաղաքների ազգաբնակչության, արևմտահայերի և տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված մարմին էր, որը կոչված էր քննելու հայոց ազգային կյանքի հիմնախնդիրները և կատարելու օրենսդրական պարտակա-

նություններ³⁵: Ազգային խորհուրդը կազմված էր կուսակցությունների ներկայացուցիչներից: Այն հանդիսանում էր Ազգային ժողովի գործադիր մարմինը և զբաղվելու էր ընթացիկ խնդիրներով: Ազգային խորհուրդը բաղկացած էր 15 անդամներից, որոնցից կուսակցությունների ներկայացուցիչներ էին 12-ը, անկուսակցականներ՝ 3-ը: Ինչպես Արևմտահայ ազգային խորհրդում, այստեղ ևս մեծամասնություն էին կազմում Հայ հեղափոխական դաշնակցության անդամները: Հայոց ազգային համախորհրդակցությունը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից մեկն էր: Նրա որոշումները, ինչպես նաև հայ իրականությանն ուղղված մարմինների՝ Ազգային ժողովի և Հայոց ազգային խորհրդի ստեղծումը նոր և հաստատուն քայլեր էին ազգային ինքնագիտակցության ամրապնդման, համազգային խնդիրների լուծման ճանապարհին: Փետրվարյան դեմոկրատական հեղափոխությունից հետո թե՛ ավանդական ազգային-դեմոկրատական, թե՛ հեղափոխությամբ ծնունդ առած կուսակցությունների ու քաղաքական հոսանքների համար տիրապետող էր դառնում սեփական ազգային ծրագրերով քաղաքական մենաշնորհի ձեռքբերումը: Այնքան էր նաև, որ հայ քաղաքական ուժերը ձգտում էին միավորել պատմաաշխարհագրական տարանջատվածությամբ խորթացած քաղաքական ու տնտեսական շահերը և հասնել միասնության համազգային խնդիրների լուծման գործում:

§ 2. Մեծ փերությունների մոփեցումները Հայկական հարցին և հայ պապվիրակների գործունեությունը Ռուսաստանում, Եվրոպայում և Ամերիկայում

Հայկական հարցի արդար լուծման գործում հայ հասարակական-քաղաքական շրջաններում մեծ հույսեր էին կապում Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կառավարությունների ու քաղաքական գործիչների հետ: Եվ դա պատահական չէր: Նախ՝ Գերմանիայի, Թուրքիայի և նրանց դաշնակիցների դեմ մղվող պատերազմում անգլո-ֆրանս-ռուս-իտալական խմբավորումը շահարկում էր թուրքահպատակ ժողովուրդների ազատագրության խնդիրը: Արևմտահայության շահերի տեսանկյունից օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ ստորագրված անգլո-ֆրանս-ռուսական համաձայնագրերը գերադասելի էին

թուրքական բռնակալությունից: Խնդրին նպաստում էր այն հանգամանքը, որ 1917 թ. ապրիլից գերմանա-ավստրիական խմբավորման դեմ պատերազմի մեջ մտավ մինչ այդ չեզոք ԱՄՆ-ը, որը մեծ կշիռ ուներ ռազմաքաղաքական հարցերի լուծման գործում: Բացի այդ, դեռևս 1916 թ. աշնանն աշխարհի քաղաքական մթնոլորտը հազեցած էր մոտալուտ խաղաղության մասին տարածված լուրերով, որոնք բխում էին գերմանական և ամերիկյան կառավարություններում նախապատրաստվող համապատասխան հայտարարություններից: Ավելին՝ 1916 թ. նոյեմբերի 15-ին Փարիզում հրավիրվել էր Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իտալիայի դաշնակից երկրների ներկայացուցիչների քաղաքական խորհրդակցություն, որում որոշվել էր մոտալուտ խաղաղության հարցը հանգամանորեն քննարկել դաշնակից պետությունների՝ Պետրոգրադում հրավիրվելիք կոնֆերանսում:

Քաղաքական այս մթնոլորտում մեծ տերությունների կառավարող շրջաններում նրանց պետական շահերին համապատասխան որոշակիացվում էր վերաբերմունքը նաև Հայկական հարցի նկատմամբ: Նկատի էր առնվում ազատ ապրելու հայ ժողովրդի դարավոր իղծը, շեշտվում էր եղեռն ապրած հայության ազգային անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունը, Հայաստանի և հայ ժողովրդի ապագան դիտարկվում էր թույլ ու ճնշված ժողովուրդների ազատագրության, նրանց ազգային իրավունքների ճանաչման և հարգման տեսանկյունից: Հայկական հարցը լայնորեն քննարկվում էր ոչ միայն Ռուսաստանի, այլև Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և ԱՄՆ-ի պետական մարմիններում, հասարակական-քաղաքական կազմակերպություններում, դիվանագիտական ոլորտներում: Հայաստանի ինքնորոշման իրավունքի, թուրքական յաթաղանից փրկված արևմտահայերի շահերի պաշտպանության հայտարարություններով հանդես եկան Արիստիդ Բրիանը, Ժորժ Կլեմանսոն, Ռոբերտ Մեսլիը, Լյուդ Ջորջը, Լորդ Ջորջ Զերզոնը, Վուդրո Վիլսոնը, Ջեյմս Ջերարդը, Վիտտորիո Օռլանդոն և այլոք: Ֆրանսիայի կառավարության ղեկավար և, միաժամանակ, արտաքին գործերի նախարար Բրիանը հայտարարեց. «Երբ հատուցման ժամը գա, Ֆրանսիան չի մոռանա հայ ազգի դժբախտություններն ու տանջանքները և, համաձայնության գալով իր դաշնակիցների հետ, կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու նրա կյանքը խաղաղության և պոռազադիմության մեջ»³⁶: Իսկ ֆրանսիական քաղաքական և պետական գործիչ Կլեմանսոն, որը Ֆրանսիայի կառավարության ղեկավարի պաշտոնում հաջորդեց Ա. Բրիանին, ավելացնում էր, որ «դաշնակիցները

մտադրել են հայ ժողովրդի ճակատագիրը վճռել Մարդկության և Արդարության բարձր սկզբունքներին համապատասխան»³⁷: Մեծ Բրիտանիայի կառավարության ղեկավար Լլոյդ Ջորջը, բնորոշելով պատերազմի նպատակները, շեշտում էր. «Արաբիայի, Հայաստանի, Միջագետքի, Սիրիայի և Պաղեստինի վերաբերյալ մեր դատավճռում պարտավոր ենք ճանաչել նրանց դրության տարբերությունը»: «Բրիտանիան չի մոռանա իր պատասխանատվությունը մարտիրոսացած հայ ազգի հանդեպ»³⁸, — համոզված էր նա: Այո, իրոք մեծ էր Բրիտանիայի պատասխանատվությունը XIX դարի վերջին — XX դարի սկզբին արևմտահայության կյանքում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններում: Նույն գործչի վկայությամբ՝ անգլիական պատվիրակությունը Հայկական հարցն օգտագործեց սոսկ Ռուսաստանի դեմ պայքարելու և Թուրքիայում իր դիրքերն ամրապնդելու համար: Եթե չլիներ այդ միջամտությունն, ապա Արևմտյան Հայաստանի մեծ մասը դեռ 1878 թ. Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով կանցներ Ռուսաստանին³⁹: Հասկանալով այդ՝ Բրիտանիայում, սակայն, քաջ անգամ չկատարեցին՝ պաշտպանելու արևմտահայերի իրավունքները, որովհետև դա չէր բխում մեծ տերության աշխարհակալական ձգտումներից: Նույնը շարունակվում էր նաև այժմ, միայն այն տարբերությամբ, որ Մեծ Բրիտանիայի Արևելյան քաղաքականությունը շոսայրոեն պատվում էր հայանպաստ հայտարարություններով: Դրանցից մեկի հեղինակը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության խորհրդական լորդ Մեսիլն էր: Ելնելով այն հանգամանքից, որ պատերազմում Անտանտի երկրների հաղթանակի դեպքում ուժի մեջ էին մտնելու օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ 1916 թ. ստորագրված գաղտնի համաձայնագրերը, նա գրում էր. «Այս ամենից հետո արժե՞, արդյոք, խոսել հայերի նկատմամբ դաշնակիցների քաղաքականության փոփոխության մասին: ... Ես կրկին հավատացնում եմ, որ մենք պատրաստ ենք վերջ դնել այն չարաշահումների, որոնց բախվել է Հայաստանը, և կանխել դրանց կրկնության հնարավորությունը»⁴⁰: Իսկ անգլիացի դիվանագետ լորդ Քերզոնը, ընդհանրացնելով Արևելյան խնդրում Անտանտի երկրների քաղաքական շահերը, Թուրքիայի նկատմամբ նրանց քաղաքականությունն ուրվագծել էր վեց սկզբունքներում, որոնցից մեկը նախատեսում էր «ինքնավար Հայաստանի հիմնում»⁴¹:

Իտալացիները ևս համոզվածն արտահայտեցին, որ հայ ժողովուրդը կունենա ապահով ապագա: Կառավարության ղեկավար Օռլանդոն

հայտարարեց. «Հայտներ հայ ժողովրդին, որ ես նրանց գործը համարում եմ իմ գործը»⁴²:

Հայտարարություններում մեծ տերությունների խոստումներն առատ էին, բայց դա չէր նշանակում, թե նրանք գործնականում շահագրգռված էին Հայկական հարցի արդարացի լուծմամբ: Թուրքական տիրապետությունից Հայաստանի և հայ ժողովրդի ազատագրման կարգախոսը շահավետ էր նրանց, քանի դեռ շարունակվում էր պատերազմը Գերմանիայի, Թուրքիայի և վերջիններիս դաշնակիցների դեմ: Հակառակորդներին պարտության մատնելուց հետո Անտանտի տերությունները և նրանց դաշնակից երկրները ձեռնամուխ էին լինելու զավթած տարածքներում իրենց դիրքերի ամրապնդմանը: Քաղաքական այս գործելակերպը բնորոշ էր նաև ԱՄՆ–ին:

Հայկական հարցում ԱՄՆ–ի կառավարության դիրքորոշումը հստակեցվեց 1917 թ. ապրիլին՝ օսմանյան կառավարության հետ դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո: Երևի, ԱՄՆ–ը խզեց իր հարաբերությունները Թուրքիայի հետ, բայց նրան պատերազմ չհայտարարեց: Մյ փոքր ավելի ուշ՝ 1918 թ. հունվարի 8–ին հրապարակվեցին մախազահ Վուդրո Վիլսոնի «Տասնչորս կետերը»՝ ծրագրային ուղեբժը խաղաղության, հետպատերազմյան աշխարհի քաղաքական կարգավորման վերաբերյալ: Այդ փաստաթղթի դրույթներից 12–րդը վերաբերում էր Օսմանյան կայսրությանը և ուրվագծում էր ԱՄՆ–ի դիրքորոշումը Հայկական հարցում: Դրա համաձայն՝ «ժամանակակից Օսմանյան կայսրության թուրքական մասերը պետք է ապահովված լինեն հուսալի ինքնիշխանությամբ, բայց և այն ազգերը, որոնք գտնվում են թուրքական գերիշխանության ներքո, պետք է ապահովվեն կյանքի հաստատուն երաշխիքներով և ինքնավար զարգացման հնարավորությամբ»⁴³: Այս դրույթի հիմքի վրա զարգացվեց ԱՄՆ–ի խաղաղության ծրագրի՝ Թուրքիայի ասիական տիրույթներին վերաբերող հատվածը. «Անհրաժեշտ է ազատել Օսմանյան կայսրության հպատակ ազգերին ճնշման ու անիշխանության վիճակից: Դա ենթադրում է՝ ամենամեծագույն ինքնավարություն Հայաստանին և քաղաքակիրթ ազգերի հովանավորության հաստատումը Պաղեստինի, Սիրիայի, Միջագետքի և Արաբիայի նկատմամբ»⁴⁴, — ասված էր ծրագրում: Սակայն այդ ծրագիրը գործնական հիմքի վրա չդրվեց: Շուտով, ԱՄՆ–ի պետական շահերին համապատասխան, Վ. Վիլսոնի «Տասնչորս կետերը» ենթարկվեցին փոփոխության: Արդեն 1918 թ. հոկտեմբերի 14–ին դրանց մեկնաբանություններում Հայկական հարցն այլ ձևակերպում ստացավ. Կոկկասը դիտվում էր որպես Թուրքիայի հիմնահարցի մի մասը, զարգացվում էր սևծովյան նեղուցների ու «թուրքական, պարսկական, ռուսական

Հայաստանի միավորման» և Կոստանդնուպոլիս–Անատոլիա–Հայաստան–Անդրկովկաս ամերիկյան միասնական մանդատի գաղափարը: Այն իրագործելու ձգտումն ԱՄՆ–ի կառավարությանը մղում էր թուրքամետ դիրք գրավելու⁴⁵:

Նշված երկրներում, ինչպես նաև Դանիայում, Շվեյցարիայում, Բելգիայում և Կանադայում քաղաքական եռանդուն գործունեություն էին ծավալել հայանպաստ կազմակերպությունները, որոնց նպատակներից գլխավորն Անտանտի երկրների ջանքերի միավորումն էր ի նպաստ միացյալ Հայաստանի ստեղծման⁴⁶:

Հայկական հարցում մեծ տերությունների հայանպաստ հայտարարությունները հույս էին ներշնչում հայ հասարակական–քաղաքական շրջանակներում, որ թուրքական տիրապետությունից ազատագրված Արևմտյան Հայաստանի բռնակցումը Ռուսաստանին առաջին քայլն էր հայկական պետականության վերստեղծման ճանապարհին, որ հաջորդը լինելու էր Ռուսաստանի և նրա դաշնակիցների ջանքերով հայերի ազգային իղծերի իրագործումը՝ ինքնավար Հայաստանի ստեղծումը Ռուսաստանի կամ մեծ տերությունների միացյալ հովանավորության ներքո: Չնայած Արևմտյան Հայաստանի ռուսական զինագրավումից հետո Հայկական հարցում վճռորոշ ձայնը պատկանում էր Ռուսաստանին՝ ակնհայտ էր, որ նրա դաշնակիցները շահագրգռված էին Հայկական հարցի միջազգային կարգավորմամբ և խնդրի լուծումը կիսելու էին ռուսական կառավարության հետ: Դա լավ հնարավորություն էր հայ գործիչների համար իրական հիմքերի վրա դնել տերությունների վերահսկողությամբ ինքնավար Հայաստանի ստեղծման ծրագիրը: Թիֆլիսի Հայոց Ազգային բյուրոյի՝ 1917 թ. մարտ–ապրիլին կայացած նիստերի արձանագրությունները վկայում են, որ հայ հասարակական–քաղաքական շրջանակներում միջազգային հովանավորությունը Հայկական հարցի լուծման անհրաժեշտ նախապայման էին դիտում՝ նկատի ունենալով Ռուսաստանի քաղաքական անկայուն դրությունը, երկրում ժամանակավոր կառավարության իշխանության թույլ լինելը, Կովկասում և Ռուսաստանի այլ մասերում ցրված հայ գաղթականների՝ դեպի Երկիր վերադարձի ճանապարհին ռուսական իշխանությունների հարուցած արգելքները, ռուսական բանակի քայքայումը և Կովկասյան ռազմաճակատից նրա հեռացումը, ինչը հայերին զրկում էր անվտանգության գլխավոր երաշխիքից⁴⁷: Հաշվի առնելով Արևմտյան Հայաստանի խնդրի կարևորությունը՝ Հայոց Ազգային բյուրոն 1917 թ. մարտի 26–ի նիստը նվիրեց Արևմտյան Հայաստանի համար կենտրոնական մարմնի ստեղծման, կազմակերպվելիք քաղաքական

իշխանության ենթակայության և ղեկավարման, հարևանների հետ հարաբերությունների հարցերի քննարկմանը: Նիստում առաջ քաշվեց համիալանության, կոմկասյան թաթարների և թուրքերի կապի, Թուրքիային հայկական հողերի բռնակցման վտանգի հարցը: Ազգային բյուրոն ընդունեց Ալ. Խատիսյանի առաջարկած բանաձևը. «1. Արևմտյան Հայաստանի նոր վարչակարգի ստեղծման գործը նպատակահարմար է կապել Պետրոգրադի և ոչ թե ՕՋախոմ–ի հետ, 2. ընդհանուր նահանգապետ Ռոմանովսկի–Ռոմանկոյի փոխարեն նշանակել հայերի վերաբերյալ հրահանգներ ստացող մի հատուկ մարդ, 3. աշխատել, որպեսզի գործի մեջ չմտնեն վրացիներն ու թուրքերը, և 4. Կերենսկու մոտ գործուղել Հ. Չավրիյանին»⁴⁸: Վերջինս Ազգային բյուրոյի մարտի 19–ի նիստում այսպես էր ձևակերպել Ռուսաստան իր գործուղման նպատակն ու ազգային հեռանկարների հետ կապված չլուծված հարցերը. «Պետք է Պետրոգրադում աշխատեն, որպեսզի Հայկական հարցի մասին մի նկատ լինի, թեև չհայտարարվի, և եթե կարելի է, ճանաչվի օտար պետությունների ներկայացուցիչների կողմից: Եթե հարցնեն, թե հայերը ինչ են ուզում, կարո՞ղ են ասել — անեքսիա, թե՞ ոչ: Կարո՞ղ են պնդել, որ Կիլիկիան էլ մտնի անեքսիայի մեջ»⁴⁹: Այս հարցերը միանգամից լուծել հնարավոր չէր: Պահանջվում էր երկար ժամանակ, տևական ու հետևողական աշխատանք, ինչպես նաև՝ Հայկական հարցում Ռուսաստանի կառավարության դիրքորոշման ու գործնական քայլերի համաձայնեցում դաշնակիցների հետ:

Եվրոպայում իր գործունեությունն էր շարունակում Հայկական ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի գլխավորությամբ: Պատվիրակությունը ջանում էր մեծ տերությունների աջակցությամբ նախապատրաստել Հայկական հարցի քննարկումը, այն ներկայացնել պատերազմի ավարտից հետո հրավիրվելիք հաշտության վեհաժողովին: Ելնելով քաղաքական իրադրությունից՝ պատվիրակությունն անիրատեսական էր համարում Արևմտյան Հայաստանի անկախության պահանջը և որպես Հայկական հարցի լավագույն լուծում պաշտպանում էր Ամտանտի դաշնակցային գորքերի կողմից Հայաստանի գրավման տարբերակը⁵⁰: Ընդ որում, Պողոս Նուբարն այս հարցում գերապատվությունը տալիս էր ֆրանսիական բռնակցման գաղափարին՝ ընդգծելով դեպի Ֆրանսիան ունեցած իր համակրանքը: Նա գտնում էր, որ Ֆրանսիայի հովանավորության ներքո ապագա ինքնավար Հայաստանը կկապվի առաջադիմական, ազատամիտ կարգերի հետ, կարևոր նախապայման, որի երաշխիքները նա չէր տեսնում դե-

մոկրատական Ռուսաստանում: «Մենք հեռու ենք վստահ լինելուց Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների ճակատագրի համար, որոնք կրոնագրավի Ռուսաստանը: Եթե նույնիսկ այդ վիլայեթներին շնորհիվ ինքնավարութուն Ռուսաստանի հովանավորությամբ, միևնույն է, այդ կարգը չի համապատասխանում նրան, ինչը մենք կարող ենք ակնկալել Ֆրանսիայից, մանավանդ որ Հայաստանին սահմանամերձ Ռուսաստանը ռուս վերաբնակիչներով անմիջապես կհեղեղի Հայաստանը»⁵¹, — շեշտում էր նա: Սակայն փաստ էր այն, որ Արևմտյան Հայաստանն անցել էր Ռուսաստանին զենքի ուժով, որ Հայկական հարցի լուծման մեջ վճռորոշ էր լինելու ռուսական կառավարության տեսակետը: Այս պայմաններում հուսալ, թե հաշտության վեհաժողովում Հայաստանը դիվանագիտական պայքարի միջոցով կանցներ Ֆրանսիային, չէր բխում իրականությունից: 1917 թ. հունիսի 12-ին Փարիզի դեպարտամենտին ուղղված իր «Հուշաթերթ Հայկական հարցի և Հայաստանի ազատագրման վերաբերյալ» վերնագրով զեկույցում Պողոս Նուբարն առաջադրում էր թուրքական տիրապետությունից ազատագրված, Կովկասից մինչև Միջերկրական ծով ձգվող հայկական բոլոր հողերն ընդգրկող, մեկ կամ բազմաթիվ տերությունների հովանավորության ներքո գտնվող Ինքնավար Միացյալ Հայաստանի ստեղծման տարբերակը⁵²: «Միացյալ» բառով Պողոս Նուբարը շեշտում էր, որ ապագա Հայաստանն ընդգրկելու էր հայկական վեց վիլայեթների տարածքը և Կիլիկիան, իսկ Ռուսաստանի ու Պարսկաստանի սահմաններում ընդգրկված հայկական հողերը չէին միավորվելու Հայաստանին: Պողոս Նուբարը չէր բարձրացնում Օսմանյան կայսրության մասնատման հարցը և ապագա Հայաստանը տեսնում էր որպես բուֆեր Ռուսաստանի, Պարսկաստանի, Անատոլիայում ապագա թուրքական կայսրության և նոր ինքնավար պետությունների միջև: Փաստաթղթում առաջ էր քաշվում նաև Հայաստանի մանդատի հարցը: Պողոս Նուբարը նախատեսում էր, որ անցման ժամանակահատվածում Հայաստանը հովանավորող տերությունները միասնաբար վերափոխեին հայ հասարակական կյանքն այնպես, որ դրա շնորհիվ Հայաստանն ի վիճակի դառնար ինքնուրույն ղեկավարվելի⁵³:

Պողոս Նուբարի ծրագրում Հայկական հարցը դիտարկվում էր կովկասահայ ազգային հարցից առանձին: Ընդ որում, շեշտվում էր խնդրի միջազգային դիվանագիտական բնույթը: Դաշնակից երկրների դիվանագիտական ոլորտներում այս ծրագիրը բննարկելու դեպքում անխուսափելի էր լինելու Անգլիայի ու Ֆրանսիայի լարված պայքարը Ռուսաստանի դեմ:

Հայ հասարակական-քաղաքական շրջանակներում Հայկական հարցի լուծման տեսանկյունից կարևորում էին մաս ԱՄՆ-ի դերը: Թիֆլիսի Հայոց Ազգային Բյուրոն 1917 թ. ապրիլի 8-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդ Սուրենյանցին հղած գրության մեջ այս առիթով նշում էր, որ ամերիկյան ժողովուրդն ու կառավարությունը «խոշոր նյութական ու բարոյական օգնություն է ցույց տվել և տալիս թուրքահայ ժողովրդին», որ «ներկայումս էլ, միջամտելով համաեվրոպական պատերազմին, ԱՄՆ-ը կարող է իր առանձին դիրքի շնորհիվ խոշոր դեր խաղալ թուրքահայկական հարցի վերջնական վճռի խնդրում»⁵⁴: Այդ նկատառումներից ելնելով՝ Հայոց Ազգային Բյուրոն որոշեց հատուկ առաքելությամբ Ամերիկա ուղարկել արևմտահայ հայտնի գործիչ և օսմանյան պառլամենտի նախկին անդամ Գարեգին Բաստրմաջյանին (Արմեն Գարո): Նրա գլխավոր խնդիրն «ամերիկյան թե կառավարական և թե հասարակական շրջաններում Հայկական դատը պրոպագանդելն էր և կազմակերպելը»⁵⁵: Ծանուցելով կաթողիկոսին Բաստրմաջյանի առաքելության մասին՝ Ալ. Խատիսյանը և Հ. Քոչարյանն Ազգային Բյուրոյի անունից 1917 թ. ապրիլի 8-ի նամակով խնդրում էին Վեհափառին Բաստրմաջյանին տալ անձը հաստատող գրություն, «որի շնորհիվ նա հնարավորություն ունենա հաջողությամբ կատարել իր նպատակի համար անհրաժեշտ դիմումները»⁵⁶: Իսկ ապրիլի 9-ին Հայոց կաթողիկոսին գրած նամակում նույն հարցի վերաբերյալ իր տեսակետը ներկայացրեց Ժողովրդական կուսակցության նախագահ Ս. Հարությունյանը: Հայտնելով Գ. Բաստրմաջյանի՝ Պետրոգրադում գտնվելու և Ռուսաստանի արտգործնախարարության գիտությանը ու աջակցությանը այնտեղից Ամերիկա մեկնելու պլանների մասին՝ Ս. Հարությունյանը Գ. Բաստրմաջյանին զնահատում էր որպես «մեծ համակրանք վայելող» «շատ ազնիվ, խելացի, քաղաքագետ և հմուտ անձնավորություն»: Նա այն կարծիքին էր, որ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի քաղաքական շրջանակների ներքաշումը հայկական «ցավոտ ազգային խնդիրների» մեջ՝ վճռորոշ նշանակություն կունենա Հայաստանի ապագան որոշելու հարցում⁵⁷:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, զնահատելով կատարվելիք աշխատանքի կարևորությունը, 1917 թ. ապրիլի 27-ին հատուկ գրությամբ լիազորեց Գ. Բաստրմաջյանին «անցնել Ամերիկա՝ այնտեղ քաղաքական այլ և այլ շրջաններին և պետական բարձր դիրք ունեցող անձերին մոտիկից ծանոթացնելու Հայկական դատի էության հետ, վաստակելու նրանց համակրությունը, աջակցությունը, նախապատրաստելու հասարա-

կական կարծիքը հոգուտ Հայ դատի և այս բոլորի մասին զեկուցելու Ն. Ս. Օծուբյանը»⁵⁸: Ամենայն հայոց կաթողիկոսը նույն օրը հանձնարարական տվեց նաև Պողոս Նուբարին: Պատվիրակության Ամերիկա ուղարկելը Վեհափառը բացատրում էր համաշխարհային պատերազմին ԱՄՆ-ի մասնակցությամբ, ինչպես նաև «Ռուսաստանի ներքին, խաղաղ մեծ հեղափոխությամբ», որը «նոր, և ինչպես ենթադրելի է, նպաստավոր հանգամանքներ է ստեղծում Հայկական դատի և հարցի լուծման համար»⁵⁹: Բացի այդ, մատնանշվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի հայտարարությունը՝ ճնշված և փոքր ազգերի քաղաքական իրավունքների պաշտպանության մասին: Չեկուցելով Վեհափառին Ռուսաստանի արտգործնախարար Մ. Տերեշչենկոյի, ռուս բարձրաստիճան անձանց հետ իր հանդիպումների և ռուսական կառավարության դիրքորոշման մասին՝ Գ. Բաստրմաջյանը տեղեկացնում էր, որ ռուսական կառավարող շրջանակներում հայ պատվիրակների՝ Միացյալ Նահանգներ մեկնելը «շատ նպատակահարմար գտան» և շեշտեցին, որ «Ամերիկայի կարծիքը և բռնելիք դիրքը մեր հարցի նկատմամբ մեծ կշիռ է ունենալու ապագայում»: Արտգործնախարար Մ. Տերեշչենկոյի և այլ ռուս դիվանագետների կարծիքով, միայն ԱՄՆ-ն է, որ «պիտի կարողանա չեզոքացնել ֆրանսիական ծրագրերը Կիլիկիայի նկատմամբ»⁶⁰,— հայտնում էր Գ. Բաստրմաջյանը Վեհափառին: Հայ գործիչը հայտնում էր նաև Հայկական հարցի նպատակահարմար ու հնարավոր լուծման վերաբերյալ ռուսական կառավարության կարծիքը. «Բուն Հայաստանը (վեց վիլայեթները) և Կիլիկիան միասին կազմելու են մի ինքնավար քաղաքական միություն, որը կդրվի, բոլոր պետությունների համաձայնությամբ, ռուսական պաշտպանության տակ»⁶¹: Հայկական հարցն այս տարբերակով լուծելը բխում էր Ռուսաստանի պետական շահերից, որովհետև այն հնարավորություն պետք է տար այդ պետությանը տնտեսական անմիջական կապ հաստատել Միջերկրածովյան ավազանի և ավելի հեռավոր երկրների հետ, որով միայն «Կոստանդնուպոլսի և Նեղուցների խնդիրը կկորցնել իր հրամայողական նշանակությունը»⁶²: Իսկ տվյալ խնդրում ռուսական պետության շահը համապատասխանում էր հայերի ազգային իղձերին:

Մեծ տերությունները հավատարիմ էին մնում շահադիտական նկատառումներով առաջնորդվելու ավանդական սկզբունքին: Եվ թեև շուայլ էին հայանպաստ խոստումներում, չէին շտապում իրագործել դրանք: Հայկական

հարցի կարգավորումը ձգձգվում էր՝ բախվելով Մերձավոր Արևելքում մեծ տե-
րությունների քաղաքական խոշոր շահերին ու հրատապ խնդիրներին:

ԾԱՆՈԹՎԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 ԳՂԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 151, ք. 14:
- 2 Տե՛ս նույն տեղը, ք. 17–18:
- 3 Տե՛ս նույն տեղը, ֆ. 374, ց. 1, գ. 1, քք. 3–20:
- 4 Մելիքյան Վ. Զ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), էջ 148–149:
- 5 Տե՛ս ԳՂԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111, ք. 130–131: Ավետիսյան Հրանտ, Եջվ. աշխ., էջ 15:
- 6 Տե՛ս նույն տեղը, էջ 15–16:
- 7 Ղորղանեան Գ., Հայերու մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազ-
մաճակատին վրայ (նիւթեր պատմութեան համար), «Հայրենիք», Բոստոն, 1927, No 12, էջ 117–118:
- 8 Զաղվածքն ըստ Ավետիսյան Հրանտ, Եջվ. աշխ., էջ 18:
- 9 ԳՂԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 324 (127), ք. 1:
- 10 Նույն տեղում, ք. 59:
- 11 Տե՛ս ԳՂԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 127, ք. 2–5:
- 12 Տե՛ս Մելիքյան Վ. Հ., Ուսաստանի ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը 1917
թ., «Պատմա–բանասիրական հանդես», Երևան, 1994, No 1–2, էջ 121:
- 13 Տե՛ս ԳՂԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 34, ք. 10:
- 14 Տե՛ս նույն տեղը, ց. 2, գ. 127, ք. 2–5:
- 15 Նույն տեղում, ց. 1, գ. 34, ք. 1–3:
- 16 Կաղետների — (ռուս. конституционные демократы — սահմանադրական դեմոկրատներ, պաշտո-
նապես՝ «ժողովրդական ազատության կուսակցություն»), լիբերալ–միապետական բուրժուա-
զիայի գլխավոր կուսակցությունը Ռուսաստանում: Ստեղծվել է 1905 թ. հոկտեմբերին: Կենտրո-
նական օրգաններն էին «Ռեչ» ("Речь") թերթը և «Վեստնիկ պարտիի Մարոզոնյ սվոբոդի»
("Вестник партии народной свободы") ամսագիրը: Ղեկավար գործիչներն էին Պ. Միխոկովը, Ի.
Պետրունկնիչը, Վ. Նարոկովը, Ա. Շինգարյովը, Ա. Կոյուբակինը, Վ. Մակակովը, Պ. Ստրուկեն, Ֆ.
Ոռոյիչը, իշխաններ Պավել և Պյոտր Ղուզորուկիները, Ա. Կոռնիլովը: Կաղետների ծրագիրը սկզ-
բում նախատեսում էր Ռուսաստանում ստեղծել սահմանադրական և պառլամենտական միապե-
տություն: Սակայն, հաշվի առնելով ժողովրդական զանգվածների ատելությունը ցարիզմի նկատ-
մամբ, կուսակցությունը 1917 թ. մարտին առաջադրեց Ռուսաստանում հանրապետական կարգ
հաստատելու պահանջը:
Կաղետների մասին առավել մանրամասն տե՛ս Великая Октябрьская Революция. Энциклопедия:
издание третье, дополненное. Под редакцией П. А. Голуба и др., Москва, 1987, էջ 212–213:
- 17 Անանուն Գ., Արևելահայերի հասարակական զարգացումը, հ. 3 (1901–1918), Վենետիկ, 1926, էջ 605:
- 18 Տե՛ս ԳՂԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 7, գ. 11, ք. 2: «Մշակ», Թիֆլիս, 1917, ապրիլի 7:
- 19 Տե՛ս ԳՂԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 7, գ. 11, ք. 1–2:
- 20 «Մշակ», Թիֆլիս, 1917, օգոստոսի 20:
- 21 Նույն տեղում, մայիսի 14:
- 22 Տե՛ս նույն տեղը, հուլիսի 21 և 22:
- 23 Տե՛ս «Վան–Տոսպ», Թիֆլիս, 1917, ապրիլի 23:
- 24 «Հորիզոն», Թիֆլիս, 1917, մարտի 5:
- 25 Տե՛ս նույն տեղը, ապրիլի 15:

- 26 Նույն տեղում, հոկտեմբերի 26:
- 27 Տե՛ս Մելիքյան Վ. Դ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), էջ 237–260:
- 28 «Հայաստան», Թիֆլիս, 1917, ապրիլի 16:
- 29 Տե՛ս Նույն տեղը, մայիսի 7:
- 30 Նույն տեղում, մայիսի 26:
- 31 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 32, ց. 1, գ. 12, ք. 151–152; 158–160:
- 32 Տե՛ս «Կերածնունդ», Կոստանդնուպոլիս, 1917, օգոստոսի 14:
- 33 Տե՛ս Սասունի Կ., Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914–1918): Թրքահայոց գաղթաշարժերը եւ անոնց դերը Հայաստանի հանրապետութեան կազմութեան մէջ, Պէլրուք, 1966, էջ 148:
- 34 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17, ք. 1: Ազգային համախորհրդակցության արձանագրությունները, բանածներն ու որոշումները, ընտրությունների կանոնները, պատգամավորների ցուցակները, կանոնադրության նախագծերը, համախորհրդակցության հայտարարությունները, դիմումները, նամակները և դրանց արձագանքները տե՛ս Հայոց ազգային համախորհրդակցությունը, Թիֆլիս, 1917 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր, փաստաթղթեր ու նյութեր, կազմողներ՝ Ռ. Ա. Գրիգորյան, Ա. Մ. Կիրիմյան, խմբագիր՝ Վ. Ն. Ղազախեցյան, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1992, No 1–2:
- 35 Ազգային ժողովը պետք է բաղկացած լիներ 35 անդամներից, որոնցից 25–ը ներկայացնեին կուսակցությունները, 4–ը՝ Պետրոգրադի, Սոսկվայի, Լոր Նախիջևանի և Բաքվի Հայկական կոմիտեները, 1–ը՝ Հայոց կարողիկուսին, 1–ը՝ Արևմտահայ խորհուրդը, 2–ը՝ Օձակոնը և Պետրոգրադում գտնվող զինվորական ու քաղաքական ներկայացուցիչներին:
- 36 Քաղվածքն ըստ Bayur Y. H., նշվ. աշխ., էջ 86:
- 37 Քաղվածքն ըստ The Armenian Genocide in Perspective. Edited by R. G. Hovannisian. Introduction by Terrence Des Pres: Preface by Israel W. Charny, New Brunswick, New Jersey: Transaction Books, Rutgers University, 1986, էջ 31:
- 38 Քաղվածքն ըստ նույն աշխատության:
- 39 Տե՛ս Ллойд Джордж Д., նշվ. աշխ., էջ 390; 540:
- 40 Քաղվածքն ըստ Bayur Y. H., նշվ. աշխ., էջ 87:
- 41 Քաղվածքն ըստ Marashlian L., The London and San Remo Conferences and the Armenian Settlement: the Belated Decisions February–April, 1920 (part I), "The Armenian Review", Boston, 1997, volume 30, No 3–119 autumn, էջ 231:
- 42 Քաղվածքն ըստ The Armenian Genocide in Perspective, էջ 31:
- 43 Նույն տեղում, էջ 32: Վ. Կիլսոնի նախկին խորհրդական զննապետ Հաուզն իր ուշադրավ հուշերում հանգամանորեն ներկայացնում է ապագա հաշտության սկզբունքների և պայմանների մասին ամերիկյան նախագահի հետ ունեցած զրույցները: Տե՛ս Архив полковника Хауза, т. 2, էջ 315–319:
- 44 Քաղվածքն ըստ Gidney J. B., A Mandate for Armenia. By Kent State University Press, Oberlin, Ohio, 1967, էջ 62:
- 45 Архив полковника Хауза, т. 4, с. 220. Никольсон Г., Как делился мир в 1919 г., Москва, 1944, с. 256–257.
- 46 Տե՛ս Marashlian L., The London and San Remo Conferences and the Armenian Settlement, էջ 237:
- 47 Տե՛ս Մելիքյան Վ. Դ. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), էջ 260–276:
- 48 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111, ք. 103–108:
- 49 Նույն տեղում, ք. 103:
- 50 Տե՛ս Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Armeniens dans les archives françaises 1914–1918, էջ 342:
- 51 Նույն տեղում, էջ 343:
- 52 Տե՛ս նույն տեղը, էջ 358–361:

- 53 Տե՛ս նույն տեղը, էջ 361:
- 54 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 154, ք. 1:
- 55 Նույն տեղում:
- 56 Նույն տեղում, գ. 1, գ. 151, ք. 1–2:
- 57 Նույն տեղում, ք. 3–4:
- 58 Նույն տեղում, ք. 24:
- 59 Նույն տեղում, ք. 12–13; 20–21:
- 60 Նույն տեղում, ց. 5, գ. 154, ք. 17–18:
- 61 Նույն տեղում, ք. 18:
- 62 Նույն տեղում:

Միջազգային դիվանագիտության մեջ Հայկական հարցի պատմության 1914–1917 թվականներն ընդգրկող ժամանակահատվածի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ.

1. Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև Ռուսաստանում 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունն ընդգրկող տարիներն առանձին փուլ են կազմում Հայկական հարցի պատմության մեջ: Այդ ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանի ապագայի, արևմտահայերի ճակատագրի նկատմամբ մեծ տերությունների մտեցումների ու քաղաքականության աստիճանական զարգացումը հանգեցրեց նրան, որ հայկական վեց վիլայեթներում բարենորոգումներ իրագործելու քաղաքականությունից տերություններն անցան հայկական տարածքների գրավման ու մասնատման քաղաքականությանը: Ընդ որում, 1915–1916 թթ. ձևավորվեցին և գործնական հիմքի վրա դրվեցին Հայկական հարցի լուծման երկու ծրագրեր՝ արևմտահայերի բնաջնջման, Հայաստանի տարածքը Կոպկասում ստեղծվելիք ֆեդերացիայի պետական միավորների միջև տարրալուծելու թուրք-գերմանական ծրագիրը և մյուսը՝ թուրքական կայսրության, այսպես կոչված, «ժառանգության» մաս կազմող Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև բաժանելու անգլո-ֆրանս-ռուսական ծրագիրը, որին 1917 թ. ապրիլին միացավ Իտալիան:

2. Հայկական հարցում մեծ տերությունների՝ ԱՄՆ-ի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի քաղաքականության մեջ առաջնայինն իրենց նեղ քաղաքական շահերն էին: Տերություններից յուրաքանչյուրը շահագրգռված էր Հայկական հարցի լուծմամբ այնքանով, որքանով դա նպաստելու էր իր ռազմաքաղաքական և տնտեսական ծրագրերի իրագործմանը Մերձավոր Արևելքում:

3. Թե՛ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման, թե՛ հայկական տարածքների մասնատման խնդիրները քննարկելիս տերու-

թյուններից յուրաքանչյուրը հաշվի էր առնում և՛ իր ռազմաքաղաքական դաշնակիցների, և՛ մրցակից պետությունների հետաքրքրությունները: Այդ տեսանկյունից ներկայացված ժամանակահատվածն առանձնանում է միջպետական հարաբերություններում հակասությունների առկայությամբ, ինչը Հայկական հարցի ընթացքի վրա ազդող լուրջ գործոն էր: 1914–1917 թվականներին Հայկական հարցում անմիջական շահեր ունեին Եռյակ համաձայնության երկրներից Ռուսաստանը և Ֆրանսիան, իսկ Եռյակ, այնուհետև՝ Քառյակ միության մեջ այդ տեսանկյունից առաջատարը Գերմանիան էր: Եթե Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման հարցի քննարկումը 1913 թ. ամռանը և աշնանը բացահայտեց, որ Մերձավոր Արևելքում տերությունների միջև հակասություններից զլխավորը ռուս-գերմանական հակամարտությունն էր, ապա առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում անխուսափելիորեն դրսևորվեցին նաև հակասությունները Եռյակ համաձայնության մերսում՝ Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջև Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի մասնատման հարցում:

4. Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրում Ռուսաստանի և Գերմանիայի միջև հակամարտության, այդ հարցում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի գրաված երկրի մի դիրքի, թուրք-գերմանական հակահայկական գործակցության, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի թուրքամետ դիրքորոշման պատճառով մեծ տերություններին չհաջողվեց վերահսկել 1914 թ. հունվարի 26 (փետրվարի 8)–ի ռուս-թուրքական համաձայնագրով նախատեսված բարենորոգումների իրագործումը, որոնք, չնայած իրենց սահմանափակումներին, ընդգրկում ու խոստումնալից էին:

5. Օգտվելով տերությունների թուլավորությունից, օգտագործելով համաշխարհային քաղաքական ճգնաժամի առիթը՝ թուրքական կառավարությունը չեղյալ հայտարարեց Արևմտյան Հայաստանի բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը: Միայն Ռուսաստանի հետ պայմանագրի կնքված լինելու փաստը թուրքական կառավարության համար հեշտացրեց նրա պարտավորություններից հրաժարվելը: Իսկ 1914 թ. նոյեմբերից համաշխարհային պատերազմին, որպես գերմանա-ավստրիական խմբավորման դաշնակից պետություն, Թուրքիայի մասնակցության պատճառով համաձայնագիրը կորցրեց ուժը:

1914 թ. ռուս-թուրքական համաձայնագիրը, Սան Ստեֆանոյի պայմանագրից սկսած, Հայկական հարցի վերաբերյալ նախորդ որոշումների և համաձայնագրերի նման, մնաց թղթի վրա: Միջազգային իրավունքի ուժը

հերթական անգամ անգոր գտնվեց: Արևմտահայությունը զրկվեց բարենորոգումների այն ծրագրից, որի իրագործումը կնպաստեր հայերի բնաջնջման կանխմանը, Արևմտյան Հայաստանում կարգուկարգնի, օրինակաճության հաստատմանը:

6. Հայկական վեց վիլայեթներում բարենորոգումների իրագործումը և դրանց միջոցով Արևմտյան Հայաստանի ինքնավարության ապահովումը, թուրքական տիրապետությունից հայկական տարածքների ազատագրումը հայ ժողովրդի քաղաքական նպատակներն էին 1914–1917 թվականներին: Եթե առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին իրատեսական էր թուրքական կայսրության հայկական վիլայեթներում մեծ տերությունների վերահսկողությամբ բարենորոգումների անցկացման պահանջը, ապա պատերազմի ընթացքում հեռանկարային դարձավ մեծ տերությունների հովանավորությամբ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության ծրագիրը: Իսկ Արևմտյան Հայաստանի մեծ մասի ռուսական անեքսիան հնարավոր դարձրեց թուրքական տիրապետությունից հայկական տարածքների ազատագրումը և Ռուսաստանի կամ մյուս մեծ տերությունների հովանավորության ներքո ինքնավարության հասնելու ազգային նպատակի իրագործումը: Ահա թե ինչու հայ պատվիրակները համապատասխան առաքելություններով միաժամանակ գործում էին և՛ Եվրոպայում, և՛ Ռուսաստանում, և՛ ԱՄՆ-ում:

7. Երիտթուրքական կուսակցության ու կառավարության կողմից հայերի բնաջնջման որոշումն ընդունելու պատճառներն էին՝

ա) Օսմանյան կայսրության ներքին ճգնաժամը,

բ) պետության անկումը կանխելու նպատակով կյանքի կոչված համաթրքության (պանթուրքիզմի) գաղափարախոսությունը, որը ենթադրում էր նախ և առաջ միատարր Թուրքիայի ստեղծում՝ Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների ձուլման կամ բնաջնջման միջոցով: Արևմտահայերը դարձան այդ քաղաքականության առաջին ու զխավոր զոհը: Հայերով բնակեցված տարածքները, որոնք գտնվում էին Փոքր Ասիայի ու Անդրկովկասի միջև, օսմանյան բուրքերի համար խոչընդոտ էին հանդիսանում այդ երկրամասի և անդրկասպյան շրջանների թուրքալեզու ժողովուրդներին միավորելու ճանապարհին: Վերլուծելով էթնիկական հանգույցները վերացնելու խնդրին թուրք գաղափարախոսների տված լուծումները՝ Հ. Հակոբյանը հատկանշական է համարում, որ «հայերի պահանջատիրության դեմ Թուրքիայի կառավարողների զխավոր փաստարկը միշտ եղել է այն, որ երկրի

այս կամ այն մասում նրանք մեծամասնություն չեն կազմել»: Այնուհետև, նա իրավագիտորեն նշում է, որ «տեղահանությունները, կոտորածները և բռնագաղթը նպատակ են ունեցել ջնջել հայրենիքի հետքերը, ուստի ուղղված են եղել հայրենիքի, հետևաբար, ազգային տարածքի իրավունքի դեմ»¹:

8. Դեռևս առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին երիտթուրքական կուսակցությունն ու կառավարությունը մշակել էին Արևմտյան Հայաստանի հայաթափման և արևմտահայության բնաջնջման ծրագիրը: Դրա նախապատրաստմանն ու իրագործմանը նպաստեց կայզերական Գերմանիայի կառավարությունը, որը շահագրգռված էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմամբ: Առաջնորդվելով համագերմանության շահով՝ գերմանական կառավարությունը երիտթուրքերին հուշեց Հայաստանից հայ բնակչությանը տեղահանելու գաղափարը, որը 1915–1916 թթ. դարձավ Հայկական հարցը թուրքական տարբերակով լուծելու՝ արևմտահայությանը բնաջնջելու հիմնական մեթոդը:

9. Ճիշտ է, եվրոպական տերությունները և ԱՄՆ-ը դատապարտեցին արևմտահայերի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ գործված հանցագործություն և դրա ողջ պատասխանատվությունը դրեցին երիտթուրքական կառավարության վրա, բայց որևէ փորձ չկատարեցին թուրքական իշխանությունների ծրագրած ու դաժանորեն գործադրվող ցեղասպան քաղաքականությունն արգելելու կամ, զոհե, սահմանափակելու: Նրանց դիրքորոշման մեջ ողջակիզվող հայության շահերի պաշտպանությունը երկրորդական տեղ էր գրավում: Տերությունները հետամուտ էին միայն իրենց մեղ քաղաքական շահերը պաշտպանելու: Արևմտահայերի ցեղասպանության հարցում կայզերական Գերմանիայի չմիջամտելու, դաշնակից Թուրքիայի հակամարդկային գործելակերպն արդարացնելու և հովանավորելու կեցվածքը, Իտալիայի և Ավստրո-Հունգարիայի անտարբերությունը, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի կողմից հայերին ցուցաբերվող օգնությունը դիվանագիտական բողոքներով սահմանափակելու դիրքորոշումը ոչ միայն չնպաստեցին հայերի սպանդի կանխմանը, այլև բորբոքեցին երիտթուրքական իշխանությունների հակահայկական կրքերն ու կրոնական մոլեռանդությունը: Հայերի ցեղասպանությունը մնաց չկանխված: Հետևաբար՝ պահպանվեց դրա կրկնության վտանգը:

10. Մինչդեռ Թուրքիայում իշխող համաթրքության գաղափարախոսության, կրոնական մոլեռանդության, երկրում ռազմական իրադրության և իրար հաջորդող պարտությունների պայմաններում հայերի ցեղասպանու-

թյան կանխման հարցում ծանրակշիռ դեր կարող էին ունենալ մեծ տերությունների լուրջ ու գործնական քայլերը: Նախ, թեքևս, անհրաժեշտ էր գիտակցել, որ ցեղասպանության ոճիրը համամարդկային վտանգավորություն ունի. այն հանցագործություն է ողջ մարդկության դեմ, անկախ նրանից՝ հանցավոր պետությունը ռազմաքաղաքական դաշնակից է, թե՛ հակառակորդ: Այս տեսանկյունից հայոց ցեղասպանության դատապարտումն ազդեցիկ կարող էր լինել, եթե կատարվեր ոչ թե միայն Անտանտի տերությունների, այլև պատերազմում նրանց միացած երկրների, չեզոք պետությունների և, ինչու չէ, Թուրքիայի դաշնակիցների կողմից: Մինչդեռ, ինչպես դեպքերի ընթացքը ցույց տվեց, ցեղասպանության փաստի սոսկ ճանաչումն ու դիվանագիտական փաստաթղթերում ոճրի դատապարտումն անհրաժեշտ, բայց ոչ բավարար քայլ էր հայերի բնաջնջումը կանխելու կամ դադարեցնելու համար: Պատահական չէ, որ Անտանտի երկրների համատեղ հայտարարությունն իր անհրաժեշտությամբ և դրական կողմերով հանդերձ ունեցավ ավելի շուտ թուրքական իշխանություններին ուղղված նախազգուշացման ազդեցություն: Գործնական առումով այն ոչ թե նպաստեց ոճրագործության կանխմանը, այլ, ցավոք, ավելի զրգռեց թուրքերի հակահայկական և հակամարդկային կրքերը: Այնուհետև, ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը ենթադրում էր ոճրագործության հանցավորների պատժում: Անհերքելի է, որ ցեղասպանության ծրագրումն ու իրագործումը վերահսկող, կազմակերպող և իրականացնող թուրքական պաշտոնյաներին միջազգային հանրության կողմից անձնական պատասխանատվության ենթարկելը նախադեպ կստեղծեր միջազգային հանցագործությունների ճանաչման ու դատապարտման ոլորտում, կնպաստեր XX դարի հետագա ընթացքում կատարված ոճիրների կանխմանը: Սակայն 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հայտարարությամբ հայերին բնաջնջելու համար թուրքական իշխանություններին պատասխանատվության ենթարկելու պարտավորություն ստանձնած Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանն այդ ուղղությամբ ոչ մի գործնական քայլ չկատարեցին: Ավելին՝ ասիական Թուրքիան միասնաբար մասնատելու շահադիտական նկատառումներից ելնելով՝ նրանք չօգտագործեցին Թուրքիայի դեմ Ալեքսանդրեոսի շրջանում ռազմական գործողություններ սկսելու հնարավորությունները 1915–1916 թթ., որոնք, ըստ ծրագրի հեղինակ Անգլիայի ռազմական գործերի նախարար լորդ Հորացիո Հերբերտ Քիչենների, ենթադրում էին Սալոնիկում գտնվող անգլիական պատրաստի և թարմ դիվիզիաների ավիանում Իսկենդերունի ծովածո-

ցում, ապա Դրունք Կիլիկիայից ներխուժում Անտիոքի դաշտ, այնուհետև, հյուսիս–արևելք արշավելով, դրանց միավորումը ռուսական զորքի հետ կամ Դիարբեքիի, կամ էլ Վանի վիլայեթում: Ակնհայտ է, որ այս ծրագրի իրագործումով ավելի, քան Դարդանելի ձախողված արշավանքով, Դաշնակիցների համար հնարավոր էր երկաթյա պատնեշով կտրել Սիրիայում, Սիջազետքում և Կովկասյան ճակատում գործող օսմանյան բանակները սնող երակները, տիրանալ ասիական Թուրքիային, Կոստանդուպոլսին և սևծովյան նեղուցներին, բացի այդ՝ փրկել Կիլիկիայի և Արևմտյան Հայաստանի հայությանը բնաջնջումից, ապահովել խոցելի դարձած Եգիպտոսի պաշտպանությունը: Քիթչեների ծրագրի ձախողման պատճառներում կարևորելով Ֆրանսիայի մերժողական դիրքորոշումը՝ պատմաբան Ե. Գասսլարյանը նշում է. «Ռազմական արշավանքի հետաձգումը կատարվեց ոչ այնքան ռազմական դրդապատճառներով, որքան՝ քաղաքական, քանի որ Ֆրանսիան ոչ մի կերպ չէր կարող հանդուրժել, որ Անգլիան ռազմական հաջողության մեծ հավանականություն ունեցող գործողություններ ձեռնարկի Կիլիկիայում և Սիրիայում, որոնք հղի էին այդ շրջաններում Անգլիայի քաղաքական գերիշխանության հաստատման սպառնալիքով, իսկ Ֆրանսիայի պարագայում՝ դրանք կորցնելու վտանգով: Իր համար վտանգավոր այդ զարգացումների առաջն առնելու համար, և բնավ ոչ «արևմտահայությանն ընդհանուր ջարդերից» գերծ պահելու մտավախությունից էր, որ Ֆրանսիան պարզապես կարողացավ «ստիպել» Անգլիային միառժամանակ (հետագայում՝ ընդմիջտ.— Լ. Հ.) ետ կանգնել մտահղացված արշավանքից»²: Բացի այդ, 1915–1916 թթ. մեծ տերությունները մաս ամուշադրության մատնեցին Մեծ եղեռնը վերապրած հայ տարագիրներին նյութապես օժանդակելու խնդիրը: Դա նշանակում է, որ նրանք առանձնապես շահագրգռված չէին վերականգնել և պաշտպանել ցեղասպանության հետևանքով ոտնահարված մարդկային իրավունքները: Մինչդեռ Անտանտի տերությունները, օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ գաղտնի համաձայնագրերում կարող էին, թերևս, պարտավորվել՝ ասիական Թուրքիայում միմյանց ազդեցության ոլորտները ճանաչելու և հարգելու հետ մեկտեղ դրանցում ապահովել անվտանգության երաշխիքներ և նպաստել հայ տարագիր բնակչության վերադարձին իր հայրենիք Արևմտյան Հայաստան: Նրանք կարող էին մաս կարտավորվել պատերազմի հաղթական ավարտի դեպքում ստիպել պարտված Թուրքիային լիարժեք փոխհատուցում տրամադրել հայերին՝ նրանցից կողոպտված հարստությունների դիմաց:

Այո, հայերի ցեղասպանությունը պետական հանցագործություն էր: Սակայն մինչ օրս էլ XX դարի առաջին ցեղասպանությունը խստագույնս չի դատապարտվել համաշխարհային հանրության կողմից և հանցավոր Թուրքիան պատասխանատվության չի ենթարկվել: Այդ է պատճառը, որ 1915–1916 թթ. բռնությամբ իրենց հայրենիքից տարագրված արևմտահայերի ժառանգներն այսօր էլ զրկված են Արևմտյան Հայաստան վերադառնալու իրավունքից օգտվելու հնարավորությունից ու երաշխիքներից: Համաշխարհային տնտեսական ու քաղաքական կյանքում ազդեցիկ պետությունների և միջազգային կազմակերպությունների գործելակերպում նշված խնդիրների վերաբերյալ 1915–1916 թվականներին և հետագա տարիներին դրսևորված սպասողականության ու զգուշավորության, շահախնդրության ու անմիաբանության հետևանքով Թուրքիայի օսմանյան իշխանությունների այսօրվա իրավահաջորդները հնարավորություն ունեն շարունակել և շարունակում են հայերի ցեղասպանության փաստը ժխտելու, նրա ճանաչումից խուսափելու քաղաքականությունը, որը զուգակցվում է Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական պատմաճարտարապետական հարուստ ժառանգության ոչնչացման կամ հայկական կոթողները թուրքական շինությունների վերածելու ծավալուն աշխատանքների հետ, ինչպես նաև Մեծ եղեռնը վերապրած և տարագրության մեջ մահացած հայերի ապահովագրական գումարներին տիրանալու հավակնությունների հետ: Ահա թե ինչի է հանգեցրել միջազգային ոճիրները չճանաչելն ու չդատապարտելը և ոճրագործներին անպատիժ թողնելը:

11. 1915–1916 թթ. Հայկական հարցի շուրջ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև բանակցությունները, նրանց ներկայացուցիչների հետ հայ գործիչների հանդիպումները ցույց սովեցին, որ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության ծրագրերը խաղաքարտ էին դաշնակիցների համար՝ շոշափելու միմյանց իրական նպատակներն ասիական Թուրքիայում:

12. Ճիշտ է, ասիական Թուրքիայի մասնատման, Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում Ռուսաստանի ու Ֆրանսիայի ազդեցության ոլորտները սահմանազատելու վերաբերյալ ստորագրված անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերը քննադատելի էին որպես նվաճողական, անարդարացի քաղաքականության արդյունք, այնուամենայնիվ, Արևմտյան Հայաստանի ռուսական անեքսիան, գրավված տարածքների ճանաչումը ռուսական ազդեցության ոլորտ և Ջինվորական ընդհանուր մա-

հանգապետության միջոցով դրանց կառավարման կազմակերպումը հայ ժողովրդի համար նախընտրելի էին թուրքական հայաջինջ քաղաքականությունից: Ավելին՝ այդ կերպ գրեթե լուծվում էր հայկական հողերի միասնության ցավոտ խնդիրը:

13. Հայկական հարցում Ռուսաստանի ցարական կառավարության վարած քաղաքականությունն ամրապնդվեց և զարգացվեց Փետրվարյան հեղափոխությանը սուսլոված Ժամանակավոր կառավարության կողմից: 1917 թ. ապրիլի 25–ին նրա հիմնած Ընդհանուր կոմիսարիատը պայմաններ էր ստեղծում Արևմտյան Հայաստանում կյանքի վերակենդանացման, դեպի իրենց հայրենի օջախներն արևմտահայ գաղթականների վերադարձի, կովկասահայերի վերաբնակության համար, տալիս անձի և ունեցվածքի անձեռնմխելիության կայուն երաշխիքներ: Հայ հասարակական–քաղաքական շրջանների հետևողականության և երկրում քաղաքական իրավիճակի կայունության դեպքում այն կարող էր հիմք դառնալ Արևմտյան Հայաստանի ինքնավարության համար: Ռուսաստանի պետական շահը Հայկական հարցում համապատասխանում էր հայերի ազգային նպատակներին: Մակայն Ընդհանուր կոմիսարիատը երկար կյանք չունեցավ 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի և դրա արդյունքում Ռուսաստանի արտաքին քաղաքականության կտրուկ շրջադարձի հետևանքով: Հարցն այն է, որ խորհրդային Ռուսաստանը դուրս եկավ Անտանտի խմբավորումից և համաշխարհային պատերազմից: Դրանով իսկ նա թուլացրեց իր նախկին դաշնակիցներին՝ ընդդեմ գերմանական խմբավորման: Ավելին՝ խորհրդային Ռուսաստանի նորաստեղծ կառավարությունը՝ Ժողովրդական կոմիսարների խորհուրդն, իր արտաքին քաղաքականության հիմքում դրեց «հաշտություն առանց բռնազավթումների և փոխհատուցումների» սկզբունքը: Նա նաև հրաժարվեց ցարական ու Ժամանակավոր կառավարությունների կնքած բոլոր պայմանագրերից, այդ թվում՝ ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ 1916 թ. անգլո–ֆրանս–ռուսական համաձայնագրերից: Դրա հետևանքով «վտանգվեց Ռուսաստանի օգնությամբ Արևմտյան Հայաստանը Թուրքիայի տիրապետության տակից դուրս բերելու հայերի ակնկալությունը»³:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Հակոբյան Յ. Վ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000, էջ 106:
- 2 Գասպարյան Ե. Ա., Ֆրանսիան և Սեծ եղեռնը (1915–1918 թթ.), Երևան, 2000, էջ 61: Իսկ Քիբչեների ծրագրի առնչությամբ դիվանագիտական զրազրության վերլուծությունը տե՛ս նույն աշխատության էջ 44–67:
- 3 Գալոյան Գալուստ, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 17: Այս աշխատության պատմագիտական արժեքն այն է, որ հանգամանորեն վերլուծվում են դեպքերի քաղաքական զարգացումները՝ սկսած Հոկտեմբերյան հեղափոխությունից, ներառյալ Լոնդոնի ու Լոզանի միջազգային կոնֆերանսները, բացահայտվում են մեծ տերությունների քաղաքականության ազդեցությունն ու հետևանքները թե՛ Արևմտյան Հայաստանի, թե՛ Հայաստանի հանրապետության և թե՛ հայ ժողովրդի ճակատագրում:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

մենայն հայոց կաթողիկոս 23, 58, 62,
88, 89, 109, 126, 147

Աբդուլ Համիդ 2–րդ 14, 17, 19, 37

Ադիվար Հալիդե Էդիպ 37

Ադոնց Ն. 104, 138

Ալփ Թեքին 37, 38

Անանուն Դ. 133

Անդերս Էդգար 43

Անդրանիկ Օզանյան 108, 136, 138

Աքավիթ 78

Ավերյանով Պ. 128, 129

Արթին Յաղուբ փաշա 70

Աքչուրա Յուսուֆ 37

Բաստրմաջյան Գարեգին (Արմեն Գարո)
147, 148

Բարտոն Ջեյմս 77

Բենեդիկտ 15–րդ, Հռոմի պապ 60

Բենկենդորֆ Ա. 86, 122

Բեռնհարդի 39

Բերտի, սըր 59

Բյուքենեն Ջ. 83, 95

Բոեթրիչ 76

Բրայս Ջ., լորդ 68, 88

Բրիան Արիստիդ 141

Բրյուսով Վ. 68

Գասպարյան Ե. 157

Գասպրինսկի Իսմայիլ 37

Գիրս Ս. 27, 32, 49, 122

Գլուտով Յա. 129

Գյոք Ալփ Ջիյա 37

Գյուլբենկյան Գ. 41

Գուլց Կոլմար ֆոն դեր 43, 44, 73, 76

Գորրինի Ջ. 65, 77

Գրեյ Է. 97, 122

Գուզե Ֆելիքս 105

Գուլկնիչ Կ. 29, 33, 35

Գսորգ 5–րդ Տփղիսեցի (Սուրենյանց), Ա-

Ղադրյան Վ. 9, 14, 49

Ղանիելս Էմիլ 40

Ղեգիզ 72

Ղելբրուկ Հանս 40

Ղելկասե 88, 89

Ղոլգորուկի Պավել 149

Ղոլգորուկի Պյոտր 149

Ղոչ Բեյարդ 77

Ղրյագին 123

Ղումեթզ Է. 68

Ղուրման 72

Ղևիսոն Ռ. 68

Շասյան Ջապել 137

Չանդերս Լիման ֆոն 9, 73, 74, 76

Չավրիյան Հակոբ 88, 89, 91, 121, 128,
145

Շմին Մահմեդ 37

Շնվեր փաշա 52, 54–56, 92, 106, 107

Շալեաթ փաշա 50, 52, 55, 56, 64, 74, 92

Շերլենբեյան Փանոս 137

Շոյնբի Ա. 68

Իզգեթ Հասան 105

Իզվոլսկի Ա. 122

Իսհան փաշա 107

Լենսթրն, լորդ 88

Լեփսիուս Յոհաննես 13, 41, 55, 68

Լիստ Ֆրիդրիխ 39

Լիստոն 43

Լլոյդ Ջորջ Ղեյվիդ 9, 98, 141, 142

Լվով Ե., իշխան 127

Խալիլ փաշա 55
Խատիսյան Ալ. 145, 147

Կալիճին 81
Կամբոն Պ. 87, 97, 122
Կավենդիշ Ֆր. 68
Կարաբեքիր Քյազիմ 108
Կարոլլա Մարիո 61
Կացարով Գ. 68
Կերենսկի Ա. Ֆ. 131, 132, 145
Կլեմանսո ժորժ 141
Կյուլման Ռիչարդ ֆոն 64
Կոլյուբակին Ա. 149
Կոկովցև Վ. 23
Կոռնիլով Ա. 149
Կոռնիլով Լ. 132
Կովալսկի Մ. 68
Կրեսսենշտեյն Կրես ֆոն 76
Կրիվոշեին Ա. 118
Կուլեբյակին Պ. 132
Կուրոպատկին 114

Հակոբյան Հ. 154
Հակոբյան Հովհ. 122
Համբարձումյան Վ. 115, 129
Հարրիս Ջ. 68
Հարությունյան Ա. 9, 108
Հարությունյան Ս. 147
Հաուզ 10, 150
Հաքքը բեյ 107
Հենրի 72
Հիբբոնս Հ. 68
Հիլմի բեյ 51
Հիքմեթ Ահմեդ 37
Հյուման Հանս 76
Հոլշտայն 43
Հոֆֆ 36
Հուսեյնզադե Ալի 37

Ղորղանյան Գ. 112, 130
Ղուկասյան Ա. 88

Մակլակով Վ. 149
Մամիկոնյան Ստ. 138

Մանդելշտամ Անդրե 10, 25, 27, 28, 111
Մանուկյան Արամ 137
Մարկվարտ Յո. 68
Մետտերնիխ Վոլֆ Պաուլ ֆոն 64
Միզանջի Մուրադ-բեյ 20
Միլյուկով Պ. Ն. 81, 127, 149
Մուտկե 73
Մոստիչյան Հարություն 70
Մորգան Ժ. 68
Մորգենթաու Հենրի 10, 56, 68

Յուդենիչ 118
Յուդեսոմ Գվիդո ֆոն 76

Նաբոկով Վ. 128, 149
Նազարբեկյան Թ. 108, 132
Նազրմ Սելանիկլի բեյ 20, 38, 50, 52
Նանսեն Ֆր. 68
Նաջի Օմեր 51
Նաուման Ֆրիդրիխ 40
Նիկոլայ 2-րդ 23, 82, 114, 116, 123
Նիկոլենկո Ն. 129
Նիքոլսոն Արթուր 88, 90, 93
Նիքոլսոն Հարոլդ 61
Նուբար Պողոս փաշա 23, 62, 88-91, 99,
121, 146, 146, 148

Շանթ Լևոն 137
Շաքիր Բեհադդին 50, 51
Շելլենդորֆ Բրոնզարդ Ֆրից ֆոն 74, 76
Շինգարյով Ա. 149
Շյուբրի Միդհաթ 50
Շոնբերգ 27, 28
Շտյուրմեր Հ. 68
Շուլենբուրգ Բերգ ֆոն 43
